

ՖԱԹՏ-Ի ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ, ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ
ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԶԵՆՔԻ
ՏԱՐԱԾՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ
ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՆԵՐ

ՓԵՏՐՎԱՐ 2012թ.

Անգլերեն բնօրինակը տպագրվել է 2012թ. մայիսին
Հայերեն թարգմանությունը տպագրվել է 2014թ. հունիսին



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ^{ա)}

Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբը (ՖԱԹՖ) միջկառավարական անկախ մարմին է, որը մշակում է համաշխարհային ֆինանսական համակարգը փողերի լվացումից, ահաբեկչության ֆինանսավորումից և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորումից պաշտպանելու քաղաքականություններ և սատարում է դրանց իրագործմանը: ՖԱԹՖ-ի Հանձնարարականները ճանաչում են գտել որպես փողերի լվացման (ՓԼ) և ահաբեկչության ֆինանսավորման (ԱՖ) դեմ պայքարի համաշխարհային ստանդարտ:

ՖԱԹՖ-ի մասին լրացուցիչ տեղեկատվության համար կարող եք այցելել հետևյալ ինտերնետային կայքէջը.

www.fatf-gafi.org

© 2013 ՖԱԹՖ/ՏՀԶԿ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Արգելվում է սույն հրապարակումը վերատպել կամ թարգմանել առանց նախնական գրավոր թույլտվության: Սույն հրապարակման կամ դրա որևէ մասի համար նման թույլտվություն ստանալու նպատակով պետք է դիմել ՖԱԹՖ-ի քարտուղարություն՝ FATF Secretariat, 2 rue André Pascal 75775 Paris Cedex 16, France հասցեով (ֆաքս՝ +33 1 44 30 61 37, էլեկտրոնային փոստ՝ contact@fatf-gafi.org):

Կազմի ձևավորումը. ©Thinkstock

Սույն փաստաթուղթը թարգմանություն է անգլերենից: Թարգմանությունը կատարվել է Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատան օժանդակությամբ:

Թարգմանության հետ կապված հարցերով դիմել ՀՀ կենտրոնական բանկ,
Ֆինանսական դիտարկումների կենտրոն՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 6
(հեռախոս/ ֆաքս՝ +374 10 545088, էլեկտրոնային փոստ՝ info@fmc.am):

^{ա)} Անգլերեն՝ Financial Action Task Force, FATF (Ծան. թարգմ.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	9
ՖԱԹՖ-Ի ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԸ	13
Ա. ՓԼ/ԱՖ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	13
1. Ռիսկերի գնահատումը և ռիսկահենք մոտեցման կիրառությունը*	13
2. Ներպետական համագործակցությունը և համակարգումը	13
Բ. ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՈՒՄ ԵՎ ԲՈՆԱԳՐԱՎՈՒՄ	15
3. Փողերի լվացման հանցագործությունը*	15
4. Բռնագրավումը և նախնական միջոցները*	15
Գ. ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԶԵՆՔԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ	16
5. Ահաբեկչության ֆինանսավորման հանցագործությունը*	16
6. Ահաբեկչությանը և ահաբեկչության ֆինանսավորմանն առնչվող թիրախային ֆինանսական պատժամիջոցները*	16
7. Զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորմանն առնչվող թիրախային ֆինանսական պատժամիջոցները*	16
8. Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունները*	17
Դ. ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	17
9. Ֆինանսական հաստատությունների գործունեության գաղտնիության մասին օրենքները	17
10. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը*	17
11. Տեղեկատվության պահպանումը	19
<i>Լրացուցիչ միջոցառումներ հաճախորդների և գործառնությունների առանձին տեսակների համար</i>	<i>20</i>
12. Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք*	20
13. Թղթակցային բանկային հարաբերությունները*	21
14. Փողի կամ արժեքների փոխանցման ծառայությունները*	22
15. Նոր տեխնոլոգիաները	22
16. Դրամական փոխանցումները*	23
<i>Երրորդ անձի միջոցով գործելը, ներքին հսկողությունը և ֆինանսական խմբերը</i>	<i>23</i>
17. Երրորդ անձի միջոցով գործելը*	23
18. Ներքին հսկողությունը, օտարերկրյա մասնաձյուղերը և դուստր ձեռնարկությունները*	25
19. Բարձր ռիսկային երկրները*	25

<i>Կասկածելի գործարքների մասին հաշվետվությունների ներկայացումը</i>	25
20. Կասկածելի գործարքների մասին հաշվետվությունների ներկայացումը*	25
21. Տեղեկատվության կոնֆիդենցիալությունը և կասկածների չբացահայտումը...	26
<i>Նախատեսված ոչ ֆինանսական գործունեության տեսակներ և մասնագիտություններ</i>	26
22. ՆՈՖԳՏՄ-ներ. հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը*	26
23. ՆՈՖԳՏՄ-ներ. այլ միջոցառումները*	28
Ե. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ	28
24. Իրավաբանական անձանց թափանցիկությունը և իրական շահառուները*	28
25. Իրավաբանական կազմավորումների թափանցիկությունը և իրական շահառուները*.....	29
Զ. ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՅԼ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	29
26. Ֆինանսական հաստատությունների կարգավորումը և վերահսկողությունը*	29
27. Վերահսկողների լիազորությունները	30
28. ՆՈՖԳՏՄ-ների կարգավորումը և վերահսկողությունը*	31
<i>Ֆինանսական հետախուզության մարմինը և իրավապահ մարմինները</i>	32
29. Ֆինանսական հետախուզության մարմինը*.....	32
30. Իրավապահ և քննչական գործառույթներ իրականացնող մարմինների պարտականությունները*	32
31. Իրավապահ և քննչական գործառույթներ իրականացնող մարմինների լիազորությունները	33
32. Կանխիկի անդրասահմանային տեղափոխումը*.....	34
<i>Ընդհանուր պահանջներ</i>	34
33. Վիճակագրությունը	34
34. Ուղեցույցների և հետադարձ արձագանքի տրամադրումը	35
<i>Պատժամիջոցները</i>	35
35. Պատժամիջոցները.....	35
Է. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ	35
36. Միջազգային գործիքները.....	35
37. Փոխադարձ իրավական օգնությունը.....	35
38. Փոխադարձ իրավական օգնությունը. սառեցում և բռնագրավում*.....	38
39. Հանձնում	38
40. Միջազգային համագործակցության այլ ձևերը*.....	40

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանձնարարական 1-ի Բացատրական մեկնաբանություն.....	41
Հանձնարարական 3-ի Բացատրական մեկնաբանություն.....	46
Հանձնարարականներ 4-ի և 38-ի Բացատրական մեկնաբանություն	48
Հանձնարարական 5-ի Բացատրական մեկնաբանություն	49
Հանձնարարական 6-ի Բացատրական մեկնաբանություն.....	57
Հանձնարարական 7-ի Բացատրական մեկնաբանություն.....	64
Հանձնարարական 8-ի Բացատրական մեկնաբանություն.....	75
Հանձնարարական 10-ի Բացատրական մեկնաբանություն	84
Հանձնարարական 12-ի Բացատրական մեկնաբանություն	97
Հանձնարարական 13-ի Բացատրական մեկնաբանություն.....	98
Հանձնարարական 14-ի Բացատրական մեկնաբանություն.....	99
Հանձնարարական 16-ի Բացատրական մեկնաբանություն.....	100
Հանձնարարական 17-ի Բացատրական մեկնաբանություն.....	110
Հանձնարարական 18-ի Բացատրական մեկնաբանություն.....	111
Հանձնարարական 19-ի Բացատրական մեկնաբանություն.....	113
Հանձնարարական 20-ի Բացատրական մեկնաբանություն.....	115
Հանձնարարականներ 22-ի և 23-ի Բացատրական մեկնաբանություն	116
Հանձնարարական 22-ի Բացատրական մեկնաբանություն.....	117
Հանձնարարական 23-ի Բացատրական մեկնաբանություն.....	118
Հանձնարարական 24-ի Բացատրական մեկնաբանություն.....	119
Հանձնարարական 25-ի Բացատրական մեկնաբանություն.....	126
Հանձնարարական 26-ի Բացատրական մեկնաբանություն.....	130
Հանձնարարական 28-ի Բացատրական մեկնաբանություն.....	132
Հանձնարարական 29-ի Բացատրական մեկնաբանություն.....	133
Հանձնարարական 30-ի Բացատրական մեկնաբանություն.....	138
Հանձնարարական 32-ի Բացատրական մեկնաբանություն.....	140
Հանձնարարական 38-ի Բացատրական մեկնաբանություն.....	146
Հանձնարարական 40-ի Բացատրական մեկնաբանություն.....	147

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՈՖԳՏՄ-ՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ

ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ	153
ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ	156
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	180

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ I.	ՖԱԹՖ-ի ուղեցույցները	181
ՀԱՎԵԼՎԱԾ II.	ՖԱԹՖ-ի հանձնարարականներում կատարված լրացումների մասին տեղեկատվություն.....	183

ՖԱԹՖ-Ի ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԸ

Համար	Հին համար ¹	
Ա – ՓԼ/ԱՖ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ		
1	-	Ռիսկերի գնահատումը և ռիսկահենքք մոտեցման կիրառությունը*
2	Հ.31	Ներպետական համագործակցությունը և համակարգումը
Բ – ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՈՒՄ ԵՎ ԲՌՆԱԳՐԱՎՈՒՄ		
3	Հ.1 & Հ.2	Փողերի լվացման հանցագործությունը*
4	Հ.3	Բռնագրավումը և նախնական միջոցները*
Գ – ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԶԵՆՔԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ		
5	ՀՀ.II	Ահաբեկչության ֆինանսավորման հանցագործությունը*
6	ՀՀ.III	Ահաբեկչությանը և ահաբեկչության ֆինանսավորմանն առնչվող թիրախային ֆինանսական պատժամիջոցները*
7		Զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորմանն առնչվող թիրախային ֆինանսական պատժամիջոցները*
8	ՀՀ.VIII	Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունները*
Դ – ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ		
9	Հ.4	Ֆինանսական հաստատությունների գործունեության գաղտնիության մասին օրենքները <i>Հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը և տեղեկատվության պահպանումը</i>
10	Հ.5	Հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը*
11	Հ.10	Տեղեկատվության պահպանումը <i>Լրացուցիչ միջոցառումներ հաճախորդների և գործառնությունների առանձին տեսակների համար</i>
12	Հ.6	Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք*
13	Հ.7	Թղթակցային բանկային հարաբերությունները*

Համար	Հին համար ¹	
14	ՀՀ.VI	Փողի կամ արժեքների փոխանցման ծառայությունները*
15	Հ.8	Նոր տեխնոլոգիաները
16	ՀՀ.VII	Դրամական փոխանցումները* <i>Երրորդ անձի միջոցով գործելը, ներքին հսկողությունը և ֆինանսական խմբերը</i>
17	Հ.9	Երրորդ անձի միջոցով գործելը*
18	Հ.15 & Հ.22	Ներքին հսկողությունը, օտարերկրյա մասնաձյուղերը և դուստր ձեռնարկությունները*
19	Հ.21	Բարձր ռիսկային երկրները* <i>Կասկածելի գործարքների մասին հաշվետվությունների ներկայացումը</i>
20	Հ.13 & ՀՀ.IV	Կասկածելի գործարքների մասին հաշվետվությունների ներկայացումը*
21	Հ.14	Տեղեկատվության կոնֆիդենցիալությունը և կասկածների չբացահայտումը <i>Նախատեսված ոչ ֆինանսական գործունեության տեսակներ և մասնագիտություններ (ՆՈՖԳՏՄ)</i>
22	Հ.12	ՆՈՖԳՏՄ-ներ. հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը*
23	Հ.16	ՆՈՖԳՏՄ-ներ. այլ միջոցառումները* Ե – ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԹԱՓԱՆՅԻԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ
24	Հ.33	Իրավաբանական անձանց թափանցիկությունը և իրական շահառուները*
25	Հ.34	Իրավաբանական կազմավորումների թափանցիկությունը և իրական շահառուները* Զ – ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՅԼ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ <i>Կարգավորումը և վերահսկողությունը</i>
26	Հ.23	Ֆինանսական հաստատությունների կարգավորումը և վերահսկողությունը*

ՖԱԹՖ-Ի ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ, ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԶԵՆՔԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՆԵՐ

Համար	Հին համար ¹	
27	Հ.29	Վերահսկողների լիազորությունները
28	Հ.24	ՆՈՖԳՏՄ-ների կարգավորումը և վերահսկողությունը <i>Ֆինանսական հետախուզության մարմինը և իրավապահ մարմինները</i>
29	Հ.26	Ֆինանսական հետախուզության մարմինը*
30	Հ.27	Իրավապահ և քննչական գործառույթներ իրականացնող մարմինների պարտականությունները*
31	Հ.28	Իրավապահ և քննչական գործառույթներ իրականացնող մարմինների լիազորությունները
32	ՀՀ.IX	Կանխիկի անդրսահմանային տեղափոխումը* <i>Ընդհանուր պահանջներ</i>
33	Հ.32	Վիճակագրությունը
34	Հ.25	Ուղեցույցների և հետադարձ արձագանքի տրամադրումը <i>Պատժամիջոցները</i>
35	Հ.17	Պատժամիջոցները

Է – ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

36	Հ.35 & ՀՀ.I	Միջազգային գործիքները
37	Հ.36 & ՀՀ.V	Փոխադարձ իրավական օգնությունը
38	Հ.38	Փոխադարձ իրավական օգնությունը. սառեցում և բռնագրավում*
39	Հ.39	Հանձնում
40	Հ.40	Միջազգային համագործակցության այլ ձևերը*

1. «Հին համարը» սյունյակում նշված են ՖԱԹՖ-ի 2003թ. Հանձնարարականների համարները:
* Աստղանիշով նշված Հանձնարարականներն ունեն Բացատրական մեկնաբանություններ, որոնք հարկ է ընթերցել տվյալ Հանձնարարականի տեքստի հետ:

2012 թվականի փետրվարի 15-ին ընդունված տարբերակ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբը (ՖԱԹՖ) միջկառավարական մարմին է, որը ստեղծվել է 1989 թվականին անդամ երկրների նախարարների կողմից: ՖԱԹՖ-ի իրավասությունների շրջանակը ներառում է փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման, ինչպես նաև միջազգային ֆինանսական համակարգի ամբողջականությանն սպառնացող այլ երևույթների դեմ պայքարի ստանդարտների սահմանումը և իրավական, կարգավորիչ ու գործառնական միջոցառումների արդյունավետ իմպլեմենտացման խթանումը: Միջազգային այլ գործընկերների հետ համագործակցությամբ ՖԱԹՖ-ը նաև աշխատանքներ է կատարում երկրների մակարդակով խոցելիությունները բացահայտելու ուղղությամբ՝ միջազգային ֆինանսական համակարգը չարաշահումներից զերծ պահելու նպատակով:

ՖԱԹՖ-ի Հանձնարարականներով սահմանվում է համակողմանի և հետևողական միջոցառումների մի շրջանակ, որը երկրները պետք է իմպլեմենտացնեն փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման, ինչպես նաև զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի նպատակով: Նշված սպառնալիքներին հակազդելու համար տարբեր երկրների կողմից կիրառվող միջոցները չեն կարող նույնը լինել՝ հաշվի առնելով երկրների իրավական, վարչական և գործառնական միջավայրի, ինչպես նաև ֆինանսական համակարգի միջև տարբերությունները: Ուստի ՖԱԹՖ-ի Հանձնարարականները սահմանում են միջազգային ստանդարտներ, որոնք երկրները պետք է իմպլեմենտացնեն իրենց միջավայրին հարմարեցված միջոցառումների իրականացման միջոցով: Երկրները պետք է ապահովեն ՖԱԹՖ-ի Հանձնարարականներով նախատեսված առանցքային միջոցառումների իրականացումը՝ հետևյալ պահանջները բավարարելու համար.

- ռիսկերի բացահայտում, քաղաքականությունների մշակում և ներպետական մակարդակով համակարգում.
- փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի իրականացում.
- ֆինանսական հատվածում և այլ նախատեսված հատվածներում կանխարգելիչ միջոցառումների իրականացում.
- իրավասու մարմինների (մասնավորապես՝ քննչական, իրավապահ և վերահսկող մարմինների) լիազորությունների և

պարտականությունների, ինչպես նաև այլ ինստիտուցիոնալ միջոցառումների շրջանակի սահմանում.

- իրավաբանական անձանց և կազմավորումների իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության և հասանելիության բարելավում, և
- միջազգային համագործակցության դյուրացում:

ՖԱԹՖ-ի 40 Հանձնարարականների առաջին տարբերակը հրապարակվել է 1990 թվականին՝ թմրամիջոցների վաճառքից առաջացած գումարների լվացմամբ զբաղվողների կողմից ֆինանսական համակարգերի չարաշահման դեմ պայքարի շրջանակում: 1996 թվականին այդ Հանձնարարականներն առաջին անգամ վերանայվել են՝ փողերի լվացման միտումների ու եղանակների զարգացումները արտացոլելու, ինչպես նաև Հանձնարարականների կիրառության ոլորտը թմրամիջոցների վաճառքից առաջացած գումարների լվացումից ավելի հեռուն գնացող թիրախներով համալրելու նպատակով: 2001 թվականի հոկտեմբերին ՖԱԹՖ-ի իրավասությունների շրջանակն ընդլայնվել է՝ ներառելով ահաբեկչական գործողությունների և ահաբեկչական կազմակերպությունների ֆինանսավորման դեմ պայքարը, որի ուղղությամբ կատարված կարևոր քայլը ահաբեկչության ֆինանսավորմանն առնչվող ութ (ավելի ուշ՝ ինը) Հատուկ հանձնարարականների սահմանումն էր: Երկրորդ անգամ ՖԱԹՖ-ի Հանձնարարականները վերանայվել են 2003 թվականին, և այս վերանայված Հանձնարարականները ինը Հատուկ հանձնարարականների հետ միասին ավելի քան 180 երկրների կողմից հաստատվելով ճանաչում են գտել որպես փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի համաշխարհային ստանդարտ:

Անդամների փոխադարձ գնահատումների երրորդ փուլն ավարտին հասցնելուց հետո ՖԱԹՖ-ը, սերտորեն համագործակցելով ՖԱԹՖ-ի տիպի տարածաշրջանային կառույցների (ՖՏՏԿ) և դիտորդ կազմակերպությունների, այդ թվում՝ Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի և Միավորված ազգերի կազմակերպության հետ, վերանայել ու արդիականացրել է ՖԱԹՖ-ի Հանձնարարականները: Նշված վերանայումը կատարվել է նոր և ի հայտ եկող սպառնալիքներին արձագանքելու, գործող մի շարք պարտականություններ հաստակեցնելու և ավելի որոշակի կերպով սահմանելու նպատակով՝ միաժամանակ պահպանելով Հանձնարարականների կայուն ու հետևողական բնույթը:

ՖԱԹՖ-ի Հանձնարարականները վերանայվել են նաև բարձր ռիսկային իրավիճակներին առնչվող պահանջները ավելի որոշակի կերպով սահմանելու տեսանկյունից, ինչը երկրներին հնարավորություն է տալիս կենտրոնանալ այն

ուղորտների վրա, որոնք բնութագրվում են բարձր ռիսկերի շարունակական առկայությամբ, կամ որտեղ բարելավման անհրաժեշտություն է զգացվում: Երկրները պետք է նախևառաջ բացահայտեն, գնահատեն և հասկանան իրենց ՓԼ/ԱՖ ռիսկերը, որից հետո պետք է պատշաճ միջոցներ ձեռնարկեն այդ ռիսկերը զսպելու ուղղությամբ: Ռիսկահեղձ մոտեցումը երկրներին թույլ է տալիս ՖԱԹՖ-ի պահանջներով սահմանված շրջանակում կիրառել միջոցառումների ավելի ձկուն համախումբ՝ ապահովելով իրենց ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործումը և առկա ռիսկերի բնույթին համահունչ կանխարգելիչ միջոցառումների կիրառումը:

Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարը միանգամայն լուրջ մարտահրավեր է: Ընդհանուր առմամբ, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի արդյունավետ համակարգը կարևոր նշանակություն ունի ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի խնդիրը պատշաճ կերպով լուծելու համար, և դրան առնչվող միջոցառումների մեծ մասն այժմ ինտեգրվել է տարբեր Հանձնարարականներում՝ այդպիսով վերացնելով Հատուկ հանձնարարականների անհրաժեշտությունը: Այդուհանդերձ, որոշ Հանձնարարականներ, մասնավորապես՝ Բաժին Գ-ում նշվածները հատուկ անդրադարձում են ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումներին. դրանք են Հանձնարարական 5-ը (ահաբեկչության ֆինանսավորման հանցագործության քրեականացումը), Հանձնարարական 6-ը (ահաբեկչությանը և ահաբեկչության ֆինանսավորմանն առնչվող թիրախային ֆինանսական պատժամիջոցները) և Հանձնարարական 8-ը (շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների չարաշահումը կանխարգելելուն ուղղված միջոցառումները): Զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորումը նույնպես անվտանգության առումով լուրջ սպառնալիք է, և 2008 թվականին ՖԱԹՖ-ի իրավասությունների շրջանակը ընդլայնվել է՝ ներառելով նշված երևույթի դեմ պայքարը: Այդ նպատակով ՖԱԹՖ-ի ընդունած նոր Հանձնարարականը (Հանձնարարական 7) նպատակադրում է ՄԱԿ Անվտանգության խորհրդի կողմից սահմանված դեպքերում թիրախային ֆինանսական պատժամիջոցների հետևողական ու արդյունավետ իմպլեմենտացումը:

ՖԱԹՖ-ի Ստանդարտները ներառում են բուն Հանձնարարականները և դրանց Բացատրական մեկնաբանությունները՝ Տերմինաբանական բառարանում տրված սահմանումների հետ միասին: ՖԱԹՖ-ի Ստանդարտներով նախատեսված միջոցառումները ենթակա են իմպլեմենտացման ՖԱԹՖ-ի և ՖՏՏԿ-ների բոլոր անդամների կողմից, ինչը հետևողականորեն գնահատվում է ինչպես փոխադարձ գնահատումների, այնպես էլ Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի գնահատումների գործընթացի միջոցով՝ ՖԱԹՖ-ի

կողմից հաստատված գնահատման ընդհանուր մեթոդաբանության հիման վրա: Որոշ Բացատրական մեկնաբանություններում և Տերմինաբանական բառարանի սահմանումներում ներկայացված են օրինակներ, որոնք լուսաբանում են, թե ինչպես կարող են կատարվել համապատասխան պահանջները: Այդ օրինակները ՖԱԹՖ-ի Ստանդարտների պարտադիր կատարման ենթակա տարրեր չեն և բացառապես ուղղորդիչ բնույթ են կրում: Օրինակները որևէ սպառիչ ցանկ չեն սահմանում և, օգտակար ուղենիշ լինելով հանդերձ, հնարավոր է, որ բոլոր հանգամանքներում կիրառելի չլինեն:

ՖԱԹՖ-ը նաև հրապարակում է ուղեցույցներ, լավագույն փորձի վերաբերյալ փաստաթղթեր և այլ խորհրդատվական նյութեր, որոնց նպատակը երկրներին օժանդակելն է ՖԱԹՖ-ի Հանձնարարականների իմպլեմենտացման գործում: Այս փաստաթղթերը Ստանդարտներին համապատասխանության գնահատման տեսանկյունից պարտադիր բնույթ չեն կրում, սակայն երկրները կարող են դրանցից օգտվել՝ ՖԱԹՖ-ի Ստանդարտները լավագույն կերպով իմպլեմենտացնելու համար: Մույն Հանձնարարականներին կից հավելվածում ներկայացված է ՖԱԹՖ-ի ուղեցույցների և լավագույն փորձի վերաբերյալ փաստաթղթերի ցանկը, որոնք տեղադրված են նաև ՖԱԹՖ-ի ինտերնետային կայքէջում:

Ֆինանսական հատվածի ամբողջականությունն ապահովելու գործում ՖԱԹՖ-ը որդեգրել է մասնավոր հատվածի, քաղաքացիական հասարակության և շահագրգիռ կողմերի՝ որպես կարևոր գործընկերների հետ սերտ ու կառուցողական երկխոսության քաղաքականությունը: Հանձնարարականների վերանայումն իրագործվել է լայնածավալ քննարկումների պայմաններում և հաշվի առնելով նշված շահագրգիռ կողմերի խորհուրդներն ու առաջարկները: Իր իրավասությունների շրջանակին համապատասխան հետագա գործունեություն ծավալելիս ՖԱԹՖ-ը կշարունակի Ստանդարտներում ըստ անհրաժեշտության փոփոխությունների նախաձեռնումը՝ համաշխարհային ֆինանսական համակարգում ի հայտ եկող սպառնալիքների և խոցելիությունների վերաբերյալ նոր տեղեկատվության լույսի ներքո:

ՖԱԹՖ-ը բոլոր երկրներին կոչ է անում արդյունավետ միջոցներ ձեռնարկել փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ազգային համակարգերը ՖԱԹՖ-ի վերանայված Հանձնարարականներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

ՖԱԹՖ-Ի ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԸ

Ա. ՓԼ/ԱՖ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

1. Ռիսկերի գնահատումը և ռիսկահենք մոտեցման կիրառությունը*

Երկրները պետք է բացահայտեն, գնահատեն և հասկանան իրենց ՓԼ/ԱՖ ռիսկերը, ձեռնարկեն միջոցներ, այդ թվում՝ նշանակելով մարմին կամ սահմանելով մեխանիզմ ռիսկերի գնահատմանն ուղղված միջոցառումները համակարգելու համար, և տրամադրեն ռեսուրսներ՝ բացահայտված ռիսկերն արդյունավետ կերպով զսպելու նպատակով: Նշված գնահատման հիման վրա երկրները պետք է կիրառեն ռիսկահենք մոտեցումը (ՌՀՄ)՝ հավաստիանալու համար, որ ՓԼ/ԱՖ կանխարգելման կամ զսպման միջոցառումները համահունչ են բացահայտված ռիսկերին: Այս մոտեցումը պետք է հիմնարար բնույթ կրի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխման և ՖԱԹՖ-ի Հանձնարարականներով սահմանված ռիսկահենք միջոցառումների իրականացման գործում: Բարձր ռիսկերի առկայության դեպքում երկրները պետք է ապահովեն ՓԼ/ԱՖ դեմ պայքարի իրենց համակարգերի կողմից այդ ռիսկերին համարժեք հակազդումը: Ցածր ռիսկերի առկայության դեպքում երկրները, որոշակի պայմանների բավարարման պարագայում, կարող են թույլատրել ՖԱԹՖ-ի որոշ Հանձնարարականների մասով պարզեցված միջոցառումների իրականացումը:

Երկրները ֆինանսական հաստատություններից և ՆՈՖԳՏՄ-ներից պետք է պահանջեն բացահայտել և գնահատել իրենց ՓԼ/ԱՖ ռիսկերը, ինչպես նաև ձեռնարկել դրանք արդյունավետ կերպով զսպելուն ուղղված միջոցներ:

2. Ներպետական համագործակցությունը և համակարգումը

Երկրները պետք է ունենան ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ազգային քաղաքականություններ, որոնք արտացոլում են բացահայտված ռիսկերն ու պարբերաբար վերանայվում են, և պետք է նշանակեն մարմին կամ սահմանեն համակարգման կամ որևէ այլ մեխանիզմ՝ այդ քաղաքականությունների պատասխանատվությունը ստանձնելու համար:

Երկրները պետք է ունենան ինչպես քաղաքականությունների մշակման, այնպես էլ իրագործման մակարդակով արդյունավետ մեխանիզմներ, որոնք քաղաքականություն մշակողներին, ֆինանսական հետախուզության մարմինին (ՖՀՄ), իրավապահ մարմիններին, վերահսկողներին և այլ պատկան իրավասու մարմիններին հնարավորություն են տալիս համագործակցել,

Իսկ համապատասխան դեպքերում՝ նաև ներպետական մակարդակով միմյանց հետ համակարգել փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի քաղաքականությունների և միջոցառումների մշակումն ու իրագործումը:

Բ. ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՈՒՄ ԵՎ ԲՈՆԱԳՐԱՎՈՒՄ

3. Փողերի լվացման հանցագործությունը*

Երկրները պետք է փողերի լվացումը քրեականացնեն Վիեննայի կոնվենցիայի և Պալերմոյի կոնվենցիայի հիման վրա: Փողերի լվացմանը նախորդող հանցագործությունների ցանկը պետք է ներառի բոլոր ծանր հանցագործությունները՝ ընդգրկելով հնարավոր մեծ թվով նախորդող հանցագործություններ:

4. Բռնագրավումը և նախնական միջոցները*

Երկրները պետք է ունենան միջոցներ, որպիսիք սահմանված են Վիեննայի կոնվենցիայով, Պալերմոյի կոնվենցիայով և Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիայով, այդ թվում՝ օրենսդրորեն սահմանված միջոցներ, որոնք իրավասու մարմիններին հնարավորություն են տալիս ստեղծել կամ արգելադրել և բռնագրավել ստորև թվարկվածները՝ չխախտելով բարեխիղճ երրորդ անձանց իրավունքները. (ա) լվացված գույքը, (բ) փողերի լվացման կամ նախորդող հանցագործությունների կատարման արդյունքում ստացված գույքը, կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները, (գ) ահաբեկչության ֆինանսավորումից, ահաբեկչական գործողությունների կատարումից կամ ահաբեկչական կազմակերպություններից ստացված կամ դրանց համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված կամ հատկացված գույքը, կամ (դ) համարժեք այլ գույքը:

Նշված միջոցներ պետք է իրավասու մարմիններին հնարավորություն տան. (ա) հայտնաբերել, հետապնդել և գնահատել բռնագրավման ենթակա գույքը, (բ) կիրառել նախնական միջոցներ, ինչպիսիք են ստեղծումը կամ արգելադրումը, որոնց նպատակն այդ գույքի տնօրինումը, փոխանցումը կամ օտարումը կանխելն է, (գ) ձեռնարկել երկրի՝ բռնագրավման ենթակա գույքը ստեղծելու կամ արգելադրելու կամ վերականգնելու կարողությունը սահմանափակող գործողությունների կանխմանը կամ անվավեր ճանաչմանն ուղղված քայլեր, և (դ) կատարել համապատասխան քննչական գործողություններ:

Երկրները պետք է դիտարկեն այնպիսի միջոցների սահմանման նպատակահարմարությունը, որոնք հնարավորություն են տալիս առանց քրեական գործով մեղադրական դատավճի բռնագրավել հանցավոր ճանապարհով ստացված գույքը կամ հանցագործության կատարման համար օգտագործված գործիքները (առանց մեղադրական դատավճի բռնագրավում), կամ պահանջել, որ հանցագործն ապացուցի բռնագրավման ենթակա գույքի օրինական ծագումը, եթե դա չի հակասում ներպետական օրենսդրության հիմնարար սկզբունքներին:

Գ. ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՉԼՉԱՑՄԱՆ ԶԵՆՔԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

5. Ահաբեկչության ֆինանսավորման հանցագործությունը*

Երկրները պետք է ահաբեկչության ֆինանսավորումը քրեականացնեն Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիայի հիման վրա: Ընդ որում, պետք է քրեականացվի ոչ միայն ահաբեկչական գործողությունների, այլև ահաբեկչական կազմակերպությունների և անհատ ահաբեկիչների ֆինանսավորումը, անգամ եթե բացակայում է կապը որոշակի ահաբեկչական գործողության (գործողությունների) հետ: Երկրները պետք է այս հանցագործությունները սահմանեն որպես փողերի լվացմանը նախորդող հանցագործություններ:

6. Ահաբեկչությանը և ահաբեկչության ֆինանսավորմանն առնչվող թիրախային ֆինանսական պատժամիջոցները*

Երկրները պետք է իմպլեմենտացնեն ահաբեկչությունն ու ահաբեկչության ֆինանսավորումը կանխարգելելու և դրանց հակազդելու վերաբերյալ ՄԱԿ Անվտանգության խորհրդի բանաձևերով սահմանված թիրախային ֆինանսական պատժամիջոցները: Նշված բանաձևերով երկրներից պահանջվում է անհապաղ սառեցնել բոլոր այն միջոցները կամ այլ ակտիվները, որոնք պատկանում են ցանկացած անձի կամ կազմակերպության, որը (1) Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության Գլուխ VII-ին համապատասխան կերպով ցուցակվել է ՄԱԿ Անվտանգության խորհրդի կողմից կամ վերջինիս վերապահված իրավասությունների շրջանակում, այդ թվում՝ 1267 (1999) բանաձևի և դրա հաջորդող բանաձևերի համաձայն, կամ (2) ցուցակվել է տվյալ երկրի կողմից՝ 1373 (2001) բանաձևի համաձայն: Այս պահանջը ներառում է նաև բոլոր այդ միջոցների կամ այլ ակտիվների՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն հոգուտ կամ ի շահ հիշյալ անձանց կամ կազմակերպությունների հասանելիությունն արգելելը:

7. Զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորմանն առնչվող թիրախային ֆինանսական պատժամիջոցները*

Երկրները պետք է իմպլեմենտացնեն զանգվածային ոչնչացման զենքի տարածումը և դրա ֆինանսավորումը կանխարգելելու, դրանց հակազդելու և խափանելու վերաբերյալ ՄԱԿ Անվտանգության խորհրդի բանաձևերով սահմանված թիրախային ֆինանսական պատժամիջոցները: Նշված բանաձևերով երկրներից պահանջվում է անհապաղ սառեցնել բոլոր այն միջոցները կամ այլ ակտիվները, որոնք պատկանում են ցանկացած անձի կամ

կազմակերպության, որը Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության Գլուխ VII-ին համապատասխան կերպով ցուցակվել է ՄԱԿ Անվտանգության խորհրդի կողմից կամ վերջինիս վերապահված իրավասությունների շրջանակում: Այս պահանջը ներառում է նաև բոլոր այդ միջոցների կամ այլ ակտիվների՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն հոգուտ կամ ի շահ հիշյալ անձանց կամ կազմակերպությունների հասանելիությունն արգելելը:

8. Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություններ*

Երկրները պետք է ուսումնասիրեն ահաբեկչության ֆինանսավորման նպատակով չարաշահման ռիսկի ենթակա կազմակերպություններին առնչվող օրենքների և կանոնակարգերի համարժեքությունը: Հաշվի առնելով շահույթի ստացման նպատակ չհետապնդող կազմակերպությունների առանձնահատուկ խոցելիությունը, երկրները պետք է կանխարգելեն դրանց չարաշահումը:

- (ա) ահաբեկչական կազմակերպությունների կողմից իրենց գործունեությանը օրինական տեսք տալու միջոցով,
- (բ) օրինական գործունեություն ծավալող կազմակերպությունները որպես ահաբեկչության ֆինանսավորման գործիք շահագործելու միջոցով, այդ թվում՝ ակտիվների սառեցման միջոցառումները շրջանցելու համար,
- (գ) օրինական նպատակների համար նախատեսված միջոցները ահաբեկչական կազմակերպությունների շահերին ծառայեցնելու համար դրանց գաղտնի վերաուղղորդումը քողարկելու կամ թաքցնելու միջոցով:

Դ. ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

9. Ֆինանսական հաստատությունների գործունեության գաղտնիության մասին օրենքները

Երկրները պետք է հավաստիանան, որ ֆինանսական հաստատությունների գործունեության գաղտնիության մասին օրենքները չեն արգելակում ՖԱԹՖ-ի Հանձնարարականների իմպլեմենտացումը:

ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

10. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը*

Ֆինանսական հաստատություններին պետք է արգելվի վարել անանուն հաշիվներ կամ ակնհայտորեն մտացածին անուններով հաշիվներ:

Ֆինանսական հաստատություններից պետք է պահանջվի իրականացնել հաճախորդի պատշաճ ուսումնասիրության (ՀՊՈԻ) միջոցառումներ, երբ.

- (1) հաստատվում են գործարար հարաբերություններ,
- (2) կատարվում են միանգամյա գործարքներ, որոնք. (1) գերազանցում են կիրառելի նախատեսված շեմը (15.000 ԱՄՆ դոլար/եվրո), կամ (2) դրամական փոխանցումներ են` Հանձնարարական 16-ի Բացատրական մեկնաբանությամբ նախատեսված հանգամանքներում,
- (3) առկա է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկած, կամ
- (4) ֆինանսական հաստատությունը կասկածներ ունի հաճախորդի նույնականացման նպատակով նախկինում ձեռք բերված տվյալների իսկության կամ համարժեքության վերաբերյալ:

Ֆինանսական հաստատությունների կողմից ՀՊՈԻ կատարելու սկզբունքը պետք է ամրագրված լինի օրենքով, իսկ դրան առնչվող առանձին պահանջները երկրի հայեցողությամբ կարող են սահմանվել օրենքներով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով:

ՀՊՈԻ միջոցառումների շրջանակում ֆինանսական հաստատությունները պետք է.

- (ա) նույնականացնեն հաճախորդներին և ստուգեն նրանց ինքնությունը` հիմնվելով արժանահավատ, անկախ աղբյուրներից ստացված փաստաթղթերի, տվյալների կամ տեղեկությունների վրա,
- (բ) նույնականացնեն իրական շահառուին և իրական շահառուի ինքնությունը ստուգելու նպատակով ձեռնարկեն ողջամիտ քայլեր, որոնք ֆինանսական հաստատությանը թույլ կտան վստահանալ, որ իրեն հայտնի է իրական շահառուի ով լինելը. ընդ որում, իրավաբանական անձ կամ կազմավորում հանդիսացող հաճախորդների դեպքում ֆինանսական հաստատությունը պետք է պատկերացում ունենա հաճախորդի սեփականատերերի և կազմակերպության նկատմամբ հսկողություն իրականացնող անձանց մասին,
- (գ) պատկերացում ունենան և, համապատասխան դեպքերում, ձեռք բերեն տեղեկություններ գործարար հարաբերության նպատակի ու նախատեսվող բնույթի մասին,
- (դ) իրականացնեն գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրություն, այդ թվում դիտանցելով տվյալ գործարար հարաբերության ընթացքում կատարված գործարքները` հավաստիանալու հա-

մար, որ դրանք համապատասխանում են հաճախորդի, վերջինիս բիզնեսի և ռիսկայնության ընդհանուր նկարագրի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև միջոցների աղբյուրների վերաբերյալ ֆինանսական հաստատության ունեցած պատկերացումներին:

Ֆինանսական հաստատություններից պետք է պահանջվի իրականացնել վերոհիշյալ «(ա)»-«(դ)» կետերով սահմանված ՀՊՈԻ բոլոր միջոցառումները, սակայն դրանցից յուրաքանչյուրի կիրառության աստիճանը պետք է որոշվի ռիսկահենք մոտեցմամբ՝ սույն Հանձնարարականի և Հանձնարարական 1-ի Բացատրական մեկնաբանություններին համապատասխան կերպով:

Ֆինանսական հաստատություններից պետք է պահանջվի հաճախորդի և իրական շահառուի ինքնությունը ստուգել նախքան գործարար հարաբերություն հաստատելը կամ ոչ մշտական հաճախորդների հետ գործարք կատարելը կամ դրանց ընթացքում: Երկրները կարող են ֆինանսական հաստատություններին թույլատրել ինքնության ստուգումն ավարտին հասցնել գործարար հարաբերության հաստատումից հետո որքան հնարավոր է շուտ՝ ողջամիտ ժամկետում, եթե ՓԼ/ԱՖ ռիսկերն արդյունավետորեն կառավարվում են, և եթե դա բիզնեսի բնականոն ընթացքը չխաթարելու տեսանկյունից էական նշանակություն ունի:

Այն դեպքում, երբ ֆինանսական հաստատությունն անկարող է բավարարել վերոհիշյալ «(ա)»-«(դ)» կետերով սահմանված ՀՊՈԻ կիրառելի պահանջները (դրանց կիրառության աստիճանը ռիսկահենք մոտեցմամբ որոշելու պարագայում), հաստատությունից պետք է պահանջվի չբացել հաշիվը, չսկսել գործարար հարաբերությունը կամ չկատարել գործարքը, կամ պետք է պահանջվի դադարեցնել գործարար հարաբերությունը և դիտարկել տվյալ հաճախորդի վերաբերյալ կասկածելի գործարքի մասին հաշվետվություններ կայացնելու նպատակահարմարությունը:

Նշված պահանջները պետք է կիրառվեն բոլոր նոր հաճախորդների նկատմամբ, իսկ առկա հաճախորդների նկատմամբ ֆինանսական հաստատությունները դրանք պետք է կիրառեն էականության և ռիսկայնության հիման վրա՝ համապատասխան դեպքերում իրականացնելով այդպիսի առկա հարաբերությունների պատշաճ ուսումնասիրություն:

11. Տեղեկատվության պահպանումը

Ֆինանսական հաստատություններից պետք է պահանջվի ներպետական և միջազգային գործարքներին վերաբերող անհրաժեշտ բոլոր տվյալները պահպանել գործարքն ավարտելուց հետո առնվազն հինգ տարի ժամկետով,

ինչը նրանց հնարավորություն կտա անարգել պատասխանել տեղեկատվության տրամադրման վերաբերյալ իրավասու մարմիններից ստացված հարցումներին: Նշված տվյալները պետք է բավարար լինեն առանձին գործարքների (այդ թվում, առկայության դեպքում, գործարքի գումարի և արժույթի վերաբերյալ տեղեկատվության) «վերականգնումը» հնարավոր դարձնելու համար՝ անհրաժեշտության դեպքում հանցավոր գործունեության քրեական հետապնդում իրականացնելիս որպես ապացույց օգտագործելու նպատակով:

Ֆինանսական հաստատություններից պետք է պահանջվի ՀՊՈԻ միջոցառումների իրականացման արդյունքում ձեռք բերված բոլոր տվյալները (օրինակ՝ անձնագրի, նույնականացման քարտի, վարորդական իրավունքի կամ նմանատիպ նույնականացման փաստաթղթերի կրկնօրինակները), հաշիվների վերաբերյալ տեղեկությունները և գործարար նամակագրությունը, ինչպես նաև կատարված բոլոր վերլուծությունների (օրինակ՝ բարդ կամ արտասովոր մեծ գործարքների բնույթն ու նպատակը պարզելու համար կատարված հարցումների) արդյունքները պահպանել գործարար հարաբերությունը դադարեցնելուց կամ միանգամյա գործարքը կատարելուց հետո առնվազն հինգ տարի ժամկետով:

Ֆինանսական հաստատություններից պետք է օրենքով պահանջվի պահպանել գործարքներին վերաբերող տվյալները և ՀՊՈԻ միջոցառումների իրականացման արդյունքում ձեռք բերված տեղեկատվությունը:

ՀՊՈԻ տեղեկատվությունը և գործարքներին վերաբերող տվյալները պետք է հասանելի լինեն համապատասխան լիազորություններով օժտված ներպետական իրավասու մարմիններին:

ԼՐԱՅՈՒՅԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

12. Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք*

Օտարերկրյա ՔԱՌԻԱ-ների մասով, ի հավելումն սովորական ՀՊՈԻ միջոցառումների, ֆինանսական հաստատություններից պետք է պահանջվի.

- (ա) ունենալ ռիսկերի կառավարման համակարգեր հաճախորդի կամ իրական շահառուի՝ ՔԱՌԻԱ լինելու հանգամանքը պարզելու համար,
- (բ) այդպիսի գործարար հարաբերություն հաստատելու (կամ, առկա հաճախորդների դեպքում, գործարար հարաբերությունը շարունակելու) համար ստանալ ավագ ղեկավարության համաձայնությունը,
- (գ) ողջամիտ քայլեր ձեռնարկել՝ կարողության աղբյուրը և միջոցների

աղբյուրը պարզելու համար, և

- (դ) իրականացնել գործարար հարաբերության հավելյալ ընթացիկ մոնիտորինգ:

Ֆինանսական հաստատություններից պետք է պահանջվի ողջամիտ քայլեր ձեռնարկել հաճախորդի կամ իրական շահառուի՝ տեղական ՔԱՈՒԱ կամ միջազգային կազմակերպություններում առանցքային գործառնություններ իրականացնող կամ իրականացրած անձ լինելու հանգամանքը պարզելու համար: Նման անձանց հետ բարձր ռիսկային գործարար հարաբերությունների դեպքում ֆինանսական հաստատություններից պետք է պահանջվի իրականացնել «(բ)», «(գ)» և «(դ)» պարբերություններով նախատեսված միջոցառումները:

Բոլոր տեսակի ՔԱՈՒԱ-ներին վերաբերող պահանջները պետք է կիրառվեն նաև նրանց ընտանիքի անդամների կամ նրանց հետ փոխկապակցված անձանց նկատմամբ:

13. Թղթակցային բանկային հարաբերությունները*

Անդրսահմանային թղթակցային բանկային հարաբերությունների և համանման այլ հարաբերությունների մասով, ի հավելումն սովորական ՀՊՈՒ միջոցառումների, ֆինանսական հաստատություններից պետք է պահանջվի.

- (ա) հավաքել բավարար տեղեկություններ թղթակից հաստատության մասին, որպեսզի հնարավոր լինի լիարժեք պատկերացում կազմել դրա բիզնեսի էության վերաբերյալ, և հրապարակայնորեն հասանելի տեղեկատվության հիման վրա պարզել հաստատության հեղինակությունը և վերահսկողության որակը, այդ թվում՝ այն հանգամանքը, թե արդյոք դրա նկատմամբ ՓԼ/ԱՖ կապակցությամբ իրականացվել է նախաքննություն կամ ձեռնարկվել է կարգավորող մարմնի որոշակի գործողություն,
- (բ) գնահատել թղթակից հաստատության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի հսկողական մեխանիզմները,
- (գ) նախքան նոր թղթակցային հարաբերություններ հաստատելը ստանալ ավագ ղեկավարության համաձայնությունը,
- (դ) հստակ պատկերացում ունենալ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասով յուրաքանչյուր հաստատության պատասխանատվության շրջանակի մասին, և
- (ե) «միջանցիկ հաշիվների» մասով՝ վստահանալ, որ թղթակից հաստա-

տույությունը ՀՊՈԻ է կատարել իր այն հաճախորդների նկատմամբ, որոնք ուղղակիորեն կարող են օգտվել գործընկեր բանկի հաշիվներից, և որ գործընկեր բանկի պահանջի դեպքում կարող է տրամադրել վերաբերելի ՀՊՈԻ տեղեկատվությունը:

Ֆինանսական հաստատություններին պետք է արգելվի թղթակցային բանկային հարաբերություններ հաստատել կամ շարունակել այդ հարաբերությունները կեղծ բանկերի հետ: Ֆինանսական հաստատություններից պետք է պահանջվի վստահանալ, որ թղթակից ֆինանսական հաստատությունները չեն թույլատրում իրենց հաշիվների օգտագործումը կեղծ բանկերի կողմից:

14. Փողի կամ արժեքների փոխանցման ծառայությունները*

Երկրները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ հավաստիանալու համար, որ փողի կամ արժեքների փոխանցման ծառայություններ (ՓԱՓԾ) մատուցող ֆիզիկական կամ իրավաբանական անձինք լիցենզավորվում կամ գրանցվում են, և որ առկա են նրանց գործունեությունը ՖԱԹՖ-ի Հանձնարարականներով սահմանված վերաբերելի պահանջների կատարման տեսանկյունից մոնիտորինգի ենթարկող ու դրանց համապատասխանությունն ապահովող արդյունավետ համակարգեր: Երկրները պետք է ձեռնարկեն միջոցներ առանց լիցենզիայի կամ գրանցման ՓԱՓԾ մատուցող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հայտնաբերելու և նրանց նկատմամբ համապատասխան պատժամիջոցներ կիրառելու համար:

Ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը հանդես է գալիս գործակալի դերում, նույնպես պետք է լիցենզավորվի կամ գրանցվի իրավասու մարմնի կողմից, կամ ՓԱՓԾ մատուցողներից պետք է պահանջվի վարել իրենց գործակալների արդիական ցուցակ, որը պետք է հասանելի լինի այն երկրի իրավասու մարմիններին, որտեղ գործունեություն են ծավալում տվյալ ՓԱՓԾ մատուցողը և դրա գործակալները: Երկրները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ հավաստիանալու համար, որ գործակալների ծառայություններից օգտվող ՓԱՓԾ մատուցողները նրանց ընդգրկում են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի իրենց ծրագրերում և մոնիտորինգի են ենթարկում նրանց համապատասխանությունն այդ ծրագրերին:

15. Նոր տեխնոլոգիաները

Երկրները և ֆինանսական հաստատությունները պետք է բացահայտեն և գնահատեն այն հնարավոր ՓԼ/ԱՖ ռիսկերը, որոնք կարող են ի հայտ գալ՝ կապված (ա) նոր պրոդուկտների մշակման ու նոր բիզնես գործառնու-

թյունների իրականացման, այդ թվում՝ ծառայությունների մատուցման նոր եղանակների գործարկման, և (բ) թե նոր, թե արդեն գոյություն ունեցող պրոդուկտների մասով նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառման հետ: Ֆինանսական հաստատությունների դեպքում, նման ռիսկերի գնահատումը պետք է կատարվի նախքան այդպիսի նոր պրոդուկտների և գործառնությունների իրականացումը կամ նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառումը: Ֆինանսական հաստատությունները պետք է ձեռնարկեն ռիսկերի կառավարմանն ու զսպմանն ուղղված պատշաճ միջոցներ:

16. Դրամական փոխանցումները*

Երկրները պետք է հավաստիանան, որ ֆինանսական հաստատությունները դրամական փոխանցումներում կամ դրանց կից հաղորդագրություններում ներառում են փոխանցում կատարողի վերաբերյալ անհրաժեշտ և ստույգ տեղեկությունները, ինչպես նաև փոխանցում ստացողի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները՝ դրանց առկայությունն ապահովելով փոխանցման շղթայի բոլոր օղակներում:

Երկրները պետք է հավաստիանան, որ ֆինանսական հաստատությունները մոնիտորինգի են ենթարկում դրամական փոխանցումները՝ փոխանցում կատարողի կամ փոխանցում ստացողի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները չպարունակող փոխանցումները հայտնաբերելու համար, և ձեռնարկում են համապատասխան միջոցներ:

Երկրները պետք է հավաստիանան, որ, դրամական փոխանցումների պրոցեսինգի համատեքստում, ֆինանսական հաստատությունները ձեռնարկում են սառեցման միջոցներ, և պետք է արգելեն ցուցակված անձանց ու կազմակերպությունների հետ գործարքներ իրականացնելը, ինչին առնչվող պարտականություններն ամրագրված են ահաբեկչությունն ու ահաբեկչության ֆինանսավորումը կանխարգելելու և դրանց հակազդելու վերաբերյալ ՄԱԿ ԱԽ համապատասխան բանաձևերով, մասնավորապես՝ ՄԱԿ ԱԽ 1267 (1999) բանաձևով և դրա հաջորդող բանաձևերով, ինչպես նաև 1373 (2001) բանաձևով:

ԵՐՐՈՐԴ ԱՆՁԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՐԾԵԼԸ, ՆԵՐՔԻՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԵՐԸ

17. Երրորդ անձի միջոցով գործելը*

Երկրները կարող են ֆինանսական հաստատություններին թույլատրել երրորդ անձի միջոցով իրականացնել Հանձնարարական 10-ի ներքո ՀՊՈԻ գործընթացի «(ա)»-«(գ)» տարրերը կամ հանդես գալ բիզնեսը ներկայացնողի

դերում, եթե բավարարվում են ստորև սահմանված պայմանները: Նման թույլտվության առկայության դեպքում ՀՊՈԻ միջոցառումների վերջնական պատասխանատվությունը շարունակում է կրել երրորդ անձի միջոցով գործող ֆինանսական հաստատությունը:

Բավարարման ենթակա պայմաններն են.

- (ա) երրորդ անձի միջոցով գործող ֆինանսական հաստատությունը պետք է անմիջապես ստանա Հանձնարարական 10-ի ներքո ՀՊՈԻ գործընթացի «(ա)»-«(զ)» տարրերին վերաբերող անհրաժեշտ տեղեկությունները,
- (բ) ֆինանսական հաստատությունը պետք է ձեռնարկի քայլեր վստահանալու համար, որ նույնականացման տվյալների և ՀՊՈԻ պահանջներին առնչվող այլ վերաբերելի փաստաթղթերի կրկնօրինակները պահանջի դեպքում անհապաղ կտրամադրվեն երրորդ անձի կողմից,
- (գ) ֆինանսական հաստատությունը պետք է վստահանա, որ երրորդ անձի գործունեությունը կարգավորվում և վերահսկվում կամ մոնիտորինգի է ենթարկվում՝ Հանձնարարականներ 10-ով և 11-ով սահմանված ՀՊՈԻ-ի և տեղեկատվության պահպանման պահանջների կատարման առումով, և որ երրորդ անձը պատշաճ միջոցներ է ձեռնարկում այդ պահանջներին համապատասխանությունն ապահովելու ուղղությամբ,
- (դ) սահմանված պայմանները բավարարող երրորդ անձի գտնվելու վայրի երկրների թույլատրելի ցանկը որոշելիս իրավասու մարմինները պետք է հաշվի առնեն երկրներում ռիսկի մակարդակի վերաբերյալ առկա տեղեկատվությունը:

Նույն ֆինանսական խմբին պատկանող երրորդ անձի միջոցով գործող ֆինանսական հաստատությունների դեպքում, եթե. (1) խումբը կիրառում է ՀՊՈԻ-ի և տեղեկատվության պահպանման պահանջներ Հանձնարարականներ 10-12-ին համապատասխան կերպով, ինչպես նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ծրագրեր Հանձնարարական 18-ին համապատասխան կերպով, և (2) վերոհիշյալ ՀՊՈԻ-ի և տեղեկատվության պահպանման պահանջների և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ծրագրերի կատարումը խմբի մակարդակով արդյունավետ կերպով վերահսկվում է որևէ իրավասու մարմնի կողմից, պատկան իրավասու մարմինները կարող են նաև ընդունել, որ ֆինանսական հաստատությունը վերոհիշյալ «(բ)» և «(գ)» կետերով սահմանված միջոցառումներն իրականացնում է խմբի մակարդակով իրականացվող իր ծրագրերի միջոցով, և կարող են որոշել, որ «(դ)» կետով սահմանված միջոցառման իրականացումը երրորդ անձի միջոցով գործելու համար անհրաժեշտ նախապայման չէ, եթե խմբի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի քաղաքականությունները պատշաճ կերպով զսպում են երկրներին հատուկ բարձր ռիսկերը:

18. Ներքին հսկողությունը, օտարերկրյա մասնաձյուղերը և դուստր ձեռնարկությունները*

Ֆինանսական հաստատություններից պետք է պահանջվի իրականացնել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ծրագրեր: Ֆինանսական խմբերից պետք է պահանջվի իրականացնել ամբողջ խմբի մակարդակով ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ծրագրեր, այդ թվում՝ ապահովելով խմբի ներսում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նպատակով պահանջվող տեղեկատվության փոխանակման քաղաքականությունների և ընթացակարգերի առկայությունը:

Ֆինանսական հաստատություններից պետք է պահանջվի ապահովել իրենց օտարերկրյա մասնաձյուղերի և դուստր ձեռնարկությունների կողմից մայր ընկերության գործունեության վայրի երկրում ՖԱԹՖ-ի Հանձնարարականների իմպլեմենտացման նպատակով սահմանված ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջներին համահունչ միջոցների ձեռնարկումը՝ ֆինանսական խմբերի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ծրագրերի միջոցով:

19. Բարձր ռիսկային երկրները*

Ֆինանսական հաստատություններից պետք է պահանջվի իրականացնել հավելյալ պատշաճ ուսումնասիրության միջոցառումներ, երբ հաստատվում են գործարար հարաբերություններ կամ կատարվում են գործարքներ ֆիզիկական և իրավաբանական անձանց, այդ թվում՝ ֆինանսական հաստատությունների հետ այն երկրներից, որոնց կապակցությամբ ՖԱԹՖ-ը հանդես է եկել համապատասխան հայտարարությամբ: Իրականացվող հավելյալ պատշաճ ուսումնասիրության միջոցառումների տեսակները պետք է լինեն արդյունավետ և ռիսկերին համաչափ:

Երկրները պետք է կարողանան պատշաճ հակազդեցության միջոցներ կիրառել այն դեպքում, երբ ՖԱԹՖ-ը հանդես է եկել համապատասխան հայտարարությամբ: Երկրները պետք է կարողանան հակազդեցության միջոցներ կիրառել նաև անկախ ՖԱԹՖ-ի՝ համապատասխան հայտարարությամբ հանդես գալու հանգամանքից: Հակազդեցության միջոցները պետք է լինեն արդյունավետ և ռիսկերին համաչափ:

ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄԸ

20. Կասկածելի գործարքների մասին հաշվետվությունների ներկայացումը*

Եթե ֆինանսական հաստատությունը կասկածում է կամ ունի ողջամիտ հիմքեր կասկածելու, որ միջոցները ստացվել են հանցավոր գործունեության արդյունքում կամ կապված են ահաբեկչության ֆինանսավորման հետ, ֆինանսական հաստատությունից պետք է օրենքով պահանջվի իր կաս-

կաձների մասին պատշաճ կերպով հաշվետվություն ներկայացնել ֆինանսական հետախուզության մարմնին (ՖՀՄ):

21. Տեղեկատվության կոնֆիդենցիալությունը և կասկածների չբացահայտումը

Ֆինանսական հաստատությունները, դրանց տնօրենները, պաշտոնատար անձինք և աշխատակիցները պետք է.

- (ա) օրենքով պաշտպանված լինեն քրեական և քաղաքացիական պատասխանատվությունից որևէ պայմանագրով կամ օրենսդրական, կարգավորիչ կամ վարչական ակտի դրույթով նախատեսված՝ տեղեկատվության բացահայտման արգելքները խախտելու համար այն դեպքերում, երբ իրենց կասկածների մասին բարեխղճորեն հաշվետվություն են ներկայացում ՖՀՄ-ին, անգամ եթե հստակ չեն իմացել, թե որն է եղել ենթադրյալ հանցավոր գործունեությունը, ինչպես նաև անկախ անօրինական գործունեության փաստացի տեղի ունենալու կամ չունենալու հանգամանքից, և
- (բ) ենթակա լինեն օրենքով սահմանված արգելքի՝ բացահայտելու (հայտնի դարձնելու) այն փաստը, որ ՖՀՄ-ին ներկայացվում է կասկածելի գործարքի մասին հաշվետվություն (ԿԳՀ) կամ դրան առնչվող տեղեկատվություն:

ԼԱԽԱՏԵՍՎԱԾ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

22. ՆՈՖԳՏՄ-ներ. հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը*

Հանձնարարականներ 10-ով, 11-ով, 12-ով, 15-ով և 17-ով սահմանված՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության և տեղեկատվության պահպանման պահանջները նախատեսված ոչ ֆինանսական գործունեության տեսակների և մասնագիտությունների (ՆՈՖԳՏՄ) նկատմամբ պետք է կիրառվեն հետևյալ իրավիճակներում.

- (ա) Խաղատների նկատմամբ՝ այն դեպքում, երբ հաճախորդները կատարում են ֆինանսական գործարքներ, որոնց գումարը հավասար կամ մեծ է կիրառելի նախատեսված շեմից,
- (բ) Անշարժ գույքի գործակալների նկատմամբ՝ այն դեպքում, երբ մասնակցում են հաճախորդի համար անշարժ գույքի առքի և վաճառքի գործարքների,
- (գ) Թանկարժեք մետաղների և քարերի դիլերների նկատմամբ՝ այն դեպքում, երբ հաճախորդի հետ իրականացնում են կանխիկով որևէ գոր-

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ, ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԶԵՆՔԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՆԵՐ

ծարք, որի գումարը հավասար կամ մեծ է կիրառելի նախատեսված շեմից,

(դ) Փաստաբանների, նոտարների, իրավաբանական ծառայություններ մատուցող այլ անկախ մասնագետների և հաշվապահների նկատմամբ՝ այն դեպքում, երբ հաճախորդի համար նախապատրաստում կամ իրականացնում են գործարքներ՝ կապված հետևյալ տեսակի գործառնությունների հետ.

- անշարժ գույքի առք և վաճառք,
- հաճախորդի դրամական միջոցների, արժեթղթերի կամ այլ ակտիվների կառավարում,
- բանկային, խնայողական կամ արժեթղթերի հաշիվների կառավարում,
- ընկերությունների ստեղծման, գործունեության վարման կամ կառավարման համար մասնակցավճարների հավաքագրման կազմակերպում,
- իրավաբանական անձանց կամ կազմավորումների ստեղծում, գործունեության վարում կամ կառավարում, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների առք և վաճառք:

(ե) Տրաստային և ընկերությունների ներկայացման ծառայություններ մատուցողների նկատմամբ՝ այն դեպքում, երբ հաճախորդի համար նախապատրաստում կամ իրականացնում են գործարքներ՝ կապված հետևյալ տեսակի գործառնությունների հետ.

- իրավաբանական անձանց կազմավորման գործակալի դերում հանդես գալը,
- ընկերության տնօրենի կամ քարտուղարի, ընկերակցության կազմի մեջ մտնող գործընկերոջ կամ, այլ իրավաբանական անձի պարագայում, համանման որևէ այլ դերում հանդես գալը (կամ այդ դերում մեկ այլ անձի հանդես գալը կազմակերպելը),
- ընկերությանը, ընկերակցությանը կամ որևէ այլ իրավաբանական անձի կամ կազմավորման գրանցված գրասենյակ, բիզնես հասցե կամ գործունեության վայր, նամակագրության կամ վարչական հասցե տրամադրելը,
- ուղղակի տրաստի կազմում որպես տրաստային կառավարիչ հանդես գալը (կամ այդ դերում մեկ այլ անձի հանդես գալը կազ-

մակերպելը) կամ մեկ այլ տեսակի իրավաբանական կազմավորման համար դրան համարժեք գործառույթ կատարելը,

- մեկ այլ անձի համար որպես անվանական բաժնետեր հանդես գալը (կամ այդ դերում մեկ այլ անձի հանդես գալը կազմակերպելը):

23. ՆՈՖԳՏՄ-ներ. այլ միջոցառումները*

Հանձնարարականներ 18-21-ով սահմանված պահանջները պետք է կիրառվեն բոլոր նախատեսված ոչ ֆինանսական գործունեության տեսակների և մասնագիտությունների (ՆՈՖԳՏՄ) նկատմամբ՝ հետևյալ իրավիճակներում.

- (ա) Փաստաբանները, նոտարները, իրավաբանական ծառայություններ մատուցող այլ անկախ մասնագետները և հաշվապահները կասկածելի գործարքի մասին հաշվետվություն պետք է ներկայացնեն այն դեպքում, երբ հաճախորդի անունից կամ նրա համար մասնակցում են Հանձնարարական 22-ի «դ» պարբերությամբ նկարագրված գործառնություններին առնչվող ֆինանսական գործարքների. ընդ որում, խիստ ցանկալի է, որ երկրները ԿԳՀ ներկայացնելու պահանջը տարածեն նաև հաշվապահի մասնագիտական գործունեության մնացած տեսակների, այդ թվում՝ աուդիտորական գործունեության վրա,
- (բ) Թանկարժեք մետաղների և քարերի դիլերները կասկածելի գործարքի մասին հաշվետվություն պետք է ներկայացնեն այն դեպքում, երբ հաճախորդի հետ իրականացնում են կանխիկով որևէ գործարք, որի գումարը հավասար կամ մեծ է կիրառելի նախատեսված շեմից,
- (գ) Տրաստային և ընկերությունների ներկայացման ծառայություններ մատուցողները կասկածելի գործարքի մասին հաշվետվություն պետք է ներկայացնեն այն դեպքում, երբ հաճախորդի անունից կամ նրա համար մասնակցում են Հանձնարարական 22-ի «ե» պարբերությամբ նկարագրված գործառնություններին առնչվող գործարքների:

Ե. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԹԱՓԱՆՅԻԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

24. Իրավաբանական անձանց թափանցիկությունը և իրական շահառուները*

Երկրները պետք է միջոցներ ձեռնարկեն ՓԼ/ԱՖ նպատակով իրավաբանական անձանց չարաշահումը կանխարգելելու համար: Երկրները պետք է ապահովեն իրավաբանական անձանց իրական շահառուների և իրավաբանական անձանց նկատմամբ հսկողություն իրականացնող անձանց

վերաբերյալ համարժեք, ստույգ և արդիական տեղեկությունների առկայությունը, որոնք կարող են ժամանակին ձեռք բերվել իրավասու մարմինների կողմից կամ հասանելի դարձվել նրանց համար: Մասնավորապես, այն երկրները, որտեղ իրավաբանական անձանց թույլատրվում է թողարկել ըստ ներկայացնողի բաժնետոմսեր կամ ըստ ներկայացնողի բաժնետոմսերի հավաստագրեր, կամ թույլատրվում է ունենալ անվանական բաժնետերեր և անվանական տնօրեններ, պետք է ձեռնարկեն արդյունավետ միջոցներ՝ հավաստիանալու համար, որ դրանք չեն չարաշահվում ՓԼ/ԱՖ նպատակով: Երկրները պետք է դիտարկեն այնպիսի միջոցներ սահմանելու նպատակահարմարությունը, որոնք Հանձնարարականներ 10-ով և 22-ով սահմանված պահանջները կատարելիս ֆինանսական հաստատությունների և ՆՈՖԳՏՄ-ների համար կոյուրացնեն իրական շահառուների և հսկողություն իրականացնող անձանց վերաբերյալ տեղեկությունների հասանելիությունը:

25. Իրավաբանական կազմավորումների թափանցիկությունը և իրական շահառուները*

Երկրները պետք է միջոցներ ձեռնարկեն ՓԼ/ԱՖ նպատակով իրավաբանական կազմավորումների չարաշահումը կանխարգելելու համար: Մասնավորապես, երկրները պետք է ապահովեն ուղղակի տրաստների, այդ թվում՝ տրաստի հիմնադրի, տրաստային կառավարչի և շահառուների վերաբերյալ համարժեք, ստույգ և արդիական տեղեկությունների առկայությունը, որոնք կարող են ժամանակին ձեռք բերվել իրավասու մարմինների կողմից կամ հասանելի դարձվել նրանց համար: Երկրները պետք է դիտարկեն այնպիսի միջոցներ սահմանելու նպատակահարմարությունը, որոնք Հանձնարարականներ 10-ով և 22-ով սահմանված պահանջները կատարելիս ֆինանսական հաստատությունների և ՆՈՖԳՏՄ-ների համար կոյուրացնեն իրական շահառուների և հսկողություն իրականացնող անձանց վերաբերյալ տեղեկությունների հասանելիությունը:

Զ. ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՅԼ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

26. Ֆինանսական հաստատությունների կարգավորումը և վերահսկողությունը*

Երկրները պետք է հավաստիանան, որ ֆինանսական հաստատությունները ենթակա են համարժեք կարգավորման ու վերահսկողության և արդյունավետ կերպով կատարում են ՖԱԹՖ-ի Հանձնարարականները: Իրավասու

մարմինները կամ ֆինանսական վերահսկողները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ իրավական կամ կարգավորման միջոցները՝ կանխելու հանցագործների կամ նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից ֆինանսական հաստատության կապիտալում նշանակալից մասնակցություն կամ վերահսկիչ բաժնեմաս ունենալը կամ այդպիսի մասնակցության կամ բաժնեմասի իրական շահառու լինելը, կամ ֆինանսական հաստատությունում կառավարման գործառույթ կատարելը: Երկրները չպետք է թույլ տան կեղծ բանկերի ստեղծումը կամ դրանց գործունեության շարունակումը:

Հիմնարար սկզբունքների կիրառության դաշտում գործող ֆինանսական հաստատությունների մասով, պրուդենցիալ նպատակներով կիրառվող և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի տեսանկյունից վերաբերելի կարգավորման ու վերահսկողական միջոցները պետք է համանման ձևով կիրառվեն ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նպատակներով: Սա պետք ներառի նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նպատակով կոնսոլիդացված խմբային վերահսկողությունը:

Մնացած ֆինանսական հաստատությունները պետք է լիցենզավորվեն կամ գրանցվեն և համարժեք կերպով կարգավորվեն՝ ենթարկվելով տվյալ ոլորտում ՓԼ/ԱՖ ռիսկերը հաշվի առնող վերահսկողության կամ մոնիտորինգի: Որպես նվազագույն պահանջ, փողի կամ արժեքների փոխանցման ծառայություններ և փողի կամ արժույթի փոխարկման ծառայություններ մատուցող ֆինանսական հաստատությունները պետք է լիցենզավորվեն կամ գրանցվեն և ենթակա լինեն ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ներպետական պահանջներին համապատասխանության մոնիտորինգի և ապահովման արդյունավետ համակարգերի:

27. Վերահսկողների լիազորությունները

Վերահսկողները պետք է օժտված լինեն համարժեք լիազորություններով՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջներին ֆինանսական հաստատությունների համապատասխանությունը վերահսկելու կամ մոնիտորինգի ենթարկելու և ապահովելու համար, այդ թվում՝ պետք է իրավասություն ունենան կատարել ստուգումներ: Վերահսկողները պետք է իրավասու լինեն ֆինանսական հաստատություններին պարտադրել նշված համապատասխանության մոնիտորինգին առնչվող ցանկացած տեղեկատվություն տրամադրումը և Հանձնարարական 35-ի համաձայն կիրառել պատժամիջոցներ՝ սահմանված պահանջներին չհամապատասխանելու համար: Դա պետք է ներառի կարգապահական և ֆինանսական մի շարք պատժամիջոցներ կիրառելու, այդ թվում, համապատասխան դեպքերում, ֆինանսական հաստատության

լիցենզիան հետ կանչելու, սահմանափակելու կամ կասեցնելու լիազորությունը:

28. ՆՈՖԳՏՄ-ների կարգավորումը և վերահսկողությունը*

Նախատեսված ոչ ֆինանսական գործունեության տեսակները և մասնագիտությունները պետք է ենթակա լինեն կարգավորման և վերահսկողության՝ ըստ ստորև ներկայացվածի.

(ա) Խաղատները պետք է ենթակա լինեն համակողմանի կարգավորման և վերահսկողության ռեժիմի, որն ապահովում է դրանց կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջոցառումների արդյունավետ իրականացումը: Այդ նպատակով առնվազն պետք է ապահովել հետևյալը.

- Խաղատները պետք է լիցենզավորվեն,
- Իրավասու մարմինները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ իրավական կամ կարգավորման միջոցները՝ կանխելու հանցագործների կամ նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից խաղատան կապիտալում նշանակալից մասնակցություն կամ վերահսկիչ բաժնեմաս ունենալը, կամ այդպիսի մասնակցության կամ բաժնեմասի իրական շահառու լինելը, կամ խաղատանը կառավարման գործառույթ կատարելը, կամ խաղատան օպերատոր լինելը, և
- Իրավասու մարմինները պետք է հավաստիանան, որ խաղատներն արդյունավետ կերպով վերահսկվում են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջներին համապատասխանության մասով:

(բ) Երկրները պետք է ապահովեն ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջներին ՆՈՖԳՏՄ-ների այլ տեսակների համապատասխանության մոնիտորինգի և ապահովման արդյունավետ համակարգերի առկայությունը: Սա պետք է իրագործվի ռիսկահենք հիմունքներով: Նշվածը կարող է իրականացվել. (1) վերահսկողի կողմից, կամ (2) պատկան ինքնակարգավորվող մարմնի կողմից (ԻԿՄ)՝ պայմանով, որ այդ մարմինը կարող է ապահովել իր անդամների համապատասխանությունը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջներին:

Վերահսկողը կամ ԻԿՄ-ն պետք է նաև. (1) ձեռնարկեն անհրաժեշտ միջոցները՝ կանխելու հանցագործների կամ նրանց հետ փոխկապակցված անձանց մասնագիտական որակավորում ստանալը կամ ՆՈՖԳՏՄ-ի կապիտալում նշանակալից մասնակցություն կամ վերահսկիչ բաժնեմաս ունենալը, կամ այդպիսի մասնակցության կամ

բաժնեմասի իրական շահառու լինելը, կամ ՆՈՖԳՏՄ-ում կառավարման գործառույթ կատարելը, ինչը կարող է կատարվել, օրինակ, մարդկանց «պատշաճ և համապատասխան» լինելու հանգամանքը ստուգելու միջոցով, և (2) իրավասու լինեն Հանձնարարական 35-ի համաձայն կիրառել արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ պատժամիջոցներ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջներին չհամապատասխանելու համար:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆԸ ԵՎ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

29. Ֆինանսական հետախուզության մարմինը*

Երկրները պետք է ստեղծեն ֆինանսական հետախուզության մարմին (ՖՀՄ), որը հանդես է գալիս որպես (ա) կասկածելի գործարքների մասին հաշվետվությունները և (բ) փողերի լվացմանը, դրան նախորդող հանցագործություններին ու ահաբեկչության ֆինանսավորմանն առնչվող այլ տեղեկատվությունը ստացող և վերլուծող, ինչպես նաև այդ վերլուծության արդյունքները տրամադրող ազգային կենտրոն: ՖՀՄ-ն պետք է կարողանա հաշվետու անձանցից ձեռք բերել լրացուցիչ տեղեկություններ, և պետք է ժամանակին հասանելիություն ունենա ֆինանսական, վարչական և իրավապահ բնույթի տեղեկատվության, որն անհրաժեշտ է իր գործառույթների պատշաճ իրականացման համար:

30. Իրավապահ և քննչական գործառույթներ իրականացնող մարմինների պարտականությունները*

Երկրները պետք է ապահովեն նշանակված իրավապահ մարմինների առկայությունը, որոնց վրա կդրվի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ներպետական քաղաքականությունների շրջանակում փողերի լվացման, դրան նախորդող հանցագործությունների և ահաբեկչության ֆինանսավորման գործերի պատշաճ նախաքննությունն ապահովելու պատասխանատվությունը: Այս նշանակված մարմինները պետք է առնվազն հանցավոր ճանապարհով ստացված գույք առաջացնող բոլոր հիմնական հանցագործությունների դեպքում փողերի լվացման, դրան նախորդող հանցագործությունների և ահաբեկչության ֆինանսավորման գործերով քրեական հետապնդում իրականացնելիս նախաձեռնողական կերպով կատարեն զուգահեռ ֆինանսական քննություն: Սա պետք է ներառի այն դեպքերը, երբ նախորդող հանցագործությունը կատարվել է տվյալ երկրի տարածքից դուրս:

Երկրները պետք է հավաստիանան, որ իրավասու մարմինները պարտավոր են շուտափույթ կերպով հայտնաբերել, հետապնդել և սառեցում կամ

արգելադրում նախաձեռնել այն գույքի նկատմամբ, որը ենթակա է կամ կարող է ենթակա դառնալ բռնագրավման, կամ կասկածվում է հանցավոր ճանապարհով ստացված լինելու մեջ: Երկրները պետք է նաև անհրաժեշտության դեպքում ստեղծեն ֆինանսական կամ ակտիվների հետ կապված քննության գծով մասնագիտացած մշտական կամ ժամանակավոր խմբեր: Երկրները պետք է ապահովեն անհրաժեշտության դեպքում այլ երկրների համապատասխան իրավասու մարմինների հետ համագործակցությամբ գործերի քննության հնարավորությունը:

31. Իրավապահ և քննչական գործառույթներ իրականացնող մարմինների լիազորությունները

Փողերի լվացման, դրան նախորդող հանցագործությունների և ահաբեկչության ֆինանսավորման գործերի նախաքննություն իրականացնող իրավասու մարմինները պետք է կարողանան հասանելիություն ստանալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերին և տեղեկատվությանը՝ նախաքննության, քրեական հետապնդման և դրանց հետ կապված գործողություններում օգտագործելու համար: Սա պետք է ներառի հարկադիր կարգով այնպիսի միջոցառումներ իրականացնելու լիազորությունը, ինչպիսիք են ֆինանսական հաստատությունների, ՆՈՏԳՏՄ-ների և այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց մոտ պահպանվող տվյալների տրամադրումը պարտադրելը, անձանց կամ շինություններ խուզարկելը, վկաներից ցուցմունք վերցնելը և ապացույցներ հավաքելն ու առգրավելը:

Երկրները պետք է հավաստիանան, որ նախաքննություն իրականացնող իրավասու մարմինները կարող են փողերի լվացման, դրան նախորդող հանցագործությունների և ահաբեկչության ֆինանսավորման գործերի նախաքննության նպատակով կիրառել քննչական գործողությունների լայն տեսականի: Նման քննչական գործողությունների թվին են դասվում օպերատիվ ներդրումը, հաղորդակցության միջոցների վերահսկումը, համակարգչային տեղեկատվական համակարգերի հասանելիության ապահովումը և վերահսկելի մատակարարումը: Բացի այդ, երկրները պետք է ունենան արդյունավետ մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս ժամանակին պարզել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց՝ հաշիվներ ունենալու կամ վերահսկելու հանգամանքը, ինչպես նաև ապահովել իրավասու մարմինների կողմից առանց սեփականատիրոջ նախնական ծանուցման ակտիվներ հայտնաբերելու գործընթացի առկայությունը: Փողերի լվացման, դրան նախորդող հանցագործությունների և ահաբեկչության ֆինանսավորման գործերի նախաքննություն իրականացնող իրավասու մարմինները

պետք է կարողանան պահանջի դեպքում ստանալ ՖՀՄ-ի մոտ պահպանվող ամբողջ վերաբերելի տեղեկատվությունը:

32. Կանխիկի անդրսահմանային տեղափոխումը*

Երկրները պետք է միջոցներ ձեռնարկեն արժույթի և ըստ ներկայացնողի փոխանցելի գործիքների անդրսահմանային տեղափոխումները հսկելու նպատակով, այդ թվում՝ հայտարարագրման համակարգի և/կամ բացահայտման համակարգի միջոցով:

Երկրները պետք է հավաստիանան, որ իրենց իրավասու մարմինները օրենքով սահմանված իրավասություն ունեն կասեցնել կամ սահմանափակել արժույթի կամ ըստ ներկայացնողի փոխանցելի գործիքների շարժը, երբ առկա են փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման կամ նախորդող հանցագործությունների վերաբերյալ կասկածներ, կամ երբ ներկայացվել է կեղծ հայտարարագիր, կամ բացահայտվել են կեղծ տեղեկություններ:

Երկրները պետք է ապահովեն կեղծ հայտարարագիր (հայտարարագրեր) ներկայացնող կամ կեղծ տեղեկություն(ներ) բացահայտող անձանց նկատմամբ կիրառելի արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ պատժամիջոցների առկայությունը: Փողերի լվացմանը, ահաբեկչության ֆինանսավորմանը կամ նախորդող հանցագործություններին առնչվող արժույթի կամ ըստ ներկայացնողի փոխանցելի գործիքների դեպքում երկրները պետք է նաև ձեռնարկեն միջոցներ, այդ թվում՝ Հանձնարարական 4-ին համապատասխան օրենսդրորեն սահմանված միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս բռնագրավել նման արժույթը կամ ըստ ներկայացնողի փոխանցելի գործիքները:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐ

33. Վիճակագրությունը

Երկրները պետք է համապարփակ վիճակագրություն վարեն ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգերի արդյունավետությանն ու օգտավետությանն առնչվող հարցերի վերաբերյալ: Դա պետք է ներառի վիճակագրության վարումն այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են ստացված և տրամադրված ԿԳՀ-ները, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման գործերի նախաքննությունները, քրեական հետապնդումները և կայացված մեղադրական դատավճիռները, սառեցված, արգելադրված և բռնագրավված գույքը, և փոխադարձ իրավական օգնությունը կամ համագործակցության այլ միջազգային հարցումները:

34. Ուղեցույցների և հետադարձ արձագանքի տրամադրումը

Իրավասու մարմինները, վերահսկողները և ԻԿՄ-ները պետք է սահմանեն ուղեցույցներ և տրամադրեն հետադարձ արձագանք, որոնք ֆինանսական հաստատություններին և ՆՈՖԳՏՄ-ներին կօգնեն կատարել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ազգային համակարգի պահանջները և, մասնավորապես, կասկածելի գործարքներ հայտնաբերելու և դրանց վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելու պահանջը:

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

35. Պատժամիջոցները

Երկրները պետք է ապահովեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ քրեական, քաղաքացիական կամ վարչական պատժամիջոցների շրջանակի առկայությունը, որոնք կիրառելի կլինեն Հանձնարարական 6-ով և Հանձնարարականներ 8-23-ով սահմանված՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջներին չհամապատասխանող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց նկատմամբ: Պատժամիջոցները պետք է կիրառելի լինեն ոչ միայն ֆինանսական հաստատությունների և ՆՈՖԳՏՄ-ների, այլև դրանց տնօրենների և ավագ ղեկավարների նկատմամբ:

Է. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

36. Միջազգային գործիքները

Երկրները պետք է անմիջական քայլեր ձեռնարկեն Վիեննայի կոնվենցիային (1988), Պալերմոյի կոնվենցիային (2000), Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ պայքարի մասին կոնվենցիային (2003) և Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիային (1999) միանալու և դրանք լիարժեքորեն իմպլեմենտացնելու համար: Յանկալի է նաև, որ, համապատասխան ղեպքերում, երկրները վավերացնեն և իմպլեմենտացնեն այլ վերաբերելի միջազգային կոնվենցիաները, ինչպիսիք են Եվրոպայի Խորհրդի Կիբեռհանցագործությունների մասին կոնվենցիան (2001), Ահաբեկչության դեմ պայքարի մասին միջամերիկյան կոնվենցիան (2002) և Եվրոպայի խորհրդի Հանցավոր ճանապարհով ստացված գույքի լվացման, հետախուզման, արգելադրման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիան (2005):

37. Փոխադարձ իրավական օգնությունը

Երկրները պետք է փողերի լվացման, դրան նախորդող հանցագործությունների և ահաբեկչության ֆինանսավորման գործերի նախաքննության, քրեա-

կան հետապնդման և հարակից վարույթներում արագ, կառուցողական և արդյունավետ կերպով ցուցաբերեն հնարավոր ամենալայն շրջանակով փոխադարձ իրավական օգնություն: Երկրները պետք է ունենան օգնություն ցուցաբերելու համար անհրաժեշտ պատշաճ իրավական հիմքեր և, անհրաժեշտության դեպքում, պայմանագրեր, համաձայնագրեր կամ այլ մեխանիզմներ՝ համագործակցությունը բարելավելու համար: Մասնավորապես, երկրները.

- (ա) չպետք է արգելեն կամ ոչ ողջամիտ կամ անհարկի սահմանափակող պայմաններ սահմանեն փոխադարձ իրավական օգնության ցուցաբերման համար,
- (բ) պետք է ապահովեն փոխադարձ իրավական օգնության հարցումները ժամանակին ըստ առաջնահերթության դասակարգելու և կատարելու հստակ գործընթացների առկայությունը: Երկրները պետք է փոխադարձ իրավական օգնության հարցումները արդյունավետ կերպով փոխանցեն և կատարեն որևէ կենտրոնական մարմնի կամ մեկ այլ սահմանված պաշտոնական մեխանիզմի միջոցով: Հարցումների կատարման ընթացքին հետևելու նպատակով անհրաժեշտ է ունենալ գործերի կառավարման համակարգ,
- (գ) չպետք է մերժեն փոխադարձ իրավական օգնության հարցումը միայն այն հիմքով, որ հանցագործությունն առնչվում է նաև հարկաբյուջետային խնդիրների,
- (դ) չպետք է մերժեն փոխադարձ իրավական օգնության հարցումը այն հիմքով, որ ֆինանսական հաստատությունների համար նախատեսված են գաղտնիության կամ կոնֆիդենցիալության պահանջներ,
- (ե) պետք է ներպետական օրենսդրության հիմնարար սկզբունքների համաձայն ապահովեն իրենց ստացած փոխադարձ իրավական օգնության հարցումների և դրանցում պարունակվող տեղեկատվության կոնֆիդենցիալությունը՝ նախաքննության կամ հետաքննության ամբողջականությունը չխաթարելու համար: Եթե հարցում ստացած երկիրը չի կարող բավարարել կոնֆիդենցիալության պահանջը, ապա պետք է այդ մասին պատշաճ կերպով տեղեկացնի հարցում ներկայացրած երկրին:

Եթե փոխադարձ իրավական օգնության հարցումը հարկադրանքի միջոցներ կիրառելու անհրաժեշտություն չի առաջացնում, երկրները օգնություն տրամադրեն՝ անկախ «կրկնակի քրեականացման» հանգամանքից: Երկրները պետք է դիտարկեն այնպիսի միջոցների սահմանման նպատակահար-

մարտությունը, որոնք նրանց հնարավորություն են տալիս լայն շրջանակով օգնություն ցուցաբերել «կրկնակի քրեականացման» բացակայության պարագայում:

Եթե փոխադարձ իրավական օգնության համար պահանջվում է «կրկնակի քրեականացում», այդ պահանջը պետք է բավարարված համարվի՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք երկու երկիրն էլ տվյալ հանցագործությունը դատում են հանցագործությունների նույն խմբին կամ սահմանում են նույն տերմինով, պայմանով, որ երկու երկիրն էլ քրեականացնում են տվյալ հանցագործության հիմքում ընկած արարքը:

Երկրները պետք է հավաստիանան, որ Հանձնարարական 31-ի ներքո պահանջվող կամ ներպետական իրավասու մարմինների կողմից որևէ այլ կերպ կիրառվող լիազորությունները և քննչական գործողությունները կիրառելի են նաև փոխադարձ իրավական օգնության հարցումներին և, ներպետական օրենսդրությամբ թույլատրված լինելու դեպքում, այլ երկրների դատական կամ իրավապահ մարմինների կողմից ուղղակիորեն իրենց գործընկերներին ներկայացված հարցումներին պատասխանելիս: Դրանց թվին են դասվում.

- ա) Հանձնարարական 31-ի ներքո պահանջվող բոլոր լիազորությունները՝ կապված ֆինանսական հաստատությունների կամ այլ անձանց մոտ պահպանվող տեղեկատվության, փաստաթղթերի կամ ապացույցների (այդ թվում՝ ֆինանսական տվյալների) տրամադրումը պարտադրելու, դրանք խուզարկելու և առգրավելու, ինչպես նաև վկաներից ցուցմունք վերցնելու հետ, և
- բ) այլ լիազորությունների ու քննչական գործողությունների լայն տեսականին:

Երկրների օրենսդրական համակարգերի միջև հակասություններից խուսափելու նպատակով ցանկալի է, որ սահմանվեն և կիրառվեն հանուն արդարադատության մեղադրյալների քրեական հետապնդումն իրականացնելու լավագույն տեղի որոշման մեխանիզմներ այն դեպքերում, երբ տվյալ գործը ենթակա է քրեական հետապնդման մեկից ավելի երկրներում:

Փոխադարձ իրավական օգնության հարցումներ ներկայացնելիս երկրները պետք է հնարավոր ամեն ինչ անեն լիարժեք փաստական և իրավական տեղեկատվություն տրամադրելու համար, այդ թվում՝ նշելով հարցման հրատապությունը, ինչը հնարավոր կդարձնի հարցումների ժամանակին ու արդյունավետ կերպով կատարումը, և պետք է հարցումներն ուղարկեն հնարավոր ամենաարագ միջոցներով: Նախքան հարցում ուղարկելը

Երկրները պետք է հնարավոր ամեն ինչ անեն՝ հավաստիանալու համար, որ պահպանել են օգնություն ստանալու համար անհրաժեշտ իրավական պահանջներն ու ֆորմալ ընթացակարգերը:

Փոխադարձ իրավական օգնության համար պատասխանատու մարմինները (օրինակ՝ կենտրոնական մարմինը) պետք է ապահովված լինեն բավարար ֆինանսական, մարդկային ու տեխնիկական ռեսուրսներով: Երկրները պետք է ունենան գործընթացներ՝ հավաստիանալու համար, որ այդ մարմինների աշխատակիցներն առաջնորդվում են մասնագիտական բարձր ստանդարտներով, այդ թվում՝ կոնֆիդենցիալության մասով, բարեխիղճ կերպով կատարում են իրենց պարտականությունները և ունեն բավարար հմտություններ:

38. Փոխադարձ իրավական օգնությունը. սառեցում և բռնագրավում*

Երկրները պետք է իրավասու լինեն շուտափույթ կերպով գործողություններ ձեռնարկել՝ ի պատասխան այլ երկրներից ստացված հարցումների, որոնցով խնդրարկվում է հայտնաբերել, սառեցնել, արգելադրել կամ բռնագրավել փողերի լվացման, դրան նախորդող հանցագործությունների և ահաբեկչության ֆինանսավորման կատարմամբ ստացված և «լվացված» գույքը, այդ հանցագործությունների կատարման արդյունքում ստացված գույքը, դրանց կատարման նպատակով օգտագործված կամ օգագործման համար նախատեսված գործիքները, կամ համարժեք գույքը: Երկրները պետք է իրավասու լինեն օգնություն ցուցաբերել համագործակցության այն հարցումների դեպքում, որոնք կատարվում են առանց մեղադրական դատավճռի բռնագրավման վարույթների և հարակից նախնական միջոցների շրջանակում, եթե դա չի հակասում ներպետական օրենսդրության հիմնարար սկզբունքներին: Երկրները պետք է նաև ունենան նմանատիպ գույքը, գործիքները կամ համարժեք գույքը կառավարելու արդյունավետ մեխանիզմներ, ինչպես նաև արգելադրման և բռնագրավման գործողությունները համակարգելու համաձայնություններ, այդ թվում՝ բռնագրավված ակտիվները բաշխելու համար:

39. Հանձնում

Երկրները պետք է կարողանան կառուցողական և արդյունավետ կերպով անհապաղ կատարել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված հանձնման հարցումները: Երկրները պետք է հնարավոր բոլոր միջոցները ձեռնարկեն՝ հավաստիանալու համար, որ «ապահով տանիք» չեն հանդիսանում ահաբեկչության, ահաբեկչական գործողություն-

ների կամ ահաբեկչական կազմակերպությունների ֆինանսավորման մեջ մեղադրվող անձանց համար: Մասնավորապես, երկրները պետք է.

- (ա) ապահովեն փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հանցագործությունների համար հանձնում նախատեսված լինելը,
- (բ) ապահովեն հստակ և արդյունավետ գործընթացների առկայությունը, որոնք հնարավորություն են տալիս ժամանակին կատարել հանձնման հարցումները, այդ թվում, անհրաժեշտության դեպքում, դրանք դասակարգելով ըստ առաջնահերթության. հարցումների կատարման ընթացքին հետևելու նպատակով անհրաժեշտ է ունենալ գործերի կառավարման համակարգ,
- (գ) չսահմանեն ոչ ողջամիտ կամ անհարկի սահմանափակող պայմաններ հարցումների կատարման համար,
- (դ) ապահովեն հանձնման համար անհրաժեշտ համարժեք իրավական շրջանակի առկայությունը:

Երկրները պետք է կամ հանձնեն իրենց քաղաքացիներին, կամ, այն դեպքում, երբ բացառապես քաղաքացիության հիման վրա չեն հանձնում իրենց քաղաքացիներին, պետք է հանձնում ակնկալող երկրի պահանջով գործի նյութերն առանց անհարկի հապաղման ներկայացնեն իրենց իրավասու մարմիններին՝ հարցման մեջ նշված հանցագործությունների քրեական հետապնդման համար: Նշված մարմինները պետք է որոշում կայացնեն և վարույթ սկսեն ճիշտ այնպես, ինչպես ներպետական օրենսդրությամբ նախատեսված է որևէ այլ ծանր հանցագործության դեպքում: Գործում ներգրավված երկրները պետք է միմյանց հետ համագործակցեն, մասնավորապես՝ ընթացակարգային և ապացույցներին առնչվող հարցերում, այդպիսի քրեական հենապնդումների արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Եթե հանձնման համար պահանջվում է «կրկնակի քրեականացում», այդ պահանջը պետք է բավարարված համարվի՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք երկու երկիրն էլ տվյալ հանցագործությունը դատում են հանցագործությունների նույն խմբին կամ սահմանում են նույն տերմինով, պայմանով, որ երկու երկիրն էլ քրեականացնում են տվյալ հանցագործության հիմքում ընկած արարքը:

Երկրները պետք է իրենց ներպետական օրենսդրության սկզբունքներին համապատասխան ունենան հանձնման պարզեցված մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս նախնական կալանքի նպատակով համապատասխան մար-

միևնույնի միջև հարցումների ուղղակի փոխանցումը, բացառապես ձերբակալության որոշման կամ վճռի հիման վրա անձանց հանձնելը, հանձնմանը չառարկող անձանց նկատմամբ պարզեցված ընթացակարգ կիրառելը այն դեպքում, երբ նրանք չեն պահանջում կիրառել հանձնման ֆորմալ ընթացակարգեր: Հանձնման համար պատասխանատու մարմինները պետք է ապահովված լինեն բավարար ֆինանսական, մարդկային ու տեխնիկական ռեսուրսներով: Երկրները պետք է ունենան գործընթացներ՝ հավաստիանալու համար, որ այդ մարմինների աշխատակիցներն առաջնորդվում են մասնագիտական բարձր ստանդարտներով, այդ թվում՝ կոնֆիդենցիալության մասով, բարեխիղճ կերպով կատարում են իրենց պարտականությունները և ունեն բավարար հմտություններ:

40. Միջազգային համագործակցության այլ ձևերը*

Երկրները պետք է հավաստիանան, որ իրենց իրավասու մարմինները կարող են փողերի լվացման, դրան նախորդող հանցագործությունների և ահաբեկչության ֆինանսավորման գործերին առնչվող դեպքերում արագ, կառուցողական և արդյունավետ կերպով իրականացնել հնարավոր ամենալայն շրջանակով միջազգային համագործակցություն: Համագործակցության իրականացումը պետք է հնարավոր լինի ինչպես սեփական նախաձեռնությամբ, այնպես էլ հարցումների հիման վրա, և պետք է առկա լինեն դրա համար անհրաժեշտ իրավական հիմքերը: Երկրները պետք է իրենց իրավասու մարմիններին լիազորեն օգտվել համագործակցության ամենաօգտավետ եղանակներից: Այն դեպքում, երբ իրավասու մարմիններին համագործակցություն իրականացնելու համար անհրաժեշտ են երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր կամ համաձայնություններ, ինչպիսիք են փոխըմբռնման հուշագրերը (ՓՀ), դրանց շուրջ բանակցություններն ու դրանց ստորագրումը պետք է կատարվի ժամանակին և օտարերկրյա գործընկերների հնարավոր ամենալայն շրջանակի հետ:

Իրավասու մարմինները պետք է ունենան հստակ սահմանված եղանակներ կամ մեխանիզմներ, որոնք հնարավոր են դարձնում տեղեկատվության տրամադրման կամ օժանդակության այլ տեսակների վերաբերյալ հարցումների արդյունավետ փոխանցումն ու կատարումը: Իրավասու մարմինները պետք է ունենան հստակ և արդյունավետ գործընթացներ հարցումներն ըստ առաջնահերթության դասակարգելու և ժամանակին կատարելու, ինչպես նաև ստացված տեղեկատվության անվտանգ պահպանությունը երաշխավորելու համար:

ՖԱԹՖ-Ի ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ 1-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ՌԻՄԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՌԻՄԿԱՀԵՆՔ ՄՈՏԵՑՄԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ)

1. Ռիսկահենք մոտեցումը (ՌՀՄ) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի արդյունավետ միջոց է: Տնտեսության որևէ հատվածում ՌՀՄ-ի կիրառության եղանակը որոշելիս երկրները պետք է հաշվի առնեն այդ հատվածում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի կարողություններն ու փորձը: Երկրները պետք է պատկերացում ունենան այն մասին, որ ՌՀՄ-ով ֆինանսական հաստատություններին և ՆՈՖԳՏՄ-ներին տրվող ազատության աստիճանն ու նրանց վրա դրվող պատասխանատվությունը ընդունելի են այն հատվածներում, որտեղ ավելի մեծ են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի կարողություններն ու փորձը: Սա ֆինանսական հաստատություններին և ՆՈՖԳՏՄ-ներին չպետք է ազատի բարձր ռիսկի սցենարների դեպքում հավելյալ միջոցառումներ իրականացնելու պարտականությունից: Ռիսկահենք մոտեցումն ընդունելով՝ իրավասու մարմինները, ֆինանսական հաստատությունները և ՆՈՖԳՏՄ-ները պետք է կարողանան ապահովել, որ փողերի լվացումը և ահաբեկչության ֆինանսավորումը կանխարգելելու կամ զսպելու միջոցառումները համարժեք են բացահայտված ռիսկերին և հնարավորություն են տալիս ընդունել իրենց ռեսուրսներն առավել արդյունավետ կերպով տեղաբաշխելու հետ կապված որոշումներ:
2. ՌՀՄ-ն կիրառելիս ֆինանսական հաստատությունները և ՆՈՖԳՏՄ-ները պետք է ունենան գործընթացներ՝ ՓԼ/ԱՖ ռիսկերը բացահայտելու, գնահատելու, մոնիտորինգի ենթարկելու, կառավարելու և զսպելու համար: ՌՀՄ-ի ընդհանուր սկզբունքը հետևյալն է. բարձր ռիսկերի առկայության դեպքում երկրները պետք է ֆինանսական հաստատություններից և ՆՈՖԳՏՄ-ներից պահանջեն իրականացնել հավելյալ միջոցառումներ՝ նշված ռիսկերը կառավարելու և զսպելու նպատակով, իսկ ցածր ռիսկերի առկայության դեպքում կարող են թույլատրել պարզեցված միջոցառումներ: Փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածների առկայության դեպքում պարզեցված միջոցառումների իրականացումը չպետք է թույլատրվի: Տարբեր Հանձնարարականների ներքո հստակ սահմանվում է, թե այս ընդհանուր սկզբունքն ինչպես է կիրառվում առանձին պահանջների նկատմամբ: Խիստ սահմանափակ հանգամանքներում և ՓԼ/ԱՖ ռիսկի հիմնավորված ցածր մակարդակի առկայության դեպքում երկրները կարող են նաև որոշում կայացնել որոշակի տեսակի ֆինանսական հաստատությունների կամ գոր-

ծառնությունների կամ ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ ՖԱԹՖ-ի որոշ Հանձնարարականներ չկիրառելու վերաբերյալ (տե՛ս ստորև): Նմանապես, եթե երկրներն իրենց ռիսկերի գնահատումների միջոցով գալիս են եզրակացության, որ որոշակի տեսակի հաստատություններ, գործառնություններ, գործունեության տեսակներ կամ մասնագիտություններ, որոնք ներառված չեն ֆինանսական հաստատության կամ ՆՈՖԳՏՄ-ի սահմանման մեջ, ենթակա են ՓԼ/ԱՖ նպատակով չարաշահման ռիսկի, պետք է դիտարկեն այդպիսի հատվածների նկատմամբ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջները կիրառելու նպատակահարմարությունը:

Ա. Երկրներին վերաբերող պարտականություններ և որոշումներ

3. **Ռիսկի գնահատում.** Երկրները¹ պետք է համապատասխան քայլեր ձեռնարկեն իրենց ՓԼ/ԱՖ ռիսկերը բացահայտելու և գնահատելու համար, ինչը պետք է կրի շարունակական բնույթ և նպատակ ունենա. (ա) տեղեկատվություն ձեռք բերել երկրի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում հնարավոր փոփոխությունների, այդ թվում՝ օրենքների, կանոնակարգերի և այլ միջոցների վերանայման անհրաժեշտության մասին, (բ) օժանդակել իրավասու մարմինների կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարին ուղղվող ռեսուրսների տեղաբաշխումն ու ըստ առաջնահերթության դասակարգումը, և (գ) տեղեկատվություն տրամադրել ֆինանսական հաստատություններին և ՆՈՖԳՏՄ-ներին՝ նրանց կողմից կատարվող ՓԼ/ԱՖ ռիսկի գնահատումների համար: Երկրները պետք է ապահովեն ռիսկերի գնահատումների արդիականությունը և ունենան մեխանիզմներ՝ ռիսկերի գնահատման արդյունքների վերաբերյալ բոլոր պատկան իրավասու մարմիններին ու ինքնակարգավորվող մարմիններին (ԻԿՄ), ֆինանսական հաստատություններին ու ՆՈՖԳՏՄ-ներին պատշաճ տեղեկատվություն տրամադրելու համար:
4. **Բարձր ռիսկ.** Բարձր ռիսկերի առկայության դեպքում երկրները պետք է ապահովեն ՓԼ/ԱՖ դեմ պայքարի իրենց համակարգերի կողմից այդ ռիսկերին հակազդումը և, ի լրումն բարձր ռիսկերի զսպման ուղղությամբ երկրի կողմից ձեռնարկվող այլ միջոցների, պահանջեն, որ ֆինանսական հաստատությունները և ՆՈՖԳՏՄ-ները իրականացնեն նշված ռիսկերի կառավարմանն ու զսպմանն ուղղված հավելյալ միջոցառումներ, կամ ապահովեն այդ տեղեկատվության ներառումը ֆինանսական հաստատությունների և ՆՈՖԳՏՄ-ների կողմից կատարվող ռիսկերի գնահատումներում՝ նշված ռիս-

¹ Համապատասխան դեպքերում, սույն պահանջի կատարումը դիտարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել վերագալիս մակարդակով ՓԼ/ԱՖ ռիսկի գնահատումները:

կերը պատշաճ կերպով կառավարելու ու զսպելու նպատակով: ՖԱԹՖ-ի Հանձնարարականների համաձայն այնպիսի բարձր ռիսկային գործառնություններ բացահայտելու դեպքում, որոնց գծով պահանջվում են հավելյալ կամ որոշակի միջոցառումներ, երկրները պետք է ապահովեն այդ միջոցառումների իրականացումը, թեպետ դրանց իրականացման աստիճանը կարող է տարբերվել՝ կախված տվյալ ռիսկի մակարդակից:

5. **Ցածր ռիսկ.** Երկրները կարող են թույլատրել ՖԱԹՖ-ի որոշ Հանձնարարականների ներքո ֆինանսական հաստատությունների կամ ՆՈՖԳՏՄ-ների կողմից ձեռնարկվող որոշակի գործողությունների մասով պարզեցված միջոցառումների իրականացումը՝ պայմանով, որ բացահայտված ռիսկերը գտնվում են ցածր մակարդակի վրա, և նշվածը համապատասխանում է երկրի կողմից իր ՓԼ/ԱՖ ռիսկերի գնահատման արդյունքներին, որի մասին նշված է 3-րդ պարբերությունում:

Անկախ նախորդ պարբերության համաձայն ցածր ռիսկի որոշակի դասեր սահմանելու հանգամանքից, երկրները կարող են ֆինանսական հաստատություններին և ՆՈՖԳՏՄ-ներին թույլատրել հաճախորդի պատշաճ ուսումնասիրության (ՀՊՈԻ) պարզեցված միջոցառումների իրականացումը՝ պայմանով, որ բավարարվում են ստորև ներկայացված Բաժին Բ-ի (*«Ֆինանսական հաստատություններին և ՆՈՖԳՏՄ-ներին վերաբերող պարտականություններ և որոշումներ»*) և 7-րդ պարբերության պահանջները:

6. **Բացառություններ.** Երկրները կարող են որոշել, որ ֆինանսական հաստատությունների կամ ՆՈՖԳՏՄ-ների կողմից ձեռնարկվող որոշակի գործողությունների մասով չեն կիրառում ՖԱԹՖ-ի որոշ Հանձնարարականներ՝ պայմանով, որ.
 - (ա) առկա է ՓԼ/ԱՖ ռիսկի հիմնավորված ցածր մակարդակ, բացառությունները կիրառվում են խիստ սահմանափակ ու արդարացված հանգամանքներում և վերաբերում են ֆինանսական հաստատությունների կամ գործառնությունների կամ ՆՈՖԳՏՄ-ների որոշակի տեսակների.
 - (բ) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից ֆինանսական գործառնությունների իրականացումը (բացի փողի կամ արժեքների փոխանցումից) միանգամյա կամ հույժ սահմանափակ բնույթ է կրում (ըստ քանակական և բացարձակ չափորոշիչների)՝ ըստ այդմ բնութագրվելով ՓԼ/ԱՖ ռիսկի ցածր մակարդակով:

Թեպետ հավաքվող տեղեկատվությունն ըստ ռիսկի մակարդակի կարող է տարբերվել, տեղեկատվության հավաքման վերաբերյալ Հանձնարարական 11-ի պահանջները ցանկացած դեպքում պետք է կատարվեն:

7. **Ռիսկի վերահսկողություն և մոնիտորինգ.** Վերահսկողները (կամ ՆՈՖԳՏՄ-ների համապատասխան հատվածների ԻԿՄ-ները) պետք է ապահովեն ֆինանսական հաստատությունների և ՆՈՖԳՏՄ-ների կողմից սույն Հանձնարարականի ներքո իրենց պարտականությունների արդյունավետ կատարումը: Այս գործառնությունը կատարելիս վերահսկողները և ԻԿՄ-ները պետք է, Հանձնարարականներ 26-ի և 28-ի Բացատրական մեկնաբանություններով սահմանված կարգով ու դեպքերում, ուսումնասիրեն ֆինանսական հաստատությունների և ՆՈՖԳՏՄ-ների ՓԼ/ԱՖ ռիսկայնության ընդհանուր նկարագիրն ու նրանց կողմից կատարված ռիսկերի գնահատումների արդյունքները, և հաշվի առնեն այդ ուսումնասիրության արդյունքում կատարված եզրահանգումները:

Բ. Ֆինանսական հաստատություններին և ՆՈՖԳՏՄ-ներին վերաբերող պարտականություններ և որոշումներ

8. **Ռիսկի գնահատում.** Ֆինանսական հաստատություններից և ՆՈՖԳՏՄ-ներից պետք է պահանջվի ձեռնարկել իրենց ՓԼ/ԱՖ ռիսկերը (ըստ հաճախորդների, երկրների կամ աշխարհագրական տարածքների և ապրանքների, ծառայությունների, գործարքների կամ մատուցման եղանակների) բացահայտելուն և գնահատելուն ուղղված համապատասխան միջոցներ: Նրանք պետք է փաստաթղթավորեն իրենց ռիսկերի գնահատումները՝ դրանց հիմքերը ցույց տալու նպատակով, ապահովեն գնահատումների արդիականությունը և ունենան համապատասխան մեխանիզմներ՝ ռիսկերի գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը իրավասու մարմիններին և ԻԿՄ-ներին տրամադրելու համար: ՓԼ/ԱՖ ռիսկերի գնահատման բնույթն ու աստիճանը պետք է համապատասխանի տվյալ բիզնեսի բնույթին ու չափերին: Ֆինանսական հաստատությունները և ՆՈՖԳՏՄ-ները միշտ պետք է հասկանան իրենց ՓԼ/ԱՖ ռիսկերը, սակայն իրավասու մարմինները կամ ԻԿՄ-ները կարող են որոշել, որ որոշ դեպքերում ռիսկերի անհատական փաստաթղթավորված գնահատումն անհրաժեշտ չէ՝ պայմանով, որ հստակ բնորոշում ու հասկանում են ոլորտի համար բնութագրական ռիսկերը:

9. **Ռիսկի կառավարում և զսպում.** Ֆինանսական հաստատություններից և ՆՈՖԳՏՄ-ներից պետք է պահանջվի ունենալ քաղաքականություններ, հսկողական մեխանիզմներ և ընթացակարգեր, որոնք հնարավորություն են տալիս արդյունավետ կերպով կառավարել և զսպել (երկրի կամ ֆինանսական հաստատության/ ՆՈՖԳՏՄ-ի կողմից) բացահայտված ռիսկերը: Նրանցից պետք է պահանջվի մոնիտորինգի ենթարկել և, անհրաժեշտության դեպքում,

բարելավել այդ հսկողական մեխանիզմները: Քաղաքականությունները, հսկողական մեխանիզմները և ընթացակարգերը պետք է հաստատվեն ավագ ղեկավարության կողմից, իսկ ռիսկերի (թե բարձր, թե ցածր) կառավարման ու զսպման միջոցառումները պետք է համահունչ լինեն ներպետական պահանջներին և իրավասու մարմինների ու ԻԿՄ-ների կողմից տրամադրված ուղեցույցներին:

10. **Բարձր ռիսկ.** Բարձր ռիսկերի բացահայտման դեպքում ֆինանսական հաստատություններից և ՆՈՖԳՏՄ-ներից պետք է պահանջվի իրականացնել այդ ռիսկերի կառավարմանն ու զսպմանն ուղղված հավելյալ միջոցառումներ:
11. **Ցածր ռիսկ.** Ցածր ռիսկերի բացահայտման դեպքում երկրները կարող են ֆինանսական հաստատություններին և ՆՈՖԳՏՄ-ներին թույլատրել այդ ռիսկերի կառավարմանն ու զսպմանն ուղղված պարզեցված միջոցառումների իրականացումը:
12. Ռիսկերը գնահատելիս ֆինանսական հաստատությունները և ՆՈՖԳՏՄ-ները պետք է հաշվի առնեն ռիսկի բոլոր վերաբերելի գործոնները՝ նախքան ընդհանուր ռիսկի մակարդակը և համապատասխան զսպող միջոցառումների աստիճանը որոշելը: Տարբեր գործոնների մասով ռիսկի տեսակից ու մակարդակից կախված՝ ֆինանսական հաստատությունները և ՆՈՖԳՏՄ-ները կարող են տարբերակել ձեռնարկվող միջոցների աստիճանը (օրինակ՝ որոշակի իրավիճակներում կարող են հաճախորդի հետ գործարար հարաբերություններ հաստատելիս իրականացնել սովորական ՀՊՈԻ միջոցառումներ, սակայն ընթացիկ մոնիտորինգի համար կիրառել հավելյալ ՀՊՈԻ, կամ հակառակը):

**ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ 3-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ)**

1. Երկրները պետք է փողերի լվացումը քրեականացնեն Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին Միավորված ազգերի կազմակերպության 1988թ. կոնվենցիայի (Վիեննայի կոնվենցիա) և Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին Միավորված ազգերի կազմակերպության 2000թ. կոնվենցիայի (Պալերմոյի կոնվենցիա) հիման վրա:
2. Փողերի լվացմանը նախորդող հանցագործությունների ցանկը պետք է ներառի բոլոր ծանր հանցագործությունները՝ ներառելով հնարավոր մեծ թվով նախորդող հանցագործություններ: Փողերի լվացմանը նախորդող հանցագործությունները կարող են սահմանվել՝ հղում անելով բոլոր հանցագործություններին, կամ որոշակի նախատեսված շեմի, որը կապակցվում է կամ ծանր հանցագործությունների խմբի հետ, կամ նախորդող հանցագործության դեպքում կիրառելի՝ ազատազրկման տեսքով պատժաչափի հետ (նախատեսված շեմի մոտեցում), կամ նախորդող հանցագործությունների որոշակի ցանկի, կամ վերոհիշյալ մոտեցումների համակցությամբ:
3. Այն դեպքում, երբ երկիրը կիրառում է նախատեսված շեմի մոտեցումը, նախորդող հանցագործությունների ցանկը պետք է առնվազն ներառի բոլոր այն հանցագործությունները, որոնք երկրի ազգային օրենսդրությամբ դասվում են ծանր հանցագործությունների խմբին, կամ որոնց համար սահմանված առավելագույն պատժաչափը գերազանցում է մեկ տարի ժամկետով ազատազրկումը, կամ որոնց համար սահմանված նվազագույն պատժաչափը գերազանցում է վեց ամսով ազատազրկումը (այն երկրների պարագայում, որոնց իրավական համակարգով հանցագործությունների համար նախատեսված է նվազագույն շեմ):
4. Երկրի կողմից ցանկացած մոտեցում կիրառելու դեպքում նախորդող հանցագործությունների ցանկը պետք է առնվազն ներառի հանցագործությունների նախատեսված խմբերից յուրաքանչյուրին դասվող հանցագործությունների որոշակի տեսակներ: Փողերի լվացման հանցագործության առարկա կարող է լինել ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանցավոր ճանապարհով ստացված ցանկացած տեսակի գույք՝ անկախ դրա արժեքից: Գույքի՝ հանցավոր ճանապարհով ստացված լինելու փաստն ապացուցելիս չպետք է պարտադիր լինի, որ նախորդող հանցագործության համար անձի նկատմամբ կայացված լինի մեղադրական դատավճիռ:

5. Փողերի լվացմանը նախորդող հանցագործությունների ցանկը պետք է ներառի մեկ այլ՝ երկրորդ երկրի տարածքում կատարված և այնտեղ հանցագործություն համարվող արարքները, որոնք առաջին երկրի տարածքում կատարվելու դեպքում կհամարվեին նախորդող հանցագործություններ: Երկրի կողմից թույլատրելի միակ նախապայմանը կարող է լինել տվյալ արարքը այդ երկրում նախորդող հանցագործություն համարվելը:
6. Երկրները կարող են սահմանել, որ փողերի լվացման հանցագործությունը չի մեղսագրվում նախորդող հանցագործությունը կատարած անձանց, եթե այդպես է պահանջվում ներպետական օրենսդրության հիմնարար սկզբունքներով:
7. Երկրները պետք է հավաստիանան, որ.
 - (ա) Փողերի լվացման հանցագործության միտումնավոր և գիտակցաբար կատարված լինելու փաստի հիմնավորումը հնարավոր է՝ ելնելով գործի օբյեկտիվ փաստական հանգամանքներից:
 - (բ) Փողերի լվացման համար դատապարտված ֆիզիկական անձանց նկատմամբ կիրառվում են արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ քրեական պատժամիջոցներ:
 - (գ) Քրեական պատասխանատվությունը և պատժամիջոցները, իսկ եթե դա անհնար է (ելնելով ներպետական օրենսդրության հիմնարար սկզբունքներից), քաղաքացիական կամ վարչական պատասխանատվությունը և պատժամիջոցները կիրառվում են իրավաբանական անձանց նկատմամբ: Սա չպետք է բացառի իրավաբանական անձանց նկատմամբ զուգահեռ քրեական, քաղաքացիական կամ վարչական վարույթների հնարավորությունն այն երկրներում, որտեղ առկա են պատասխանատվության մեկից ավելի ձևեր: Նշված միջոցները պետք է կիրառվեն ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվությունից անկախ: Բոլոր պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ:
 - (դ) Բացառությամբ այն դեպքերի, երբ դա թույլատրված չէ ներպետական օրենսդրության հիմնարար սկզբունքներով, փողերի լվացման հանցագործությունից զատ պատշաճ կերպով սահմանված են դրա հետ կապված հանցակցության տեսակները, այդ թվում՝ մասնակցությունը, հանցագործություն կատարելու նպատակով հանցավոր համագործակցությունը կամ հանցավոր համաձայնության գալը, հանցագործության փորձ կատարելը, օգնելը և օժանդակելը, նպաստելը և խորհուրդներ տալը:

**ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ 4-Ի ԵՎ 38-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(ԲՌՆԱԳՐԱՎՈՒՄԸ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ)**

Երկրները պետք է ունենան մեխանիզմներ, որոնք իրավասու մարմիններին հնարավորություն են տալիս արդյունավետ կերպով կառավարել և, անհրաժեշտության դեպքում, օտարել սառեցված, արգելադրված կամ բռնագրավված գույքը: Նշված մեխանիզմները պետք է կիրառելի լինեն ինչպես ներպետական վարույթների իրականացման, այնպես էլ այլ երկրների կողմից ներկայացված հարցումների կատարման նպատակով:

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ 5-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ)

Ա. Նպատակը

1. Հանձնարարական 5-ի նպատակը ապահովելն է, որ երկրներն ունենան իրավական կարողություններ՝ ահաբեկչությունը ֆինանսավորողների նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու և քրեական պատժամիջոցներ կիրառելու համար: Հաշվի առնելով միջազգային ահաբեկչության և, ի թիվս այլ հանցագործությունների, փողերի լվացման միջև սերտ կապը, Հանձնարարական 5-ի նպատակներից մեկն էլ այդ կապը շեշտադրելն է՝ պահանջելով, որ երկրները ահաբեկչության ֆինանսավորումը ներառեն փողերի լվացմանը նախորդող հանցագործությունների ցանկում:

Բ. Ահաբեկչության ֆինանսավորման հանցագործության բնութագիրը

2. Ահաբեկչության ֆինանսավորման հանցագործությունը պետք է մեղսագրվի ցանկացած անձի, ով դիտավորությամբ որևէ կերպ ուղղակիորեն կամ անուղղակիորեն տրամադրում կամ հավաքագրում է միջոցներ այն անօրինական մտադրությամբ, որ դրանք պետք է օգտագործվեն, կամ այն գիտակցությամբ, որ դրանք կօգտագործվեն, ամբողջությամբ կամ մասամբ (ա) ահաբեկչական գործողություն(ներ) կատարելու համար, (բ) ահաբեկչական կազմակերպության կողմից, կամ (գ) անհատ ահաբեկչի կողմից:
3. Ահաբեկչության ֆինանսավորման քրեականացումը միայն օժանդակությունը և օգնությունը, փորձը կամ հանցավոր համաձայնության գալը քրեականացնելու միջոցով բավարար չէ սույն Հանձնարարականին համապատասխանելու համար:
4. Ահաբեկչության ֆինանսավորման հանցագործության առարկա կարող են լինել ինչպես օրինական, այնպես էլ անօրինական աղբյուրներից ստացված միջոցները:
5. Ահաբեկչության ֆինանսավորման հանցագործության առումով չպետք է պահանջվի, որ միջոցները. (ա) փաստացի օգտագործված լինեն ահաբեկչական գործողություն(ներ) կամ դրա(նց) փորձ կատարելու նպատակով, կամ (բ) կապ ունենան որոշակի ահաբեկչական գործողության (գործողությունների) հետ:
6. Երկրները պետք է հավաստիանան, որ ահաբեկչության ֆինանսավորման հանցագործության միտումնավոր և գիտակցաբար կատարված լինելու փաստի հիմնավորումը հնարավոր է՝ ելնելով գործի օբյեկտիվ փաստական հանգամանքներից:
7. Ահաբեկչության ֆինանսավորման համար դատապարտված ֆիզիկական անձանց նկատմամբ պետք է կիրառվեն արդյունավետ, համաչափ և տարիաժամկետ քրեական պատժամիջոցներ:

8. Քրեական պատասխանատվությունը և պատժամիջոցները, իսկ եթե դա անհնար է (ելնելով ներպետական օրենսդրության հիմնարար սկզբունքներից), քաղաքացիական կամ վարչական պատասխանատվությունը և պատժամիջոցները պետք է կիրառվեն իրավաբանական անձանց նկատմամբ: Սա չպետք է բացառի իրավաբանական անձանց նկատմամբ զուգահեռ քրեական, քաղաքացիական կամ վարչական վարույթների հնարավորությունն այն երկրներում, որտեղ առկա են պատասխանատվության մեկից ավելի ձևեր: Նշված միջոցները պետք է կիրառվեն ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվությունից անկախ: Բոլոր պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ:
9. Որպես հանցագործություն պետք է սահմանված լինի նաև ահաբեկչության ֆինանսավորման հանցագործություն կատարելու փորձը:
10. Որպես հանցագործություն պետք է սահմանված լինեն նաև հետևյալ տեսակի արարքները.
 - (ա) սույն Բացատրական մեկնաբանության 2-րդ կամ 9-րդ պարբերություններով սահմանված կերպով հանցագործությանը որպես հանցակից մասնակցելը,
 - (բ) սույն Բացատրական մեկնաբանության 2-րդ կամ 9-րդ պարբերություններով սահմանված կերպով հանցագործությունը կազմակերպելը կամ այդ նպատակով այլ անձանց ուղղորդելը,
 - (գ) սույն Բացատրական մեկնաբանության 2-րդ կամ 9-րդ պարբերություններով սահմանված կերպով մեկ կամ ավելի հանցագործություն(ներ)ին օժանդակելը ընդհանուր նպատակներով ստեղծված անձանց խմբի կողմից: Նման օժանդակությունը պետք է միտումնավոր բնույթ կրի և պետք է. (ա) կատարվի խմբի հանցավոր գործունեությունը կամ հանցավոր նպատակը իրագործելու համար, երբ նշված գործունեությունը կամ նպատակը ներառում են ահաբեկչության ֆինանսավորման հանցագործության կատարումը, կամ (բ) կատարվի խմբի՝ ահաբեկչության ֆինանսավորման հանցագործություն կատարելու մտադրության գիտակցությամբ:
11. Ահաբեկչության ֆինանսավորման հանցագործությունը պետք է մեղսագրվի՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք հանցագործություն(ները) կատարելու մեջ կասկածվող անձը գտնվում է այն երկրում, որտեղ գտնվում է (են) ահաբեկիչը (ահաբեկիչները)/ ահաբեկչական կազմակերպություն(ներ)ը, կամ որտեղ կատարվել է/ կատարվելու է (են) ահաբեկչական գործողություն(ներ)ը, կամ այլ երկրում:

**ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ 6-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ
ԱՌՆՉՎՈՂ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ)**

Ա. Նպատակը

1. Հանձնարարական 6-ով պահանջվում է, որ երկրները իմպլեմենտացնեն Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի բանաձևերով սահմանված թիրախային ֆինանսական պատժամիջոցները: Նշված բանաձևերով երկրներից պահանջվում է անհապաղ սառեցնել բոլոր այն միջոցները կամ այլ ակտիվները, որոնք պատկանում են ցանկացած անձի² կամ կազմակերպության, ինչպես նաև արգելել միջոցների կամ այլ ակտիվների հասանելիությունը կամ տրամադրվելը հոգուտ ցանկացած անձի կամ կազմակերպության, որը (1) Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության Գլուխ VII-ին համապատասխան կերպով ցուցակվել է ՄԱԿ Անվտանգության խորհրդի կողմից՝ 1267 (1999) բանաձևի և դրա հաջորդող բանաձևերի համաձայն³, կամ (2) ցուցակվել է տվյալ երկրի կողմից՝ 1373 (2001) բանաձևի համաձայն:
2. Կարևոր է նշել, որ Հանձնարարական 6-ով սահմանված պարտականությունները որևէ կերպ նախատեսված չեն փոխարինելու քրեական, քաղաքացիական կամ վարչական գործերով քննությունների կամ վարույթների համատեքստում միջոցների կամ այլ ակտիվների հետ կապված միջոցառումներին կամ պարտականություններին, որպիսիք սահմանվում են Հանձնարարական 4-ով (բռնագրավման և նախնական միջոցների կապակցությամբ)⁴: Հանձնա-

² Ֆիզիկական կամ իրավաբանական

³ Հանձնարարական 6-ը վերաբերում է ՄԱԿ ԱԽ 1267 (1999) բանաձևին և դրա հաջորդող բոլոր բանաձևերին, ինչպես նաև ՄԱԿ ԱԽ կողմից ապագայում ընդունվելիք ցանկացած բանաձևի, որոնցով սահմանվում են կամ կսահմանվեն թիրախային ֆինանսական պատժամիջոցներ ահաբեկչության ֆինանսավորման համար: Սույն Բացատրական մեկնաբանության հրապարակման պահի դրությամբ (2012թ. փետրվար) 1267 (1999) բանաձևի հաջորդող բանաձևերի շարքը ներառում է 1333 (2000), 1363 (2001), 1390 (2002), 1452 (2002), 1455 (2003), 1526 (2004), 1617 (2005), 1730 (2006), 1735 (2006), 1822 (2008), 1904 (2009), 1988 (2011) և 1989 (2011) բանաձևերը:

⁴ Հիմնվելով այնպիսի պահանջների վրա, որպիսիք սահմանված են, օրինակ, *Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին Միավորված ազգերի կազմակերպության 1988թ. կոնվենցիայով* (Վիեննայի կոնվենցիա) և *Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին Միավորված ազգերի կազմակերպության 2000թ. Կոնվենցիայով* (Պալերմոյի կոնվենցիա), որոնք սահմանում են պարտականություններ անդրազգային հանցավոր գործունեության դեմ պայքարի համատեքստում սառեցման, արգելադրման և բռնագրավման վերաբերյալ: Բացի այդ, *Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին Միավորված ազգերի կազմակերպության 1999թ. Միջազգային կոնվենցիայով* (Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիա) սահմանվում են պարտականություններ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համատեքստում սառեցման, արգելադրման և բռնագրավման վերաբերյալ: Այս պարտականությունները գործում են Հանձնարարական 6-ով և ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ ՄԱԿ Անվտանգության խորհրդի բանաձևերով սահմանված պարտականություններից առանձին ու տարանջատված կերպով:

բարական 6-ով սահմանված միջոցառումները կարող են լրացնել ցուցակված անձի կամ կազմակերպության նկատմամբ քրեական հետապնդման վարույթի շրջանակում կիրառելի միջոցների շարքը և կարող են նշանակվել իրավասու մարմնի կամ դատարանի կողմից՝ պայմանավորված չլինելով նման վարույթի առկայությամբ: Փոխարենը, Հանձնարարական 6-ը կենտրոնանում է այն կանխարգելիչ միջոցառումների վրա, որոնք անհրաժեշտ ու պարտադիր են ահաբեկչական խմբերին միջոցների և այլ ակտիվների տրամադրումը, ինչպես նաև այդ խմբերի կողմից դրանց օգտագործումը կասեցնելու նպատակով: Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի արդյունավետ համակարգի կիրառության սահմանները որոշելիս կամ այդ համակարգին լայնածավալ աջակցություն ցուցաբերելիս երկրները պետք է նաև հարգեն մարդու իրավունքները, հետևեն օրենքի գերակայության սկզբունքին և չխախտեն բարեխիղճ երրորդ անձանց իրավունքները:

Բ. Ահաբեկչությունը ֆինանսավորող կամ դրան օժանդակող անձանց և կազմակերպությունների հայտնաբերումը և ցուցակումը

3. 1267 (1999) բանաձևի և դրա հաջորդող բանաձևերի ներքո, Ալ Քաիդայի հետ կապված ցուցակումները կատարվում են 1267 Հանձնաժողովի կողմից, իսկ Թալիբանի և Աֆղանստանին առնչվող սպառնալիքների հետ կապված ցուցակումները կատարվում են 1988 Հանձնաժողովի կողմից. նշված երկու Հանձնաժողովները գործում են Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության Գլուխ VII-ի համաձայն սահմանված իրավասությունների շրջանակում: 1373 (2001) բանաձևի ներքո ցուցակումները կատարվում են ազգային կամ վերազգային մակարդակով, երկրի կամ երկրների նախաձեռնությամբ կամ մեկ այլ երկրի պահանջով, եթե նման պահանջ ստացած երկիրը գալիս է եզրահանգման, որ, իրավունքի կիրառելի սկզբունքների համաձայն, պահանջը ողջամտորեն հիմնավորված է, կամ առկա են ողջամիտ հիմքեր կասկածելու կամ կարծելու, որ ցուցակման նպատակով առաջադրվող անձը համապատասխանում է Բաժին Ե-ում ներկայացված՝ 1373 (2001) բանաձևով սահմանված ցուցակման չափանիշներին:
4. Երկրները պետք է ունենան օրենքով սահմանված իրավասություններ և արդյունավետ ընթացակարգեր կամ մեխանիզմներ՝ Անվտանգության խորհրդի բանաձևերով սահմանված պարտականությունների շրջանակում⁵ 1267 (1999)

⁵ Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերը երկրներից պահանջում են ոչ թե հայտնաբերել անձանց կամ կազմակերպությունների և նրանց անունները/ անվանումները ներկայացնել ՄԱԿ Հանձնաժողովներին, այլ՝ ունենալ օրենքով սահմանված իրավասություններ և արդյունավետ ընթացակարգեր կամ մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան դա անել:

բանաձևի և դրա հաջորդող բանաձևերի ներքո ցուցակման նպատակով անձանց և կազմակերպությունների հայտնաբերման ու առաջադրման համար: Նման իրավասությունները և ընթացակարգերը կամ մեխանիզմներն առանցքային նշանակություն ունեն Անվտանգության խորհրդի կողմից հրապարակվող ցանկերի հիման վրա իրականացվող ծրագրերի շրջանակում ցուցակման նպատակով Անվտանգության խորհրդին համապատասխան բանաձևերի ներքո անձանց և կազմակերպությունների առաջադրման հարցում: Երկրները պետք է նաև ունենան օրենքով սահմանված իրավասություններ և արդյունավետ ընթացակարգեր կամ մեխանիզմներ՝ Անվտանգության խորհրդի 1373 (2001) բանաձևով սահմանված պարտականությունների շրջանակում այդ բանաձևի ներքո ցուցակման նպատակով անձանց և կազմակերպությունների հայտնաբերման ու առաջադրման համար: Նման իրավասությունները և ընթացակարգերը կամ մեխանիզմներն առանցքային նշանակություն ունեն Բաժին Ե-ում ներկայացված՝ 1373 (2001) բանաձևով սահմանված ցուցակման չափանիշներին համապատասխանող անձանց և կազմակերպությունների հայտնաբերման հարցում: 1267 (1999) բանաձևի և դրա հաջորդող բանաձևերի, ինչպես նաև 1373 (2001) բանաձևի իմպլեմենտացման նպատակով երկրի կողմից կիրառվող համակարգը պետք է ներառի հետևյալ անհրաժեշտ տարրերը.

- (ա) Երկրները պետք է նշանակեն իրավասու մարմին կամ դատարան, որի վրա կդրվի պատասխանատվությունը հետևյալի համար.
 - (1) ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1989 (2011) բանաձևով (Ալ Քաիդայի վերաբերյալ) և դրա հետ կապված բանաձևերով սահմանված ցուցակման չափանիշներին համապատասխանող անձանց կամ կազմակերպությունների առաջադրելը 1267 Հանձնաժողովին՝ պատշաճ կերպով ցուցակման նպատակով, եթե տվյալ մարմինը որոշում է դա անել և կարծում է, որ բավարար ապացույցներ ունի նշված անձանց կամ կազմակերպությունների՝ ցուցակման չափանիշներին համապատասխանելու վերաբերյալ.
 - (2) ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1988 (2011) բանաձևով (Թալիբանի և դրա հետ փոխկապակցված՝ Աֆղանստանի խաղաղության, կայունության ու անվտանգության համար սպառնալիք ներկայացնող անձանց վերաբերյալ) և դրա հետ կապված բանաձևերով սահմանված ցուցակման չափանիշներին համապատասխանող անձանց կամ կազմակերպությունների առաջադրելը 1988 Հանձնաժողովին՝ պատշաճ կերպով ցուցակման նպատակով, եթե տվյալ մարմինը

որոշում է դա անել և կարծում է, որ բավարար ապացույցներ ունի նշված անձանց կամ կազմակերպությունների՝ ցուցակման չափանիշներին համապատասխանելու վերաբերյալ, և

- (3) ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1373 (2001) բանաձևով սահմանված ցուցակման չափանիշներին համապատասխանող անձանց կամ կազմակերպություններին ցուցակելը, ինչը կարող է կատարվել կամ տվյալ երկրի նախաձեռնությամբ, կամ մեկ այլ երկրի պահանջով՝ այն ուսումնասիրելուց և, համապատասխան դեպքերում, ընթացք տալուց հետո, եթե նման պահանջ ստացած երկիրը գալիս է եզրահանգման, որ, իրավունքի կիրառելի սկզբունքների համաձայն, պահանջը ողջամտորեն հիմնավորված է, կամ առկա են ողջամիտ հիմքեր կասկածելու կամ կարծելու, որ ցուցակման նպատակով առաջադրվող անձը համապատասխանում է Բաժին Ե-ում ներկայացված՝ 1373 (2001) բանաձևով սահմանված ցուցակման չափանիշներին:
- (բ) Երկրները պետք է ունենան 1988 (2011) բանաձևով, 1989 (2011) բանաձևով և դրա հետ կապված բանաձևերով, ինչպես նաև 1373 (2001) բանաձևով սահմանված ցուցակման չափանիշների հիման վրա ցուցակման ենթակա անձանց հայտնաբերման մեխանիզմ(ներ) (Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերով սահմանված ցուցակման չափանիշների համար տե՛ս Բաժին Ե-ն): Մա ներառում է այն իրավասությունները և արդյունավետ ընթացակարգերը կամ մեխանիզմները, որ երկրները պետք է ունենան 1373 (2001) բանաձևի համաձայն ստեղծման մեխանիզմների շրջանակում մեկ այլ երկրի նախաձեռնած գործողությունները ուսումնասիրելու և, համապատասխան դեպքերում, ընթացք տալու համար: Արդյունավետ համագործակցությունն ապահովելու համար երկրները պետք է հավաստիանան, որ ցուցակման պահանջ ստանալու դեպքում պատշաճ կերպով որոշում են կայացնում առ այն, թե, (վեր)ազգային իրավունքի կիրառելի սկզբունքների համաձայն, արդյոք պահանջը ողջամտորեն հիմնավորված է, կամ առկա են ողջամիտ հիմքեր կասկածելու կամ կարծելու, որ ցուցակման նպատակով առաջադրվող անձը համապատասխանում է Բաժին Ե-ում ներկայացված՝ 1373 (2001) բանաձևով սահմանված ցուցակման չափանիշներին:
- (գ) Իրավասու մարմին(ներ)ը պետք է ունենա(ն) օրենքով սահմանված իրավասություններ և ընթացակարգեր կամ մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս բոլոր վերաբերելի աղբյուրներից հավաքել կամ

խնդրարկել հնարավոր առավելագույն չափով տեղեկատվություն այն անձանց և կազմակերպությունների վերաբերյալ, որոնց կապակցությամբ ողջամտորեն հիմնավորված է, կամ առկա են ողջամիտ հիմքեր կասկածելու կամ կարծելու, որ նրանք համապատասխանում են Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերով սահմանված ցուցակման չափանիշներին:

- (դ) Ցուցակման (ցուցակման նպատակով առաջադրման) որոշումները կայացնելիս երկրները պետք է կիրառեն «ողջամիտ հիմնավորման» կամ «ողջամիտ հիմքերի» ապացուցման ստանդարտը: 1373 (2001) բանաձևի ներքո ցուցակումների դեպքում յուրաքանչյուր երկիր պետք է կիրառի ապացույցների տեսակի ու քանակի վերաբերյալ իր սեփական իրավական համակարգի իրավական ստանդարտը՝ որոշելու համար, թե արդյոք առկա են «ողջամիտ հիմնավորում» կամ «ողջամիտ հիմքեր» որևէ անձի կամ կազմակերպության ցուցակման վերաբերյալ որոշում կայացնելու, այսինքն՝ սառեցման մեխանիզմների շրջանակում գործողություն նախաձեռնելու համար: Այս սկզբունքը գործում է՝ անկախ ցուցակման նպատակով առաջադրումը տվյալ երկրի նախաձեռնությամբ կամ մեկ այլ երկրի պահանջով կատարվելու հանգամանքից: Ընդ որում, ցուցակումը (ցուցակման նպատակով առաջադրումը) չպետք է պայմանավորված լինի քրեական վարույթի առկայությամբ:
- (ե) 1267 (1999) բանաձևով և դրա հաջորդող բանաձևերով սահմանված՝ Ալ Քաիդայի պատժամիջոցների ցանկում ընդգրկման համար 1267 Հանձնաժողովին անուններ/ անվանումներ առաջադրելու դեպքում երկրները պետք է.
- (1) պահպանեն 1267 Հանձնաժողովի կողմից սահմանված՝ ցանկերում ընդգրկման ընթացակարգերը և նախատեսված ստանդարտ ձևաչափերը,
 - (2) տրամադրեն առաջադրված անձին առնչվող հնարավոր առավելագույն չափով տեղեկատվություն, մասնավորապես՝ բավարար չափով նույնականացման տվյալներ, որոնք թույլ կտան ճշգրիտ և հավաստի կերպով նույնականացնել անհատներին, խմբերին, կազմավորումներին և կազմակերպություններին, ինչպես նաև, հնարավորության սահմաններում, Ինտերպոլի կողմից Հատուկ ծանուցագիր թողարկելու համար պահանջվող տեղեկատվությունը,
 - (3) տրամադրեն համապատասխան դեպքի նկարագրությունը, որով պետք է ներկայացվեն ցանկերում ընդգրկման հիմքերի վերաբերյալ

հնարավոր առավելագույն մանրամասնությամբ տվյալներ, այդ թվում՝ տվյալ անձին կամ կազմակերպությանը ցուցակման չափանիշներին համապատասխանող ճանաչելու որոշման հիմքում ընկած առանձին տվյալները (Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերով սահմանված ցուցակման չափանիշների համար տե՛ս Բաժին Ե-ն), այդ տվյալների բնույթը, տրամադրման ենթակա հարակից տեղեկատվությունը կամ փաստաթղթերը, ինչպես նաև ցուցակման նպատակով առաջադրվող և տվյալ պահի դրությամբ արդեն ցուցակված անձանց կամ կազմակերպությունների միջև հնարավոր կապերի մասին տվյալները. դեպքի նկարագրությունը ենթակա է ըստ պահանջի հրապարակման, բացառությամբ այն մասերի, որոնք Անդամ երկիրը 1267 Հանձնաժողովին ներկայացնում է որպես կոնֆիդենցիալ տեղեկատվություն, և

- (4) մասնավորեցնեն, թե արդյոք հրապարակման ենթակա է այն հանգամանքը, որ տվյալ երկիրը հանդես է գալիս ցուցակումը նախաձեռնողի կարգավիճակում:
- (գ) 1988 (2011) բանաձևով և դրա հաջորդող բանաձևերով սահմանված՝ Թալիբանի պատժամիջոցների ցանկում ընդգրկման համար 1988 Հանձնաժողովին անուններ/ անվանումներ առաջադրելու դեպքում երկրները պետք է.
 - (1) պահպանեն 1988 Հանձնաժողովի կողմից սահմանված՝ ցանկերում ընդգրկման ընթացակարգերը,
 - (2) տրամադրեն առաջադրված անձին առնչվող հնարավոր առավելագույն չափով տեղեկատվություն, մասնավորապես՝ բավարար չափով նույնականացման տվյալներ, որոնք թույլ կտան ճշգրիտ և հավաստի կերպով նույնականացնել անհատներին, խմբերին, կազմավորումներին և կազմակերպություններին, ինչպես նաև, հնարավորության սահմաններում, Ինտերպոլի կողմից Հատուկ ծանուցագիր թողարկելու համար պահանջվող տեղեկատվությունը,
 - (3) տրամադրեն համապատասխան դեպքի նկարագրությունը, որով պետք է ներկայացվեն ցանկերում ընդգրկման հիմքերի վերաբերյալ հնարավոր առավելագույն մանրամասնությամբ տվյալներ, այդ թվում՝ տվյալ անձին կամ կազմակերպությանը ցուցակման չափանիշներին համապատասխանող ճանաչելու

որոշման հիմքում ընկած առանձին տվյալները (Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերով սահմանված ցուցակման չափանիշների համար տե՛ս Բաժին Ե-ն), այդ տվյալների բնույթը, տրամադրման ենթակա հարակից տեղեկատվությունը կամ փաստաթղթերը, ինչպես նաև ցուցակման նպատակով առաջադրվող և տվյալ պահի դրությամբ արդեն ցուցակված անձանց կամ կազմակերպությունների միջև հնարավոր կապերի մասին տվյալները: Դեպքի նկարագրությունը ենթակա է ըստ պահանջի հրապարակման, բացառությամբ այն մասերի, որոնք Անդամ երկիրը 1988 Հանձնաժողովին ներկայացնում է որպես կոնֆիդենցիալ տեղեկատվություն:

- (ե) 1373 (2001) բանաձևի համաձայն սառեցման մեխանիզմների շրջանակում նախաձեռնված գործողություններին ընթացք տալու նպատակով մեկ այլ երկրի պահանջ ներկայացնելու դեպքում երկրները պետք է տրամադրեն հնարավոր առավելագույն մանրամասնությամբ տվյալներ ցուցակման նպատակով առաջադրվող անձանց և կազմակերպությունների վերաբերյալ, մասնավորապես՝ բավարար չափով նույնականացման տվյալներ, որոնք թույլ կտան ճշգրիտ և հավաստի կերպով նույնականացնել այդ անձանց և կազմակերպություններին, ինչպես նաև տվյալ անձին կամ կազմակերպությանը ցուցակման չափանիշներին համապատասխանող ճանաչելու որոշման հիմքում ընկած առանձին տվյալները (Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերով սահմանված ցուցակման չափանիշների համար տե՛ս Բաժին Ե-ն):
- (ը) Երկրները պետք է ունենան ընթացակարգեր, որոնք հնարավորություն են տալիս ձեռնարկել միակողմանի գործողություններ հայտնաբերված անձի կամ կազմակերպության նկատմամբ՝ նրան ցուցակելու (ցուցակման նպատակով առաջադրելու) հարցի դիտարկման ընթացքում:

Գ. Ցուցակված անձանց և կազմակերպությունների միջոցների կամ այլ ակտիվների սառեցումը և դրանցով գործառնությունների արգելումը

- 5. Երկրները պարտավոր են անհապաղ կատարել 1267 Հանձնաժողովի և 1988 Հանձնաժողովի (1267 (1999) բանաձևի և դրա հաջորդող բանաձևերի դեպքում) կողմից ցուցակված անձանց և կազմակերպությունների նկատմամբ սահմանված թիրախային ֆինանսական պատժամիջոցները, երբ նշված Հանձնաժողովները գործում են Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության Գլուխ VII-ի համաձայն սահմանված իրավասությունների

շրջանակում: 1373 (2001) բանաձևի ներքո երկրների՝ ցուցակված անձանց և կազմակերպությունների միջոցների կամ այլ ակտիվների սառեցման և դրանցով գործառնությունների արգելման մասով անհապաղ գործողություն ձեռնարկելու պարտականությունը ծագում է (վեր)ազգային մակարդակով ցուցակված պահին, ինչը կարող է կատարվել կամ տվյալ երկրի նախաձեռնությամբ, կամ մեկ այլ երկրի պահանջով, եթե նման պահանջ ստացած երկիրը գալիս է եզրահանգման, որ, իրավունքի կիրառելի սկզբունքների համաձայն, պահանջը ողջամտորեն հիմնավորված է, կամ առկա են ողջամիտ հիմքեր կասկածելու կամ կարծելու, որ ցուցակված նպատակով առաջադրվող անձը համապատասխանում է Բաժին Ե-ում ներկայացված՝ 1373 (2001) բանաձևով սահմանված ցուցակված չափանիշներին:

6. Երկրները պետք է օրենքով սահմանեն համապատասխան իրավասություններ և նշանակեն ներպետական իրավասու մարմիններ, որոնց վրա կդրվի թիրախային ֆինանսական պատժամիջոցների իմպլեմենտացման ու կիրարկման պատասխանատվությունը՝ ըստ հետևյալ ստանդարտների և ընթացակարգերի.

(ա) Երկրները⁶ պետք է երկրի ներսում գտնվող բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջեն անհապաղ և առանց նախնական ծանուցման սառեցնել ցուցակված անձանց ու կազմակերպությունների միջոցները կամ այլ ակտիվները: Այս պարտականությունը պետք է տարածվի հետևյալի վրա. (1) բոլոր այն միջոցները կամ այլ ակտիվները, որոնք պատկանում են ցուցակված անձանց կամ կազմակերպություններին կամ վերահսկվում են նրանց կողմից, ընդ որում այս պահանջը վերաբերում է ոչ միայն այն միջոցներին կամ այլ ակտիվներին, որոնք կարող են առնչվել որոշակի ահաբեկչական գործողության, ծրագրի կամ սպառնալիքի, (2) այն միջոցները կամ այլ ակտիվները, որոնք, ամբողջությամբ կամ համատեղ կարգով, ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում են ցուցակված անձանց կամ կազմակերպություններին կամ վերահսկվում են նրանց կողմից, և (3) այն միջոցները կամ այլ ակտիվները, որոնք ստացվել կամ ձևավորվել են ցուցակված անձանց կամ կազմակերպություններին ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ

⁶ Եվրոմիության (ԵՄ) դեպքում, որը Հանձնարարական 6-ի իմաստով ՖԱԹՖ-ի կողմից համարվում է վերազգային իրավագերակայություն, ցուցակված անձանց և կազմակերպությունների ակտիվները սառեցվում են ԵՄ կարգավորիչ ակտերով ու դրանց լրացումներով: Հնարավոր է, որ ԵՄ անդամ երկրները կարիք ունենան ձեռնարկել սառեցումն ապահովող լրացուցիչ միջոցներ, մինչդեռ ԵՄ տարածքում գտնվող բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են համապատասխանել ցուցակված անձանց ու կազմակերպությունների միջոցների սառեցման և հասանելիության արգելման պահանջին:

նրանց կողմից վերահսկվող միջոցներից կամ այլ ակտիվներից, ինչպես նաև (4) ցուցակված անձանց կամ կազմակերպությունների անունից կամ ցուցումով գործող անձանց և կազմակերպությունների միջոցները կամ այլ ակտիվները:

- (բ) Երկրները պետք է իրենց քաղաքացիներին կամ իրենց տարածքում գտնվող անձանց և կազմակերպություններին արգելեն ուղղակի կամ անուղղակի կերպով, ամբողջությամբ կամ համատեղ կարգով, հասանելի դարձնել միջոցներ կամ այլ ակտիվներ, տնտեսական ռեսուրսներ կամ ֆինանսական կամ այլ հարակից ծառայություններ ի շահ ցուցակված անձանց և կազմակերպությունների, ուղղակի կամ անուղղակի կերպով նրանց պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունների, նրանց անունից կամ ցուցումով գործող անձանց կամ կազմակերպությունների, եթե դա Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերի համաձայն արտոնված, լիազորված կամ որևէ այլ կերպ ծանուցված չէ (տե՛ս ներքո շարադրյալ Բաժին Ե-ն):
- (գ) Երկրները պետք է ունենան մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս ցուցակման որոշումների մասին անմիջապես տեղեկացնել ֆինանսական հատվածին և ՆՈՖԳՏՄ-ներին, ինչպես նաև տրամադրել հստակ ուղեցույցներ սառեցման մեխանիզմների շրջանակում որոշակի միջոցառումներ իրականացնելու պարտականություն ունեցող ֆինանսական հաստատություններին և այլ անձանց կամ կազմակերպություններին, այդ թվում՝ ՆՈՖԳՏՄ-ներին, որոնց տիրապետման ներքո կարող են գտնվել թիրախային ֆինանսական պատժամիջոցների ենթակա միջոցներ կամ այլ ակտիվներ:
- (դ) Երկրները պետք է ֆինանսական հաստատություններից և ՆՈՖԳՏՄ-ներից⁷ պահանջեն իրավասու մարմիններին հայտնել Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերի արգելող դրույթների համաձայն սառեցված ակտիվների կամ ձեռնարկված գործողությունների, այդ թվում՝ գործարք կատարելու փորձերի մասին, և պետք է ապահովեն իրավասու մարմինների կողմից այդ տեղեկատվության արդյունավետ օգտագործումը:
- (ե) Երկրները պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկեն Հանձնարարական 6-ով սահմանված պարտականությունների իրականացման շրջանակում բարեխիղճ երրորդ անձանց իրավունքների պաշտպանության համար:

⁷ Անվտանգության խորհրդի բանաձևերը վերաբերում են երկրի ներսում գտնվող բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց:

7. Ցանկերից հանելը, սառեցումը վերացնելը և սառեցված միջոցներին կամ այլ ակտիվներին հասանելիություն տրամադրելը

7. Երկրները պետք է մշակեն և իմպլեմենտացնեն հանրությանը հայտնի ընթացակարգեր՝ 1267 (1999) բանաձևի և դրա հաջորդող բանաձևերի ներքո ցուցակված անձանց և կազմակերպություններին ցանկերից հանելու հարցումները Անվտանգության խորհրդին ներկայացնելու համար, եթե, տվյալ երկրի կարծիքով, նրանք չեն համապատասխանում կամ այլևս չեն համապատասխանում ցուցակման չափանիշներին: Եթե 1267 Հանձնաժողովը կամ 1988 Հանձնաժողովը որևէ անձի կամ կազմակերպության հանում են ցանկերից, դրանց մասով սառեցման պարտականությունը դադարում է: Ցանկերից հանելու վերաբերյալ Ալ Քաիդայի հետ կապված հարցումների ներկայացման ընթացակարգերը և չափանիշները պետք է համապատասխանեն Անվտանգության խորհրդի 1730 (2006), 1735 (2006), 1822 (2008), 1904 (2009), 1989 (2011) և հաջորդող բանաձևերի ներքո 1267 Հանձնաժողովի կողմից սահմանված ընթացակարգերին: Թալիբանի և դրա հետ փոխկապակցված՝ Աֆղանստանի խաղաղության, կայունության ու անվտանգության համար սպառնալիք ներկայացնող անձանց հետ կապված հարցումների ներկայացման ընթացակարգերը և չափանիշները պետք է համապատասխանեն Անվտանգության խորհրդի 1730 (2006), 1735 (2006), 1822 (2008), 1904 (2009), 1988 (2011) և հաջորդող բանաձևերի ներքո 1988 Հանձնաժողովի կողմից սահմանված ընթացակարգերին:
8. 1373 (2001) բանաձևի ներքո ցուցակված անձանց և կազմակերպությունների մասով, երկրները պետք է ունենան օրենքով սահմանված իրավասություններ և ընթացակարգեր կամ մեխանիզմներ ցուցակման չափանիշներին այլևս չհամապատասխանող անձանց և կազմակերպություններին ցանկերից հանելու և նրանց միջոցների կամ այլ ակտիվների սառեցումը վերացնելու համար: Երկրները պետք է ունենան նաև ընթացակարգեր, որոնք հնարավորություն են տալիս ցուցակման որոշումը պահանջի դեպքում վերանայել դատարանի կամ որևէ անկախ իրավասու մարմնի կողմից:
9. Ցուցակված անձանց կամ կազմակերպությունների անուններին/ անվանումներին համընկնող կամ նմանվող անուն/ անվանում ունեցող և պատահաբար (մասնավորապես՝ սխալ համընկնման արդյունքում) սառեցման մեխանիզմի ազդեցությանը ենթարկված անձանց կամ կազմակերպությունների մասով, երկրները պետք է մշակեն և իմպլեմենտացնեն հանրությանը հայտնի ընթացակարգեր, որոնք հնարավորություն են տալիս ժամանակին վերացնել այդ

անձանց կամ կազմակերպությունների միջոցների կամ այլ ակտիվների սառեցումը, եթե հաստատվել է, որ նրանք ցուցակված անձինք կամ կազմակերպություններ չեն:

10. Երկրները պետք է լիազորեն Անվտանգության խորհրդի կամ դրա համապատասխան Պատժամիջոցների հանձնաժողովի կողմից ցուցակված անձանց և կազմակերպությունների միջոցների կամ այլ ակտիվների հասանելիությունն այն դեպքերում, երբ դա անհրաժեշտ է ճանաչվել հիմնական կարիքների, որոշակի տեսակի վճարումների, ծախսերի ու սպասարկման վճարների կամ արտառոց ծախսերի կատարման համար՝ ըստ Անվտանգության խորհրդի 1452 (2002) բանաձևով և դրա հաջորդող բանաձևերով սահմանված ընթացակարգերի: Նույն սկզբունքի համաձայն՝ երկրները պետք է լիազորեն միջոցների կամ այլ ակտիվների հասանելիությունը, եթե սառեցման միջոցառումները կիրառվել են 1373 (2001) բանաձևի ներքո և 1963 (2010) բանաձևին համապատասխան կերպով (վեր)ազգային մակարդակով ցուցակված անձանց և կազմակերպությունների նկատմամբ:
11. Երկրները պետք է ունենան մեխանիզմ, որի միջոցով ցուցակված անձինք և կազմակերպությունները կարող են պահանջել ցուցակման որոշման վերանայումը դատարանի կամ որևէ անկախ իրավասու մարմնի կողմից: ԱլՔաիդայի պատժամիջոցների ցանկի ներքո կատարված ցուցակումների մասով, երկրները պետք է ցուցակված անձանց և կազմակերպություններին տեղեկացնեն 1904 (2009) բանաձևի համաձայն ցանկերից հանելու հարցումների ընդունման համար ՄԱԿ Օմբուդսմենի գրասենյակի առկայության մասին:
12. Երկրները պետք է ունենան մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս ցանկերից հանելու և սառեցումը վերացնելու որոշումների մասին անմիջապես տեղեկացնել ֆինանսական հատվածին և ՆՈՖԳՏՄ-ներին, ինչպես նաև տրամադրել հստակ ուղեցույցներ ցանկերից հանելու կամ սառեցումը վերացնելու մեխանիզմների շրջանակում որոշակի միջոցառումներ իրականացնելու պարտականություն ունեցող ֆինանսական հաստատություններին և այլ անձանց կամ կազմակերպություններին, այդ թվում՝ ՆՈՖԳՏՄ-ներին, որոնց տիրապետման ներքո կարող են գտնվել թիրախային ֆինանսական պատժամիջոցների ենթակա միջոցներ կամ այլ ակտիվներ:

Ե. ՄԱԿ-ի կողմից սահմանված ցուցակման չափանիշները

13. ՄԱԿ Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերով սահմանված ցուցակման չափանիշներն են.

(ա) **Անվտանգության խորհրդի 1267 (1999), 1989 (2011) և դրանց հաջորդող բանաձևեր⁸.**

(1) ցանկացած անձ կամ կազմակերպություն, որը մասնակցում է այնպիսի գործողություններ կամ գործունեություն ֆինանսավորելուն, պլանավորելուն, նպաստելուն, նախապատրաստելուն կամ կատարելուն, որոնք տեղի են ունենում Ալ Քաիդայի կամ դրա որևէ միավորի, դրա հետ փոխկապակցված անձի, դրանից առանձնացած կամ ճյուղավորված խմբի հետ համատեղ, անվան ներքո, անունից կամ աջակցության համար, մատակարարում, վաճառում կամ փոխանցում է զենք կամ դրա հետ կապված նյութեր, հավաքագրում է մարդկանց կամ որևէ այլ կերպ օժանդակում է դրանց գործողություններին կամ գործունեությանը⁹, կամ

(2) ցանկացած կազմավորում, որը, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, պատկանում է ենթաբաժին 13(ա)(1)-ի ներքո ցուցակված որևէ անձի կամ կազմակերպության կամ նրանց անունից կամ ցուցումով գործող անձանց, կամ վերահսկվում է նշվածներից որևէ մեկի կողմից:

(բ) **Անվտանգության խորհրդի 1267 (1999), 1988 (2011) և դրանց հաջորդող բանաձևեր.**

(1) ցանկացած անձ կամ կազմակերպություն, որը մասնակցում է այնպիսի գործողություններ կամ գործունեություն ֆինանսավորելուն, պլանավորելուն, նպաստելուն, նախապատրաստելուն կամ կատարելուն, որոնք տեղի են ունենում Թալիբանի և դրա հետ փոխկապակցված՝ Աֆղանստանի խաղաղության, կայունության ու անվտանգության համար սպառնալիք ներկայացնող ցուցակված անձանց և այլ անհատների, խմբերի, կազմավորումների և կազմակերպությունների հետ համատեղ, անվան ներքո, անունից կամ աջակցության համար, մատակարարում, վաճառում կամ փոխանցում է զենք կամ դրա հետ կապված նյութեր, հավաքագրում է մարդկանց կամ որևէ այլ կերպ օժանդակում է դրանց գործողություններին կամ գործունեությանը, կամ

⁸Հանձնարարական 6-ը վերաբերում է ՄԱԿ ԱԽ 1267 (1999) բանաձևին և դրա հաջորդող՝ ներկայում ատկա և ապագայում ընդունվելիք ցանկացած բանաձևի: Սույն Բացատրական մեկնաբանության հրապարակման պահի դրությամբ (2012թ. փետրվար) 1267 (1999) բանաձևի հաջորդող բանաձևերի շարքը ներառում է 1333 (2000), 1367 (2001), 1390 (2002), 1455 (2003), 1526 (2004), 1617 (2005), 1735 (2006), 1822 (2008), 1904 (2009), 1988 (2011) և 1989 (2011) բանաձևերը:

⁹ 1617 (2005) բանաձևի տեսքով 2-րդ պարբերությամբ սահմանվում են Ալ Քաիդայի կամ Ուսամա բին Լադենի «հետ կապված» ճանաչելու չափանիշները:

- (2) ցանկացած կազմավորում, որը, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, պատկանում է ենթաբաժին 13(բ)(1)-ի ներքո ցուցակված որևէ անձի կամ կազմակերպության կամ նրանց անունից կամ ցուցումով գործող անձանց, կամ վերահսկվում է նշվածներից որևէ մեկի կողմից:

(գ) Անվտանգության խորհրդի 1373 (2001) բանաձև.

- (1) ցանկացած անձ կամ կազմակերպություն, որը որևէ կերպ կատարում կամ փորձում է կատարել ահաբեկչական գործողություններ, կամ որը մասնակցում կամ նպաստում է ահաբեկչական գործողությունների կատարմանը,
- (2) ցանկացած կազմակերպություն, որը, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, պատկանում է ենթաբաժին 13(գ)(1)-ի ներքո ցուցակված որևէ անձի կամ կազմակերպության, կամ վերահսկվում է նշվածներից որևէ մեկի կողմից, կամ
- (3) ցանկացած անձ կամ կազմակերպություն, որը գործում է ենթաբաժին 13(գ)(1)-ի ներքո ցուցակված որևէ անձի կամ կազմակերպության անունից կամ ցուցումով:

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ 7-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՉԼՉԱՑՄԱՆ ԶԵՆՔԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ
ԱՌՆՉՎՈՂ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ)

Ա. Նպատակը

1. Հանձնարարական 7-ով պահանջվում է, որ երկրները իմպլեմենտացնեն Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի բանաձևերով սահմանված թիրախային ֆինանսական պատժամիջոցները¹⁰, որոնցով երկրներից պահանջվում է անհապաղ սառեցնել բոլոր այն միջոցները կամ այլ ակտիվները, որոնք պատկանում են ցանկացած անձի¹¹ կամ կազմակերպության, ինչպես նաև արգելել միջոցների կամ այլ ակտիվների հասանելիությունը կամ տրամադրվելը հոգուտ ցանկացած անձի կամ կազմակերպության, որը Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության Գլուխ VII-ին համապատասխան կերպով ցուցակվել է ՄԱԿ Անվտանգության խորհրդի կողմից՝ զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորումը կանխարգելելու և խափանելու վերաբերյալ Անվտանգության խորհրդի բանաձևերի համաձայն¹²:
2. Կարևոր է նշել, որ Հանձնարարական 7-ով սահմանված պարտականությունները որևէ կերպ նախատեսված չեն փոխարինելու քրեական, քաղաքացիական կամ վարչական գործերով քննությունների կամ վարույթների համատեքստում միջոցների կամ այլ ակտիվների հետ կապված միջոցառումների կամ պարտականություններին, որպիսիք սահմանվում են միջազգային պայ-

¹⁰ Հանձնարարական 7-ը կենտրոնանում է թիրախային ֆինանսական պատժամիջոցների վրա: Այդուհանդերձ, պետք է նշել, որ ՄԱԿ Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերը շատ ավելի ընդգրկուն են և նախատեսում են տարատեսակ պատժամիջոցներ (ինչպիսին է ճանապարհորդելու արգելքը) և ֆինանսական բնույթի միջոցներ (ինչպիսիք են գործունեության որոշակի տեսակների գծով ֆինանսական գործառնությունների արգելքը և հավելյալ ուսումնասիրության պահանջը): Ֆինանսական բնույթի այլ միջոցների կապակցությամբ, ՖԱԹՖ-ը հրապարակել է կատարման համար ոչ պարտադիր ուղեցույցներ, և ցանկալի է, որ երկրները ՄԱԿ ԱԽ համապատասխան բանաձևերն իմպլեմենտացնելիս դրանք հաշվի առնեն: Զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման համար սահմանված թիրախային ֆինանսական պատժամիջոցների վերաբերյալ նույնպես ՖԱԹՖ-ը հրապարակել է կատարման համար ոչ պարտադիր ուղեցույց, և ցանկալի է, որ երկրները ՄԱԿ ԱԽ համապատասխան բանաձևերն իմպլեմենտացնելիս այն հաշվի առնեն:

¹¹ Ֆիզիկական կամ իրավաբանական:

¹² Հանձնարարական 7-ը վերաբերում է ՄԱԿ ԱԽ բոլոր բանաձևերին, որոնցով սահմանվում են թիրախային ֆինանսական պատժամիջոցներ զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման համար, դրանց հաջորդող՝ ապագայում ընդունվելիք ցանկացած բանաձևի, ինչպես նաև ՄԱԿ ԱԽ կողմից ապագայում ընդունվելիք ցանկացած բանաձևի, որոնցով կսահմանվեն թիրախային ֆինանսական պատժամիջոցներ զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման համար: Սույն Բացատրական մեկնաբանության հրապարակման պահի դրությամբ (2012թ. փետրվար) այդ բանաձևերի շարքը ներառում է 1718(2006), 1737(2006), 1747(2007), 1803(2008), 1874(2009) և 1929(2010) բանաձևերը:

մանագրերով կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածումը կանխարգելելու վերաբերյալ Անվտանգության խորհրդի բանաձևերով¹³: Հանձնարարական 7-ը կենտրոնանում է այն կանխարգելիչ միջոցառումների վրա, որոնք անհրաժեշտ ու պարտադիր են զանգվածային ոչնչացման զենքը տարածողներին կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման նպատակով միջոցների և այլ ակտիվների տրամադրումն ու օգտագործումը կասեցնելու նպատակով, ինչպես պահանջվում է Անվտանգության խորհրդի բանաձևերով:

Բ. Ցուցակումը

3. Ցուցակումները կատարվում են Անվտանգության խորհրդի կողմից՝ համապատասխան բանաձևերի հավելվածներով, կամ այդ բանաձևերի համաձայն ստեղծված՝ Անվտանգության խորհրդի հանձնաժողովների կողմից: Որևէ հատուկ պարտավորություն սահմանված չէ առ այն, որ Միավորված ազգերի կազմակերպության անդամ երկրները պետք է ցուցակման համար անուններ/անվանումներ ներկայացնեն Անվտանգության խորհրդի հանձնաժողովներին: Այդուհանդերձ, գործնականում հանձնաժողովները մեծ մասամբ հիմնվում են անդամ երկրների կողմից ներկայացված ցուցակման հարցումների վրա: 1718 (2006) և 1737 (2006) բանաձևերով սահմանվում է, որ համապատասխան հանձնաժողովներն անհրաժեշտության դեպքում պետք է հաստատեն ուղեցույցներ՝ այդ բանաձևերով նախատեսված միջոցների իմպլեմենտացումը դյուրացնելու համար:
4. Երկրները պետք է դիտարկեն օրենքով սահմանված իրավասություններ և արդյունավետ ընթացակարգեր կամ մեխանիզմներ ներդնելու նպատակահարմարությունը՝ զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման համար թիրախային ֆինանսական պատժամիջոցներ սահմանող Անվտանգության խորհրդի բանաձևերի ներքո ցուցակման նպատակով անձանց և կազմակերպությունների առաջադրման համար: Այդ նպատակով, երկրները պետք է դիտարկեն հետևյալ տարրերի անհրաժեշտությունը.
 - (ա) նշանակել իրավասու մարմին(ներ)՝ գործադիր կամ դատական իշխանության մակարդակով, որի (որոնց) վրա կդրվի պատասխանատվությունը հետևյալի համար.

¹³ Հիմնվելով այնպիսի պահանջների վրա, որպիսիք սահմանված են, օրինակ, *Միջուկային զենքի չտարածման մասին պայմանագրով*, *Կենսաբանական և թունավոր նյութեր պարունակող զենքի մասին կոնվենցիայով*, *Քիմիական զենքի մասին կոնվենցիայով* և Անվտանգության խորհրդի 1540 (2004) բանաձևով: Այս պարտականությունները գործում են Հանձնարարական 7-ով և դրա Բացատրական մեկնաբանությամբ սահմանված պարտականություններից առանձին ու տարանջատված կերպով:

- (1) 1718 (2006) բանաձևով և դրա հաջորդող բանաձևերով¹⁴ սահմանված ցուցակման չափանիշներին համապատասխանող անձանց կամ կազմակերպությունների առաջադրելը 1718 Պատժամիջոցների հանձնաժողովին՝ պատշաճ կերպով ցուցակման նպատակով, եթե տվյալ մարմինը որոշում է դա անել և կարծում է, որ բավարար ապացույցներ ունի նշված անձանց կամ կազմակերպությունների՝ ցուցակման չափանիշներին համապատասխանելու վերաբերյալ (Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերով սահմանված ցուցակման չափանիշների համար տե՛ս Բաժին Ե-ն), և
 - (2) 1737 (2006) բանաձևով և դրա հաջորդող բանաձևերով¹⁵ սահմանված ցուցակման չափանիշներին համապատասխանող անձանց կամ կազմակերպությունների առաջադրելը 1737 Պատժամիջոցների հանձնաժողովին՝ պատշաճ կերպով ցուցակման նպատակով, եթե տվյալ մարմինը որոշում է դա անել և կարծում է, որ բավարար ապացույցներ ունի նշված անձանց կամ կազմակերպությունների՝ ցուցակման չափանիշներին համապատասխանելու վերաբերյալ (Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերով սահմանված ցուցակման չափանիշների համար տե՛ս Բաժին Ե-ն).
- (բ) ունենալ 1718 (2006) բանաձևով, 1737 (2006) բանաձևով և դրանց հաջորդող բանաձևերով սահմանված ցուցակման չափանիշների հիման վրա ցուցակման ենթակա անձանց հայտնաբերման մեխանիզմ(ներ) (Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերով սահմանված ցուցակման չափանիշների համար տե՛ս Բաժին Ե-ն): Այս մեխանիզմները պետք է հնարավորություն տան որոշում կայացնել առ այն, թե, (վեր)ազգային իրավունքի կիրառելի սկզբունքների համաձայն, արդյոք առկա են ողջամիտ հիմքեր կամ ողջամիտ հիմնավորում տվյալ անձին ցուցակման նպատակով առաջադրելու համար.
- (գ) ունենալ օրենքով սահմանված իրավասություններ և ընթացակարգեր կամ մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս բոլոր վերաբե-

¹⁴ Հանձնարարական 7-ը վերաբերում է ՄԱԿ ԱԽ 1718 (2006) բանաձևին և դրա հաջորդող՝ ներկայում առկա և ապագայում ընդունվելիք ցանկացած բանաձևի: Սույն Բացատրական մեկնաբանության հրապարակման պահի դրությամբ (2012թ. փետրվար) 1718 (2006) բանաձևի հաջորդող բանաձևերի շարքը ներառում է 1874 (2009) բանաձևը:

¹⁵ Հանձնարարական 7-ը վերաբերում է ՄԱԿ ԱԽ 1737 (2006) բանաձևին և դրա հաջորդող՝ ներկայում առկա և ապագայում ընդունվելիք ցանկացած բանաձևի: Սույն Բացատրական մեկնաբանության հրապարակման պահի դրությամբ (2012թ. փետրվար) 1737 (2006) բանաձևի հաջորդող բանաձևերի շարքը ներառում է 1747 (2007), 1803 (2008) և 1929 (2010) բանաձևերը:

րելի աղբյուրներից հավաքել կամ խնդրարկել հնարավոր առավելագույն չափով տեղեկատվություն այն անձանց և կազմակերպությունների վերաբերյալ, որոնց կապակցությամբ ողջամտորեն հիմնավորված է, կամ առկա են ողջամիտ հիմքեր կասկածելու կամ կարծելու, որ նրանք համապատասխանում են Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերով սահմանված ցուցակման չափանիշներին.

- (դ) ցուցակման նպատակով առաջադրման որոշումները կայացնելիս հաշվի առնել սույն Բացատրական մեկնաբանության Բաժին Ե-ով սահմանված չափանիշները: Ցուցակման նպատակով անձանց առաջադրելիս յուրաքանչյուր երկրի իրավասու մարմինը պետք է կիրառի իր սեփական իրավական համակարգի իրավական ստանդարտը՝ հարգելով մարդու իրավունքները, հետևելով օրենքի գերակայության սկզբունքին և չխախտելով բարեխիղճ երրորդ անձանց իրավունքները.
- (ե) 1718 (2006) բանաձևի և դրա հաջորդող բանաձևերի ներքո 1718 Պատժամիջոցների հանձնաժողովին կամ 1737 (2006) բանաձևի և դրա հաջորդող բանաձևերի ներքո 1737 Պատժամիջոցների հանձնաժողովին անուններ/անվանումներ առաջադրելու դեպքում տրամադրել հնարավոր առավելագույն մանրամասնությամբ տվյալներ.
 - (1) ցուցակման նպատակով առաջադրվող անձանց և կազմակերպությունների վերաբերյալ, մասնավորապես՝ բավարար չափով նույնականացման տվյալներ, որոնք թույլ կտան ճշգրիտ և հավաստի կերպով նույնականացնել այդ անձանց և կազմակերպություններին, և
 - (2) տվյալ անձին կամ կազմակերպությանը ցուցակման չափանիշներին համապատասխանող ճանաչելու որոշման հիմքում ընկած առանձին տվյալները (Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերով սահմանված ցուցակման չափանիշների համար տե՛ս Բաժին Ե-ն).
- (զ) ունենալ ընթացակարգեր, որոնք հնարավորություն են տալիս անհրաժեշտության դեպքում ձեռնարկել միակողմանի գործողություններ հայտնաբերված անձի կամ կազմակերպության նկատմամբ՝ նրան ցուցակման նպատակով առաջադրելու հարցի դիտարկման ընթացքում:

Գ. Ցուցակված անձանց և կազմակերպությունների միջոցների կամ այլ ակտիվների սառեցումը և դրանցով գործառնությունների արգելումը

5. Երկրները պարտավոր են անհապաղ կատարել ցուցակված անձանց և կազմակերպությունների նկատմամբ թիրախային ֆինանսական պատժամիջոցները, որպիսիք սահմանվում են.

(ա) 1718 (2006) բանաձևի և դրա հաջորդող բանաձևերի դեպքում, Անվտանգության խորհրդի կողմից՝ համապատասխան բանաձևերի հավելվածներով, կամ Անվտանգության խորհրդի 1718 Պատժամիջոցների հանձնաժողովի կողմից, և

(բ) 1737 (2006) բանաձևի և դրա հաջորդող բանաձևերի դեպքում, Անվտանգության խորհրդի կողմից՝ համապատասխան բանաձևերի հավելվածներով, կամ Անվտանգության խորհրդի 1737 Պատժամիջոցների հանձնաժողովի կողմից,

երբ նշված Հանձնաժողովները գործում են Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության Գլուխ VII-ի համաձայն սահմանված իրավասությունների շրջանակում:

6. Երկրները պետք է օրենքով սահմանեն համապատասխան իրավասություններ և նշանակեն ներպետական իրավասու մարմիններ, որոնց վրա կորվի թիրախային ֆինանսական պատժամիջոցների իմպլեմենտացման ու կիրարկման պատասխանատվությունը՝ ըստ հետևյալ ստանդարտների և ընթացակարգերի.

(ա) Երկրները¹⁶ պետք է երկրի ներսում գտնվող բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջեն անհապաղ և առանց նախնական ծանուցման սառեցնել ցուցակված անձանց ու կազմակերպությունների միջոցները կամ այլ ակտիվները: Այս պարտականությունը պետք է տարածվի հետևյալի վրա. (1) բոլոր այն միջոցները կամ այլ ակտիվները, որոնք պատկանում են ցուցակված անձանց կամ կազմակերպություններին կամ վերահսկվում են նրանց կողմից, ընդ որում այս պահանջը վերաբերում է ոչ միայն այն միջոցներին կամ այլ ակտիվներին, որոնք կարող են առնչվել զանգվածային ոչնչացման զենքի տարածման որոշա-

¹⁶ Եվրամիության (ԵՄ) դեպքում, որը Հանձնարարական 7-ի իմաստով ՖԱԹՖ-ի կողմից համարվում է վերազգային իրավագերակայություն, ցուցակված անձանց և կազմակերպությունների ակտիվները սառեցվում են ԵՄ կարգավորիչ ակտերով ու դրանց լրացումներով: Հնարավոր է, որ ԵՄ անդամ երկրները կարիք ունենան ձեռնարկել սառեցումն ապահովող լրացուցիչ միջոցներ, մինչդեռ ԵՄ տարածքում գտնվող բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են համապատասխանել ցուցակված անձանց ու կազմակերպությունների միջոցների սառեցման և հասանելիության արգելման պահանջին:

կի գործողության, ծրագրի կամ սպառնալիքի, (2) այն միջոցները կամ այլ ակտիվները, որոնք, ամբողջությամբ կամ համատեղ կարգով, ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում են ցուցակված անձանց կամ կազմակերպություններին կամ վերահսկվում են նրանց կողմից, և (3) այն միջոցները կամ այլ ակտիվները, որոնք ստացվել կամ ձևավորվել են ցուցակված անձանց կամ կազմակերպություններին ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող միջոցներից կամ այլ ակտիվներից, ինչպես նաև (4) ցուցակված անձանց կամ կազմակերպությունների անունից կամ ցուցումով գործող անձանց և կազմակերպությունների միջոցները կամ այլ ակտիվները:

- (բ) Երկրները պետք է իրենց քաղաքացիներին կամ իրենց տարածքում գտնվող անձանց և կազմակերպություններին արգելեն հասանելի դարձնել միջոցներ կամ այլ ակտիվներ ի շահ կամ հոգուտ ցուցակված անձանց և կազմակերպությունների, եթե դա Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերի համաձայն արտոնված, լիազորված կամ որևէ այլ կերպ ծանուցված չէ (տե՛ս ներքո շարադրյալ Բաժին Ե-ն):
- (գ) Երկրները պետք է ունենան մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս ցուցակված որոշումների մասին անմիջապես տեղեկացնել ֆինանսական հատվածին և ՆՈՖԳՏՄ-ներին, ինչպես նաև տրամադրել հստակ ուղեցույցներ սառեցման մեխանիզմների շրջանակում որոշակի միջոցառումներ իրականացնելու պարտականություն ունեցող ֆինանսական հաստատություններին և այլ անձանց կամ կազմակերպություններին, այդ թվում՝ ՆՈՖԳՏՄ-ներին, որոնց տիրապետման ներքո կարող են գտնվել թիրախային ֆինանսական պատժամիջոցների ենթակա միջոցներ կամ այլ ակտիվներ:
- (դ) Երկրները պետք է ֆինանսական հաստատություններից և ՆՈՖԳՏՄ-ներից¹⁷ պահանջեն իրավասու մարմիններին հայտնել Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերի արգելող դրույթների համաձայն սառեցված ակտիվների կամ ձեռնարկված գործողությունների, այդ թվում՝ գործարք կատարելու փորձերի մասին, և պետք է ապահովեն իրավասու մարմինների կողմից այդ տեղեկատվության արդյունավետ օգտագործումը:

¹⁷ Անվտանգության խորհրդի բանաձևերը վերաբերում են երկրի ներսում գտնվող բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց:

- (ե) Երկրները պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկեն Հանձնարարական 7-ով սահմանված պարտականությունների իրականացման շրջանակում բարեխիղճ երրորդ անձանց իրավունքների պաշտպանության համար:
- (զ) Երկրները պետք է միջոցներ ձեռնարկեն Հանձնարարական 7-ով սահմանված պարտականությունները կարգավորող օրենքներին կամ այլ նորմատիվ իրավական ակտերին ֆինանսական հաստատությունների և ՆՈՖԳՏՄ-ների համապատասխանությունը մոնիտորինգի ենթարկելու ապահովելու համար: Նշված օրենքներին կամ այլ նորմատիվ իրավական ակտերին չհամապատասխանելու դեպքերը պետք է ենթակա լինեն քաղաքացիական, վարչական կամ քրեական պատժամիջոցների:

Դ. Ցանկերից հանելը, սառեցումը վերացնելը և սառեցված միջոցներին կամ այլ ակտիվներին հասանելիություն տրամադրելը

- 7. Երկրները պետք է մշակեն և իմպլեմենտացնեն հանրությանը հայտնի ընթացակարգեր ցուցակման չափանիշներին չհամապատասխանող կամ այլևս չհամապատասխանող անձանց և կազմակերպություններին ցանկերից հանելու նպատակով Անվտանգության խորհրդին հարցումների ներկայացման համար: Եթե համապատասխան Պատժամիջոցների հանձնաժողովը որևէ անձի կամ կազմակերպության հանում է ցանկերից, դրանց մասով սառեցման պարտականությունը դադարում է: Նշված ընթացակարգերը և չափանիշները պետք է համապատասխանեն 1730 (2006) բանաձևի և դրա հաջորդող բանաձևերի ներքո Անվտանգության խորհրդի ընդունած կիրառելի ուղեցույցներին կամ ընթացակարգերին, այդ թվում՝ նշված բանաձևի ներքո ստեղծված Կոնտակտային կենտրոնների մեխանիզմով նախատեսվածներին: Երկրները պետք է ունենան ընթացակարգեր, որոնք ցանկերում ընդգրկված անձանց և կազմակերպություններին հնարավորություն են տալիս Կոնտակտային կենտրոնին ներկայացնել ցանկերից հանելու հարցումները ստ 1730 (2006) բանաձևով սահմանված կարգի, կամ ցուցակված անձանց կամ կազմակերպություններին տեղեկացնում են անմիջապես Կոնտակտային կենտրոնին դիմելու անհրաժեշտության մասին:
- 8. Երկրները պետք է մշակեն և իմպլեմենտացնեն հանրությանը հայտնի ընթացակարգեր, որոնք հնարավորություն են տալիս ժամանակին վերացնել ցուցակված անձանց կամ կազմակերպությունների անուններին/ անվանումներին համընկնող կամ նմանվող անուն/ անվանում ունեցող և պատահաբար (մասնավորապես՝ սխալ համընկնման արդյունքում) սառեցման մեխանիզմի

ազդեցությանը ենթարկված այն անձանց կամ կազմակերպությունների միջոցների կամ այլ ակտիվների սառեցումը, որոնց վերաբերյալ հաստատվել է, որ նրանք ցուցակված անձինք կամ կազմակերպություններ չեն:

9. Երկրները պետք է ունենան ընթացակարգեր սառեցված միջոցների կամ այլ ակտիվների հասանելիությունը 1718 (2006) և 1737 (2006) բանաձևերով սահմանված կարգով լիազորելու համար, եթե երկիրը եզրահանգել է, որ այդ բանաձևերով նախատեսված բացառությունների անհրաժեշտ պայմանները բավարարված են:
10. Երկրները պետք է թույլատրեն 1718 (2006) կամ 1737 (2006) բանաձևերի ներքո սառեցված հաշիվներին այնպիսի միջոցների մուտքագրումը, որոնք հաշվի մնացորդի դիմաց հաշվեգրված տոկոսագումարներ կամ այլ եկամուտներ են, կամ նախքան հաշիվները նշված բանաձևերի ներքո թիրախային ֆինանսական պատժամիջոցների ենթակա դառնալու պահը կնքված պայմանագրերի, համաձայնագրերի կամ ծագած պարտավորությունների շրջանակում վճարումներ՝ պայմանով, որ ցանկացած նման տոկոսագումար, այլ եկամուտ և վճար ենթակա է նույն պահանջներին ու սառեցված է:
11. 1737 (2006) բանաձևի ներքո սառեցումը ցուցակված անձին կամ կազմակերպությանը չպետք է խոչընդոտի կատարել նախքան ցանկերում ընդգրկվելու պահը կնքված պայմանագրերի շրջանակում վճարումներ՝ պայմանով, որ.
 - (ա) համապատասխան երկրների եզրահանգմամբ, պայմանագիրը կապված չէ Անվտանգության խորհրդի բանաձևով արգելված առարկաների, նյութերի, սարքավորումների, ապրանքների, տեխնոլոգիաների, աջակցության, ուսուցման, ֆինանսական օժանդակության, ներդրումների, միջնորդության կամ ծառայությունների հետ,
 - (բ) համապատասխան երկրների եզրահանգմամբ, վճարումն ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի կատարվում 1737 (2006) բանաձևի ներքո ցուցակված որևէ անձի կամ կազմակերպության, և
 - (գ) համապատասխան երկրները 1737 Պատժամիջոցների հանձնաժողովին նախապես՝ տասը աշխատանքային օր առաջ ծանուցել են նման վճարումներ կատարելու կամ ստանալու կամ, համապատասխան դեպքերում, այդ նպատակով միջոցների, այլ ֆինանսական ակտիվների կամ տնտեսական ռեսուրսների սառեցման վերացումը լիազորելու մտադրության մասին¹⁸:

¹⁸ Այն դեպքում, երբ ցուցակված անձը կամ կազմակերպությունը ֆինանսական հաստատություն է, երկրները պետք է հաշվի առնեն 2007 թվականի սեպտեմբերին ՖԱԹՖ-ի հաստատած «Զանգվածային ոչնչացման զենքի տարածման դեմ պայքարի վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի բանաձևերի ֆինանսական դրույթների կատարումը» վերտառությամբ նյութի հավելվածում ներկայացված ուղեցույցը:

12. Երկրները պետք է ունենան մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս ցանկերից հանելու և սառեցումը վերացնելու որոշումների մասին անմիջապես տեղեկացնել ֆինանսական հատվածին և ՆՈՖԳՏՄ-ներին, ինչպես նաև տրամադրել հստակ ուղեցույցներ ցանկերից հանելու կամ սառեցումը վերացնելու մեխանիզմների շրջանակում որոշակի միջոցառումներ իրականացնելու պարտականություն ունեցող ֆինանսական հաստատություններին և այլ անձանց կամ կազմակերպություններին, այդ թվում՝ ՆՈՖԳՏՄ-ներին, որոնց տիրապետման ներքո կարող են գտնվել թիրախային ֆինանսական պատժամիջոցների ենթակա միջոցներ կամ այլ ակտիվներ:

Ե. ՄՄԿ-ի կողմից սահմանված ցուցակման չափանիշները

13. ՄՄԿ Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերով սահմանված ցուցակման չափանիշներն են.

(ա) Անվտանգության խորհրդի 1718 (2006) բանաձև.

- (1) ցանկացած անձ կամ կազմակերպություն, որը ներգրավված է Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետության (ԿԺԴՀ) կողմից իրականացվող միջուկային զենքի, զանգվածային ոչնչացման այլ զենքերի և բալիստիկ հրթիռների հետ կապված ծրագրերում,
- (2) ցանկացած անձ կամ կազմակերպություն, որն աջակցություն է ցուցաբերում ԿԺԴՀ-ի կողմից իրականացվող միջուկային զենքի, զանգվածային ոչնչացման այլ զենքերի և բալիստիկ հրթիռների հետ կապված ծրագրերին, այդ թվում՝ ապօրինի եղանակներով,
- (3) ցանկացած անձ կամ կազմակերպություն, որը գործում է ենթաբաժին 13(ա)(1)-ի կամ ենթաբաժին 13(ա)(2)-ի ներքո ցուցակված որևէ անձի կամ կազմակերպության անունից կամ ցուցումով¹⁹, կամ
- (4) ցանկացած իրավաբանական անձ կամ կազմակերպություն, որը, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, պատկանում է ենթաբաժին 13(ա)(1)-ի կամ ենթաբաժին 13(ա)(2)-ի ներքո ցուցակված որևէ անձի կամ կազմակերպության, կամ վերահսկվում է նշվածներից որևէ մեկի կողմից²⁰:

¹⁹ Այդ անձանց կամ կազմակերպությունների միջոցները կամ ակտիվները սառեցվում են՝ անկախ Հանձնաժողովի կողմից հաստուկ նշված լինելու պարագայից:

²⁰ Նույնը:

(բ) **Անվտանգության խորհրդի 1737 (2006), 1747 (2007), 1803 (2008) և 1929 (2010) բանաձևեր.**

- (1) ցանկացած անձ կամ կազմակերպություն, որը ներգրավված է Իրանի կողմից իրականացվող՝ զանգվածային ոչնչացման զենքի տարածման տեսանկյունից վտանգավոր միջուկային գործառնություններում կամ միջուկային զենքի փոխադրման համակարգերի մշակման աշխատանքներում,
- (2) ցանկացած անձ կամ կազմակերպություն, որն ուղղակիորեն կապված է կամ աջակցություն է ցուցաբերում Իրանի կողմից իրականացվող՝ զանգվածային ոչնչացման զենքի տարածման տեսանկյունից վտանգավոր միջուկային գործառնություններին կամ միջուկային զենքի փոխադրման համակարգերի մշակման աշխատանքներին,
- (3) ցանկացած անձ կամ կազմակերպություն, որը գործում է ենթաբաժին 13(բ)(1)-ում և/կամ ենթաբաժին 13(բ)(2)-ում նշված որևէ անձի կամ կազմակերպության անունից կամ ցուցումով, կամ պատկանում է նշվածներից որևէ մեկին կամ վերահսկվում է նշվածներից որևէ մեկի կողմից,
- (4) ցանկացած անձ կամ կազմակերպություն, որը գործում է 1929 (2010) բանաձևով ցուցակված Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը ներկայացնող անձանց կամ կազմակերպությունների անունից կամ ցուցումով,
- (5) ցանկացած կազմակերպություն, որը պատկանում է 1929 (2010) բանաձևով ցուցակված Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը ներկայացնող անձանց կամ կազմակերպություններին կամ վերահսկվում է նշվածներից որևէ մեկի կողմից, այդ թվում՝ ապօրինի եղանակներով²¹;
- (6) ցանկացած անձ կամ կազմակերպություն, որը գործում է 1929 (2010) բանաձևով ցուցակված Իրանի Իսլամական Հանրապետության Ծովագնացության Ընկերությունը ներկայացնող կազմակերպությունների անունից կամ ցուցումով;
- (7) ցանկացած կազմակերպություն, որը պատկանում է 1929 (2010) բանաձևով ցուցակված Իրանի Իսլամական Հանրապետության Ծովա-

²¹ Նույնը:

զնացության Ընկերությունը ներկայացնող կազմակերպություններին կամ վերահսկվում է նշվածներից որևէ մեկի կողմից, այդ թվում՝ ապօրինի եղանակներով, կամ

- (8) Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի կամ Հանձնաժողովի կողմից որոշված ցանկացած անձ կամ կազմակերպություն, որը ցուցակված անձանց կամ կազմակերպություններին օգնել է շրջանցել 1737 (2006), 1747 (2007), 1803 (2008) կամ 1929 (2010) բանաձևերով սահմանված պատժամիջոցներից կամ խախտել դրանց դրույթները:

**ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ 8-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(ՇԱՀՈՒՅԹ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿ ԶՀԵՏԱՊՆԴՈՂ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)**

Ա. Ներածություն

1. Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունները (ՇՄՆԶԿ) կենսականորեն կարևոր դեր են խաղում համաշխարհային տնտեսությունում, ինչպես նաև բազմաթիվ ազգային տնտեսություններում ու սոցիալական համակարգերում: Դրանց գործունեությունը լրացնում է կառավարությունների և բիզնես հատվածի ջանքերը՝ ուղղված աշխարհի կարիքավորներին հիմնական ծառայություններով ու հարմարություններով ապահովելուն: Այդուհանդերձ, ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային արշավի ընթացքը, ցավոք, ցույց է տալիս, որ ահաբեկիչներն ու ահաբեկչական կազմակերպությունները ՇՄՆԶԿ հատվածը շահագործում են իրենց ծրագրերի համար միջոցների հավաքագրումը և տեղաշարժն ապահովելու, կազմակերպչական խնդիրներ լուծելու, ահաբեկիչների ներգրավումը խրախուսելու, ահաբեկչական կազմակերպություններին ու գործողություններին հնարավոր այլ օժանդակություն ցուցաբերելու նպատակով: Այս կերպ ՇՄՆԶԿ-ների չարաշահումը ոչ միայն նպաստում է ահաբեկչական գործունեությանը, այլև խաթարում է դոնորների վստահությունը և վտանգում բուն ՇՄՆԶԿ-ների ամբողջականությունը: Ըստ այդմ՝ ՇՄՆԶԿ հատվածի՝ ահաբեկչական նպատակներով չարաշահումից պաշտպանությունը ինչպես ահաբեկչության դեմ համաշխարհային մակարդակով պայքարի առանցքային բաղկացուցիչ, այնպես էլ ՇՄՆԶԿ-ների ամբողջականությունն ապահովելուն ուղղված անհրաժեշտ քայլ է:

2. ՇՄՆԶԿ հատվածի՝ ահաբեկչական նպատակներով չարաշահման տեսանկյունից խոցելիությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: ՇՄՆԶԿ-ները վայելում են հանրության վստահությունը, հասանելիություն ունեն զգալի ծավալով միջոցների աղբյուրների, և դրանց գործունեությունը հաճախ բնութագրվում է կանխիկի լայնամասշտաբ կիրառությամբ: Ավելին, ՇՄՆԶԿ-ները սփռված են ամբողջ աշխարհով, ինչը թույլ է տալիս ազգային և միջազգային մակարդակով գործունեություն ծավալել և ֆինանսական գործարքներ կատարել հաճախ այն տարածքների սահմաններում կամ հարևանությամբ, որոնք առավել ենթակա են ահաբեկչական գործունեության սպառնալիքին: ՇՄՆԶԿ-ների կազմակերպաիրավական ձևից և երկրից կախված՝ դրանց նկատմամբ պետական վերահսկողության մակարդակը ցածր է կամ

ընդհանրապես բացակայում է (օրինակ՝ գրանցման, տեղեկատվության պահպանման, հաշվետվականության և մոնիտորինգի մասով), կամ դրանց ստեղծման ֆորմալ ընթացակարգերը խիստ պարզունակ են (օրինակ՝ սահմանված չէ հիմնադիրների անձնական բնութագրերի կամ նախնական կապիտալի որևէ պահանջ, աշխատակիցների անցյալի հետ կապված ստուգումներ չեն կատարվում): Ահաբեկչական կազմակերպությունները ՇՄՆԶԿ-ների հիշյալ հատկանիշներն օգտագործում են այդ հատված մուտք գործելու և ՇՄՆԶԿ-ների միջոցներն ու գործառնությունները չարաշահելով իրենց ահաբեկչական գործունեությունը քողարկելու կամ դրան աջակցելու նպատակով:

Բ. Նպատակները և ընդհանուր սկզբունքները

3. Հանձնարարական 8-ի նպատակը ապահովելն է, որ ՇՄՆԶԿ-ները չչարաշահվեն ահաբեկչական կազմակերպությունների կողմից. (ա) որպես օրինական գործունեություն ծավալող կազմակերպություն ներկայանալու, (բ) օրինական գործունեություն ծավալող կազմակերպություններին որպես ահաբեկչության ֆինանսավորման գործիք շահագործելու, այդ թվում՝ ակտիվների սառեցման միջոցառումները շրջանցելու, կամ (գ) օրինական նպատակների համար նախատեսված միջոցները ահաբեկչական նպատակներին ծառայեցնելու համար դրանց գաղտնի վերաուղղորդումը քողարկելու կամ թաքցնելու միջոցով: Սույն Բացատրական մեկնաբանությունում հիշյալ նպատակին հասնելու մոտեցումը հիմնված է հետևյալ ընդհանուր սկզբունքների վրա.

(ա) Հաշվի առնելով անցյալում ու ներկայում ահաբեկիչների և ահաբեկչական կազմակերպությունների կողմից ՇՄՆԶԿ հատվածի չարաշահման հանգամանքը, երկրներից պահանջվում է ձեռնարկել միջոցառումներ, որոնք ուղղված են. (1) նմանատիպ չարաշահումներից այդ հատվածի պաշտպանությանը, և (2) ահաբեկիչների կամ ահաբեկչական կազմակերպությունների կողմից շահագործվող կամ դրանց ակտիվորեն աջակցող ՇՄՆԶԿ-ների հայտնաբերմանը և դրանց նկատմամբ արդյունավետ հակազդեցության միջոցների կիրառմանը:

(բ) Ահաբեկչական նպատակներով ՇՄՆԶԿ հատվածի չարաշահումից պաշտպանության ուղղությամբ երկրների կողմից ձեռնարկվող միջոցները չպետք է խաթարեն կամ ապախթանեն օրինական դաշտում բարեգործական նպատակներով գործունեությունը: Փոխարենը, այդ միջոցառումները պետք է խթանեն հատվածի թափանցիկությունը և մեծացնեն դոնորների ու լայն հանրության շրջանում վստահությունն առ այն, որ բարեգործական նպատակով հավաքվող միջոցներն ու մատուց-

վող ծառայությունները հասնում են դրանց ակնկալվող օրինական շահառուներին: Բոլոր ՇՄՆՉԿ-ների կառավարման և գործունեության առումով թափանցիկության, ամբողջականության ու հանրային վստահության ավելի բարձր մակարդակ ապահովելուն միտված համակարգերը սկզբունքային նշանակություն ունեն ահաբեկչության ֆինանսավորման նպատակով հատվածի չարաշահումը կանխարգելելու գործում:

(գ) Ահաբեկիչների կամ ահաբեկչական կազմակերպությունների կողմից շահագործվող կամ դրանց ակտիվորեն աջակցող ՇՄՆՉԿ-ների հայտնաբերման և դրանց նկատմամբ արդյունավետ հակազդեցության միջոցների կիրառման ուղղությամբ երկրների կողմից ձեռնարկվող միջոցները պետք է նպատակաուղղվեն ահաբեկչության ֆինանսավորումը և ահաբեկչությանն այլ կերպ օժանդակությունը կանխարգելելուն և, համապատասխան դեպքերում, քրեական հետապնդում իրականացնելուն: Ահաբեկչության ֆինանսավորման կամ ահաբեկչությանն այլ կերպ օժանդակության մեջ կասկածվող կամ դրանցում ներգրավված ՇՄՆՉԿ-ներ հայտնաբերելու դեպքում երկրների առաջին խնդիրը պետք է լինի դրանց գործունեության պատշաճ նախաքննությունն ու դադարեցումը: Այդ նպատակով քայլեր ձեռնարկելիս անհրաժեշտ է, հնարավորության սահմաններում, բացառել բարեգործության անմեղ և օրինական շահառուների վրա հնարավոր բացասական ազդեցությունը: Այդուհանդերձ, այս հանգամանքը որևէ կերպ չի կարող նվազեցնել ՇՄՆՉԿ-ների կողմից ահաբեկչության ֆինանսավորմանը կամ ահաբեկչությանն այլ կերպ օժանդակությանը ցուցաբերվող աջակցությունն անմիջապես դադարեցնելուն ուղղված անհապաղ ու արդյունավետ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությունը:

(դ) Պետական, մասնավոր և ՇՄՆՉԿ հատվածների միջև համագործակցային հարաբերությունների զարգացումը կարևորագույն նշանակություն ունի ահաբեկչական նպատակներով ՇՄՆՉԿ-ների չարաշահման դեմ պայքարի վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացման և կարողությունների բարելավման համար: Երկրները պետք է խրախուսեն ՇՄՆՉԿ հատվածի միջոցով ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի խնդիրներին առնչվող ակադեմիական հետազոտությունների իրականացումը և տեղեկատվության փոխանակման պրակտիկան:

(ե) ՇՄՆՉԿ հատվածի միջոցով ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի գործում թիրախային մոտեցումն առանցքային հարց է՝ հաշվի

առնելով երկրի տնտեսության հատվածների բազմազանությունը, ահաբեկիչների կողմից չարաշահման տեսանկյունից այդ հատվածների խոցելիության տարբեր աստիճանները, բարեգործական նպատակներով օրինական գործունեության ընդլայնումն ապահովելու անհրաժեշտությունը, ինչպես նաև յուրաքանչյուր երկրում ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարով զբաղվող մարմինների ու դրանց ռեսուրսների սահմանափակ քանակը:

- (զ) ՇՄՆՉԿ հատվածի միջոցով ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ազգային ծրագրերը մշակելիս ճկունությունը նույնպես առանցքային նշանակություն ունի՝ ժամանակի ընթացքում ահաբեկչության ֆինանսավորման սպառնալիքների փոփոխական բնույթին դրանց հարմարեցումն ապահովելու նպատակով:

Գ. Միջոցառումները

- 4. Երկրները պետք է իրականացնեն ՇՄՆՉԿ հատվածի ներպետական ուսումնասիրություններ կամ ունենան այդ հատվածի գործունեության, չափերի և այլ կարևոր բնութագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ժամանակին ձեռք բերելու կարողություններ: Նշված ուսումնասիրություններն իրականացնելիս երկրները պետք է օգտագործեն տեղեկատվության բոլոր առկա աղբյուրները, որպեսզի բացահայտեն ՇՄՆՉԿ-ների այն հատկանիշներն ու տեսակները, որոնք իրենց գործունեության բնույթի կամ առանձնահատկությունների պատճառով ենթակա են ահաբեկչության ֆինանսավորման կամ ահաբեկչությանն այլ կերպ օժանդակության նպատակով չարաշահման ռիսկին²²: Երկրները պետք է նաև պարբերաբար վերազնահատեն ՇՄՆՉԿ հատվածը՝ ուսումնասիրելով ահաբեկչական գործունեության տեսանկյունից այդ հատվածի հնարավոր խոցելիությունների վերաբերյալ նոր տեղեկությունները:
- 5. Գոյություն ունեն ահաբեկչական նպատակներով ՇՄՆՉԿ-ների չարաշահման դեպքերը հայտնաբերելու, կանխարգելելու և դրանց դեմ պայքարելու գործում բազմաթիվ մոտեցումներ: Այդուհանդերձ, արդյունավետ է այն մոտեցումը, որը ներառում է հետևյալ բոլոր չորս տարրերը. (ա) իրազեկության մակարդակի բարձրացման ուղղությամբ կատարվող աշխատանքներ, (բ) վերահսկողություն կամ մոնիտորինգ, (գ) տեղեկատվության արդյունավետ հավաքում և քննություն, և (դ) միջազգային համագործակցության արդյունավետ մեխա-

²² Օրինակ՝ նման տեղեկատվություն կարող է տրամադրվել կարգավորիչ և հարկային մարմինների, ՖՀՄ-ի, դոնոր կազմակերպությունների, իրավապահ կամ հետախուզական գործառույթներ կատարող մարմինների կողմից:

նիզմներ: Ստորև ներկայացվում են այդ տարրերի իրագործման համար անհրաժեշտ քայլերը, որոնք երկրները պետք է ձեռնարկեն ՇՄԼՉԿ հատվածը ահաբեկչական նպատակներով չարաշահումից պաշտպանելու համար:

(ա) Ահաբեկչության ֆինանսավորմանն առնչվող հարցերի վերաբերյալ ՇՄԼՉԿ հատվածի իրազեկության մակարդակի բարձրացման ուղղությամբ կատարվող աշխատանքներ.

(1) Երկրները պետք է ունենան հստակ քաղաքականություններ բոլոր ՇՄԼՉԿ-ների կառավարման և ղեկավարման թափանցիկությունը, ամբողջականությունն ու դրանց նկատմամբ հանրային վստահությունը խթանելու համար:

(2) Երկրները պետք է խրախուսեն կամ իրականացնեն ահաբեկչական նպատակներով չարաշահման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի, ինչպես նաև դրանցից պաշտպանությանն անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ ՇՄԼՉԿ հատվածի իրազեկության մակարդակի բարձրացման ծրագրեր:

(3) Երկրները պետք է ՇՄԼՉԿ հատվածի հետ աշխատեն ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի ու խոցելիությունների հակազդմանն առնչվող լավագույն փորձը զարգացնելու և կատարելագործելու, իսկ դրա միջոցով նաև՝ հատվածն ահաբեկչական նպատակներով չարաշահումից պաշտպանելու ուղղությամբ:

(4) Երկրները պետք է ՇՄԼՉԿ-ներին խրախուսեն հնարավորության դեպքում գործարքներն իրականացնել կարգավորվող ֆինանսական հաստատությունների միջոցով՝ հաշվի առնելով տարբեր երկրներում և բարեգործական ու մարդասիրական հրատապ կարիքներ ունեցող տարբեր տարածքներում ֆինանսական հատվածի հնարավորությունների տարբերությունները:

(բ) ՇՄԼՉԿ հատվածի վերահսկողություն կամ մոնիտորինգ.

Երկրները պետք է քայլեր ձեռնարկեն իրենց ՇՄԼՉԿ հատվածի արդյունավետ վերահսկողությունը կամ մոնիտորինգը խթանելու համար: Գործնականում երկրները պետք է կարողանան ի ցույց դնել, որ կիրառում են հետևյալ ստանդարտները այն ՇՄԼՉԿ-ների նկատմամբ, որոնց բաժին է ընկնում. (ա) հատվածի հսկողության ներքո գտնվող ֆինանսական միջոցների զգալի մասնաբաժինը և (բ) հատվածի միջազգային գործառնությունների զգալի մասնաբաժինը.

- (1) ՇՄՆՉԿ-ները պետք է պահպանեն տեղեկություններ. 1) իրենց հայտարարած գործունեության նպատակի և խնդիրների մասին, և 2) այն անձի (անձանց) ինքնության մասին, ով(քեր) տնօրինում, վերահսկում կամ ուղղորդում է (են) իրենց գործունեությունը, այդ թվում՝ ավագ պաշտոնյաների, խորհրդի անդամների և հոգաբարձուների մասին: Այդ տեղեկությունները պետք է հանրությանը հասանելի լինեն կամ ուղղակիորեն ՇՄՆՉԿ-ից, կամ համապատասխան մարմինների միջոցով:
- (2) ՇՄՆՉԿ-ները պետք է հրապարակեն տարեկան ֆինանսական հաշվետվություններ՝ դրանցում ներառելով մանրամասն տվյալներ իրենց եկամուտների և ծախսերի մասին:
- (3) ՇՄՆՉԿ-ները պետք է լիցենզավորվեն կամ գրանցվեն²³, և այդ տեղեկատվությունը պետք է հասանելի լինի իրավասու մարմիններին:
- (4) ՇՄՆՉԿ-ները պետք է ունենան հսկողական մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս ապահովել բոլոր միջոցների լիարժեք հաշվառումը և ՇՄՆՉԿ-ի հայտարարած գործունեության նպատակին ու խնդիրներին համապատասխան ծախսումը:
- (5) ՇՄՆՉԿ-ները պետք է հետևեն «ճանաչիր քո շահառուներին և փոխկապակցված ՇՄՆՉԿ-ներին» կանոնին, ինչը նշանակում է, որ նրանք պետք է հնարավոր բոլոր քայլերը ձեռնարկեն՝ իրենց շահառուների և փոխկապակցված ՇՄՆՉԿ-ների ինքնությունը, նույնականացնող տվյալներն ու բավարար վիճակը պարզելու համար: ՇՄՆՉԿ-ները պետք է նաև հնարավոր բոլոր քայլերը ձեռնարկեն՝ իրենց նշանակալից դոնորների ինքնությունը փաստաթղթավորելու և նրանց կոնֆիդենցիալությունը պահպանելու համար:
- (6) ՇՄՆՉԿ-ները պետք է առնվազն հինգ տարի ժամկետով պահպանեն ներպետական և միջազգային գործարքներին վերաբերող տվյալները, որոնք պետք է բավականաչափ մանրամասն լինեն՝ հավաստիանալու համար, որ միջոցները ծախսվել են կազմակերպության

²³ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նպատակների համար անհրաժեշտ չեն լիցենզավորման կամ գրանցման հատուկ պահանջներ: Որոշ երկրներում, օրինակ, ՇՄՆՉԿ-ներն արդեն իսկ գրանցված են հարկային մարմիններում և հարկային արտոնյալ դաշտում գործելու (օրինակ՝ հարկային արտոնություններ կամ հարկային պարտավորություններից ազատում ստանալու) պահանջներին համապատասխանության առումով ենթարկվում են մոնիտորինգի:

նպատակին ու խնդիրներին համապատասխան, և պետք է դրանք հասանելի դարձնեն համապատասխան լիազորություններով օժտված իրավասու մարմիններին: Մա վերաբերում է նաև վերոհիշյալ «(1)» և «(2)» կետերով սահմանված տեղեկություններին:

- (7) Համապատասխան մարմինները պետք է մոնիտորինգի ենթարկեն ՇՄՆՉԿ-ների համապատասխանությունը սույն Հանձնարարականի պահանջներին²⁴: Համապատասխան մարմինները պետք է կարողանան ՇՄՆՉԿ-ների կամ դրանց անունից գործող անձանց կողմից թույլ տրված խախտումների համար կիրառել արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ պատժամիջոցներ²⁵:
- (գ) Տեղեկատվության արդյունավետ հավաքում և քննություն.
 - (1) Երկրները պետք է ապահովեն արդյունավետ ներպետական համագործակցությունը, համակարգումը և, հնարավորության սահմաններում, տեղեկատվության փոխանակումն այն իրավասու մարմինների կամ կազմակերպությունների միջև, որոնք տիրապետում են ՇՄՆՉԿ-ներին վերաբերող տվյալների:
 - (2) Երկրները պետք է ապահովեն քննություն իրականացնելու համար անհրաժեշտ փորձագիտական հմտությունների և կարողությունների առկայությունը՝ ահաբեկչական գործունեության կամ ահաբեկչական կազմակերպությունների կողմից շահագործման կամ դրանց ակտիվորեն աջակցման մեջ կասկածվող ՇՄՆՉԿ-ների ուսումնասիրության համար:
 - (3) Երկրները պետք է ապահովեն քննության ընթացքում ՇՄՆՉԿ-ների կառավարման և ղեկավարման մասին տեղեկատվության (այդ թվում՝ ֆինանսների և ծրագրերի մասին տեղեկատվությանը) լիարժեք հասանելիությունը:
 - (4) Երկրները պետք է ստեղծեն այնպիսի մեխանիզմներ, որոնց միջոցով ապահովվում է իրավասու մարմինների միջև պատշաճ

²⁴ Այս համատեքստում կիրառվող կանոններն ու կարգերը կարող են ներառել ինքնակարգավորվող կազմակերպությունների և հավաստագրող հաստատությունների կողմից սահմանված կանոններն ու ստանդարտները:

²⁵ Պատիժների հնարավոր շրջանակը կարող է ներառել հաշիվների սառեցումը, հոգաբարձուների հեռացումը պաշտոնից, տույժերը, հավաստագրումից, լիցենզիայից կամ գրանցումից զրկելը: Նման պատիժների կիրառմամբ չպետք է բացառվի համապատասխան դեպքերում քաղաքացիական, վարչական կամ քրեական վարույթների գուգահեռ իրականացումը ՇՄՆՉԿ-ների կամ դրանց անունից գործող անձանց նկատմամբ:

կերպով տեղեկատվության փոխանակումը, որպեսզի կանխարգելիչ կամ քննչական միջոցառումներ իրականացվեն այն դեպքերում, երբ առկա են կասկածներ կամ կասկածելու ողջամիտ հիմքեր առ այն, որ տվյալ ՇՄԼՉԿ-ը. 1) որևէ ահաբեկչական կազմակերպության կողմից օգտագործվում է որպես միջոցների հավաքագրման առաջնային օղակ, 2) շահագործվում է որպես ահաբեկչության ֆինանսավորման գործիք, այդ թվում՝ ակտիվների սառեցման միջոցառումները շրջանցելու համար, կամ (3) օգտագործվում է օրինական նպատակների համար նախատեսված միջոցները ահաբեկիչների կամ ահաբեկչական կազմակերպությունների շահերին ծառայեցնելու համար դրանց գաղտնի վերաուղղորդումը քողարկելու կամ թաքցնելու նպատակով:

- (դ) Խնդրահարույց ՇՄԼՉԿ-ների վերաբերյալ միջազգային հարցումներին պատասխանելու արդյունավետ մեխանիզմներ.

Միջազգային համագործակցության վերաբերյալ Հանձնարարականներին համահունչ կերպով, երկրները պետք է ունենան նշանակված կոնտակտային անձինք և ընթացակարգեր, որոնց միջոցով պատասխանում են ահաբեկչության ֆինանսավորման կամ ահաբեկիչներին այլ կերպ օժանդակության մեջ կասկածվող առանձին ՇՄԼՉԿ-ների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման միջազգային հարցումներին:

Դ. Վերահսկողության, մոնիտորինգի և քննության համար անհրաժեշտ ռեսուրսները

6. Երկրները պետք է իրենց ՇՄԼՉԿ հատվածի վերահսկողության, մոնիտորինգի և քննության համար պատասխանատու համապատասխան մարմիններին ապահովեն համարժեք ֆինանսական, մարդկային և տեխնիկական ռեսուրսներով:

Սույն Հանձնարարականում օգտագործված տերմինների բառարան

Համապատասխան մարմիններ	Այս տերմինը վերաբերում է իրավասու մարմիններին, այդ թվում՝ հավաստագրող կառույցներին և ինքնակարգավորվող մարմիններին:
Շահառուներ	Այս տերմինը վերաբերում է այն ֆիզիկական անձանց կամ ֆիզիկական անձանց այն խմբերին, ովքեր բարեգործական, մարդասիրական կամ այլ տեսակի աջակցություն են ստանում ՇՄՆԶԿ ծառայությունների միջոցով:
Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն կամ ՇՄՆԶԿ	Այս տերմինը վերաբերում է այն իրավաբանական անձանց կամ կազմավորումներին կամ կազմակերպություններին, որոնք հիմնականում զբաղվում են բարեգործական, կրոնական, մշակութային, կրթական, սոցիալական կամ եղբայրասիրական կամ այլ «բարի գործերի» նպատակով դրամական միջոցների հավաքագրմամբ կամ տեղաբաշխմամբ:
Փոխկապակցված ՇՄՆԶԿ-ներ	Այս տերմինը վերաբերում է միջազգային ՇՄՆԶԿ-ների օտարերկրյա մասնաճյուղերին:

**ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ 10-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ)**

Ա. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը և կասկածների չբացահայտումը

1. Այն դեպքում, երբ ֆինանսական հաստատությունը հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելիս կամ դրա ընթացքում կամ միանգամյա գործարք կատարելիս կասկածում է, որ գործարքները կապված են փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հետ, պետք է.
 - (ա) որպես կանոն, կատարի ինչպես մշտական, այնպես էլ միանգամյա հաճախորդի և իրական շահառուի նույնականացում և նրանց ինքնության ստուգում²⁶՝ անկախ որևէ այլ դրույթներով սահմանված բացառություններից կամ նախատեսված շեմերից, և
 - (բ) ֆինանսական հետախուզության մարմնին (ՖՀՄ) ներկայացնի կասկածելի գործարքի մասին հաշվետվություն՝ Հանձնարարական 20-ին համապատասխան կերպով:
2. Հանձնարարական 21-ը ֆինանսական հաստատություններին, դրանց տնօրեններին, պաշտոնատար անձանց և աշխատակիցներին արգելում է բացահայտել այն փաստը, որ ՖՀՄ-ին ներկայացվում է ԿԳՀ կամ դրան առնչվող տեղեկատվություն: Հնարավոր է, որ ֆինանսական հաստատությունը հաճախորդի պատշաճ ուսումնասիրության (ՀՊՈԻ) մասով իր պարտականությունները կատարելիս ոչ միտումնավոր կերպով հաճախորդներին բացահայտի իր՝ կասկածներ ունենալու հանգամանքը: Ընդ որում, ԿԳՀ ներկայացվելու կամ քննություն իրականացվելու վերաբերյալ հաճախորդի իրազեկությունը կարող է բացասաբար անդրադառնալ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածով կատարվելիք քննության ընթացքի վրա:
3. Ուստի այն դեպքում, երբ ֆինանսական հաստատության մոտ կասկածներ են առաջանում փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ, հաստատությունը ՀՊՈԻ գործընթացն իրականացնելիս պետք է հաշվի առնի կասկածների բացահայտման հնարավորությունը: Եթե հաստատությունում ողջամտորեն կարծում են, որ ՀՊՈԻ գործընթացն իրականացնելը կհանգեցնի հաճախորդին կամ պոտենցիալ հաճախորդին իրենց կասկածների բացահայտմանը, հաստատությանը կարող է չիրականացնել ՀՊՈԻ գործընթացը և պետք է ներկայացնի ԿԳՀ: Ֆինանսական հաստա-

²⁶ Արժանահավատ, անկախ աղբյուրներից ստացված փաստաթղթերը, տվյալները կամ տեղեկությունները հետայսու կոչվում են «նույնականացման տվյալներ»:

տույությունները պետք է հավաստիանան, որ իրենց աշխատակիցները ՀՊՈԻ միջոցառումներ իրականացնելիս տեղյակ են ու հաշվի են առնում այս խնդիրները:

Բ. ՀՊՈԻ անհրաժեշտ միջոցառումները հաճախորդի անունից հանդես եկող անձանց համար

4. Հանձնարարական 10-ով սահմանված ՀՊՈԻ միջոցառումների (ա) և (բ) տարրերը կատարելիս ֆինանսական հաստատություններից պետք է պահանջվի նաև հավաստիանալ, որ հաճախորդի անունից հանդես եկող անձն օժտված է համապատասխան լիազորություններով, նույնականացնել այդ անձին և ստուգել նրա ինքնությունը:

Գ. ՀՊՈԻ անհրաժեշտ միջոցառումները իրավաբանական անձանց և կազմավորումների համար

5. Իրավաբանական անձ կամ իրավաբանական կազմավորում²⁷ հանդիսացող հաճախորդների հետ կապված ՀՊՈԻ միջոցառումներ իրականացնելիս ֆինանսական հաստատություններից պետք է պահանջվի նույնականացնել հաճախորդին և ստուգել նրա ինքնությունը, պատկերացում ունենալ հաճախորդի բիզնեսի բնույթի, ինչպես նաև սեփականատերերի և կազմակերպության նկատմամբ հսկողություն իրականացնող անձանց մասին: Ստորև ներկայացված «(ա)» և «(բ)» կետերով սահմանվող պահանջները՝ կապված հաճախորդի և իրական շահառուի նույնականացման և ինքնության ստուգման հետ, երկու նպատակ ունեն, նախ՝ կանխարգելել իրավաբանական անձանց և կազմավորումների ապօրինի օգտագործումը, ինչը կատարվում է հաճախորդի մասին բավարար պատկերացում կազմելու միջոցով՝ տվյալ գործարար հարաբերությանն առնչվող պոտենցիալ ՓԼ/ԱՖ ռիսկերը ճիշտ գնահատելու նպատակով, և երկրորդ՝ ձեռնարկել ռիսկերի զսպմանն ուղղված պատշաճ քայլեր: Որպես մեկ գործընթացի երկու բաղկացուցիչ տարր՝ նշված պահանջները փոխգործակցում և փոխլրացնում են միմյանց: Այս համատեքստում, ֆինանսական հաստատություններից պետք է պահանջվի.

²⁷ Սույն Հանձնարարականներում, ֆինանսական հաստատության կամ ՆՈՖԳՏՄ-ի հաճախորդի դերում հանդես գալիս կամ գործարք կատարելիս իրավաբանական կազմավորումներին, մասնավորապես՝ տրաստներին (կամ համանման այլ կազմավորումներին) հղումները վերաբերում են այն իրավիճակներին, երբ տրաստային կառավարիչ ֆիզիկական կամ իրավաբանական անձը շահառուների անունից կամ տրաստի պայմանների համաձայն հաստատում է գործարար հարաբերություն կամ կատարում է գործարք: Այս դեպքում կիրառվում են ֆիզիկական կամ իրավաբանական անձ հաճախորդների համար սահմանված սովորական ՀՊՈԻ պահանջները, այդ թվում՝ Բացատրական մեկնաբանություն 10-ի 4-րդ պարբերությամբ նախատեսվածները, սակայն պետք է կիրառվեն նաև տրաստին և դրա իրական շահառուներին (ըստ սահմանման) վերաբերող լրացուցիչ պահանջները:

- (ա) նույնականացնել հաճախորդին և ստուգել նրա ինքնությունը. այս գործառույթը կատարելու համար սովորաբար անհրաժեշտ է ունենալ հետևյալ տեսակի տեղեկությունները.
- (1) անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գոյության փաստն ապացուցող փաստաթղթերը. ինքնությունը կարելի է ստուգել, օրինակ, գրանցման վկայականի, բավարար վիճակի հավաստագրի, գործընկերության համաձայնագրի, տրաստի պայմանագրի կամ արժանահավատ ու անկախ աղբյուրից ստացված այլ փաստաթղթերի միջոցով, որոնք ցույց են տալիս հաճախորդի անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գոյության փաստը.
 - (2) իրավաբանական անձի կամ կազմավորման գործունեության պարտադիր կանոնները սահմանող և կարգավորող դրույթները (օրինակ՝ ընկերության հիմնադիր պայմանագիրը և կանոնադրությունը), ինչպես նաև դրա կառուցվածքում ավագ ղեկավարության մակարդակով պաշտոններ զբաղեցնող անձանց (օրինակ՝ ընկերությունը ղեկավարող տնօրենների, տրաստային կառավարիչ(ներ)ի) անունները.
 - (3) գրանցված գրասենյակի հասցեն և, տարբեր լինելու դեպքում, գործունեության հիմնական վայրը.
- (բ) նույնականացնել իրական շահառուին և ողջամիտ քայլեր ձեռնարկել իրական շահառուի ինքնությունը ստուգելու նպատակով²⁸՝ հետևյալ տեղեկությունների միջոցով.
- (1) իրավաբանական անձանց համար²⁹.
 - (1.1) այն ֆիզիկական անձանց ինքնությունը, ովքեր իրավաբանական անձի կապիտալում իրենց մասնակցության ուժով վերջնական հսկողություն են իրականացնում այդ անձի նկատմամբ³⁰ (առկայության դեպքում, քանի որ բաժնեմասերի սեփականության բազմաբնույթ լինելով պայմանավորված՝ հնարա-

²⁸ Ինքնության ստուգման նպատակով ձեռնարկված քայլերի ողջամիտ լինելը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ հաճախորդի և գործարար հարաբերության համար բնութագրական ՓԼ/ԱՖ ռիսկերը:

²⁹ «(1.1)»-«(1.3)» կետերով սահմանված միջոցառումներն այլընտրանքային տարբերակներ չեն, այլ պետք է իրականացվեն հաջորդաբար՝ բոլոր այն դեպքերում, երբ նախորդ միջոցառումն իրականացնելու արդյունքում չի հաջողվել նույնականացնել իրական շահառուին:

³⁰ Վերահսկիչ բաժնեմասի առկայությունը կախված է իրավաբանական անձի կապիտալի կառուցվածքից: Այն կարող է հիմնված լինել որոշակի նախատեսված շեմի վրա, օրինակ՝ վերահսկիչ բաժնեմաս ունեցող կարող է համարվել այն անձը, ում պատկանում է ընկերության բաժնետոմսերի որոշակի տոկոսային մասը (օրինակ՝ 25 տոկոսը):

վոր է, որ այդպիսի ֆիզիկական անձինք (անհատապես կամ համատեղ գործող) ի վերջո գոյություն չունենան), և

(1.2) որևէ այլ միջոցներով իրավաբանական անձի նկատմամբ հսկողություն իրականացնող ֆիզիկական անձանց ինքնությունը (առկայության դեպքում), եթե առկա են կասկածներ առ այն, թե արդյոք վերոհիշյալ «(1.1)» կետում նշված՝ իրավաբանական անձի կապիտալում վերահսկիչ բաժնեմասի սեփականատեր ֆիզիկական անձն (անձինք) է (են) իրական շահառուն(երը), կամ եթե որևէ ֆիզիկական անձ իր բաժնեմասի ուժով հսկողություն չի իրականացնում իրավաբանական անձի նկատմամբ.

(1.3) իրավաբանական անձի ավագ ղեկավարի պաշտոնը զբաղեցնող ֆիզիկական անձի ինքնությունը, եթե վերոհիշյալ «(1.1)» և «(1.2)» կետերում նշված որևէ ֆիզիկական անձի ինքնությունը պարզել չի հաջողվում.

(2) իրավաբանական կազմավորումների համար.

(2.1) տրաստների դեպքում՝ տրաստի հիմնադրի, տրաստային կառավարիչ(ներ)ի, շահերի պաշտպանների (առկայության դեպքում), շահառուների կամ շահառուների խմբի³¹, ինչպես նաև տրաստի նկատմամբ արդյունավետ վերջնական հսկողություն իրականացնող (այդ թվում՝ հսկողության/ սեփականության շղթայական մեխանիզմների միջոցով) որևէ այլ ֆիզիկական անձի ինքնությունը.

(2.2) իրավաբանական կազմավորումների այլ տեսակների դեպքում՝ հավասարազոր կամ համանման պաշտոններ զբաղեցնող անձանց ինքնությունը:

Այն դեպքում, երբ հաճախորդը կամ վերահսկիչ բաժնեմասի սեփականատերը որևէ ֆոնդային բորսայում ցուցակված ընկերություն է, որի վրա տարածվում են բացահայտման պահանջները (որպիսիք սահմանվում են ֆոնդային բորսայի կանոններով, օրենքով կամ այլ նորմատիվ իրավական

³¹ Տրաստների շահառուների դեպքում, որոնք համապատասխան կարգավիճակը ստանում են որոշակի հատկանիշներ ունենալու կամ որոշակի խմբի դասվելու միջոցով, ֆինանսական հաստատությունները պետք է շահառուի վերաբերյալ ձեռք բերեն բավականաչափ տեղեկություններ, որոնք ֆինանսական հաստատությունը թույլ կտան վստահանալ, որ կկարողանա նույնականացնել շահառուին հատուցումը վճարելու պահին, կամ երբ շահառուն որոշի իրացնել իր ստացած իրավունքները:

ակտերով), որոնցով պահանջվում է ապահովել իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվության պատշաճ թափանցիկությունը, կամ երբ հաճախորդը կամ վերահսկիչ բաժնեմասի սեփականատերը այդպիսի ընկերության դուստր ձեռնարկություն են, այդ ընկերությունների բաժնետերերի կամ իրական շահառուների նույնականացումը և ինքնության ստուգումն անհրաժեշտ չեն:

Նույնականացման անհրաժեշտ տվյալները կարող են ձեռք բերվել հրապարակայնորեն հասանելի ռեգիստրներից, հաճախորդից կամ այլ արժանահավատ աղբյուրներից:

Դ. ՀՊՈՒ անհրաժեշտ միջոցառումները կյանքի ապահովագրության վկայագրերի շահառուների համար

6. Ի լրումն հաճախորդի և իրական շահառուի համար անհրաժեշտ ՀՊՈՒ միջոցառումների, ֆինանսական հաստատություններից պետք է պահանջվի իրականացնել ՀՊՈՒ հետևյալ միջոցառումները կյանքի ապահովագրության և ներդրումային բնույթի այլ ապահովագրական վկայագրերի շահառու(ներ)ի համար՝ նրա(նց) ինքնությունը կամ համապատասխան կարգավիճակ ստանալը պարզվելուց անմիջապես հետո.

(ա) այն շահառուների դեպքում, որոնք նույնականացվում են որպես հստակ նշված անունով/ անվանմամբ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ կամ իրավաբանական կազմավորում, անհրաժեշտ է գրանցել տվյալ անձի անունը/ անվանումը,

(բ) այն շահառուների դեպքում, որոնք համապատասխան կարգավիճակը ստանում են որոշակի հատկանիշներ ունենալու կամ որոշակի խմբի դասվելու (օրինակ՝ ապահովագրական պատահարը տեղի ունենալու պահին ապահովագրված անձի կինը կամ երեխան լինելու) կամ որևէ այլ միջոցներով (օրինակ՝ կտակի համաձայն), անհրաժեշտ է շահառուի վերաբերյալ ձեռք բերել բավականաչափ տեղեկություններ, որոնք ֆինանսական հաստատությանը թույլ կտան վստահանալ, որ ապահովագրական հատուցումը վճարելու պահին կկարողանա նույնականացնել շահառուին:

Վերոհիշյալ «(ա)» և/կամ «(բ)» կետերի համաձայն հավաքված տեղեկատվությունը պետք է գրանցվի և պահպանվի Հանձնարարական 11-ի դրույթներին համապատասխան կերպով:

7. Վերոնշյալ 6-րդ պարբերության երկու՝ «(ա)» և «(բ)» կետերով սահմանված դեպքում էլ շահառու(ներ)ի ինքնության ստուգումն անհրաժեշտ է կատարել ապահովագրական հատուցումը վճարելու պահին:
8. Ֆինանսական հաստատությունները պետք է հավելյալ ՀՊՈԻ միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտությունը որոշելիս հաճախորդի՝ կյանքի ապահովագրության վկայագրի շահառու լինելու հանգամանքը դիտարկեն որպես ռիսկի վերաբերելի գործոն: Եթե ֆինանսական հաստատությունը եզրահանգում է, որ իրավաբանական անձ կամ իրավաբանական կազմավորում հանդիսացող շահառուն բարձր ռիսկային է, ապա պետք է իրականացնի հավելյալ միջոցառումներ, այդ թվում՝ ողջամիտ քայլեր ապահովագրական հատուցումը վճարելու պահին շահառուի իրական շահառուին նույնականացնելու և նրա ինքնությունը ստուգելու համար:
9. Այն դեպքում, երբ ֆինանսական հաստատությունն անկարող է կատարել վերոնշյալ 6 - 8-րդ պարբերությունների պահանջները, պետք է դիտարկի կասկածելի գործարքի մասին հաշվետվություն ներկայացնելու նպատակահարմարությունը:

Ե. Նախկինում կատարված նույնականացման և ինքնության ստուգման արդյունքները հիմք ընդունելը

10. Հանձնարարական 10-ով սահմանված ՀՊՈԻ միջոցառումների շրջանակում չի ակնկալվում, որ ֆինանսական հաստատությունները պետք է նույն հաճախորդի կողմից գործարքներ կատարելիս յուրաքանչյուր անգամ նույնականացնեն հաճախորդին և ստուգեն նրա ինքնությունը: Հաստատությունը կարող է հիմք ընդունել նախկինում իր կողմից կատարված նույնականացման և ինքնության ստուգման արդյունքները, բացառությամբ այն դեպքերի, երբ կասկածներ ունի ձեռք բերված տվյալների իսկության վերաբերյալ: Նման կասկածների առաջացմանը հանգեցնող հնարավոր իրավիճակների օրինակներ են այն դեպքերը, երբ տվյալ հաճախորդի առնչությամբ առկա են փողերի լվացման կասկածներ, կամ երբ էական փոփոխություն է տեղի ունենում հաշվի օգտագործման օրինաչափությունների մեջ, ինչը չի համապատասխանում հախաճորդի բիզնեսի ընդհանուր նկարագրին:

Զ. Ինքնության ստուգման ժամկետները

11. Ֆինանսական հաստատություններին կարող է թույլատրվել հաճախորդի ինքնության ստուգումն ավարտին հասցնել գործարար հարաբերության

հաստատումից հետո, եթե դա բիզնեսի բնականոն ընթացքը չխաթարելու տեսանկյունից էական նշանակություն ունի: Այդպիսի իրավիճակների օրինակներ են (ի լրումն վերը ներկայացված՝ կյանքի ապահովագրության վկայագրի շահառուներին առնչվող իրավիճակների):

- առանց առերես շփման գործարար հարաբերությունները,
- արժեթղթերով գործարքները, քանի որ արժեթղթերի բնագավառում գործունեություն ծավալող ընկերություններին և միջնորդներին կարող է անհրաժեշտ լինել գործարքները կատարել շատ արագ՝ հաճախորդի հետ կապի մեջ մտնելու պահի դրությամբ շուկայում առկա պայմաններով, և կարող է անհրաժեշտ լինել գործարքը կատարել նախքան ինքնության ստուգումն ավարտելը:

12. Ֆինանսական հաստատություններից պետք է նաև պահանջվի ունենալ ռիսկերի կառավարման ընթացակարգեր՝ կարգավորելու այն պայմանները, որոնց պահպանմամբ հաճախորդը կարող է նախքան ինքնության ստուգումն օգտվել գործարար հարաբերությունից: Նշված ընթացակարգերը պետք է նախատեսեն որոշակի միջոցառումներ, այդ թվում՝ կատարվող գործարքների թվաքանակի, տեսակների և/կամ գումարի սահմանափակումներ, ինչպես նաև հարաբերությունների կոնկրետ տեսակի դեպքում ակնկալվող ցուցանիշների շրջանակից դուրս իրականացվող մեծածավալ կամ բարդ գործարքների մոնիտորինգ:

Է. Առկա հաճախորդները

13. Ֆինանսական հաստատություններից պետք է պահանջվի ՀՊՈԻ պահանջները կիրառել առկա հաճախորդների նկատմամբ³²՝ էականության և ռիսկայնության հիման վրա և համապատասխան դեպքերում իրականացնել այդպիսի առկա հարաբերությունների պատշաճ ուսումնասիրություն՝ հաշվի առնելով նախկինում ՀՊՈԻ կատարված լինելու հանգամանքը, դրա կատարման ժամանակը և ձեռք բերված տեղեկությունների համարժեքությունը:

Ը. Ռիսկահենք մոտեցումը³³

14. Ստորև բերված օրինակները ՖԱԹՖ-ի Ստանդարտների պարտադիր կատարման ենթակա տարրեր չեն և բացառապես ուղղորդիչ բնույթ են կրում:

³² Խոսքը ներպետական նոր պահանջներն ուժի մեջ մտնելու ամսաթվի դրությամբ առկա հաճախորդների մասին է:

³³ ՌԷՀՄ-ն չի տարածվում այն իրավիճակների վրա, որոնց դեպքում պետք է պահանջվի ՀՊՈԻ միջոցառումներ իրականացնել, սակայն կարող է օգտագործվել այդ միջոցառումների աստիճանը որոշելու համար:

Օրինակները որևէ սպառիչ ցանկ չեն սահմանում և, օգտակար ուղենիշ լինելով հանդերձ, հնարավոր է, որ բոլոր հանգամանքներում կիրառելի չլինեն:

Բարձր ռիսկերը

15. Որոշ իրավիճակներ բնութագրվում են ՓԼ/ԱՖ բարձր ռիսկերի առկայությամբ, որոնց դեպքում անհրաժեշտ է իրականացնել հավելյալ պատշաճ ուսումնասիրություն: Հաճախորդների տեսակներին, երկրներին կամ աշխարհագրական տարածքներին և որոշակի պրոդուկտների, ծառայությունների, գործարքների կամ մատուցման եղանակների առնչվող ՓԼ/ԱՖ ռիսկերը գնահատելիս պոտենցիալ բարձր ռիսկային իրավիճակների օրինակներ են (ի լրումն Հանձնարարականներ 12-16-ում ներկայացվածների).

(ա) հաճախորդին առնչվող ռիսկի գործոններ

- գործարար հարաբերությունն արտասովոր հանգամանքներում իրականացվելը (օրինակ՝ ֆինանսական հաստատությունը և հաճախորդը աշխարհագրական առումով միմյանցից զգալի հեռավորության վրա են գտնվում, ինչը որևէ կերպ բացատրելի չէ),
- ոչ ռեզիդենտ հաճախորդները,
- իրավաբանական անձինք կամ կազմավորումները, որոնց գործունեության ոլորտը ակտիվների անհատական տնօրինումն է,
- անվանական բաժնետերեր կամ ըստ ներկայացնողի բաժնետոմսեր ունեցող ընկերությունները,
- կանխիկի լայնամասշտաբ կիրառությամբ բնութագրվող բիզնեսները,
- ընկերության սեփականատերերի կազմը արտասովոր կամ անհարկի բարդ լինելը՝ հաշվի առնելով ընկերության բիզնեսի բնույթը.

(բ) երկրին կամ աշխարհագրական տարածքին առնչվող ռիսկի գործոններ³⁴

- հավաստի աղբյուրների, օրինակ՝ փոխադարձ գնահատման կամ առաջընթացի հրապարակված հաշվետվությունների եզրահանգմամբ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համարժեք համակարգեր չունեցող երկրները,

³⁴ Հանձնարարական 19-ի ներքո երկրները պարտավոր են ֆինանսական հաստատություններից պահանջել հավելյալ պատշաճ ուսումնասիրության միջոցառումների իրականացումն այն դեպքում, երբ ՖԱԹՖ-ը հանդես է եկել համապատասխան հայտարարությամբ:

- այն երկրները, որոնց նկատմամբ կիրառվում են, օրինակ, Միավորված ազգերի կազմակերպության կողմից սահմանված պատժամիջոցներ, արգելքներ կամ համանման միջոցներ,
 - հավաստի աղբյուրների եզրահանգմամբ կոռուպցիայի կամ այլ հանցավոր գործունեության բարձր մակարդակով բնութագրվող երկրները,
 - հավաստի աղբյուրների եզրահանգմամբ ահաբեկչական գործողությունները ֆինանսավորող կամ դրանց օժանդակող կամ իրենց տարածքում գործող ցուցակված ահաբեկչական կազմակերպություններ ունեցող երկրները կամ աշխարհագրական տարածքները.
- (գ) որոշակի պրոդուկտների, ծառայությունների, գործարքների կամ մատուցման եղանակների առնչվող ռիսկի գործոններ
- անհատական բանկային ծառայությունները,
 - անանուն գործարքները (այդ թվում՝ կանխիկով),
 - առանց առերես շփման գործարար հարաբերությունները կամ գործարքները,
 - անհայտ կամ ստացողի հետ որևէ առնչություն չունեցող երրորդ անձանցից ստացվող վճարումները:

Ցածր ռիսկերը

16. Որոշակի հանգամանքներում փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման ռիսկն ավելի ցածր է: Նման հանգամանքներում երկիրը ողջամտորեն կարող է ֆինանսական հաստատություններին թույլատրել ՀՊՈԻ պարզեցված միջոցառումների իրականացումը՝ պայմանով, որ առկա ռիսկերը երկրի կամ ֆինանսական հաստատության կողմից ենթարկվել են համարժեք վերլուծության:
17. Հաճախորդների տեսակներին, երկրներին կամ աշխարհագրական տարածքներին և որոշակի պրոդուկտների, ծառայությունների, գործարքների կամ մատուցման եղանակների առնչվող ՓԼ/ԱՖ ռիսկերը գնահատելիս պոտենցիալ ցածր ռիսկային իրավիճակների օրինակներ են.
- (ա) հաճախորդին առնչվող ռիսկի գործոններ
- ֆինանսական հաստատությունները և ՆՈՖԳՏՄ-ները՝ պայմանով, որ դրանք ենթակա են ՖԱԹՖ-ի Հանձնարարականներին համահունչ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջների, արդյունավետ կերպով

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ, ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՉԼՉԱՑՄԱՆ ԶԵՆՔԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

կատարում են այդ պահանջները և Հանձնարարականներով սահմանված կարգով ենթարկվում են վերահսկողության կամ մոնիտորինգի՝ նշված պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով,

- որևէ ֆոնդային բորսայում ցուցակված հանրային ընկերությունները, որենց վրա տարածվում են բացահայտման պահանջները (որպիսիք սահմանվում են ֆոնդային բորսայի կանոններով, օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով), որոնցով պահանջվում է ապահովել իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվության պատշաճ թափանցիկությունը,
- պետական հիմնարկները կամ ձեռնարկությունները.

(բ) որոշակի պրոդուկտների, ծառայությունների, գործարքների կամ մատուցման եղանակների առնչվող ռիսկի գործոններ

- կյանքի ապահովագրության փոքր գումարով վկայագրերը (օրինակ՝ որոնց դեպքում տարեկան ապահովագրավճարը չի գերազանցում 1.000 ԱՄՆ դոլարը/եվրոն, կամ միանվագ ապահովագրավճարը չի գերազանցում 2.500 ԱՄՆ դոլարը/եվրոն),
- կենսաթոշակային համակարգերի շրջանակում կնքված ապահովագրական վկայագրերը, եթե դրանք չեն պարունակում հրաժարման մասին դրույթ, և վկայագիրը չի կարող օգտագործվել որպես գրավի առարկա,
- թոշակի, տարիքային կենսաթոշակի կամ աշխատակիցներին կենսաթոշակային նպաստի տրամադրում նախատեսող նմանատիպ այլ համակարգերը, երբ մասհանումները կատարվում են աշխատավարձից նվազեցումների տեսքով, և համակարգի կանոններով չի թույլատրվում համակարգում որևէ անդամի մասնակցության փոխանցումն այլ անձի,
- ֆինանսական պրոդուկտները կամ ծառայությունները, որոնց շրջանակում հստակ սահմանված և սահմանափակ ծառայություններ են մատուցվում հաճախորդների որոշակի տեսակների՝ ֆինանսական ներառման նպատակով այդ ծառայությունների հասանելիությունը բարելավելու համար.

(գ) երկրին առնչվող ռիսկի գործոններ

- հավաստի աղբյուրների, օրինակ՝ փոխադարձ գնահատման հաշվետվությունների եզրահանգմամբ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի արդյունավետ համակարգեր ունեցող երկրները,
- հավաստի աղբյուրների եզրահանգմամբ կոռուպցիայի կամ այլ հանցավոր գործունեության ցածր մակարդակով բնութագրվող երկրները:

Ռիսկերը գնահատելիս երկրները կամ ֆինանսական հաստատությունները պետք է, համապատասխան դեպքերում, նաև հաշվի առնեն ՓԼ/ԱՖ ռիսկի հնարավոր տարբերությունները տվյալ երկրի տարբեր շրջաններում կամ տարածքի տարբեր մասերում:

18. Հաճախորդի նույնականացման և ինքնության ստուգման առումով ՓԼ/ԱՖ ցածր ռիսկայնությունը դեռևս ինքնաբերաբար չի նշանակում, որ տվյալ հաճախորդը ՀՊՈԻ միջոցառումների մյուս բոլոր տեսակների, մասնավորապես՝ գործարքների ընթացիկ մոնիտորինգի առումով ցածր ռիսկային է:

Ռիսկի գործոնները

19. Հաճախորդների տեսակներին, երկրներին կամ աշխարհագրական տարածքներին և որոշակի պրոդուկտների, ծառայությունների, գործարքների կամ մատուցման եղանակների առնչվող ՓԼ/ԱՖ ռիսկերը գնահատելիս ֆինանսական հաստատությունները պետք է հաշվի առնեն ռիսկի նշված դասերի հետ կապված փոփոխականները: Այդ փոփոխականները անհատապես կամ համախմբության մեջ կարող են ավելացնել կամ նվազեցնել պոտենցիալ ռիսկի մակարդակը՝ համապատասխան ազդեցություն գործելով նաև կիրառվող ՀՊՈԻ միջոցառումների աստիճանի վրա: Նման փոփոխականների օրինակներ են.

- հաշվի կամ գործարար հարաբերության նպատակը,
- հաճախորդի կողմից ներդրվող ակտիվների ծավալը կամ կատարվող գործարքների գումարը,
- գործարար հարաբերության կանոնավոր բնույթը կամ տևողությունը:

Հավելյալ ՀՊՈԻ միջոցառումները

20. Ֆինանսական հաստատությունները պետք է, որքանով դա ողջամտորեն հնարավոր է, ուսումնասիրեն բոլոր բարդ, արտասովոր մեծ գործարքների նախապատմությունն ու նպատակները, ինչպես նաև գործարքների կատարման բոլոր արտասովոր եղանակները, որոնք որևէ ակնհայտ տնտեսական կամ օրինական նպատակ չեն հետապնդում: Փողերի լվացման կամ

ահաբեկչության ֆինանսավորման բարձր ռիսկերի առկայության դեպքում ֆինանսական հաստատություններից պետք է պահանջվի իրականացնել բացահայտված ռիսկերին համահունչ հավելյալ ՀՊՈՒ միջոցառումներ: Մասնավորապես, ֆինանսական հաստատությունները պետք է ավելի սերտ և հաճախակի մոնիտորինգ իրականացնեն այդպիսի գործարար հարաբերությունների նկատմամբ՝ դրանց արտասովոր կամ կասկածելի լինելու հանգամանքը որոշելու համար: Բարձր ռիսկային գործարար հարաբերությունների դեպքում իրականացվող հավելյալ ՀՊՈՒ միջոցառումների օրինակներ են.

- հաճախորդի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ձեռք բերելը (օրինակ՝ նրա զբաղմունքի, ակտիվների ծավալի, հրապարակայնորեն հասանելի տեղեկատվական աղբյուրներում և ինտերնետում նրա մասին առկա տեղեկատվության և այլնի մասին), հաճախորդի և իրական շահառուի նույնականացման տվյալների ավելի հաճախակի թարմացումը,
- գործարար հարաբերության նախատեսվող բնույթի մասին լրացուցիչ տեղեկություններ ձեռք բերելը,
- հաճախորդի միջոցների աղբյուրի կամ կարողության աղբյուրի մասին տեղեկություններ ձեռք բերելը,
- նախատեսվող կամ կատարված գործարքների պատճառների մասին տեղեկություններ ձեռք բերելը,
- գործարար հարաբերություն հաստատելու կամ արդեն հաստատված գործարար հարաբերությունը շարունակելու համար ավագ դեկավարության համաձայնությունը ստանալը,
- գործարար հարաբերության հավելյալ մոնիտորինգ իրականացնելը՝ ավելացնելով հսկողական միջոցառումների քանակն ու տևողությունը և որոշելով գործարքների կատարման այն եղանակները, որոնք հետագա ուսումնասիրության կարիք ունեն,
- պահանջելը, որ առաջին վճարումը կատարվի ՀՊՈՒ համանման ստանդարտներ կիրառող որևէ բանկում հաճախորդի անունով բացված հաշվով:

Պարզեցված ՀՊՈՒ միջոցառումները

21. Եթե փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերը գտնվում են ցածր մակարդակի վրա, ֆինանսական հաստատություններին կարող է թույլատրվել ՀՊՈՒ պարզեցված միջոցառումներ իրականացնել՝ հաշվի առնելով ցածր ռիսկի բնույթը: Պարզեցված միջոցառումները պետք է համահունչ լինեն ցածր ռիսկի գործոններին (օրինակ՝ կարող են վերաբերել

միայն հաճախորդի հետ գործարար հարաբերություններ հաստատմանը կամ ընթացիկ մոնիտորինգի որոշ տեսանկյուններին): Հնարավոր միջոցների օրինակներ են.

- հաճախորդի և իրական շահառուի ինքնությունը գործարար հարաբերության հաստատումից հետո ստուգելը (օրինակ՝ երբ հաշվով կատարվող գործարքները գերազանցում են որոշակի գումարային սահմանաչափը),
- հաճախորդի նույնականացման տվյալների թարմացման հաճախականությունը նվազեցնելը,
- գործարքների ընթացիկ մոնիտորինգի և դիտանցման հաճախականությունը նվազեցնելը՝ ողջամիտ գումարային սահմանաչափի հիման վրա,
- գործարար հարաբերության նպատակը կամ նախատեսվող բնույթը հասկանալու համար առանձին տեղեկությունները չհավաքելը կամ հատուկ միջոցառումներ չիրականացնելը՝ դրանց փոխարեն եզրահանգումներ անելով կատարված գործարքների կամ հաստատված գործարար հարաբերության տեսակի հիման վրա:

Պարզեցված միջոցառումներն ընդունելի չեն այն դեպքում, երբ առկա են ՓԼ/ԱՖ կասկածներ կամ ավելի բարձր ռիսկի այլ որոշակի սցենարներ:

Նախատեսված շեմերը

22. Հանձնարարական 10-ի ներքո միանգամյա գործարքների համար նախատեսված շեմը 15.000 ԱՄՆ դոլար/եվրո է: Ֆինանսական գործարքների՝ նախատեսված շեմը գերազանցելու տեսանկյունից դիտարկվում են նաև այն իրավիճակները, երբ գործարքն իրականացվում է մեկ գործառնությամբ կամ միմյանց հետ առերևույթ փոխկապակցված մի քանի գործառնություններով:

Ընթացիկ պատշաճ ուսումնասիրությունը

23. Ֆինանսական հաստատություններից պետք է պահանջվի ապահովել ՀՊՈԻ գործընթացի շրջանակում հավաքվող փաստաթղթերի, տվյալների կամ տեղեկությունների արդիականությունը և վերաբերելիությունը, ինչը պետք է կատարվի առկա տեղեկատվությունը վերանայելու միջոցով, հատկապես հաճախորդների բարձր ռիսկային խմբերի մասով:

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ 12-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ)

Ֆինանսական հաստատություններից պետք է պահանջվի ողջամիտ քայլեր ձեռնարկել կյանքի ապահովագրության վկայագրերի շահառուների և/կամ, անհրաժեշտության դեպքում, շահառուի իրական շահառուի ՔԱՈՒԱ լինելու հանգամանքը պարզելու համար: Սա պետք է կատարվի ամենաուշը ապահովագրական հատուցումը վճարելու պահին: Բարձր ռիսկերի առկայության դեպքում, ի հավելումն սովորական ՀՊՈՒ միջոցառումների, ֆինանսական հաստատություններից պետք է պահանջվի.

- (ա) նախքան ապահովագրական հատուցումը վճարելը տեղեկացնել ավագ ղեկավարությանը,
- (բ) իրականացնել հավելյալ դիտանցում վկայագիրը տիրապետողի հետ գործարար հարաբերության ամբողջ ընթացքում և դիտարկել կասկածելի գործարքի մասին հաշվետվություն ներկայացնելու նպատակահարմարությունը:

**ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ 13-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(ԹՂԹԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)**

Համանման հարաբերությունները, որոնց նկատմամբ ֆինանսական հաստատությունները պետք է կիրառեն «(ա)»-«(ե)» կետերով սահմանված չափորոշիչները, ներառում են, օրինակ, արժեթղթերով գործառնությունների կամ միջոցների փոխանցման նպատակով հաստատված հարաբերությունները, որոնցում անդր-սահմանային ֆինանսական հաստատությունը կարող է հանդես գալ որպես հաճախորդ կամ գործել իր հաճախորդների անունից:

«Միջանցիկ հաշիվ» տերմինը վերաբերում է այն թղթակցային հաշիվներին, որոնք օգտագործվում են ուղղակիորեն երրորդ անձանց կողմից՝ իրենց անունից գործարքներ կատարելու նպատակով:

**ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ 14-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(ՓՈՂԻ ԿԱՍ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)**

Երկրներից չի պահանջվում լիցենզավորման կամ գրանցման առանձին համա-
կարգ ներդնել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար, որոնք
տվյալ երկրում արդեն իսկ լիցենզավորվել կամ գրանցվել են որպես ֆինան-
սական հաստատություն (ըստ ՖԱԹՖ-ի Հանձնարարականներով տրված սահ-
մանման) և, լիցենզավորման կամ գրանցման շնորհիվ, իրավասու են մատուցել
փողի կամ արժեքների փոխանցման ծառայություններ և գործում են ՖԱԹՖ-ի
Հանձնարարականներով սահմանված բոլոր կիրառելի պարտականությունների
շրջանակում:

**ՀԱՆՁՆԱՐԱՐԱՐՎԱՆ 16-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ)**

Ա. Նպատակը

1. Հանձնարարական 16-ի նպատակը ահաբեկիչներին ու այլ հանցագործներին դրամական փոխանցումների ծառայություններից ազատ օգտվելու և իրենց միջոցները տեղաշարժելու հնարավորությունից զրկելն է, ինչպես նաև այդպիսի չարաշահման արդեն տեղի ունեցած դեպքերը հայտնաբերելը: Մասնավորապես, Հանձնարարականը նպատակ ունի ապահովել փոխանցում կատարողի և փոխանցում ստացողի վերաբերյալ հիմնական տեղեկությունների անմիջապես հասանելի լինելը.
 - (ա) համապատասխան իրավապահ և/կամ քրեական հետապնդում իրականացնող մարմիններին՝ ահաբեկիչների կամ այլ հանցագործների հայտնաբերմանը, այդ անձանց հետ կապված գործերի նախաքննությանը և քրեական հետապնդմանը, ինչպես նաև նրանց ակտիվների հետապնդմանն օժանդակելու համար,
 - (բ) ֆինանսական հետախուզության մարմիններին՝ կասկածելի կամ արտասովոր գործունեության վերլուծության և, ըստ անհրաժեշտության, դրա արդյունքների տրամադրման համար, և
 - (գ) ուղարկող, միջնորդ և ստացող ֆինանսական հաստատություններին՝ կասկածելի գործարքների հայտնաբերման ու դրանց մասին հաշվետվությունների ներկայացման, ինչպես նաև սառեցման միջոցներ ձեռնարկելու և ցուցակված անձանց ու կազմակերպությունների հետ գործարքներ իրականացնելու արգելքներին համապատասխանելու գործում նրանց օժանդակելու համար, որոնց առնչվող պարտականություններն ամրագրված են ահաբեկչությունն ու ահաբեկչության ֆինանսավորումը կանխարգելելու և դրանց հակազդելու վերաբերյալ ՄԱԿ Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերով, մասնավորապես՝ 1267 (1999) բանաձևով և դրա հաջորդող բանաձևերով, և 1373 (2001) բանաձևով:
2. Այս նպատակների իրագործման համար երկրները պետք է կարողանան տեղորոշել բոլոր դրամական փոխանցումները: Հաշվի առնելով փոքր գումարով դրամական փոխանցումների հետ կապված ահաբեկչության ֆինանսավորման պոտենցիալ ռիսկերը, երկրները պետք է հնարավորին ցածր նախատեսված շեմեր սահմանեն՝ միաժամանակ ելնելով գործառ-

նությունները ստվերային հատված չմղելու և ֆինանսական ներառումը խթանելու նկատառումներից: ՖԱԹՖ-ը որևէ կերպ նպատակ չունի սահմանել կոշտ ստանդարտներ կամ ներդնել միասնական գործառնական կարգ, որը բացասաբար կազդի վճարային համակարգերի աշխատանքի վրա:

Բ. Շրջանակը

3. Հանձնարարական 16-ը տարածվում է անդրսահմանային և ներպետական դրամական փոխանցումների, ակդ թվում՝ սերիական և ծածկույթով փոխանցումների վրա:
4. Հանձնարարական 16-ը չի տարածվում վճարումների հետևյալ տեսակների վրա.
 - (ա) Ցանկացած փոխանցում, որը բխում է ապրանքների կամ ծառայությունների գնման նպատակով կրեդիտային կամ դեբետային կամ կանխավճարային քարտով կատարված գործարքից՝ պայմանով, որ կրեդիտային կամ դեբետային կամ կանխավճարային քարտի համարը հաղորդվում է գործարքից բխող բոլոր փոխանցումների հետ միասին: Այդուհանդերձ, երբ կրեդիտային կամ դեբետային կամ կանխավճարային քարտերն օգտագործվում են որպես վճարային համակարգ՝ մեկ անձից մյուսին դրամական փոխանցում կատարելու համար, Հանձնարարական 16-ը տարածվում է այդ գործարքների վրա, և անհրաժեշտ տեղեկությունները պետք է ներառվեն փոխանցմանը կից հաղորդագրության մեջ:
 - (բ) Մեկ ֆինանսական հաստատությունից մյուսին կատարվող փոխանցումները և փոխհաշվարկները, երբ թե՛ ուղարկողը, թե՛ ստացողը իրենց անունից հանդես եկող ֆինանսական հաստատություններ են:
5. Երկրները կարող են անդրսահմանային դրամական փոխանցումների դեպքում (որոնց գումարը չի գերազանցում 1.000 ԱՄՆ դոլարը/եվրոն) կիրառել նախատեսված *նվազագույն շեմի* մոտեցումը, որից փոքր գումարով գործարքների վրա տարածվում են հետևյալ պահանջները.
 - (ա) Երկրները պետք է ապահովեն այդպիսի փոխանցումներին ուղեկցող հետևյալ տեղեկությունների ներառումը ֆինանսական հաստատությունների կողմից. (1) փոխանցում կատարողի անունը, (2) փոխանցում ստացողի անունը, և (3) նշված երկուսի հաշվեհամարները կամ փոխանցման եզակի հղման համարը: Այս տեղեկությունների ստույգ լինելը ճշտելն անհրաժեշտ չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա են ՓԼ/ԱՖ

կասկածներ, ինչի դեպքում ֆինանսական հաստատությունները պետք է ստուգեն իրենց հաճախորդների վերաբերյալ տեղեկությունները:

- (բ) Այդուհանդերձ, երկրները կարող են պահանջել, որ նախատեսված շեմից փոքր գումարով բոլոր ներգնա անդրսահմանային դրամական փոխանցումները պարունակեն փոխանցումն ուղարկողի վերաբերյալ անհրաժեշտ և ստույգ տեղեկություններ:

9. Նախատեսված շեմը գերազանցող գումարով դրամական փոխանցումներ

6. Նախատեսված շեմը գերազանցող գումարով բոլոր դրամական փոխանցումներին ուղեկցող տեղեկությունները պետք է անպայման պարունակեն.

- (ա) փոխանցում կատարողի անունը,
- (բ) փոխանցում կատարողի հաշվեհամարը, որն օգտագործվում է փոխանցումն իրականացնելու համար,
- (գ) փոխանցում կատարողի հասցեն, կամ անձը հաստատող ազգային փաստաթղթի համարը, կամ հաճախորդի նույնականացման համարը, կամ ծննդյան ամսաթիվը և վայրը³⁵,
- (դ) փոխանցում ստացողի անունը, և
- (ե) փոխանցում ստացողի հաշվեհամարը, որն օգտագործվում է փոխանցումն իրականացնելու համար.

7. Հաշվեհամարի բացակայության դեպքում, փոխանցումներին ուղեկցող տեղեկությունները պետք է պարունակեն փոխանցման եզակի հղման համարը, որը թույլ է տալիս տեղորոշել տվյալ գործարքը:

8. Եթե մեկ փոխանցում կատարողի մի քանի առանձին անդրսահմանային դրամական փոխանցումներ խմբավորվում են մեկ փաթեթային ֆայլի մեջ՝ ստացողներին ուղարկելու համար, ապա դրանց համար փոխանցում կատարողի վերաբերյալ տեղեկությունների մասով 6-րդ պարբերությամբ նախատեսված պահանջներից կարող է սահմանվել բացառություն՝ պայմանով, որ դրանցում ներառված են փոխանցում կատարողի հաշվեհամարը կամ փոխանցման եզակի հղման համարը (ինչպես նկարագրված է 7-րդ պարբերությունում), իսկ փաթեթային ֆայլը պարունակում է փոխանցում կատա-

³⁵ Հաճախորդի նույնականացման համար ասելով նկատի ունի այն համարը, որով ուղարկող ֆինանսական հաստատությունը եզակիորեն նույնականացնում է փոխանցում կատարողին, և որը տարբեր է 7-րդ պարբերությունում նշված փոխանցման եզակի հղման համարից: Հաճախորդի նույնականացման համարը ուղարկող ֆինանսական հաստատության մոտ գրանցված տեղեկատվություն է, որն առնվազն պարունակում է հետևյալ տվյալներից որևէ մեկը՝ հաճախորդի հասցեն, անձը հաստատող ազգային փաստաթղթի համարը, կամ ծննդյան ամսաթիվը և վայրը:

րողի վերաբերյալ անհրաժեշտ և ստույգ տեղեկություններ, ինչպես նաև փոխանցում ստացողների վերաբերյալ ամբողջական տեղեկություններ, որոնք թույլ են տալիս ստացողի երկրում լիարժեքորեն տեղորոշել այդ փոխանցումները:

Դ. Ներպետական փոխանցումները

9. Ներպետական դրամական փոխանցումների դեպքում ուղարկող ֆինանսական հաստատությունից պետք է պահանջվի ապահովել փոխանցում կատարողի վերաբերյալ անդրսահմանային փոխանցումների դեպքում նախատեսված՝ փոխանցմանն ուղեկցող տեղեկությունների առկայությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ նշված տեղեկությունները կարող են ստացող ֆինանսական հաստատությանը և համապատասխան մարմիններին հասանելի դարձվել այլ միջոցներով: Նշված դեպքերում, ուղարկող ֆինանսական հաստատությունից պետք է պահանջվի ապահովել միայն փոխանցում կատարողի հաշվեհամարի կամ փոխանցման եզակի հղման համարի առկայությունը՝ պայմանով, որ այդ հաշվեհամարը կամ հղման համարը թույլ են տալիս տեղորոշել տվյալ գործարքը՝ ընդհուպ մինչև փոխանցում կատարողը կամ փոխանցում ստացողը:
10. Ուղարկող ֆինանսական հաստատությունը տեղեկությունները պետք է հասանելի դարձնի ստացող ֆինանսական հաստատությանը կամ համապատասխան իրավասու մարմիններին՝ նման պահանջ ներկայացվելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում: Իրավապահ մարմինները պետք է հնարավորություն ունենան պարտադրել նման տեղեկությունների անհապաղ տրամադրումը:

Ե. Ուղարկող, միջնորդ և ստացող ֆինանսական հաստատությունների պարտականությունները

Ուղարկող ֆինանսական հաստատություններ

11. Ուղարկող ֆինանսական հաստատությունները պետք է հավաստիանան, որ նախատեսված շեմը գերազանցող գումարով դրամական փոխանցումները պարունակում են փոխանցում կատարողի վերաբերյալ անհրաժեշտ և ստույգ տեղեկությունները, ինչպես նաև փոխանցում ստացողի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները:
12. Ուղարկող ֆինանսական հաստատությունները պետք է հավաստիանան, որ նախատեսված շեմից փոքր գումարով անդրսահմանային դրամական փոխանցումները պարունակում են փոխանցում կատարողի անունը, փոխան-

ցում ստացողի անունը և նշված երկուսի հաշվեհամարները կամ փոխանցման եզակի հղման համարը:

13. Ուղարկող ֆինանսական հաստատությունը պետք է փոխանցում կատարողի և փոխանցում ստացողի վերաբերյալ հավաքված ամբողջ տեղեկատվությունը պահպանի Հանձնարարական 11-ին համապատասխան կերպով:
14. Ուղարկող ֆինանսական հաստատությանը չպետք է թույլատրվի կատարել դրամական փոխանցումը, եթե այն չի բավարարում վերոշարադրյալ պահանջները:

Միջնորդ ֆինանսական հաստատություններ

15. Անդրսահմանային դրամական փոխանցումների դեպքում, փոխանցումների շղթայի որևէ միջանկյալ բաղկացուցիչը պրոցեսինգի ենթարկող ֆինանսական հաստատությունները պետք է հավաստիանան, որ փոխանցմանն ուղեկցող՝ փոխանցում կատարողի և փոխանցում ստացողի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը հաղորդվում է փոխանցման հետ միասին:
16. Այն դեպքում, երբ տեխնիկական սահմանափակումների պատճառով հնարավոր չէ ապահովել, որ անդրսահմանային դրամական փոխանցմանն ուղեկցող՝ փոխանցում կատարողի կամ փոխանցում ստացողի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները հաղորդվեն հարակից ներպետական փոխանցման հետ միասին, ստացող միջնորդ ֆինանսական հաստատությունը պետք է առնվազն հինգ տարի ժամկետով պահպանի այն ամբողջ տեղեկատվությունը, որ ստացվել է ուղարկող ֆինանսական հաստատությունից կամ մեկ այլ միջնորդ ֆինանսական հաստատությունից:
17. Միջնորդ ֆինանսական հաստատությունները պետք է ձեռնարկեն ողջամիտ քայլեր՝ փոխանցում կատարողի կամ փոխանցում ստացողի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները չպարունակող անդրսահմանային դրամական փոխանցումները հայտնաբերելու համար: Այդ քայլերը պետք է համահունչ լինեն ավտոմատացված պրոցեսինգի կանոններին:
18. Միջնորդ ֆինանսական հաստատությունները պետք է ունենան ռիսկահենք քաղաքականություններ և ընթացակարգեր. (1) փոխանցում կատարողի կամ փոխանցում ստացողի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները չպարունակող դրամական փոխանցումները կատարելու, կատարումը մերժելու կամ կասեցնելու վերաբերյալ և (2) պատշաճ հետհսկողական միջոցառումների վերաբերյալ որոշումների կայացման համար:

Ստացող ֆինանսական հաստատություններ

19. Ստացող ֆինանսական հաստատությունները պետք է ձեռնարկեն ողջամիտ քայլեր՝ փոխանցում կատարողի կամ փոխանցում ստացողի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները չպարունակող անդրսահմանային դրամական փոխանցումները հայտնաբերելու համար: Այդպիսի քայլերի թվին են դասվում, ըստ կիրառելիության, հետահայաց մոնիտորինգը կամ իրական ժամանակի ռեժիմում մոնիտորինգը:
20. Նախատեսված շեմը գերազանցող գումարով դրամական փոխանցումների դեպքում, ստացող ֆինանսական հաստատությունները պետք է ստուգեն փոխանցում ստացողի ինքնությունը, եթե դա նախապես չի կատարվել, և այդ տեղեկատվությունը պահպանեն Հանձնարարական 11-ին համապատասխան կերպով:
21. Ստացող ֆինանսական հաստատությունները պետք է ունենան ռիսկահենք քաղաքականություններ և ընթացակարգեր. (1) փոխանցում կատարողի կամ փոխանցում ստացողի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները չպարունակող դրամական փոխանցումները կատարելու, կատարումը մերժելու կամ կասեցնելու վերաբերյալ և (2) պատշաճ հետհսկողական միջոցառումների վերաբերյալ որոշումների կայացման համար:

2. Փողի կամ արժեքների փոխանցման ծառայությունների օպերատորները

22. Փողի կամ արժեքների փոխանցման ծառայությունների (ՓԱՓԾ) մատուցողներից պետք է պահանջվի համապատասխանել Հանձնարարական 16-ի վերաբերելի պահանջներին այն երկրներում, որտեղ դրանք գործունեություն են ծավալում անմիջականորեն կամ իրենց գործակալների միջոցով: Այն դեպքում, երբ ՓԱՓԾ մատուցողը հսկողություն է իրականացնում դրամական փոխանցման ինչպես ուղարկող, այնպես էլ ստացող կողմի նկատմամբ, ՓԱՓԾ մատուցողը պետք է.
 - (ա) հաշվի առնի ինչպես ուղարկող, այնպես էլ ստացող կողմի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը՝ որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ներկայացնել ԿԳՀ, և
 - (բ) կասկածելի դրամական փոխանցմանն առնչվող ցանկացած երկրում ներկայացնի ԿԳՀ և համապատասխան գործարքի վերաբերյալ տեղեկությունները հասանելի դարձնի ֆինանսական հետախուզության մարմնին:

Սույն Հանձնարարականում օգտագործված տերմինների բառարան

Անդրսահմանային դրամական փոխանցում Այս տերմինը վերաբերում է ցանկացած դրամական փոխանցման, որի դեպքում ուղարկող և ստացող ֆինանսական հաստատությունները գտնվում են տարբեր երկրներում: Այս տերմինով են բնորոշվում նաև դրամական փոխանցումների բոլոր այն շղթաները, որոնց մասնակից ֆինանսական հաստատություններից առնվազն մեկը գտնվում է այլ երկրում:

Անհրաժեշտ Այս տերմինն օգտագործվում է նկարագրելու համար այն իրավիճակները, երբ անհրաժեշտ տեղեկությունների բոլոր տարրերն առկա են: Ենթապարբերություններ 6(ա)-ն, 6(բ)-ն և 6(գ)-ն սահմանում են փոխանցում կատարողի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները: Ենթապարբերություններ 6(դ)-ն և 6(ե)-ն սահմանում են փոխանցում ստացողի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները:

Ավտոմատացված պրոցեսինգ Այս տերմինը վերաբերում է գործարքներին, որոնք կատարվում են էլեկտրոնային եղանակով՝ առանց մարդու միջամտության:

Դրամական փոխանցում Այս տերմինը վերաբերում է ցանկացած գործարքի, որն էլեկտրոնային եղանակով և որևէ ֆինանսական հաստատության միջոցով կատարվում է փոխանցում կատարողի անունից՝ նպատակ ունենալով ստացող ֆինանսական հաստատությունում որոշակի գումար հասանելի դարձնել փոխանցում ստացողի համար, ընդ որում՝ փոխանցում կատարողը և փոխանցում ստացողը կարող է միևնույն անձը լինել³⁶:

³⁶ Այստեղ հարկ է հաշվի առնել, որ դրամական փոխանցումները կարող են իրականացվել գտացված փոխհաշվարկների վերաբերյալ համաձայնությունների հիման վրա: Սույն Բացատրական մեկնաբանությունում խոսքը գնում է այն տեղեկությունների մասին, որոնք պետք է ներառվեն ստացողին գումարը վճարելու նպատակով ուղարկող ֆինանսական հաստատությունից ստացող ֆինանսական հաստատությանն ուղղված փոխանցման հանձնարարականի մեջ, այդ թվում՝ փոխանցումը որևէ միջնորդ ֆինանսական հաստատության միջոցով կատարելու դեպքում: Ֆինանսական հաստատությունների միջև փոխհաշվարկների վրա կարող է տարածվել 4(բ) պարբերությամբ նախատեսված բացառությունը:

Սույն Հանձնարարականում օգտագործված տերմինների բառարան

Ծածկույթով վճարում	Այս տերմինը վերաբերում է դրամական փոխանցումներին, որոնց դեպքում ուղարկող ֆինանսական հաստատության կողմից ստացող ֆինանսական հաստատությանն ուղղակիորեն ուղարկված վճարման հաղորդագրությունում նշվում են դրամական միջոցների՝ մեկ կամ մի քանի միջնորդ ֆինանսական հաստատությունների միջոցով դեբետավորման հրահանգի (ծածկույթի) մանրամասները:
Միջնորդ ֆինանսական հաստատություն	Այս տերմինը վերաբերում է փոխանցումների սերիական կամ ծածկույթով վճարումների շղթայի մասնակից ֆինանսական հաստատությանը, որն ուղարկող ֆինանսական հաստատությունից ստացված դրամական փոխանցումն ուղարկում է ստացող ֆինանսական հաստատությանը կամ մեկ այլ միջնորդ ֆինանսական հաստատության:
Նախատեսված շեմը գերազանցող գումարով դրամական փոխանցում	Այս տերմինը վերաբերում է անդրսահմանային դրամական փոխանցումներին, որոնց գումարը գերազանցում է Հանձնարարական 16-ի Բացատրական մեկնաբանության 5-րդ պարբերությամբ նախատեսված շեմը:
Ներպետական դրամական փոխանցում	Այս տերմինը նշանակում է ցանկացած դրամական փոխանցում, որի ն՝ ուղարկող, ն՝ ստացող ֆինանսական հաստատությունները գտնվում են միևնույն երկրում: Ըստ այդմ՝ տերմինը վերաբերում է դրամական փոխանցումների ցանկացած շղթայի, որն ամբողջությամբ տեղի է ունենում միևնույն երկրի սահմաններում, նույնիսկ եթե դրամական փոխանցումը կատարելու նպատակով օգտագործվող համակարգը գտնվում է մեկ այլ երկրում: Այս տերմինը վերաբերում է նաև դրամական փոխանցումների այն շղթաներին, որոնք ամբողջությամբ տեղի են ունենում Եվրոպական տնտեսական տարածքի (ԵՏՏ) սահմաններում ³⁷ :

³⁷ Երկրները կարող են դիմել ՖԱԹՖ-ին՝ բացառապես Հանձնարարական 16-ի պահանջների կատարումը գնահատելու առումով վերազգային իրավագերակայությունը ճանաչելու նպատակով:

Սույն Հանձնարարականում օգտագործված տերմինների բառարան

Շահառու	Տերմինն օգտագործվում է նաև այն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ կազմավորումների համար, որոնք դրամական փոխանցում ուղարկողի կողմից նշվում են որպես դրամական փոխանցման ստացող:
Սերիական վճարում	Այս տերմինը վերաբերում է ուղղակի շրթայական փոխանցումներին, որոնց դեպքում դրամական փոխանցումը և դրա կից վճարման հաղորդագրությունը ուղարկող ֆինանսական հաստատության կողմից միասին ուղարկվում են ստացող ֆինանսական հաստատությանը՝ ուղղակիորեն կամ մեկ կամ մի քանի միջնորդ ֆինանսական հաստատությունների (օրինակ՝ թղթակից բանկերի) միջոցով:
Ստացող ֆինանսական հաստատություն	Այս տերմինը վերաբերում է այն ֆինանսական հաստատությանը, որն ուղարկող ֆինանսական հաստատությունից ուղղակիորեն կամ միջնորդ ֆինանսական հաստատության միջոցով ստանում է դրամական փոխանցումը և համապատասխան միջոցները տրամադրում փոխանցում ստացողին:
Ստույգ	Այս տերմինն օգտագործվում է ճշտությունը ստուգված տեղեկատվությունը նկարագրելու համար:
Ուղարկող ֆինանսական հաստատություն	Այս տերմինը վերաբերում է այն ֆինանսական հաստատությանը, որը փոխանցում կատարողի պահանջով նախաձեռնում է դրամական փոխանցումը և նրա անունից փոխանցում է համապատասխան միջոցները:
Փաթեթային փոխանցում	Այս տերմինը վերաբերում է այն փոխանցմանը, որի մեջ մտնում են միևնույն ֆինանսական հաստատությանն ուղարկվող մի շարք առանձին դրամական փոխանցումներ, որոնք կարող են վերջին հաշվով նախատեսված լինել կամ չլինել տարբեր անձանց համար:

Սույն Հանձնարարականում օգտագործված տերմինների բառարան

Փոխանցման եզակի հղման համար	Այս տերմինը վերաբերում է տառերի, թվերի կամ նշանների որոշակի համադրությանը, որը վերագրվում է վճարային ծառայություններ մատուցողների կողմից՝ դրամական փոխանցումների համար օգտագործվող վճարահաշվարկային համակարգերի կամ հաղորդագրությունների ուղարկման համակարգերի արարողակարգերին համապատասխան կերպով:
Փոխանցում կատարող	Այս տերմինը վերաբերում է այն հաշվետիրոջը, որը թույլ է տալիս տվյալ հաշվից դրամական փոխանցման կատարումը կամ, հաշվի բացակայության դեպքում, այն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, որը դրամական փոխանցում կատարելու հանձնարարություն է տալիս ուղարկող ֆինանսական հաստատությանը:

**ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ 17-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(ԵՐՐՈՐԴ ԱՆՁԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՐԾԵԼԸ)**

1. Սույն Հանձնարարականը չի տարածվում պայմանագրային հիմունքներով արտաքին ծառայությունների մատուցման կամ գործակալական հարաբերությունների վրա: Երրորդ անձի միջոցով գործելու սցենարը նախատեսում է, որ երրորդ անձը պետք է ենթակա լինի Հանձնարարականներ 10-ով և 11-ով սահմանված ՀՊՈԻ-ի և տեղեկատվության պահպանման պահանջներին, ինչպես նաև կարգավորման, վերահսկողության կամ մոնիտորինգի: Սովորաբար երրորդ անձը հաճախորդի հետ ունենում է արդեն իսկ հաստատված գործարար հարաբերություն, որն անկախ է այդ հաճախորդի և երրորդ անձի միջոցով գործող հաստատության միջև հաստատվելիք հարաբերություններից, և երրորդ անձը ՀՊՈԻ իրականացնելու համար կիրառում է իր սեփական ընթացակարգերը: Սա տարբերվում է պայմանագրային հիմունքներով արտաքին ծառայությունների մատուցման/ գործակալական հարաբերություններից, որոնց դեպքում պայմանագրային հիմունքներով արտաքին ծառայություններ մատուցող կողմը ՀՊՈԻ միջոցառումներն իրականացնում է պատվիրատու ֆինանսական հաստատության անունից՝ վերջինիս ընթացակարգերի համաձայն, և դրանց իրականացման արդյունավետությունը վերահսկվում է պատվիրատու ֆինանսական հաստատության կողմից:
2. Հանձնարարական 17-ում «պատկան իրավասու մարմիններ» տերմինը վերաբերում է. (1) մայր ընկերության գտնվելու վայրի երկրի իրավասու մարմին, որը պետք է պատկերացում ունենա ամբողջ խմբի մակարդակով իրականացվող քաղաքականությունների և հսկողական մեխանիզմների մասին, և (2) մասնաճյուղերի/ դուստր ձեռնարկությունների գտնվելու վայր(եր)ի երկր(ներ)ի իրավասու մարմիններին:
3. «Երրորդ անձ» տերմինը նշանակում է վերահսկողության կամ մոնիտորինգի ենթակա և Հանձնարարական 17-ի պահանջները բավարարող ֆինանսական հաստատությունները կամ ՆՈՖԳՏՄ-ները:

**ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ 18-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(ՆԵՐՔԻՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԸ ԵՎ ԴՈՒՍՏՐ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)**

1. Ֆինանսական հաստատությունների ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ծրագրերը պետք է ներառեն.
 - (ա) ներքին քաղաքականությունները, ընթացակարգերն ու հսկողական մեխանիզմները, այդ թվում՝ համապատասխանության կառավարման մեխանիզմները, ինչպես նաև ստուգման համարժեք ընթացակարգերը՝ դիմողներին աշխատանքի ընդունելիս բարձր ստանդարտների կիրառությունն ապահովելու համար,
 - (բ) աշխատակիցների շարունակական ուսուցման ծրագիրը, և
 - (գ) անկախ աուդիտի գործառույթը՝ համակարգի գործունակությունը փորձառական եղանակով ստուգելու համար:
2. Ձեռնարկվող միջոցների տեսակներն ու աստիճանը պետք է համարժեք լինեն ՓԼ/ԱՖ ռիսկերին և տվյալ բիզնեսի չափերին:
3. Համապատասխանության կառավարման մեխանիզմները պետք է ներառեն ավագ ղեկավարության մակարդակով համապատասխանության պատասխանատուի նշանակումը:
4. Ֆինանսական խմբերի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ծրագրերը պետք է կիրառելի լինեն ֆինանսական խմբի կազմում ներառված բոլոր մասնաճյուղերի և դուստր ձեռնարկությունների համար: Այդ ծրագրերը պետք է ներառեն վերոհիշյալ «(ա)»-«(գ)» կետերով ամրագրված միջոցառումները, ինչպես նաև պետք է համարժեք լինեն մասնաճյուղերի և դուստր ձեռնարկությունների բիզնեսին: Ծրագրերը պետք է մասնաճյուղերի և դուստր ձեռնարկությունների մակարդակով արդյունավետ կերպով կատարվեն: Դրանք պետք է ներառեն ՀՊՈՒ-ի և ՓԼ/ԱՖ ռիսկի կառավարման նպատակով պահանջվող տեղեկատվության փոխանակման քաղաքականություններ և ընթացակարգեր: ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նպատակով անհրաժեշտ լինելու դեպքում, մասնաճյուղերը և դուստր ձեռնարկությունները պետք է ամբողջ խմբի մակարդակով համապատասխանության, աուդիտի կամ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործառույթներ իրականացնողներին տրամադրեն հաճախորդների, հաշիվների և գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը: Պետք է առկա լինեն փոխանակվող տեղեկատվության կոնֆիդենցիալության և պատշաճ օգտագործման համարժեք երաշխիքներ:

5. Ֆինանսական հաստատություններից պետք է պահանջվի ապահովել իրենց օտարերկրյա մասնաճյուղերի և դուստր ձեռնարկությունների կողմից մայր ընկերության գործունեության վայրի երկրի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջներին համահունչ միջոցների ձեռնարկումը, եթե մասնաճյուղի կամ դուստր ձեռնարկության գործունեության վայրի երկրի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջները նվազ խիստ են մայր ընկերության գործունեության վայրի երկրի պահանջներից. նշվածը պետք է կատարվի այնքանով, որքանով դա թույլատրվում է մասնաճյուղի կամ դուստր ձեռնարկության գործունեության վայրի երկրի օրենքներով և կանոնակարգերով: Եթե մասնաճյուղի կամ դուստր ձեռնարկության գործունեության վայրի երկրում հնարավոր չէ մայր ընկերության գործունեության վայրի երկրի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջներին համահունչ միջոցներ ձեռնարկել, ֆինանսական խմբերից պետք է պահանջվի կիրառել համապատասխան հավելյալ միջոցառումներ ՓԼ/ԱՖ ռիսկերը կառավարելու համար և այդ մասին տեղեկացնել մայր ընկերության գործունեության վայրի երկրի վերահսկող մարմիններին: Եթե հավելյալ միջոցառումները բավարար չեն, մայր ընկերության գործունեության վայրի երկրի իրավասու մարմինները պետք է դիտարկեն լրացուցիչ վերահսկողական միջոցներ ձեռնարկելու, ներառյալ՝ ֆինանսական խմբի նկատմամբ հսկողության լրացուցիչ միջոցներ սահմանելու նպատակահարմարությունը, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում ֆինանսական խմբից պահանջելով դադարեցնել մասնաճյուղի կամ դուստր ձեռնարկության գործունեությունը:

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ 19-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ԲԱՐՁՐ ՌԻՍԿԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐԸ)

1. Ֆինանսական հաստատությունների կողմից իրականացվող հավելյալ պատշաճ ուսումնասիրության հնարավոր միջոցառումները կարող են ներառել Հանձնարարական 10-ի 20-րդ պարբերությունում նկարագրվածները, ինչպես նաև ցանկացած այլ միջոցառումներ, որոնք ռիսկերի զսպման առումով համանման ազդեցություն ունեն:
2. Երկրների կողմից ձեռնարկվող հակազդեցության հնարավոր միջոցների օրինակներ են ստորև ներկայացվածները, ինչպես նաև ցանկացած այլ միջոցներ, որոնք ռիսկերի զսպման առումով համանման ազդեցություն ունեն.
 - (ա) Ֆինանսական հաստատություններից պահանջելը, որ կիրառեն հավելյալ պատշաճ ուսումնասիրության որոշակի տարրեր,
 - (բ) Հաշվետվականության ավելի ընդգրկուն մեխանիզմներ կամ ֆինանսական գործարքների մասին պարբերական հաշվետվությունների ներկայացման պահանջ սահմանելը,
 - (գ) Խնդրահարույց երկրներից ֆինանսական հաստատությունների դուստր ձեռնարկությունների, մասնաճյուղերի կամ ներկայացուցչությունների բացման թույլտվություն չտրամադրելը կամ այլ կերպ հաշվի առնելը, որ համապատասխան ֆինանսական հաստատությունն այնպիսի երկրից է, որում բացակայում են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համարժեք համակարգերը,
 - (դ) Խնդրահարույց երկրներում ֆինանսական հաստատությունների մասնաճյուղերի կամ ներկայացուցչությունների բացումն արգելելը կամ այլ կերպ հաշվի առնելը, որ համապատասխան մասնաճյուղը կամ ներկայացուցչությունն այնպիսի երկրում է, որում բացակայում են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համարժեք համակարգերը,
 - (ե) Խնդրահարույց երկրների կամ այդ երկրներից անձանց հետ գործարար հարաբերությունները կամ ֆինանսական գործարքները սահմանափակելը,
 - (զ) Ֆինանսական հաստատություններին արգելելը, որ ՀՊՈԻ գործընթացի տարրերն իրականացնելու նպատակով գործեն խնդրահարույց երկրներում տեղակայված երրորդ անձանց միջոցով,
 - (է) Ֆինանսական հաստատություններից պահանջելով վերանայել և փոփոխել իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև դադարեցնել խնդրահարույց երկրների ֆինանսական հաստատությունների հետ թղթակցային հարաբերությունները,

- (ը) Խնդրահարույց երկրներում հաստատված ֆինանսական հաստատությունների մասնաճյուղերի և դուստր ձեռնարկությունների համար վերահսկողական ստուգումների և/կամ արտաքին աուդիտի ավելի խիստ պահանջներ սահմանելը,
- (թ) Խնդրահարույց երկրներում մասնաճյուղեր և դուստր ձեռնարկություններ ունեցող ֆինանսական խմբերից պահանջելը, որ այդ մասնաճյուղերի և դուստր ձեռնարկությունների նկատմամբ կիրառեն արտաքին աուդիտի ավելի խիստ պահանջներ:

Պետք է ձեռնարկվեն արդյունավետ միջոցներ՝ ապահովելու ֆինանսական հաստատությունների իրազեկումն այլ երկրների ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգերի թերությունների վերաբերյալ առկա մտահոգությունների մասին:

**ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ 20-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ)**

1. Հանձնարարական 20-ում հանցավոր գործունեությանը հղումները վերաբերում են բոլոր հանցավոր արարքներին, որոնք համարվում են փողերի լվացմանը նախորդող հանցագործություններ, կամ առնվազն այն հանցագործություններին, որոնք Հանձնարարական 3-ի պահանջների համաձայն համարվում են նախորդող հանցագործություններ: Խիստ ցանկալի է, որ երկրները կիրառեն այս երկու տարբերակից առաջինը:
2. Ահաբեկչության ֆինանսավորմանը հղումները վերաբերում են ինչպես ահաբեկչական գործողությունների, այնպես էլ ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների ֆինանսավորմանը, անգամ եթե բացակայում է կապը որոշակի ահաբեկչական գործողության կամ գործողությունների հետ:
3. Հաշվետվություն պետք է ներկայացվի բոլոր կասկածելի գործարքների, այդ թվում՝ գործարքի կատարման փորձերի վերաբերյալ՝ անկախ գործարքի գումարից:
4. Հաշվետվություն ներկայացնելու պահանջը պետք է սահմանված լինի պարտադիր կատարման ենթակա ուղղակի պարտավորության տեսքով, ընդ որում՝ կասկածելի գործարքների մասին հաշվետվություն ներկայացնելու որևէ անուղղակի կամ բխեցվող պարտավորություն, որը կարող է պայմանավորված լինել փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հանցագործության համար անձի հնարավոր քրեական հետապնդման կամ որևէ այլ նախապայմանով (այսպես կոչված «հաշվետվություն ներկայացնելու անուղղակի պահանջ»), ընդունելի չէ:

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ 22-Ի ԵՎ 23-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ՆՈՖԳՏՄ-ՆԵՐ)

1. Գործարքների համար նախատեսված շեմերն են.

- խաղատների համար (Հանձնարարական 22-ի ներքո)՝ 3.000 ԱՄՆ դոլար / եվրո,
- թանկարժեք մետաղների և քարերի դիլերների համար՝ այն դեպքում, երբ հաճախորդի հետ իրականացնում են կանխիկով որևէ գործարք (Հանձնարարականներ 22-ի և 23-ի ներքո)՝ 15.000 ԱՄՆ դոլար/եվրո:

Ֆինանսական գործարքների՝ նախատեսված շեմը գերազանցելու տեսանկյունից դիտարկվում են նաև այն իրավիճակները, երբ գործարքն իրականացվում է մեկ գործառնությամբ կամ միմյանց հետ առերևույթ փոխկապակցված մի քանի գործառնություններով:

2. Ֆինանսական հաստատություններին վերաբերող Բացատրական մեկնաբանությունները, կիրառելիության դեպքում, վերաբերում են նաև ՆՈՖԳՏՄ-ներին: Հանձնարարականներ 22-ին և 23-ին համապատասխանելու նպատակով անհրաժեշտ չէ, որ երկրները փաստաբաններին, նոտարներին, հաշվապահներին և մյուս ՆՈՖԳՏՄ-ներին վերաբերող առանձին օրենքներ կամ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունեն՝ պայմանով, որ նշված գործունեության տեսակները կամ մասնագիտությունները ներառված են համապատասխան գործառնությունները կարգավորող օրենքների կամ այլ նորմատիվ իրավական ակտերի կարգավորման սուբյեկտների թվում:

**ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ 22-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(ՆՈՖԳՏՄ-ՆԵՐ. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ)**

1. Անշարժ գույքի գործակալները պետք է գույքի և՛ գնորդների, և՛ վաճառողների մասով կատարեն Հանձնարարական 10-ի պահանջները:
2. Խաղատները պետք է կատարեն Հանձնարարական 10-ի պահանջները, այդ թվում՝ հաճախորդների նույնականացման և ինքնության ստուգման մասով այն դեպքում, երբ հաճախորդները կատարում են ֆինանսական գործարքներ, որոնց գումարը հավասար կամ մեծ է 3.000 ԱՄՆ դոլարից/եվրոյից: Խաղատուն մուտք գործելիս հաճախորդի նույնականացումը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պահանջ է: Երկրները պետք է խաղատներից պահանջեն հավաստիանալ, որ նրանք կարող են որևէ հաճախորդի ՀՊՈՒ տեղեկությունները կապակցել այդ հաճախորդի կողմից խաղատանը կատարված գործարքների հետ:

**ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ 23-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(ՆՈՏԳՏՄ-ՆԵՐ. ԱՅԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ)**

1. Փաստաբանները, նոտարները, իրավաբանական ծառայություններ մատուցող այլ անկախ մասնագետները, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անկախ մասնագետի դերում հանդես եկող հաշվապահները պարտավոր չեն կասկածելի գործարքի մասին հաշվետվություններ կայացնել, եթե համապատասխան տեղեկությունները ձեռք են բերվել այնպիսի հանգամանքներում, որոնց վրա տարածվում են փաստաբանի մասնագիտական տեղեկատվության կամ մասնագիտական գաղտնիքի պաշտպանության նորմերը:
2. Յուրաքանչյուր երկիր ինքն է որոշում, թե որ հարցերն են ներառվում փաստաբանի մասնագիտական տեղեկատվության կամ մասնագիտական գաղտնիքի պաշտպանության շրջանակում: Մովորաբար դա ներառում է այն տեղեկությունները, որոնք փաստաբանները, նոտարները կամ իրավաբանական ծառայություններ մատուցող այլ անկախ մասնագետները ստանում կամ ձեռք են բերում իրենց հաճախորդներից. (ա) հաճախորդի իրավական վիճակը պարզելու ընթացքում, կամ (բ) դատական, վարչական, արբիտրաժային կամ միջնորդական վարույթում հաճախորդին պաշտպանելիս կամ նրա շահերը ներկայացնելիս:
3. Այն դեպքում, երբ երկրները փաստաբաններին, նոտարներին և իրավաբանական ծառայություններ մատուցող այլ անկախ մասնագետներին և հաշվապահներին թույլատրում են ԿԳՀ-ներն ուղարկել համապատասխան ինքնակարգավորվող կազմակերպություններին (ԻԿՄ), պետք է գոյություն ունենան վերջիններիս և ՖՀՄ-ի միջև համագործակցության պատշաճ ձևեր:
4. Այն դեպքերը, երբ փաստաբանները, նոտարները, իրավաբանական ծառայություններ մատուցող այլ անկախ մասնագետները, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անկախ մասնագետի դերում հանդես եկող հաշվապահները փորձում են հաճախորդին տարհամոզել հակասորինական գործունեության մեջ ներգրավվելուց, կասկածների բացահայտում չեն համարվում:

**ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ 24-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԹԱՓԱՆՅԻԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱԿԱՆ
ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ)**

1. Իրավասու մարմինները կարողանան պետք է կարողանան ժամանակին ձեռք բերել երկրում ստեղծված³⁸ ընկերությունների ու այլ իրավաբանական անձանց իրական շահառուների և դրանց նկատմամբ հսկողություն իրականացնող անձանց վերաբերյալ համարժեք, ստույգ ու արդիական տեղեկությունները (իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը³⁹), կամ պետք է կարողանան ժամանակին հասանելիություն ունենալ այդպիսի տեղեկություններին: Այս նպատակին հասնելու համար երկրները կարող են իրենց հայեցողությամբ ընտրել որևէ մեխանիզմ՝ միաժամանակ բավարարելով ստորև ներկայացված նվազագույն պահանջները: Շատ հավանական է, որ նշված նպատակին հասնելու համար երկրները ստիպված կլինեն օգտվել մի քանի մեխանիզմների որոշակի համակցությունից:
2. Իրավաբանական անձանց թափանցիկության համարժեք մակարդակ ապահովելուն ուղղված գործընթացի շրջանակում, երկրները պետք է ունենան մեխանիզմներ, որոնց միջոցով.
 - (ա) բնորոշվում և նկարագրվում են երկրում իրավաբանական անձանց տարբեր տեսակները, ձևերը և հիմնական բնութագրերը,
 - (բ) բնորոշվում և նկարագրվում են (1) այդ իրավաբանական անձանց ստեղծման և (2) դրանց հիմնական հատկորոշիչների և իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների ձեռքբերման ու գրանցման գործընթացները,
 - (գ) ապահովվում է վերը նշված տեղեկությունների հրապարակայնորեն հասանելի լինելը, և
 - (դ) գնահատվում են երկրի տարածքում ստեղծված տարատեսակ իրավաբանական անձանց համար բնութագրական ՓԼ/ԱՖ ռիսկերը:

Ա. Հիմնական հատկորոշիչների վերաբերյալ տեղեկություններ

3. Ընկերության իրական շահառուներին որոշելու համար իրավասու մարմինները պետք է պահանջեն դրա հիմնական հատկորոշիչների վերաբերյալ

³⁸ Իրավաբանական անձի ստեղծմանը հղումները վերաբերում են ընկերությունների հիմնադրմանը կամ կիրառվող որևէ այլ մեխանիզմի օգտագործմանը:

³⁹ Իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների կազմը սահմանված է Հանձնարարական 10-ի Բացատրական մեկնաբանության 5(բ)(1) պարբերությամբ: Այդ պարբերությունում նշված՝ վերահսկիչ բաժնեմասի առկայությունը կարող է հիմնված լինել որոշակի նախատեսված շեմի վրա, օրինակ՝ վերահսկիչ բաժնեմաս ունեցող կարող է համարվել այն անձը, ում պատկանում է ընկերության բաժնետոմսերի որոշակի տոկոսային մասը (օրինակ՝ 25 տոկոսը):

որոշակի տեղեկատվություն, որն առնվազն պետք է ներառի ընկերության սեփականատերերի և դրա նկատմամբ հսկողություն իրականացնող անձանց, ինչպես նաև ընկերության, դրա բաժնետերերի և տնօրենների կարգավիճակի ու լիազորությունների մասին տվյալները:

4. Երկրում ստեղծված բոլոր ընկերությունները պետք է գրանցվեն ընկերությունների ռեգիստրում⁴⁰: Անկախ այն բանից, թե իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների ձեռքբերման և գրանցման մեխանիզմների ինչ համակցություն է ընտրվել (տե՛ս Բաժին Բ-ն), ընկերությունը⁴¹ որպես անհրաժեշտ նախապայման պետք է ձեռք բերի և գրանցի հիմնական հատկորոշիչների վերաբերյալ տեղեկությունների որոշակի շրջանակ: Հիմնական հատկորոշիչների վերաբերյալ ընկերության կողմից ձեռքբերման և գրանցման ենթակա տեղեկությունների նվազագույն շրջանակը ներառում է.

(ա) ընկերության անվանումը, հիմնադիր փաստաթղթերը, կազմակերպա-իրավական ձևն ու կարգավիճակը, գրանցված գրասենյակի հասցեն, գործունեության կանոնները սահմանող հիմնադրույթները (օրինակ՝ ընկերության հիմնադիր պայմանագիրը և կանոնադրությունը), տնօրենների ցանկը, և

(բ) բաժնետերերի կամ մասնակիցների ռեգիստրը, որտեղ արտացոլված են բաժնետերերի և մասնակիցների անունները, նրանցից յուրաքանչյուրին պատկանող բաժնետոմսերի քանակը⁴² և բաժնետոմսերի տեսակները (այդ թվում՝ յուրաքանչյուր տեսակի գծով քվեարկելու իրավունքների բնույթը):

5. Հիմնական հատկորոշիչների վերաբերյալ 4(ա) պարբերությամբ սահմանված տեղեկությունները պետք է գրանցվեն ընկերությունների ռեգիստրում:

6. Հիմնական հատկորոշիչների վերաբերյալ 4(բ) պարբերությամբ սահմանված տեղեկությունները ընկերությունը պետք է պահպանի երկրի ներսում՝ իր գրանցված գրասենյակում կամ մեկ այլ վայրում, որը պետք է հայտնի լինի ընկերությունների ռեգիստրին: Այն դեպքում, երբ ընկերությունը կամ ընկերությունների ռեգիստրը իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները պահպանում է երկրի ներսում, բաժնետերերի ռեգիստրը երկրի ներսում

⁴⁰ «Ընկերությունների ռեգիստր» տերմինը վերաբերում է տվյալ երկրում հիմնադրված կամ լիցենզավորված և, որպես կանոն, հիմնադրումը հավաստող մարմնի կողմից կամ նրա համար վարվող ռեգիստրին: Տերմինը չի վերաբերում ընկերության կողմից կամ նրա համար պահպանվող տեղեկատվությանը:

⁴¹ Այս տեղեկությունները կարող են գրանցվել ընկերության կամ, ընկերության պատասխանատվությամբ, որևէ երրորդ անձի կողմից:

⁴² Սա վերաբերում է բոլոր գրանցված բաժնետոմսերի անվանական սեփականատերերին:

վարելը պարտադիր չէ, եթե ընկերությունը կարող է պահանջի դեպքում պատշաճ կերպով տրամադրել այդ տեղեկությունները;

Բ. Իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ

7. Երկրները պետք է հավաստիանան, որ (ա) ընկերությունը ձեռք է բերել իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները, որոնք հասանելի են երկրի ներսում գտնվող որոշակի վայրում, կամ (բ) գոյություն ունեն մեխանիզմներ, որոնք իրավասու մարմին հնարավորություն են ժամանակին տեղեկություններ ստանալ ընկերության իրական շահառուների մասին:
8. Վերոնշյալ 7-րդ պարբերության պահանջները բավարարելու համար երկրները պետք է կիրառեն ստորև ներկայացված մեխանիզմներից մեկը կամ մի քանիսը.

(ա) ընկերություններից կամ ընկերությունների ռեզիստրներից պահանջելը, որ ձեռք բերեն և պահպանեն արդիական տեղեկություններ ընկերությունների իրական շահառուների վերաբերյալ,

(բ) ընկերություններից պահանջելը, որ ողջամիտ քայլեր ձեռնարկեն⁴³ ընկերությունների իրական շահառուների վերաբերյալ արդիական տեղեկություններ ձեռք բերելու և պահպանելու ուղղությամբ,

(գ) առկա տեղեկություններն օգտագործելը, այդ թվում. (1) ֆինանսական հաստատությունների և ՆՈՏԳՏՄ-ների կողմից Հանձնարարականներ 10-ին և 22-ին համապատասխան ձեռք բերված տեղեկությունները⁴⁴, (2) ընկերությունների իրավական և իրական շահառուների վերաբերյալ այլ իրավասու մարմինների (օրինակ՝ ընկերությունների ռեզիստրների, հարկային մարմինների, ֆինանսական և այլ կարգավորիչ մարմինների) ունեցած տեղեկությունները, (3) վերոհիշյալ Բաժին Ա-ի համաձայն ընկերությունների մոտ պահպանվող տեղեկությունները, և (4) ֆոնդային բորսայում ցուցակված ընկերությունների վերաբերյալ հասանելի տեղեկությունները, երբ բացահայտման պահանջները (որպիսիք սահմանվում են ֆոնդային բորսայի կանոններով, օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով) ապահովում են իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվության պատշաճ թափանցիկությունը:

⁴³ Ձեռնարկված քայլերը պետք է համաչափ լինեն՝ հաշվի առնելով ռիսկի մակարդակը, ընկերության սեփականատերերի կազմով կամ վերահսկիչ բաժնեմաս ունեցող բաժնետերերի բնույթով պայմանավորված բարդությունը:

⁴⁴ Երկրները պետք է կարողանան ժամանակին որոշել ընկերության՝ երկրի տարածքում գործող որևէ ֆինանսական հաստատությունում հաշիվ ունենալու հանգամանքը:

9. Անկախ այն բանից, թե վերը նշված մեխանիզմներից որն է կիրառվում, երկրները պետք է հավաստիանան, որ ընկերություններն իրական շահառուներին բացահայտելու գործում հնարավոր առավելագույն չափով համագործակցում են իրավասու մարմինների հետ: Սա պետք է ներառի.

(ա) պահանջելը, որ տվյալ երկրի ռեզիդենտ մեկ կամ մի քանի ֆիզիկական անձինք հանդես գան ընկերության լիազորված ներկայացուցչի դերում⁴⁵ և հաշվետու լինեն իրավասու մարմիններին՝ տրամադրելով ընկերության բոլոր հիմնական հատկորոշիչների վերաբերյալ տեղեկությունները և իրական շահառուների վերաբերյալ հասանելի տեղեկությունները, ինչպես նաև հետագա աջակցություն ցուցաբերելով իրավասու մարմիններին, և/կամ

(բ) պահանջելը, որ տվյալ երկրում գործող որևէ ՆՈՖԳՏՄ հանդես գա ընկերության լիազորված ներկայացուցչի դերում և հաշվետու լինի իրավասու մարմիններին՝ տրամադրելով ընկերության բոլոր հիմնական հատկորոշիչների վերաբերյալ տեղեկությունները և իրական շահառուների վերաբերյալ հասանելի տեղեկությունները, ինչպես նաև հետագա աջակցություն ցուցաբերելով իրավասու մարմիններին, և/կամ

(գ) երկրի կողմից հստակ սահմանված այլ համադրելի քայլեր ձեռնարկելը, որոնք կարող են արդյունավետ կերպով ապահովել համագործակցությունը:

10. Վերը նշված բոլոր անձինք, մարմինները և կազմակերպությունները, ինչպես նաև բուն ընկերությունը (կամ դրա ղեկավարները, լուծարային կառավարիչները կամ ընկերության լուծարման գործընթացում ներգրավված այլ անձինք) պետք է պահպանեն վերը հիշատակված տեղեկություններն ու տվյալները առնվազն հինգ տարի ժամկետով այն պահից հետո, երբ ընկերությունը լուծարվել կամ այլ կերպ դադարեցրել է իր գոյությունը, կամ երբ ընկերությունը դադարել է լինել մասնագիտացված միջնորդի կամ ֆինանսական հաստատության հաճախորդը:

Գ. Արդիական և ստույգ տեղեկությունների ժամանակին հասանելիությունը

11. Երկրները պետք է ունենան մեխանիզմներ հիմնական հատկորոշիչների վերաբերյալ տեղեկությունների, այդ թվում՝ ընկերությունների ռեզիստրին

⁴⁵ Ընկերության խորհրդի անդամները կամ ավագ ղեկավարությունը ընկերությունից հատուկ լիազոր ներկայացուցչի կարգավիճակ պահանջել չեն կարող:

տրամադրվող տեղեկատվության ստույգությունը և ժամանակին թարմացումն ապահովելու համար: Երկրները պետք է պահանջեն ապահովել 7-րդ պարբերությամբ սահմանված առկա տեղեկությունների ստույգությունը և հնարավոր արդիականությունը, ինչպես նաև որևէ փոփոխության դեպքում դրանց թարմացումը ողջամիտ ժամկետներում:

12. Իրավասու մարմինները և, մասնավորապես, իրավապահ մարմինները պետք է անհրաժեշտ բոլոր լիազորություններն ունենան համապատասխան կողմերի մոտ պահպանվող՝ ընկերության հիմնական հատկորոշիչների և իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները ժամանակին ձեռք բերելու համար:
13. Երկրները պետք է իրենց ընկերությունների ռեգիստրից պահանջեն ֆինանսական հաստատությունների, ՆՈՖԳՏՄ-ների և այլ երկրների իրավասու մարմինների համար դյուրացնել իրենց մոտ պահպանվող հրապարակային տեղեկատվության և, առնվազն, վերոնշյալ 4(ա) պարբերությամբ սահմանված տեղեկությունների ժամանակին հասանելիությունը: Երկրները պետք է նաև դիտարկեն այնպիսի միջոցներ սահմանելու նպատահարմարությունը, որոնք ֆինանսական հաստատությունների և ՆՈՖԳՏՄ-ների համար կդյուրացնեն վերոնշյալ 4(բ) պարբերությամբ սահմանված տեղեկությունների ժամանակին հասանելիությունը:

Դ. Թափանցիկությանը խոչընդոտող հանգամանքները

14. Երկրները պետք է ձեռնարկեն միջոցներ ըստ ներկայացնողի բաժնետոմսերի կամ ըստ ներկայացնողի բաժնետոմսերի հավաստագրերի չարաշահումը կանխարգելելու համար, մասնավորապես՝ կիրառելով հետևյալ մեխանիզմներից մեկը կամ մի քանիսը. (ա) դրանք արգելելը, (բ) դրանք գրանցված բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի հավաստագրերի փոխարկելը (օրինակ՝ ապանյութականացման միջոցով), (գ) դրանց շարժը սահմանափակելը՝ պահանջելով, որ դրանք պահվեն կարգավորվող ֆինանսական հաստատությունում կամ մասնագիտացված միջնորդի մոտ, կամ (դ) պահանջելը, որ վերահսկիչ բաժնեմասի սեփականատերերն իրենց բաժնետեր լինելու հանգամանքի մասին հայտնեն ընկերությանը, իսկ ընկերությունը գրանցի նրանց նույնականացման տվյալները;
15. Երկրները պետք է ձեռնարկեն միջոցներ անվանական բաժնետերերի և անվանական տնօրենների չարաշահումը կանխարգելելու համար, մասնավորապես՝ կիրառելով հետևյալ մեխանիզմներից մեկը կամ մի քանիսը. (ա) պահանջելը, որ անվանական բաժնետերերն ու տնօրենները ընկերությանը և

համապատասխան ռեզիստրին բացահայտեն իրենց անվանատերերի ինքնությունը, և որ այդ տեղեկատվությունը գրանցվի համապատասխան ռեզիստրում, կամ (բ) պահանջելը, որ անվանական բաժնետերերն ու տնօրենները լիցենզավորվեն, նրանց անվանական կարգավիճակը գրանցվի ընկերության ռեզիստրներում, նրանք պահպանեն իրենց անվանատիրոջ ինքնության վերաբերյալ տեղեկությունները և պահանջի դեպքում դրանք հասանելի դարձնեն իրավասու մարմիններին:

Ե. Այլ իրավաբանական անձինք

16. Հիմնադրամների, հիմնարկների և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերակցությունների կապակցությամբ, երկրները պետք է ձեռնարկեն քայլեր և սահմանեն պահանջներ, որպիսիք նախատեսված են ընկերությունների համար՝ հաշվի առնելով դրանց ձևի ու կառուցվածքի տարբերությունները:
17. Իրավաբանական անձանց այլ տեսակների կապակցությամբ, թափանցիկության բավարար մակարդակ ապահովելու նպատակով երկրները պետք է հաշվի առնեն դրանց ձևի ու կառուցվածքի տարբերությունները, ինչպես նաև յուրաքանչյուր տեսակի համար բնութագրական ՓԼ/ԱՖ ռիսկերը: Երկրները պետք է առնվազն հավաստիանան, որ այս իրավաբանական անձինք գրանցում են նույնատեսակ հիմնական հատկորոշիչների վերաբերյալ տեղեկություններ, ապահովում են դրանց ստույգությունը և արդիականությունը, և որ նշված տեղեկությունները ժամանակին հասանելի են դարձվում իրավասու մարմինների համար: Երկրները պետք է գնահատեն այս իրավաբանական անձանց համար բնութագրական ՓԼ/ԱՖ ռիսկերը և, ռիսկի աստիճանից կախված, որոշեն ձեռնարկվելիք միջոցները՝ այդ անձանց իրական շահառուների վերաբերյալ համարժեք, ստույգ և արդիական տեղեկությունները իրավասու մարմիններին ժամանակին հասանելի դարձնելու համար:

Զ. Պատասխանատվությունը և պատժամիջոցները

18. Իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից սույն Բացատրական մեկնաբանության պահանջները կատարելու պարտականությունը, ինչպես նաև այդ պահանջները պատշաճ կերպով չկատարելու համար պատասխանատվությունը և արդյունավետ, համաչափ ու տարհամոզիչ պատժամիջոցները պետք է հստակ սահմանված լինեն:

Է. Միջազգային համագործակցությունը

19. Երկրները պետք է արագ, կառուցողական և արդյունավետ կերպով արձագանքեն ընկերությունների հիմնական հատկորոշիչների և իրական շահառու-

ների վերաբերյալ տեղեկատվությանն առնչվող՝ Հանձնարարականներ 37-ով և 40-ով նախատեսված միջազգային համագործակցության հարցումներին: Դա պետք է ներառի. (ա) ընկերությունների ռեգիստրներում պարունակվող հիմնական հատկորոշիչների վերաբերյալ տեղեկություններին օտարերկրյա իրավասու մարմինների հասանելիությունը դյուրացնելը, (բ) բաժնետերերի վերաբերյալ տեղեկատվությունը փոխանակելը, (գ) ներպետական օրենսդրության համաձայն իրենց իրավասու մարմինների լիազորություններն օգտագործելը՝ իրական շահառուների վերաբերյալ օտարերկրյա գործընկերների անունից տեղեկություններ ձեռք բերելու համար: Երկրները պետք է մոնիտորինգի ենթարկեն այն աջակցության որակը, որ ստանում են այլ երկրներից՝ ի պատասխան ընկերությունների հիմնական հատկորոշիչների և իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու կամ արտասահմանում բնակվող իրական շահառուների գտնվելու վայրը պարզելու խնդրում աջակցություն ակնկալող հարցումների:

**ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ 25-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԹԱՓԱՆՅԻԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ)**

1. Երկրները պետք է իրենց օրենսդրությամբ կարգավորվող ցանկացած ուղղակի տրաստի տրաստային կառավարիչներից պահանջեն ձեռք բերել և ունենալ համարժեք, ստույգ և արդիական տեղեկություններ տրաստի իրական շահառուների վերաբերյալ: Դրանք պետք է ներառեն տվյալներ տրաստի հիմնադրի, տրաստային կառավարիչ(ներ)ի, շահերի պաշտպանների (առկայության դեպքում), շահառուների կամ շահառուների խմբի, ինչպես նաև տրաստի նկատմամբ արդյունավետ վերջնական հսկողություն իրականացնող որևէ այլ ֆիզիկական անձի ինքնության վերաբերյալ: Երկրները պետք է նաև իրենց օրենսդրությամբ կարգավորվող ցանկացած տրաստի տրաստային կառավարիչներից պահանջեն ունենալ տեղեկություններ տրաստի այլ կարգավորվող գործակալների և ծառայություններ մատուցողների, այդ թվում՝ ներդրումային խորհրդատուների կամ ղեկավարների, հաշվապահների և հարկային խորհրդատուների հիմնական հասկորոշիչների վերաբերյալ:
2. Երկրները պետք է ձեռնարկեն միջոցներ՝ հավաստիանալու համար, որ տրաստային կառավարիչները գործարար հարաբերություններ հաստատելիս կամ նախատեսված շեմից մեծ գումարով միանգամյա գործարքներ կատարելիս ֆինանսական հաստատություններին և ՆՈՖԳՏՄ-ներին բացահայտում են իրենց կարգավիճակը: Օրենքները կամ այլ նորմատիվ իրավական ակտերը չպետք է կանխարգելեն տրաստային կառավարիչների կողմից իրավասու մարմիններին տրաստի մասին տեղեկությունների տրամադրումը⁴⁶ կամ, պահանջի դեպքում, ֆինանսական հաստատություններին և ՆՈՖԳՏՄ-ներին տրաստի իրական շահառուների և տվյալ գործարար հարաբերության շրջանակում տրաստի տիրապետման ներքո գտնվող կամ դրա կողմից կառավարվող ակտիվների մասին տեղեկությունների տրամադրումը:
3. Ցանկալի է, որ երկրներն ապահովեն այլ պատկան մարմինների, անձանց ու կազմակերպությունների կողմից տեղեկատվության պահպանումը բոլոր այն տրաստների վերաբերյալ, որոնց հետ հարաբերություն ունեն: Տրաստների, տրաստային կառավարիչների և տրաստային ակտիվների վերաբերյալ տեղեկությունների հնարավոր աղբյուրներ են.

⁴⁶ Ներպետական իրավասու մարմիններին կամ մեկ այլ երկրի պատկան իրավասու մարմիններին՝ միջազգային համագործակցության պատշաճ ներկայացված հարցման հիման վրա:

- (ա) ռեզիստրները (օրինակ՝ տրաստների կամ տրաստային ակտիվների կենտրոնական ռեզիստրը), կամ հողի, անշարժ գույքի, մեքենաների, բաժնետոմսերի կամ այլ ակտիվների ռեզիստրները,
 - (բ) տրաստների կամ տրաստային կառավարիչների վերաբերյալ տեղեկություններ ունեցող այլ իրավասու մարմինները (օրինակ՝ հարկային մարմինները, որոնց տեղեկություններ են հավաքում տրաստների ակտիվների և եկամուտների մասին),
 - (գ) տրաստների այլ գործակալները և ծառայություններ մատուցողները, այդ թվում՝ ներդրումային խորհրդատուները կամ ղեկավարները, փաստաբանները, տրաստային և ընկերությունների ներկայացման ծառայություններ մատուցողները:
4. Իրավասու մարմինները և, մասնավորապես, իրավապահ մարմինները պետք է անհրաժեշտ բոլոր լիազորություններն ունենան տրաստային կառավարիչների և այլ կողմերի (մասնավորապես՝ ֆինանսական հաստատությունների և ՆՈՖԳՏՄ-ների) մոտ պահպանվող տեղեկությունները ժամանակին ձեռք բերելու համար, ներառյալ տեղեկություններ. (ա) իրական շահառուների, (բ) տրաստային կառավարչի բնակության վայրի, և (գ) ֆինանսական հաստատության կամ ՆՈՖԳՏՄ-ի տիրապետման ներքո գտնվող կամ դրա կողմից կառավարվող ակտիվների վերաբերյալ, ցանկացած տրաստային կառավարչի առնչությամբ, որի հետ նրանք գործարար հարաբերություններ ունեն, կամ որի համար միանգամյա գործարք են կատարել:
5. Երկրները պետք է պրոֆեսիոնալ տրաստային կառավարիչներից պահանջեն 1-ին պարբերությամբ սահմանված տեղեկությունները պահպանել տրաստի հետ իրենց հարաբերությունները դադարեցնելուց հետո առնվազն հինգ տարի ժամկետով: Ցանկալի է, որ երկրները ոչ պրոֆեսիոնալ տրաստային կառավարիչներից, ինչպես նաև վերոնշյալ 3-րդ պարբերությամբ սահմանված այլ մարմիններից, անձանցից ու կազմակերպություններից պահանջեն առնվազն հինգ տարի ժամկետով պահպանել այդ տեղեկությունները:
6. Երկրները պետք է պահանջեն ապահովել վերոնշյալ 1-ին պարբերության համաձայն պահպանվող տեղեկությունների ստույգությունը և հնարավոր արդիականությունը, ինչպես նաև որևէ փոփոխության դեպքում դրանց թարմացումը ողջամիտ ժամկետներում:
7. Երկրները պետք է դիտարկեն այնպիսի միջոցներ սահմանելու նպատակահարմարությունը, որոնք Հանձնարարականներ 10-ով և 22-ով սահմանված պահանջները կատարելիս ֆինանսական հաստատությունների և ՆՈՖԳՏՄ-

ների համար կոյուրացնեն 3-րդ պարբերությամբ սահմանված այլ մարմինների, անձանց ու կազմակերպությունների կողմից պահպանվող տրաստների վերաբերյալ տեղեկությունների հասանելիությունը:

8. Սույն Բացատրական մեկնաբանության համատեքստում, երկրներից չի պահանջվում օրենսդրորեն սահմանել «տրաստ» հասկացությունը: Վերոնշյալ 1-ին, 2-րդ և 6-րդ պարբերությունների պահանջները օրենսդրորեն սահմանելը պարտադիր չէ, եթե տրաստային կառավարիչների համար սահմանված են համապատասխան պարտականություններ նախատեսող դրույթներ (օրինակ՝ ընդհանուր իրավունքի կամ նախադեպային իրավունքի ակտերով):

Այլ իրավաբանական կազմավորումները

9. Համանման կառուցվածքով կամ գործառույթներով իրավաբանական կազմավորումների այլ տեսակների մասով թափանցիկության բավարար մակարդակ ապահովելու նպատակով երկրները պետք է ձեռնարկեն քայլեր, որպիսիք նախատեսված են տրաստների համար: Երկրները պետք է առնվազն ապահովեն տրաստների համար սահմանվածին նման ստույգ և արդիական տեղեկությունների գրանցումը և պահպանումը, ինչպես նաև իրավասու մարմիններին այդ տեղեկությունները ժամանակին հասանելի լինելը:

Միջազգային համագործակցությունը

10. Երկրները պետք է արագ արձագանքեն տրաստների և այլ իրավաբանական կազմավորումների վերաբերյալ տեղեկատվությանը, այդ թվում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններին առնչվող՝ Հանձնարարականներ 37-ով և 40-ով նախատեսված միջազգային համագործակցության հարցումներին: Դա պետք է ներառի. (ա) ռեզիստրներում պարունակվող կամ այլ ներպետական մարմինների մոտ պահպանվող հիմնական հատկորոշիչների վերաբերյալ տեղեկություններին օտարերկրյա իրավասու մարմինների հասանելիությունը դյուրացնելը, (բ) տրաստների և այլ իրավաբանական կազմավորումների վերաբերյալ ներպետական հասանելի տեղեկատվությունը փոխանակելը, (գ) ներպետական օրենսդրության համաձայն իրենց իրավասու մարմինների լիազորություններն օգտագործելը՝ իրական շահառուների վերաբերյալ օտարերկրյա գործընկերների անունից տեղեկություններ ձեռք բերելու համար:

Պատասխանատվությունը և պատժամիջոցները

11. Երկրները պետք է հավաստիանան, որ սույն Բացատրական մեկնաբանության պահանջները կատարելու պարտականությունը հստակ սահման-

ված է, և որ տրաստային կառավարիչները օրենքով պատասխանատու են իրենց պարտականությունները 1-ին, 2-րդ, 6-րդ և (կիրառելիության դեպքում) 5-րդ պարբերություններով սահմանված պահանջներին համապատասխան չկատարելու համար, կամ՝ նշվածը չկատարելու համար սահմանված են արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ քրեական, քաղաքացիական կամ վարչական պատժամիջոցներ⁴⁷: Երկրները պետք է ապահովեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ քրեական, քաղաքացիական կամ վարչական պատժամիջոցների առկայությունը տրաստների վերաբերյալ 1-ին և 5-րդ պարբերություններով նախատեսված տեղեկությունները իրավասու մարմիններին ժամանակին հասանելի չդարձնելու համար:

⁴⁷ Սա որևէ կերպ չի անդրադառնում սահմանված պահանջներին չհամապատասխանելու համար արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ պատժամիջոցների վերաբերյալ ՖԱԹՖ-ի Հանձնարարականների այլ դրույթներով նախատեսված պահանջների վրա:

**ՀԱՆՁՆԱՐԱՐԱՐԿԱՆ 26-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ
ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ)**

Վերահսկողության ռիսկահենք մոտեցումը

1. Վերահսկողության ռիսկահենք մոտեցումը վերաբերում է. (ա) այն ընդհանուր գործընթացին, որի միջոցով վերահսկողը ռիսկերի վերաբերյալ իր պատկերացումների համաձայն տեղաբաշխում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասով վերահսկողության առկա ռեսուրսները, և (բ) այն մասնավոր գործընթացին, որի միջոցով ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ռիսկահենք մոտեցման կիրառությամբ վերահսկվում են համապատասխան հաստատությունները:
2. Ֆինանսական հաստատությունների ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգերի և ներքին հսկողական մեխանիզմների նկատմամբ վերահսկողության ռիսկահենք մոտեցումը վերահսկող մարմիններին թույլ է տալիս առկա ռեսուրսներն ուղղել ավելի բարձր ռիսկային համարվող ոլորտներին: Արդյունքում, վերահսկող մարմինները հնարավորություն են ստանում ավելի արդյունավետ կերպով օգտագործել իրենց ռեսուրսները: Մա նշանակում է, որ վերահսկողները պետք է. (ա) հստակ պատկերացում ունենան երկրում առկա ՓԼ/ԱՖ ռիսկերի մասին, և (բ) ինչպես հեռակա վերահսկողության, այնպես էլ տեղերում ստուգումների միջոցով հասանելիություն ունենան վերահսկվող հաստատությունների հաճախորդների, պրոդուկտների ու ծառայությունների, այդ թվում՝ ֆինանսական հաստատությունում կամ խմբում (կամ, Հիմնարար սկզբունքների կիրառության դաշտում գործող ֆինանսական հաստատությունների մասով, խմբերում) համապատասխանության գործառնության իրականացման որակի մասին վերաբերելի ամբողջ տեղեկատվությանը: Ֆինանսական հաստատություններում/ խմբերում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի՝ տեղերում ստուգումների և հեռակա վերահսկողության հաճախականությունն ու խորությունը պետք է որոշվի այնպիսի գործոնների հիման վրա, ինչպիսիք են հաստատության/ խմբի ՓԼ/ԱՖ ռիսկերը և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի քաղաքականությունները, ներքին հսկողության մեխանիզմներն ու ընթացակարգերը՝ ըստ վերահսկողի կողմից հաստատության/ խմբի ռիսկայնության ընդհանուր նկարագրի գնահատականի, և երկրում առկա ՓԼ/ԱՖ ռիսկերը:
3. Վերահսկողը պետք է վերանայի ֆինանսական հաստատության/ խմբի ռիսկայնության ընդհանուր նկարագրի, այդ թվում՝ անհամապատասխանության ռիսկերի գնահատման արդյունքները որոշակի պարբերականությամբ, ինչպես նաև այն ժամանակ, երբ տեղի են ունենում ֆինանսական հաստատու-

թյան/ խմբի կառավարման ու գործունեության հետ կապված էական դեպքեր կամ զարգացումներ: Սա պետք է կատարվի ընթացիկ վերահսկողության մասով երկրում հաստատված գործարար պրակտիկային համապատասխան կերպով: Գնահատումը ստատիկ բնույթ չի կրում. այն ենթակա է փոփոխությունների՝ կախված հանգամանքների զարգացումից և սպառնալիքների երևան գալուց:

4. Ռիսկահենք մոտեցման կիրառությամբ ֆինանսական հաստատությունների/ խմբերի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասով վերահսկողությունը պետք է հաշվի առնի տվյալ ֆինանսական հաստատության/ խմբի՝ ռիսկահենք մոտեցմամբ որոշումներ կայացնելու ազատության աստիճանը և պատշաճ ուսումնասիրության ենթարկի այդ աստիճանը որոշելու հիմքում ընկած ռիսկերի գնահատումները, ինչպես նաև քաղաքականությունների, ներքին հսկողական մեխանիզմների ու ընթացակարգերի համարժեքությունը:
5. Վերը շարադրված սկզբունքները պետք է կիրառվեն բոլոր ֆինանսական հաստատությունների/ խմբերի նկատմամբ: ՓԼ/ԱՖ դեմ պայքարի արդյունավետ վերահսկողություն իրականացնելու նպատակով վերահսկողները պետք է հաշվի առնեն ֆինանսական հաստատությունների/ խմբերի բնութագրերը, մասնավորապես՝ ֆինանսական հաստատությունների բազմազանությունն ու քանակը և ռիսկահենք մոտեցմամբ որոշումներ կայացնելու նրանց ազատության աստիճանը:

Վերահսկողների ռեսուրսները

6. Երկրները պետք է ապահովեն վերահսկողների համար ֆինանսական, մարդկային և տեխնիկական համարժեք ռեսուրսների առկայությունը: Վերահսկողները պետք է բավարար գործառնական անկախություն և ինքնուրույնություն ունենան, ինչը նրանց թույլ կտա զերծ մնալ անհարկի ազդեցությունից կամ միջամտությունից: Երկրները պետք է ունենան գործընթացներ՝ հավաստիանալու համար, որ վերահսկող մարմինների աշխատակիցներն առաջնորդվում են մասնագիտական բարձր ստանդարտներով, այդ թվում՝ կոնֆիդենցիալության մասով, բարեխիղճ կերպով կատարում են իրենց պարտականությունները և ունեն բավարար հմտություններ:

**ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ 28-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(ՆՈՖԳՏՄ-ՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ)**

1. Վերահսկողության ռիսկահենք մոտեցումը վերաբերում է. (ա) այն ընդհանուր գործընթացին, որի միջոցով վերահսկողը կամ ԻԿՄ-ն ռիսկերի վերաբերյալ իր պատկերացումների համաձայն տեղաբաշխում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասով վերահսկողության առկա ռեսուրսները, և (բ) այն մասնավոր գործընթացին, որի միջոցով ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ռիսկահենք մոտեցման կիրառությամբ վերահսկվում կամ մոնիտորինգի են ենթարկվում համապատասխան ՆՈՖԳՏՄ-ները:
2. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի արդյունավետ վերահսկողություն կամ մոնիտորինգ իրականացնելու նպատակով, վերահսկողները կամ ԻԿՄ-ները ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ վերահսկողական կամ մոնիտորինգի գործառնությունների հաճախականությունն ու խորությունը պետք է որոշեն՝ հիմնվելով ՓԼ/ԱՖ ռիսկերի վերաբերյալ իրենց պատկերացումների վրա և հաշվի առնելով ՆՈՖԳՏՄ-ների բնութագրերը, մասնավորապես՝ նրանց բազմազանությունն ու քանակը: Մա նշանակում է, որ նրանք պետք է հստակ պատկերացում ունենան. (ա) երկրում առկա ՓԼ/ԱՖ ռիսկերի մասին, և (բ) ՆՈՖԳՏՄ-ների տվյալ տեսակին և դրանց հաճախորդներին, պրոդուկտներին ու ծառայություններին առնչվող ՓԼ/ԱՖ ռիսկերի մասին:
3. ՆՈՖԳՏՄ-ների ՓԼ/ԱՖ դեմ պայքարի քաղաքականությունների, ներքին հսկողական մեխանիզմների ու ընթացակարգերի համարժեքությունը գնահատելիս վերահսկողները կամ ԻԿՄ-ները պետք է պատշաճ կերպով հաշվի առնեն ՓԼ/ԱՖ տեսանկյունից դրանց ռիսկայնության ընդհանուր նկարագրի գնահատականը և ռիսկահենք մոտեցմամբ որոշումներ կայացնելու ազատության աստիճանը:
4. Վերահսկողները կամ ԻԿՄ-ները պետք է օժտված լինեն իրենց գործառնությունները կատարելու համար անհրաժեշտ (այդ թվում՝ մոնիտորինգ իրականացնելու և պատժամիջոցներ կիրառելու) համարժեք լիազորություններով և պետք է ապահովված լինեն ֆինանսական, մարդկային և տեխնիկական համարժեք ռեսուրսներով: Երկրները պետք է ունենան գործընթացներ՝ հավաստիանալու համար, որ այդ մարմինների աշխատակիցներն առաջնորդվում են մասնագիտական բարձր ստանդարտներով, այդ թվում՝ կոնֆիդենցիալության մասով, բարեխիղճ կերպով կատարում են իրենց պարտականությունները և ունեն բավարար հմտություններ:

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ 29-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆԸ)

Ա. Ընդհանուր

1. Սույն Բացատրական մեկնաբանությամբ ներկայացվում են ֆինանսական հետախուզության մարմնի (ՖՀՄ) գործունեության շրջանակն ու գործառույթները, ինչպես նաև լրացուցիչ մանրամասներ՝ համապատասխան ստանդարտով սահմանված պարտականությունների վերաբերյալ: ՖՀՄ-ն՝ որպես երկրում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործառնական համակարգի բաղկացուցիչ մաս, կենտրոնական դեր ունի այդ համակարգում և օժանդակում է մյուս իրավասու մարմինների աշխատանքին: Հաշվի առնելով ՖՀՄ-ների տարբեր մոդելների առկայությունը, Հանձնարարական 29-ը նախապատվություն չի տալիս երկրի կողմից որևէ մոդելի ընտրությանը և հավասարապես վերաբերում է բոլորին:

Բ. Գործառույթները

(ա) Ստացում

2. ՖՀՄ-ն պետք է գործի որպես կենտրոնական մարմին, որը ստանում է հաշվետու անձանց կողմից ներկայացվող տեղեկատվությունը: Այդ տեղեկատվությունը պետք է առնվազն ներառի Հանձնարարականներ 20-ով և 23-ով նախատեսված կասկածելի գործարքների մասին հաշվետվությունները, ինչպես նաև ներպետական օրենսդրությամբ պահանջվող ցանկացած այլ տեղեկություններ (ինչպիսիք են կանխիկ գործարքների մասին հաշվետվությունները, դրամական փոխանցումների մասին հաշվետվությունները և նախատեսված շեմի վրա հիմնված այլ հայտարարագրերը/ բացահայտումները):

(բ) Վերլուծություն

3. ՖՀՄ-ի կողմից կատարվող վերլուծությունը պետք է արժեք ավելացնի այն տեղեկատվությանը, որ ստանում և պահպանում է ՖՀՄ-ն: Առկա ամբողջ տեղեկատվությունը հաշվի առնելով հանդերձ՝ վերլուծությունը կարող է կենտրոնանալ տեղեկատվության ստացման յուրաքանչյուր դեպքի կամ որևէ սկզբունքով դրանցից ընտրված որոշակի քանակի ուսումնասիրության վրա՝ կախված ստացվող տեղեկատվության տեսակներից ու ծավալներից, ինչպես նաև վերլուծության արդյունքները տրամադրելուց հետո դրանց ակնկալվող օգտագործումից: Ցանկալի է, որ ՖՀՄ-ն օգտվի վերլուծական համակարգչային ծրագրերից, որոնք թույլ են տալիս ավելի արդյունավետ կերպով մշակել

տեղեկատվությունը և նպաստում են համապատասխան կապերի բացահայտմանը: Այդուհանդերձ, այդպիսի ծրագրերը չեն կարող լիովին փոխարինել վերլուծության՝ մարդու դատողությունների հետ կապված տարրին: ՖՀՄ-ն պետք է կատարի վերլուծության հետևյալ տեսակները.

- **Գործառնական վերլուծություն**, որի շրջանակում առկա և ձեռք բերվող տեղեկատվությունն օգտագործվում է որոշակի թիրախներ (օրինակ՝ անձանց, ակտիվներ, քրեական ցանցեր և միություններ) հայտնաբերելու, առանձին գործառնությունների կամ գործարքների ընթացքին հետևելու, նշված թիրախների և հանցավոր ճանապարհով ստացված գույքի, փողերի լվացման, նախորդող հանցագործությունների և ահաբեկչության ֆինանսավորման միջև հնարավոր կապերը բացահայտելու համար, և
- **Ռազմավարական վերլուծություն**, որի շրջանակում առկա և ձեռք բերվող տեղեկատվությունը, այդ թվում՝ այլ իրավասու մարմինների կողմից տրամադրվող տվյալներն օգտագործվում են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված միտումներն ու զարգացումները բացահայտելու համար: Հետագայում այս տեղեկատվությունը նույնպես օգտագործվում է ՖՀՄ-ի կամ այլ պետական մարմինների կողմից՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված սպառնալիքներն ու խոցելիությունները բացահայտելու համար: Ռազմավարական վերլուծությունը կարող է օգտակար լինել նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համատեքստում ՖՀՄ-ի կամ ավելի լայն շրջանակ ընդգրկող մարմինների համար քաղաքականություններ ու նպատակներ սահմանելու գործում:

(գ) Տրամադրում

4. ՖՀՄ-ն պետք է կարողանա սեփական նախաձեռնությամբ և պահանջի դեպքում տեղեկատվությունն ու իր վերլուծության արդյունքները տրամադրել պատկան իրավասու մարմիններին, ինչի համար պետք է օգտվի հատուկ այդ նպատակին ծառայող անվտանգ և պաշտպանված հաղորդակցության միջոցներից:

- **Մեփական նախաձեռնությամբ տրամադրում**. ՖՀՄ-ն պետք է կարողանա տեղեկատվությունն ու իր վերլուծության արդյունքները տրամադրել իրավասու մարմիններին, եթե առկա են փողերի լվացման, նախորդող հանցագործությունների կամ ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված կասկածների հիմքեր: ՖՀՄ-ի վերլուծության հիման վրա տեղեկատվության տրամադրումը պետք է ընտրանքային բնույթ կրի և

ստացող մարմիններին հնարավորություն ընձեռի կենտրոնանալ համախառնախառն դեպքերի/ տեղեկատվության վրա:

- **Պահանջի դեպքում տրամադրում.** ՖՀՄ-ն պետք է կարողանա պատասխանել իրավասու մարմինների կողմից Հանձնարարական 31-ին համապատասխան կերպով ներկայացված՝ տեղեկատվության տրամադրման հարցումներին: Որևէ իրավասու մարմնից այդպիսի հարցում ստանալու դեպքում վերլուծություն կատարելու և/կամ հարցում ուղարկած մարմնին տեղեկատվություն տրամադրելու որոշումը կայացնելու իրավասությունը պետք է պատկանի ՖՀՄ-ին:

Գ. Տեղեկատվության հասանելիությունը

(ա) Հաշվետու անձանցից լրացուցիչ տեղեկատվություն ձեռք բերելը

5. ՖՀՄ-ն պետք է, ի լրումն հաշվետու անձանց կողմից ներկայացվող տեղեկատվության (ստացման գործառույթի ներքո), կարողանա հաշվետու անձանցից ձեռք բերել և օգտագործել լրացուցիչ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր վերլուծությունների պատշաճ կատարման համար: Տեղեկությունները, որոնք ՖՀՄ-ն պետք է իրավասու լինի ձեռք բերել, կարող են ներառել այն տվյալները, որոնք հաշվետու անձինք ՖԱԹՖ-ի համապատասխան Հանձնարարականների (Հանձնարարականներ 10-ի, 11-ի և 22-ի) համաձայն պարտավոր են պահպանել:

(բ) Այլ աղբյուրներից տեղեկատվության հասանելիությունը

6. Պատշաճ վերլուծություն կատարելու համար ՖՀՄ-ն պետք է հասանելիություն ունենա հնարավոր ամենամեծ շրջանակ ներառող ֆինանսական, վարչական և իրավապահ բնույթի տեղեկատվության: Սա պետք է ներառի տեղեկատվության բաց կամ հրապարակայնորեն հասանելի աղբյուրները, այլ մարմինների կողմից կամ նրանց անունից հավաքվող և/կամ պահպանվող տեղեկատվությունը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, առևտրային հիմունքներով պահպանվող տվյալները:

Դ. Տեղեկատվության անվտանգությունը և կոնֆիդենցիալությունը

7. ՖՀՄ-ի կողմից ստացվող, մշակվող, պահպանվող կամ տրամադրվող տեղեկատվությունը պետք է անվտանգ կերպով պաշտպանվի, փոխանակվի և օգտագործվի միայն փոխհամաձայնեցված ընթացակարգերին ու քաղաքականություններին, ինչպես նաև կիրառելի օրենքներին ու կանոնակարգերին համապատասխան կերպով: Ըստ այդմ՝ ՖՀՄ-ն պետք է ունենա տեղեկա-

տվության անվտանգությունն ու կոնֆիդենցիալությունը սահմանող կանոններ, այդ թվում՝ տեղեկատվության մշակման, պահպանման, տրամադրման, պաշտպանության և հասանելիության ընթացակարգեր: ՖՀՄ-ն պետք է հավաստիանա, որ իր աշխատակիցներն ունեն գաղտնիք պարունակող տեղեկատվության հետ աշխատելու թույլտվության համապատասխան մակարդակ, հասկանում են զգայուն և կոնֆիդենցիալ տեղեկությունների մշակման ու տրամադրման հետ կապված իրենց պարտականությունները: ՖՀՄ-ն պետք է ապահովի իր տարածքի և տեղեկատվության, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի սահմանափակ հասանելիությունը:

Ե. Գործառնական անկախությունը

8. ՖՀՄ-ն պետք է գործառնական առումով լինի անկախ և ինքնուրույն, ինչը նշանակում է, որ ՖՀՄ-ն պետք է ունենա իրավասություններ և կարողություններ իր գործառույթներն անկաշկանդ կատարելու համար, այդ թվում՝ որևէ տեղեկատվություն վերլուծելու, պահանջելու և/կամ ուղարկելու կամ տրամադրելու հարցերում ինքնուրույն որոշումներ ընդունելու առումով: Սա նշանակում է, որ ցանկացած դեպքում ՖՀՄ-ն պետք է իրավունք ունենա անկախորեն տեղեկատվություն ուղարկել կամ տրամադրել իրավասու մարմիններին:
9. ՖՀՄ-ն կարող է ստեղծվել արդեն իսկ գոյություն ունեցող որևէ մարմնի կազմում: Մեկ այլ մարմնի գործող կառուցվածքում տեղակայված լինելու դեպքում ՖՀՄ-ն պետք է ունենա այդ մարմնի առանցքային գործառույթներից հստակ տարանջատված գործառույթներ:
10. ՖՀՄ-ն պետք է ապահովված լինի ֆինանսական, մարդկային և տեխնիկական համարժեք ռեսուրսներով, որոնք կապահովեն ՖՀՄ-ի ինքնուրույնությունն ու անկախությունը և թույլ կտան արդյունավետ կերպով գործունեություն իրականացնել: Երկրները պետք է ունենան գործընթացներ՝ հավաստիանալու համար, որ ՖՀՄ-ի աշխատակիցներն առաջնորդվում են մասնագիտական բարձր ստանդարտներով, այդ թվում՝ կոնֆիդենցիալության մասով, բարեխիղճ կերպով կատարում են իրենց պարտականությունները և ունեն բավարար հմտություններ:
11. ՖՀՄ-ն պետք է նաև կարողանա այլ ներպետական իրավասու մարմինների կամ օտարերկրյա գործընկերների հետ տեղեկատվության փոխանակման նպատակով անկախորեն ձեռք բերել և իրագործել համաձայնություններ:

Զ. Անհարկի ազդեցությունը կամ միջամտությունը

12. ՖՀՄ-ն պետք է ունակ լինի ձեռք բերել և օգտագործել իր գործառույթների իրականացմանն անհրաժեշտ ռեսուրսներ ինչպես առանձին դեպքերում, այնպես էլ պարբերական հիմունքներով, զերծ մնալով որևէ անհարկի քաղաքական, պետական կամ ոլորտային ազդեցությունից կամ միջամտությունից, որոնք կարող են խաթարել իր գործառնական անկախությունը:

Է. Էզմոնտ խումբը

13. Երկրները պետք է հավաստիանան, որ ՖՀՄ-ն առաջնորդվում է Էզմոնտ խմբի *Նպատակների հռչակագրով* և *Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեպքերի վերաբերյալ ֆինանսական հետախուզության մարմինների միջև տեղեկատվության փոխանակման սկզբունքներով* (այս փաստաթղթերը ՖՀՄ-ների դերի ու գործառույթների, ՖՀՄ-ների միջև տեղեկատվության փոխանակման մեխանիզմների վերաբերյալ կարևոր ուղեցույց են հանդիսանում): ՖՀՄ-ն պետք է դիմի Էզմոնտ խմբին անդամակցության համար:

Ը. Կանխիկով խոշոր գործարքների վերաբերյալ հաշվետվությունները

14. Երկրները պետք է դիտարկեն այնպիսի համակարգ ներդնելու նպատակահարմարությունը և օգտագործելիությունը, որի շրջանակում ֆինանսական հաստատությունները և ՆՈՖԳՏՄ-ները ներկայացնում են հաշվետվություններ որոշակի գումարը գերազանցող բոլոր ներպետական և միջազգային կանխիկ գործարքների մասին:

**ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ 30-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(ԻՐԱՎԱՊԱՀ և ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)**

1. Երկրում պետք է լինեն նշանակված իրավապահ մարմիններ, որոնց վրա կդրվի փողերի լվացման, դրան նախորդող հանցագործությունների և ահաբեկչության ֆինանսավորման գործերի պատշաճ նախաքննությունն ապահովելու պատասխանատվությունը: Երկրում պետք է լինեն նաև մեկ կամ ավելի նշանակված իրավասու մարմիններ, որոնք կարող են շուտափույթ կերպով հայտնաբերել, հետապնդել և սառեցում ու արգելադրում նախաձեռնել այն գույքի նկատմամբ, որը ենթակա է կամ կարող է ենթակա դառնալ բռնագրավման:
2. «Ֆինանսական քննությունը» նշանակում է որևէ հանցավոր գործունեության հետ կապված ֆինանսական հարցերի քննությունը, որը նպատակ ունի.
 - պարզել քրեական ցանցերի գործունեության շրջանակը և/կամ քրեական հանցագործությունների տարածման աստիճանը,
 - հայտնաբերել և հետապնդել հանցավոր ճանապարհով ստացված գույքը, ահաբեկիչների միջոցները և ցանկացած այլ ակտիվներ, որոնք ենթակա են կամ կարող են ենթակա դառնալ բռնագրավման, և
 - հավաքել ապացույցներ, որոնք կարող են օգտագործվել քրեական հետապնդման վարույթում:
3. «Զուգահեռ ֆինանսական քննությունը» վերաբերում է այն դեպքերին, երբ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և/կամ նախորդող հանցագործության (հանցագործությունների) զծով (ավանդական) քրեական նախաքննությունից զատ կամ դրա համատեքստում իրականացվում է ֆինանսական քննություն: Նախորդող հանցագործությունների գործերով նախաքննություն իրականացնող իրավապահ մարմինների քննիչները պետք է կամ իրավասություն ունենան զուգահեռ ֆինանսական քննության ընթացքում քննել հարակից ՓԼ/ԱՖ հանցագործությունները, կամ կարողանան գործն ուղարկել մեկ այլ մարմին գործի քննությունը շարունակելու համար:
4. Երկրները պետք է դիտարկեն ազգային մակարդակով այնպիսի միջոցներ սահմանելու նպատակահարմարությունը, այդ թվում՝ օրենսդրորեն սահմանված, որոնք փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման գործերի նախաքննություն իրականացնող իրավասու մարմիններին հնարավորություն են տալիս հետաձգել կամ ժամանակավորապես ձեռնպահ մնալ կասկածյալների կալանավորումից և/կամ դրամական միջոցների արգելադրումից՝ գոր-

ծում ներգրավված անձանց բացահայտելու կամ ապացույցներ հավաքելու նպատակով: Առանց այսպիսի միջոցների հնարավոր չէ իրականացնել որոշակի քննչական գործողություններ, ինչպիսիք են վերահսկելի մատակարարումը և օպերատիվ ներդրումը:

5. Հանձնարարական 30-ը վերաբերում է նաև այն իրավասու մարմիններին, որոնք ինքնին իրավապահ մարմին չեն, սակայն պատասխանատվություն են կրում նախորդող հանցագործությունների ֆինանսական քննությունը կատարելու համար՝ այնքանով, որքանով այդ իրավասու մարմիններն իրականացնում են Հանձնարարական 30-ով նախատեսված գործառույթներ:
6. Եթե կոռուպցիայի դեմ պայքարում ներգրավված իրավապահ մարմինները Հանձնարարական 30-ով նախատեսված պահանջների շրջանակում նշանակված են քննելու փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հանցագործությունները, որոնք ծագում են կոռուպցիոն հանցագործություններից կամ կապված են դրանց հետ, այդ մարմինները նույնպես պետք է ակտիվներ հայտնաբերելու, հետապնդելու և սառեցում կամ արգելադրում նախաձեռնելու բավարար լիազորություններ ունենան:
7. Ֆինանսական քննություն իրականացնող միացյալ խմբեր ստեղծելու դեպքում երկրները պետք է հաշվի առնեն վերը նշված իրավապահ և այլ իրավասու մարմինների շրջանակը:
8. Իրավապահ և քրեական հետապնդում իրականացնող մարմինները պետք է ապահովված լինեն ֆինանսական, մարդկային և տեխնիկական համարժեք ռեսուրսներով: Երկրները պետք է ունենան գործընթացներ՝ հավաստիանալու համար, որ այդ մարմինների աշխատակիցներն առաջնորդվում են մասնագիտական բարձր ստանդարտներով, այդ թվում՝ կոնֆիդենցիալության մասով, բարեխիղճ կերպով կատարում են իրենց պարտականությունները և ունեն բավարար հմտություններ:

**ՀԱՆՁՆԱՐԱՐԱՐԱԿԱՆ 32-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(ԿԱՆԽԻԿԻ ԱՆԴՐՄԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ)**

Ա. Նպատակը

1. Հանձնարարական 32-ի նպատակը հավաստիանայն է, որ ահաբեկիչները և այլ հանցագործները չեն կարող ֆինանսավորել իրենց գործունեությունը կամ օրինականացնել հանցագործությունների կատարման արդյունքում ստացված միջոցները՝ արժույթի և ըստ ներկայացնողի փոխանցելի գործիքների անդրսահմանային ֆիզիկական տեղափոխման միջոցով: Մասնավորապես, այդ նպատակին հասնելու համար երկրները պետք է միջոցներ ձեռնարկեն, որոնք հնարավորություն են տալիս. (ա) պարզել արժույթի և ըստ ներկայացնողի փոխանցելի գործիքների անդրսահմանային ֆիզիկական տեղափոխումներ կատարվելու հանգամանքը, (բ) կասեցնել կամ սահմանափակել արժույթի կամ ըստ ներկայացնողի փոխանցելի գործիքների շարժը, երբ առկա են ահաբեկչության ֆինանսավորման կամ փողերի լվացման վերաբերյալ կասկածներ, (գ) կասեցնել կամ սահմանափակել արժույթի կամ ըստ ներկայացնողի փոխանցելի գործիքների շարժը, երբ ներկայացվել է կեղծ հայտարարագիր, կամ բացահայտվել են կեղծ տեղեկություններ, (դ) կեղծ հայտարարագիր ներկայացնելու կամ կեղծ տեղեկություններ բացահայտելու համար կիրառել համապատասխան պատժամիջոցներ, և (ե) բռնագրավել ահաբեկչության ֆինանսավորմանը կամ փողերի լվացմանն առնչվող արժույթը կամ ըստ ներկայացնողի փոխանցելի գործիքները:

Բ. Կանխիկի անդրսահմանային տեղափոխումը հսկելու համակարգերի տեսակները

2. Երկրները կարող են Հանձնարարական 32-ով և սույն Բացատրական մեկնաբանությամբ սահմանված իրենց պարտականությունները կատարել ստորև ներկայացված համակարգերից որևէ մեկը ներդնելու միջոցով: Միևնույն ժամանակ, պարտադիր չէ, որ երկրները կանխիկի կամ ըստ ներկայացնողի փոխանցելի գործիքների ներգնա և արտագնա անդրսահմանային տեղափոխումը հսկելու նպատակով օգտագործեն միևնույն տեսակի համակարգը:

Հայտարարագրման համակարգ

3. Այս համակարգի դեպքում, նախատեսված առավելագույն 15.000 ԱՄՆ դոլար/ եվրո շեմը գերազանցող արժեքով արժույթի կամ ԸՆՓԳ-ների անդրսահմանային ֆիզիկական տեղափոխում կատարող բոլոր անձանցից պետք է պահանջվի նշանակված իրավասու մարմիններին ներկայացնել ճիշտ տեղեկու-

թյուններ պարունակող հայտարարագիր: Երկրները կարող են ընտրել հայտարարագրման համակարգերի հետևյալ երեք տարատեսակներից որևէ մեկը. (1) գրավոր հայտարարագրման համակարգ բոլոր ճանապարհորդողների համար, (2) գրավոր հայտարարագրման համակարգ բոլոր այն ճանապարհորդողների համար, ովքեր տեղափոխում են նախատեսված շեմը գերազանցող գումարով կանխիկ կամ ԸՆՓԳ-ներ, և (3) բանավոր հայտարարագրման համակարգ: Ստորև ներկայացվում են այս համակարգերի յուրա-հատուկ բնութագրերը, սակայն քիչ չեն դեպքերը, երբ երկրները որոշում են ներդնել դրանց որևէ համակցությունը հանդիսացող համակարգ:

- (ա) **Գրավոր հայտարարագրման համակարգ բոլոր ճանապարհորդողների համար.** այս համակարգի դեպքում բոլոր ճանապարհորդողներից պահանջվում է նախքան երկիր մուտք գործելը լրացնել գրավոր հայտարարագիր: Դրանում ներառված են լինում հարցեր, որպիսիք կարելի է տեսնել ընդհանուր կամ մաքսային նպատակներով լրացվող հայտարարագրերում: Գործնականում, ճանապարհորդողները հայտարարագրում են այն հանգամանքը, թե արդյոք իրենց հետ տեղափոխում են արժույթ կամ ԸՆՓԳ-ներ (օրինակ՝ «այո» կամ «ոչ» նշումով վանդակները լրացնելու միջոցով):
- (բ) **Գրավոր հայտարարագրման համակարգ բոլոր այն ճանապարհորդողների համար, ովքեր տեղափոխում են նախատեսված շեմը գերազանցող գումար.** այս համակարգի դեպքում բոլոր այն ճանապարհորդողներից, ովքեր տեղափոխում են նախատեսված շեմը գերազանցող գումարով արժույթ կամ ԸՆՓԳ-ներ, պահանջվում է լրացնել գրավոր հայտարարագիր: Գործնականում, ճանապարհորդողները պարտավոր չեն որևէ հայտարարագիր լրացնել, եթե նախատեսված շեմը գերազանցող գումարով արժույթ կամ ԸՆՓԳ-ներ չեն տեղափոխում:
- (գ) **Բանավոր հայտարարագրման համակարգ բոլոր ճանապարհորդողների համար.** այս համակարգի դեպքում բոլոր ճանապարհորդողներից պահանջվում է բանավոր հայտարարագրել այն հանգամանքը, թե արդյոք իրենց հետ տեղափոխում են նախատեսված շեմը գերազանցող գումարով արժույթ կամ ԸՆՓԳ-ներ: Սովորաբար, սա կատարվում է երկիր մուտքի մաքսակետերում, որտեղ ճանապարհորդողները պետք է ընտրեն «կարմիր ուղին» (առկա են հայտարարագրման ենթակա ապրանքներ) կամ «կանաչ ուղին» (հայտարարագրման ենթակա ապրանքներ առկա չեն): Ճանապարհորդողի կողմից այս կամ այն ուղու ընտրությունը

համարվում է նրա բանավոր հայտարարագիրը: Գործնականում, ճանապարհորդողները որևէ գրավոր հայտարարագիր չեն ներկայացնում, սակայն պարտավոր են ինքնակամ տեղեկություններ բացահայտել մաքսատան աշխատակիցներին:

Բացահայտման համակարգ

4. Երկրները կարող են ներդնել այնպիսի համակարգ, որով ճանապարհորդողներից պահանջվում է համապատասխան պահանջի դեպքում իրավասու մարմիններին ներկայացնել պատշաճ տեղեկություններ: Այս համակարգի դեպքում, ճանապարհորդողները պարտավոր չեն նախապես գրավոր կամ բանավոր հայտարարություն ներկայացնել: Գործնականում, ճանապարհորդողները պահանջի դեպքում պետք է ճիշտ պատասխան տան իրավասու մարմիններին:

Գ. Երկու համակարգերին առնչվող լրացուցիչ տարրեր

5. Անկախ ներդրվող համակարգի ընտրությունից՝ երկրները պետք է հավաստիանան, որ այն ներառում է հետևյալ տարրերը.
 - (ա) Հայտարարագրման/ բացահայտման համակարգը պետք է կիրառվի արժույթի և ԸՆՓԳ-ների ինչպես ներգնա, այնպես էլ արտագնա տեղափոխումների նկատմամբ:
 - (բ) Արժույթի կամ ԸՆՓԳ-ների վերաբերյալ կեղծ հայտարարագիր կամ բացահայտված կեղծ տեղեկություններ հայտնաբերելու, ինչպես նաև հայտարարագիր չներկայացնելու կամ տեղեկություններ չբացահայտելու դեպքում, նշանակված իրավասու մարմինները պետք է իրավունք ունենան տեղափոխողից պահանջել և ստանալ լրացուցիչ տեղեկություններ արժույթի կամ ԸՆՓԳ-ների ծագման աղբյուրի և օգտագործման ակնկալվող նպատակների մասին:
 - (գ) Հայտարարագրման/ բացահայտման գործընթացի միջոցով ձեռք բերված տեղեկությունները պետք է հասանելի լինեն ՖՀՄ-ին. (1) այնպիսի համակարգի միջոցով, որով ՖՀՄ-ն ծանուցվում է անդրսահմանային տեղափոխման կասկածելի դեպքերի մասին, կամ (2) հայտարարագրված/ բացահայտված տեղեկությունները որևէ այլ մեխանիզմով ուղղակիորեն ՖՀՄ-ին հասանելի դարձնելու միջոցով:
 - (դ) Ներպետական մակարդակով, երկրները պետք է ապահովեն մաքսային, սահմանապահ և այլ առնչվող մարմինների միջև բավարար համակարգումը Հանձնարարական 32-ի կատարմանն առնչվող հարցերում:

- (ե) Իրավասու մարմինները պետք է կարողանան ողջամիտ ժամկետով կասեցնել կամ սահմանափակել արժույթի կամ ԸՆՓԳ-ների շարժը՝ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ ապացույցների առկայությունը ստուգելու համար, երբ (1) առկա են փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ կասկածներ, կամ (2) ներկայացվել է կեղծ հայտարարագիր, կամ բացահայտվել են կեղծ տեղեկություններ:
- (զ) Հայտարարագրման/ բացահայտման համակարգը պետք է հնարավորություն տա ապահովել Հանձնարարականներ 36-40-ին համապատասխան կերպով միջազգային համագործակցությունը և աջակցությունը: Այդ համագործակցությունը դյուրացնելու նպատակով իրավասու մարմինները տեղեկություններ պետք է պահպանեն այն դեպքերի մասին, երբ. (1) նախատեսված առավելագույն 15.000 ԱՄՆ դոլար/եվրո շեմը գերազանցող գումարի վերաբերյալ ներկայացվել է հայտարարագիր, կամ բացահայտվել են տեղեկություններ, կամ (2) ներկայացվել է կեղծ հայտարարագիր, կամ բացահայտվել են կեղծ տեղեկություններ, կամ (3) առկա են փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ կասկածներ: Պետք է պահպանվեն առնվազն այն տեղեկությունները, որոնք արտացոլում են. (ա) հայտարարագրված, բացահայտված կամ որևէ այլ կերպ պարզված արժույթի կամ ԸՆՓԳ-ների գումարը, և (բ) դրանք տեղափոխող(ներ)ի նույնականացման տվյալները:
- (է) Երկրները պետք է Հանձնարարական 32-ն իմպլեմենտացնելիս ապահովեն տեղեկատվության պատշաճ օգտագործման խիստ երաշխիքների առկայությունը՝ առանց որևէ կերպ սահմանափակելու. (ա) ապրանքների և ծառայությունների միջպետական առևտրի շրջանակում վճարումները, կամ (բ) կապիտալի ազատ տեղաշարժը:

7. Պատժամիջոցներ

6. Կեղծ հայտարարագիր ներկայացնող կամ կեղծ տեղեկություններ բացահայտող անձանց նկատմամբ պետք է կիրառվեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ քրեական, քաղաքացիական կամ վարչական պատժամիջոցներ: Ահաբեկչության ֆինանսավորմանը, փողերի լվացմանը կամ նախորդող հանցագործություններին առնչվող արժույթի կամ ԸՆՓԳ-ների անդրսահմանային ֆիզիկական տեղափոխում իրականացնող անձանց նկատմամբ նույնպես պետք է կիրառվեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ քրեական, քաղաքացիական կամ վարչական պատժամիջոցներ, ինչպես նաև Հանձնա-

բարակյան 4-ին համապատասխան միջոցառումներ, որոնք հնարավորություն են տալիս բռնագրավել նման արժույթը կամ ԸՆՓԳ-ները:

7. Հանձնարարական 32-ի իմպլեմենտացման համար պատասխանատու մարմինները պետք է ապահովված լինեն ֆինանսական, մարդկային և տեխնիկական համարժեք ռեսուրսներով: Երկրները պետք է ունենան գործընթացներ՝ հավաստիանալու համար, որ այդ մարմինների աշխատակիցներն առաջնորդվում են մասնագիտական բարձր ստանդարտներով, այդ թվում՝ կոնֆիդենցիալության մասով, բարեխիղճ կերպով կատարում են իրենց պարտականությունները և ունեն բավարար հմտություններ:

Ե. Ոսկի, թանկարժեք մետաղներ և թանկարժեք քարեր

8. Ոսկին, թանկարժեք մետաղները և թանկարժեք քարերը, չնայած իրենց բարձր իրացվելիությանն ու որոշակի իրավիճակներում որպես արժեքի փոխանակման կամ փոխանցման միջոց օգտագործվելու հանգամանքին, Հանձնարարական 32-ի կարգավորման առարկա չեն հանդիսանում: Դրանց անդրսահմանային տեղափոխումը կարող է կարգավորվել մաքսային ռեժիմը կարգավորող օրենքներով ու կարգերով: Ոսկու, թանկարժեք մեղատների կամ թանկարժեք քարերի անդրսահմանային տեղափոխման արտասովոր դեպքեր հայտնաբերելիս երկիրը պետք է դիտարկի սահմանված կարգով ծանուցելու անհրաժեշտությունը մաքսային ծառայությանը կամ այն երկրների իրավասու մարմիններին, որտեղից գալիս կամ դեպի ուր գնում են այդ ապրանքները, և պետք է համագործակցի դրանց գալու կամ գնալու վայրը և տեղափոխման նպատակը պարզելու, ինչպես նաև համապատասխան միջոցներ ձեռնարկելու հարցերում:

Սույն Հանձնարարականում օգտագործված տերմինների բառարան

Ահաբեկչության ֆինանսավորմանը կամ փողերի լվացմանն առնչվող Արժույթը կամ ԸՆՓԳ-ները բնութագրելու նպատակով կիրառվելիս այս տերմինը վերաբերում է այն արժույթին կամ ԸՆՓԳ-ներին, որոնք. (ա) ստացվել են ահաբեկչության, ահաբեկչական գործողությունների կամ ահաբեկչական կազմակերպությունների ֆինանսավորման արդյունքում կամ օգտագործվել են կամ նախատեսվել են օգտագործվելու կամ հատկացվելու դրանց ֆինանսավորման համար, կամ (բ) ստացվել են փողերի լվացման կամ նախորդող հանցագործությունների կատարման արդյունքում կամ օգտագործվել են կամ նախատեսվել են օգտագործվելու որպես այդ հանցագործությունների կատարման գործիք:

Անդրսահմանային ֆիզիկական տեղափոխում Այս տերմինը վերաբերում է արժույթի կամ ԸՆՓԳ-ների ցանկացած ներգնա կամ արտագնա ֆիզիկական տեղափոխմանը մեկ երկրից մյուսը: Տերմինը ներառում է տեղափոխման հետևյալ եղանակները. (1) ֆիզիկական տեղափոխում ֆիզիկական անձի կողմից կամ վերջինիս ուղեկցող ուղեբեռում կամ տրանսպորտային միջոցում, (2) արժույթի կամ ԸՆՓԳ-ների առաքում կոնտեյներային բեռի տեսքով, կամ (3) արժույթի կամ ԸՆՓԳ-ների փոստային առաքում ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից:

Կեղծ բացահայտում Այս տերմինը վերաբերում է տեղափոխվող արժույթի կամ ԸՆՓԳ-ների արժեքի թյուր ներկայացմանը, կամ ըստ պահանջի բացահայտման ենթակա կամ իշխանությունների կողմից պահանջվող որևէ այլ վերաբերելի տվյալի թյուր ներկայացմանը: Սա ներառում է բացահայտումը սահմանված պահանջների համաձայն չկատարելը:

Կեղծ հայտարարագիր Այս տերմինը վերաբերում է տեղափոխվող արժույթի կամ ԸՆՓԳ-ների արժեքի թյուր ներկայացմանը, կամ հայտարարագրով սահմանված կամ իշխանությունների կողմից պահանջվող որևէ այլ վերաբերելի տվյալի թյուր ներկայացմանը: Սա ներառում է հայտարարագիրը սահմանված պահանջների համաձայն չներկայացնելը:

**ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ 38-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(ՓՈԽԱԴԱՐՁ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ. ՍԱՌԵՅՈՒՄ ԵՎ
ԲՈՆԱԳՐԱՎՈՒՄ)**

1. Երկրները պետք է դիտարկեն ակտիվների բռնագրավման հիմնադրամ ստեղծելու նպատակահարմարությունը, որում ամբողջությամբ կամ մասնակիորեն կհավաքվի բռնագրավված գույքը՝ իրավապահ, առողջապահական, կրթական և այլ պատշաճ նպատակներով օգտագործվելու համար: Երկրները պետք է ձեռնարկեն այն անհրաժեշտ միջոցները, որոնք հնարավորություն են տալիս այլ երկրների հետ կամ միջև բաշխել բռնագրավված գույքը, մասնավորապես՝ երբ բռնագրավումն ուղղակիորեն կամ անուղղակիորեն տեղի է ունեցել համակարգված իրավապահ գործողությունների արդյունքում:
2. Առանց մեղադրական դատավճռի բռնագրավման վարույթների հիման վրա համագործակցության հարցումների կապակցությամբ, պարտադիր չէ, որ երկրները իրավասու լինեն բավարարել բոլոր այդպիսի հարցումները, սակայն պետք է իրավասու լինեն դա անել առնվազն այն դեպքերում, երբ հանցավորը հասանելի չէ մահվան, փախուստի կամ բացակայության պատճառով, կամ հանցավորը հայտնի չէ:

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ 40-Ի ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԶԵՎԵՐԸ)

Ա. Միջազգային համագործակցության բոլոր տեսակներին վերաբերող սկզբունքները

Հարցում ներկայացնող մարմինների պարտականությունները

1. Համագործակցության հարցումներ ներկայացնելիս իրավասու մարմինները պետք է հնարավոր ամեն ինչ անեն լիարժեք փաստական և, ըստ անհրաժեշտության, իրավական տեղեկատվություն տրամադրելու համար, այդ թվում՝ նշելով հարցման հրատապությունը և հարցվող տեղեկատվության կանխատեսվող օգտագործումը, ինչը հնարավոր կդարձնի հարցումների ժամանակին ու արդյունավետ կերպով կատարումը: Հարցում ներկայացրած իրավասու մարմինները պահանջի դեպքում պետք է հետադարձ արձագանք տան հարցումը ստացած իրավասու մարմիններին՝ ստացված տեղեկատվության օգտագործման և օգտակարության վերաբերյալ:

Անհարկի սահմանափակող պայմանները

2. Երկրները չպետք է արգելեն կամ ոչ ողջամիտ կամ անհարկի սահմանափակող պայմաններ սահմանեն տեղեկատվության փոխանակման կամ համագործակցության իրականացման համար: Մասնավորապես, իրավասու մարմինները չպետք է մերժեն օգնության հարցումը այն հիմքով, որ.
 - (ա) հարցումն առնչվում է նաև հարկաբյուջետային խնդիրների, և/կամ
 - (բ) ֆինանսական հաստատությունների կամ ՆՈՖԳՏՄ-ների համար օրենքով նախատեսված են գաղտնիության կամ կոնֆիդենցիալության պահանջներ (բացառությամբ այն դեպքերի, երբ խնդրարկվող տեղեկությունները պահվում են այնպիսի հանգամանքներում, որոնց վրա տարածվում են փաստաբանի մասնագիտական տեղեկատվության կամ մասնագիտական գաղտնիքի պաշտպանության նորմերը), և/կամ
 - (գ) հարցումը ստացած երկրում իրականացվում է հետաքննություն, նախաքննություն կամ վարույթ (բացառությամբ այն դեպքերի, երբ օգնության տրամադրումը կարող է հանգեցնել հետաքննության, նախաքննության կամ վարույթի ընթացքի խաթարմանը), և/կամ
 - (դ) հարցումը ներկայացրած իրավասու մարմնի կարգավիճակը (քաղաքացիական, վարչական, իրավապահ և այլն) բնույթով տարբերվում է իր օտարերկրյա գործընկերոջ կարգավիճակից:

Փոխանակված տեղեկատվության պաշտպանությունը

3. Փոխանակված տեղեկատվությունը պետք է օգտագործվի միայն այն նպատակների համար, որոնց համար խնդրարկվել կամ տրամադրվել է տեղեկատվությունը: Այլ մարմիններին կամ երրորդ կողմերին տեղեկատվության տրամադրումը, կամ նախապես հաստատվածից տարբերվող՝ վարչական, նախաքննական, քրեական հետապնդման կամ դատական նպատակներով դրա օգտագործումը պետք է ենթակա լինի հարցումը ստացած իրավասու մարմնի հետ նախապես համաձայնեցման:
4. Նախաքննության կամ հետաքննության ամբողջականությունը պաշտպանելու նպատակով⁴⁸, իրավասու մարմինները պետք է ապահովեն համագործակցության հարցումների և փոխանակված տեղեկատվության կոնֆիդենցիալությունը՝ գաղտնիության և սվյալների պաշտպանության մասին երկու կողմերի ստանձնած պարտականություններին համապատասխան կերպով: Իրավասու մարմինները պետք է փոխանակված տեղեկությունները պաշտպանեն առնվազն այն նորմերով, որոնք տարածվում են ներպետական աղբյուրներից ստացված նմանօրինակ տեղեկությունների վրա: Երկրները պետք է ունենան հսկողական մեխանիզմներ և երաշխիքներ, որոնք ապահովում են իրավասու մարմինների կողմից փոխանակված տեղեկատվության օգտագործումը միայն թույլատրված կերպով: Տեղեկատվությունը պետք է փոխանակվի անվտանգ եղանակով, հուսալի ուղիներով կամ մեխանիզմներով: Հարցումը ստացած իրավասու մարմինները կարող են, համապատասխան դեպքերում, մերժել տեղեկատվության տրամադրումը, եթե հարցումը ներկայացրած իրավասու մարմինը չի կարող արդյունավետորեն պաշտպանել այդ տեղեկատվությունը:

Տեղեկատվության որոնման լիազորություններ

5. Իրավասու մարմինները պետք է կարողանան օտարերկրյա գործընկերների անունից կատարել հետաքննություն և իրենց օտարերկրյա գործընկերների հետ փոխանակել այն ամբողջ տեղեկատվությունը, որը նրանք կարող էին ձեռք բերել, եթե հետաքննությունը կատարվեր ներպետական մակարդակով:

Բ. Միջազգային համագործակցության առանձին տեսակներին վերաբերող սկզբունքները

6. Վերը շարադրված ընդհանուր սկզբունքները վերաբերում են գործընկերների կամ ոչ գործընկերների միջև տեղեկատվության փոխանակման բոլոր ձևերին

⁴⁸ Տեղեկատվությունը կարող է բացահայտվել, եթե դա անհրաժեշտ է հարցումը կատարելու համար:

և կիրառվում են ստորև ներկայացված մասնավորեցնող դրույթներին համապատասխան կերպով:

ՖՀՄ-ների միջև տեղեկատվության փոխանակումը

7. ՖՀՄ-ները պետք է տեղեկատվություն փոխանակեն օտարերկրյա ՖՀՄ-ների հետ անկախ դրանց՝ վարչական, իրավապահ, դատական կամ որևէ այլ բնույթ ունենալու հանգամանքից: Այդ նպատակով, ՖՀՄ-ները պետք է պատշաճ իրավական հիմքեր ունենան փողերի լվացման, դրան նախորդող հանցագործությունների և ահաբեկչության ֆինանսավորման գործերին առնչվող դեպքերում համագործակցություն իրականացնելու համար:
8. Համագործակցության հարցումներ ներկայացնելիս ՖՀՄ-ները պետք է հնարավոր ամեն ինչ անեն լիարժեք փաստական և, ըստ անհրաժեշտության, իրավական տեղեկատվություն տրամադրելու համար, այդ թվում՝ ներկայացնելով վերլուծվող գործի նկարագրությունը և հարցվող երկրի հետ հնարավոր առնչությունը: ՖՀՄ-ները պահանջի և հնարավոր այլ դեպքերում պետք է հետադարձ արձագանք տան իրենց օտարերկրյա գործընկերներին՝ ստացված տեղեկատվության օգտագործման, ինչպես նաև դրա հիման վրա կատարված վերլուծության արդյունքների վերաբերյալ:
9. ՖՀՄ-ները պետք է իրավասու լինեն փոխանակել:
 - (ա) այն ամբողջ տեղեկատվությունը, որ պետք է ուղղակիորեն կամ անուղղակիորեն հասանելի կամ ձեռք բերելի լինի ՖՀՄ-ի համար ՖԱԹՖ-ի Հանձնարարականներով, մասնավորապես՝ Հանձնարարական 29-ով սահմանված կերպով, և
 - (բ) փոխադարձության հիմունքով՝ ցանկացած այլ տեղեկատվություն, որին ՖՀՄ-ն իրավասու է ներպետական մակարդակով ուղղակիորեն կամ անուղղակիորեն հասանելիություն ստանալ կամ ձեռք բերել:

Ֆինանսական վերահսկողների միջև տեղեկատվության փոխանակումը⁴⁹

10. Ֆինանսական վերահսկողները պետք է համագործակցեն իրենց օտարերկրյա գործընկերների հետ՝ անկախ նրանց բնույթից կամ կարգավիճակից: Ֆինանսական վերահսկողների միջև համագործակցության նպատակը ֆինանսական հաստատությունների՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի առումով արդյունավետ վերահսկողության դյուրացումն է: Այդ նպատակով, ֆինանսական վերահսկողները պետք է պատշաճ իրավական հիմքեր ունենան վերահսկողության ոլորտում կիրառելի միջազգային ստանդարտներին համապատասխան համա-

⁴⁹ Սա վերաբերում է ֆինանսական վերահսկողներին, որոնք իրավասու մարմիններ են:

գործակցություն իրականացնելու համար, մասնավորապես՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նպատակների հետ կապված կամ դրանց առնչվող վերահսկողական տեղեկատվության փոխանակման մասով:

11. Ֆինանսական վերահսկողները պետք է կարողանան օտարերկրյա գործընկերների հետ փոխանակել ներպետական մակարդակով իրենց հասանելի, այդ թվում՝ ֆինանսական հաստատությունների մոտ պահպանվող տեղեկատվությունը, իրենց համապատասխան կարիքներին համաչափ ձևով: Ֆինանսական վերահսկողները պետք է կարողանան փոխանակել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նպատակներին առնչվող տեղեկատվության ստորև թվարկված տեսակները, մասնավորապես՝ այլ վերահսկողների հետ, որոնք համատեղ պատասխանատվություն են կրում նույն խմբի կազմում գործող ֆինանսական հաստատությունների վերահսկողության համար.

(ա) կարգավորման դաշտին առնչվող տեղեկատվություն, ինչպիսին է ներպետական կարգավորման համակարգի մասին տեղեկատվությունը և ֆինանսական հատվածների մասին ընդհանուր տեղեկատվությունը,

(բ) պրուդենցիալ վերահսկողությանն առնչվող տեղեկատվություն, մասնավորապես՝ Հիմնարար սկզբունքների կիրառության դաշտում գործող ֆինանսական հաստատությունների վերահսկողության մասով, ինչպիսին է ֆինանսական հաստատությունների գործունեության, իրական շահառուների, կառավարման, ղեկավարների «պատշաճ և համապատասխան» լինելու մասին տեղեկատվությունը, և

(գ) ՓԼ/ԱՖ դեմ պայքարին առնչվող տեղեկատվություն, ինչպիսին է ֆինանսական հաստատությունների ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ներքին ընթացակարգերի ու քաղաքականությունների, հաճախորդների պատշաճ ուսումնասիրության, հաճախորդների վերաբերյալ փաստաթղթերի, հաշիվների քաղվածքների և գործարքների մասին տեղեկատվությունը:

12. Ֆինանսական վերահսկողները պետք է կարողանան օտարերկրյա գործընկերների անունից քննություն կատարել և, համապատասխան դեպքերում, լիազորել կամ դյուրացնել օտարերկրյա գործընկերների կողմից երկրի տարածքում ինքնուրույն քննություն կատարելու հնարավորությունը՝ արդյունավետ խմբային վերահսկողությանն օժանդակելու նպատակով:

13. Փոխանակված տեղեկատվությունն այլ անձանց տրամադրելու կամ վերահսկողական և ոչ վերահսկողական նպատակներով օգտագործելու համար անհրաժեշտ է նախապես ստանալ տեղեկատվության փոխանակման հարցումը ստացած ֆինանսական վերահսկողի համաձայնությունը, բացառու-

թյամբ այն դեպքերի, երբ հարցումը ներկայացրած ֆինանսական վերահսկողն օրենքով պարտավորված է բացահայտել կամ հայտնել այդ տեղեկատվու- թյունը: Նման դեպքերում հարցումը ներկայացրած ֆինանսական վերահսկող- ղը պետք է հարցումը ստացած ֆինանսական վերահսկողին առնվազն պատ- շաճ կերպով տեղեկացնի իր այդ պարտավորության մասին: Նախապես համաձայնեցում է համարվում նաև որևէ Փոխըմբռնման հուշագրի կամ հիմնարար սկզբունքներ սահմանող մարմնի նախաձեռնությամբ շրջանառու- թյան մեր դրված Բազմակողմ փոխըմբռնման հուշագրի շրջանակում տեղե- կատվության փոխանակումը նախապես համաձայնեցված լինելու վերաբեր- յալ դրույթի առկայությունը:

Իրավապահ մարմինների միջև տեղեկատվության փոխանակումը

14. Իրավապահ մարմինները պետք է կարողանան հետախուզական կամ նախաքննական նպատակներով իրենց օտարերկրյա գործընկերների հետ փոխանակել փողերի լվացման, դրան նախորդող հանցագործությունների և ահաբեկչության ֆինանսավորման գործերին առնչվող՝ ներպետական մակարդակով իրենց հասանելի տեղեկատվությունը, այդ թվում հանցավոր ճանապարհով ստացված գույքի և հանցագործությունների կատարման նպատակով օգտագործված գործիքների հայտնաբերման ու հետապնդման վերաբերյալ տեղեկությունները:
15. Իրավապահ մարմինները պետք է կարողանան կիրառել իրենց լիազորու- թյունները, այդ թվում՝ ներպետական օրենսդրությամբ նախատեսված քննչա- կան գործողությունները, օտարերկրյա գործընկերների անունից հետաքննու- թյուն կատարելու և տեղեկատվություն ձեռք բերելու համար: Տեղեկատվու- թյան փոխանակման հարցում ստացած իրավապահ մարմնի կողմից տրա- մադրվող տեղեկատվության օգտագործումը սահմանափակելուն ուղղված բոլոր միջոցները պետք է կարգավորվեն իրավապահ մարմինների միջև համագործակցության այնպիսի ռեժիմների կամ պրակտիկայի շրջանակում, ինչպիսիք են Ինտերպոլի, Եվրոպոլի կամ Եվրոջասպի և առանձին երկրների միջև համաձայնագրերը:
16. Իրավապահ մարմինները պետք է կարողանան ձևավորել միացյալ քննչական խմբեր՝ համատեղ նախաքննություն իրականացնելու համար և, անհրաժեշ- տության դեպքում, պետք է ձեռք բերեն երկկողմ կամ բազմակողմ համա- ձայնություններ այդպիսի համատեղ նախաքննությունների իրականացման համար: Ցանկալի է, որ երկրները միանան և աջակցեն ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործող իրավապահ ցանցերին, ինչպես նաև զարգացնեն երկկողմանի հա-

րաբերությունները օտարերկրյա իրավապահ մարմինների հետ, այդ թվում՝ արտասահմանում մշտական ներկայացուցչություն ապահովող աշխատակիցների միջոցով, ժամանակին ու արդյունավետ համագործակցությունը դյուրացնելու նպատակով:

Ոչ գործընկերների միջև տեղեկատվության փոխանակումը

17. Երկրները պետք է իրենց իրավասու մարմիններին թույլ տան վերը շարադրված սկզբունքները կիրառելով անուղղակի եղանակով տեղեկատվություն փոխանակել ոչ գործընկերների հետ: Տեղեկատվության անուղղակի փոխանակումը վերաբերում է այն դեպքերին, երբ տեղեկատվության տրամադրման հարցում ստացած մարմինը խնդրարկվող տեղեկատվությունը հարցում ներկայացրած մարմինն փոխանցում է մեկ կամ մի քանի ներպետական կամ օտարերկրյա մարմինների միջոցով: Նման եղանակով տեղեկատվության փոխանակումը և դրա օգտագործումը կարող է ենթակա լինել տեղեկատվության տրամադրման հարցում ստացած երկրի մեկ կամ մի քանի իրավասու մարմինների կողմից թույլատրման: Տեղեկատվության տրամադրման հարցումը ներկայացրած իրավասու մարմինն անպայման պետք է հստակ նշի, թե ինչ նպատակով և ում անունից է ներկայացվում հարցումը:
18. Ցանկալի է նաև, որ երկրները թույլատրեն ոչ գործընկերների միջև տեղեկատվության ուղղակի փոխանակումը պատշաճ և կառուցողական ձևով:

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՈՖԳՏՄ-ՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՍԲ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

1. Ֆինանսական հաստատությունների և ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ բոլոր պահանջները պետք է սահմանվեն կամ. (ա) օրենքով (այս կապակցությամբ տե՛ս Հանձնարարականներ 10-ով, 11-ով և 20-ով ամրագրված առանձին պահանջները), կամ (բ) մնացած բոլոր դեպքերում՝ օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով (երկրի հայեցողությամբ):
2. Հանձնարարականներ 10-ում, 11-ում և 20-ում «*օրենք*» հասկացությունը վերաբերում է օրենսդրական ակտերին, որոնք ընդունվել կամ հաստատվել են երկրի սահմանադրական կարգով նախատեսված օրինաստեղծ գործընթացի կամ այլ համարժեք ընթացակարգի միջոցով, սահմանում են պարտադիր պահանջներ և դրանց չկատարման դեպքում կիրառվող պատժամիջոցներ: Պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ (տե՛ս Հանձնարարական 35-ը): Օրենքի հասկացությունը ներառում է նաև բոլոր դատական որոշումները, որոնք սահմանում են վերաբերելի պահանջներ, պաշտոնական բնույթ են կրում և պարտադիր են երկրի ամբողջ տարածքում:
3. «*Այլ նորմատիվ իրավական ակտ*» հասկացությունը վերաբերում է այն կանոնակարգերին, ուղեցույցներին, հրահանգներին կամ այլ փաստաթղթերին կամ մեխանիզմներին, որոնք ընդունվել կամ հաստատվել են որևէ իրավասու մարմնի կողմից, սահմանում են ՓԼ/ԱՖ դեմ պայքարին առնչվող պարտադիր կատարման ենթակա պահանջներ և դրանց չկատարման դեպքում կիրառվող պատժամիջոցներ (տե՛ս Հանձնարարական 35-ը):
4. Որևէ փաստաթղթի կամ մեխանիզմի՝ «*այլ նորմատիվ իրավական ակտ*» լինելու հանգամանքը պարզելիս պետք է հաշվի առնել հետևյալ գործոնները.
 - (ա) պետք է լինի փաստաթուղթ կամ մեխանիզմ, որը պարունակում է ՖԱԹՖ-ի Հանձնարարականներով սահմանված խնդիրներին անդրադարձող կամ դրանք ձևակերպող պահանջներ, որոնք հստակ շարադրված են պահանջի տեսքով և հասկացվում են որպես այդպիսին: Օրինակ, եթե տվյալ մեխանիզմի մեջ օգտագործվում է.
 - (1) «*անհրաժեշտ է (են)*» կամ «*պարտավոր է (են)*» բառերը, ապա դա պետք է համարվի պարտադիր,
 - (2) «*պետք է (են)*» բառերը, ապա դա կարող է համարվել պարտադիր, եթե կարգավորող մարմինը և կարգավորվող հաստատությունները ապացուցում են, որ դիտարկվող գործողություններն ուղղակիորեն

կամ անուղղակիորեն պահանջվում և իրագործվում են: Միջոցառումների իրականացման վերաբերյալ «*ցանկալի է*», «*ողջունելի է*» կամ «*պետք է դիտարկել նպատակահարմարությունը*» ձևակերպումները պարտադիր համարվելու նվազ հավանականություն ունեն: Ցանկացած պարագայում, երբ ավելի մեղմ ձևակերպում է օգտագործվում, ենթադրվում է, որ այն պարտադիր չէ (եթե երկիրը հակառակը չի ապացուցում):

- (բ) փաստաթուղթը/մեխանիզմը պետք է ընդունված կամ հաստատված լինի իրավասու մարմնի կողմից:
- (գ) չկատարման համար պետք է սահմանված լինեն պատժամիջոցներ (պարտադիր չէ, որ պատժամիջոցները նախատեսված լինեն համապատասխան պահանջը սահմանող կամ ձևակերպող փաստաթղթով: դրանք կարող են ամրագրված լինել մեկ այլ փաստաթղթով՝ պայմանով, որ առկա լինի հստակ կապ պահանջի և դրա չկատարման դեպքում կիրառելի պատժամիջոցի միջև), որոնք պետք է լինեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է դիտարկել հետևյալ հարցերը.
 - (1) անձանց կողմից իրենց պարտականությունները չկատարելու համար պետք է սահմանված լինի արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ պատժամիջոցների համարժեք շրջանակ,
 - (2) պատժամիջոցները պետք է ուղղակիորեն կամ անուղղակիորեն կիրառելի լինեն ՓԼ/ԱՖ դեմ պայքարի որոշակի պահանջների չկատարման դեպքերի նկատմամբ: Եթե ՓԼ/ԱՖ դեմ պայքարի որոշակի պահանջի չկատարումն ուղղակիորեն չի հանգեցնում որևէ պատժամիջոցի կիրառման, ապա բավարար է նաև ավելի ընդհանուր պահանջների չկատարման, օրինակ՝ պատշաճ համակարգեր և հսկողական մեխանիզմներ չունենալու կամ ապահով և անվտանգ գործունեություն չձավալելու համար սահմանված պատժամիջոցների կիրառությունը՝ պայմանով, որ, առնվազն, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջներից մեկը կամ մի քանիսը չկատարելը կարող է հիմք հանդիսանալ (և, համապատասխան դեպքերում, արդեն հանդիսացել է) պատժամիջոց կիրառելու համար, ինչի դեպքում անհրաժեշտ չէ ապացուցել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի հետ չկապված որևէ լրացուցիչ պրուդենցիալ պահանջ չկատարելու փաստը, և
 - (3) պետք է առկա լինեն բավարար ապացույցներ առ այն, որ գործնականում կիրառվել են արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ պատժամիջոցներ:

5. Բոլոր դեպքերում պետք է ակնհայտ լինի, որ ֆինանսական հաստատությունները և ՆՈՖԳՏՄ-ները գիտակցում են, որ պահանջների չկատարման պարագայում կիրառվում են պատժամիջոցներ, և պատկերացնում են, թե ինչ պատժամիջոցներ կարող են կիրառվել:

ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Տերմին	Մահմանում
<p>Ահաբեկիչ</p>	<p>Այս տերմինը վերաբերում է ցանկացած ֆիզիկական անձի, ով. (ա) որևէ կերպ ուղղակիորեն կամ անուղղակիորեն, ապօրինաբար և դիտավորությամբ կատարում կամ փորձում է կատարել ահաբեկչական գործողություններ, (բ) որպես հանցակից մասնակցում է ահաբեկչական գործողությունների կատարմանը, (գ) կազմակերպում կամ ուղղորդում է այլ անձանց՝ կատարելու ահաբեկչական գործողություններ, կամ (դ) նպաստում է ընդհանուր նպատակով գործող անձանց խմբի կողմից ահաբեկչական գործողությունների կատարմանը, երբ նպաստելը տեղի է ունենում միտումնավոր կերպով և նպատակ հետապնդելով օժանդակել ահաբեկչական գործողության կատարմանը, կամ գիտենալով խմբի՝ ահաբեկչական գործողություն կատարելու մտադրության մասին:</p>
<p>Ահաբեկչական գործողություն</p>	<p>Այս տերմինը վերաբերում է.</p> <p>(ա) այն գործողությանը, որը հանցագործություն է համարվում հետևյալ համաձայնագրերի իմաստով և սահմանված է դրանցով. (1) Օդանավերի ապօրինի զավթման դեմ պայքարի մասին կոնվենցիա (1970թ.), (2) Քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված գործողությունների դեմ պայքարի մասին կոնվենցիա (1971թ.), (3) Միջազգայնորեն պաշտպանված անձանց, այդ թվում՝ դիվանագիտական գործակալների դեմ ուղղված հանցագործությունների կանխման և պատժի մասին կոնվենցիա (1973թ.), (4) Պատանդներ վերցնելու դեմ պայքարի մասին միջազգային կոնվենցիա (1979թ.), (5) Միջուկային նյութերի ֆիզիկական պաշտպանության մասին կոնվենցիա (1980թ.), (6) Քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված ապօրինի գործողությունների դեմ պայքարի մասին կոնվենցիային կից՝ Միջազգային քաղաքացիական ավիացիան սպասարկող օդանավակայաններում բռնության ապօրինի գործողությունների դեմ պայքարի մասին արձանագրություն</p>

Տերմին	Սահմանում
	<p>(1988թ.), (7) Ծովագնացության անվտանգության դեմ ուղղված ապօրինի գործողությունների դեմ պայքարի մասին կոնվենցիա (2005թ.), (8) Մայրցամաքային ելունդներին գտնվող ֆիքսված հարթակների անվտանգության դեմ ուղղված ապօրինի գործողությունների դեմ պայքարի մասին արձանագրություն (2005թ.), (9) Ահաբեկչական ռմբահարումների դեմ պայքարի մասին միջազգային կոնվենցիա (1997թ.) և (10) Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին միջազգային կոնվենցիա (1999թ.),</p> <p>(բ) ցանկացած այլ գործողության, որ նպատակ ունի մահ կամ ծանր մարմնական վնաս պատճառել քաղաքացիական կամ որևէ այլ անձի, ով զինված ընդհարման իրավիճակում ակտիվորեն չի մասնակցում պատերազմական գործողություններին, երբ այդ գործողության նպատակը՝ հաշվի առնելով դրա բնույթը կամ համատեքստը, բնակչությանն ահաբեկելն է կամ կառավարությանը կամ որևէ միջազգային կազմակերպության ստիպելը, որ նրանք կատարեն որոշակի գործողություն կամ ձեռնպահ մնան դրա կատարումից:</p>
<p>Ահաբեկչական կազմակերպություն</p>	<p>Այս տերմինը վերաբերում է ահաբեկիչների ցանկացած խմբի, որը. (ա) որևէ կերպ ուղղակիորեն կամ անուղղակիորեն, ապօրինաբար և դիտավորությամբ կատարում կամ փորձում է կատարել ահաբեկչական գործողություններ, (բ) որպես հանցակից մասնակցում է ահաբեկչական գործողությունների կատարմանը, (գ) կազմակերպում կամ ուղղորդում է այլ անձանց՝ կատարելու ահաբեկչական գործողություններ, կամ (դ) նպաստում է ընդհանուր նպատակով գործող անձանց խմբի կողմից ահաբեկչական գործողությունների կատարմանը, երբ նպատակը տեղի է ունենում միտումնավոր կերպով և նպատակ հետապնդելով օժանդակել ահաբեկչական գործողության կատարմանը, կամ գիտենալով խմբի՝ ահաբեկչական գործողություն կատարելու մտադրության մասին:</p>

Տերմին	Մահմանում
Ահաբեկչության ֆինանսավորմանը կամ փողերի լվացմանն առնչվող	Տե՛ս Հանձնարարական 32-ի Բացատրական մեկնաբանությունը:
Ահաբեկչության ֆինանսավորման հանցագործություն	Այս տերմինին հղումները (բացառությամբ Հանձնարարական 4-ի) վերաբերում են ոչ միայն հիմնական հանցագործությանը կամ հանցագործություններին, այլև հանցակցության տեսակներին:
Ահաբեկչության ֆինանսավորում	Այս տերմինը վերաբերում է ահաբեկչական գործողությունների, ինչպես նաև ահաբեկիչների և ահաբեկչական կազմակերպությունների ֆինանսավորմանը:
Այլ նորմատիվ իրավական ակտ	Տե՛ս «Ֆինանսական հաստատությունների և ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ պահանջների իրավական հիմքերը»
Անդրսահմանային դրամական փոխանցում	Տե՛ս Հանձնարարական 16-ի Բացատրական մեկնաբանությունը:
Անդրսահմանային ֆիզիկական տեղափոխում	Տե՛ս Հանձնարարական 32-ի Բացատրական մեկնաբանությունը:
Անհապաղ	<p>Այս տերմինը նշանակում է Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի կամ համապատասխան Պատժամիջոցների հանձնաժողովի (օրինակ՝ 1267 Հանձնաժողովի, 1988 Հանձնաժողովի, 1718 Պատժամիջոցների հանձնաժողովի կամ 1737 Պատժամիջոցների հանձնաժողովի) կողմից ցուցակման որոշում կայացնելուց հետո, իդեալական տարբերակի դեպքում, հաշված ժամերի ընթացքում:</p> <p>1373 (2001) բանաձևի իմաստով այս տերմինը նշանակում է այն ժամանակ, երբ առկա են ողջամիտ հիմքեր կամ ողջամիտ հիմնավորում՝ կասկածելու կամ կարծելու, որ անձը կամ կազմակերպությունն ահաբեկիչ է, ահաբեկչությունը ֆինանսավորող կամ ահաբեկչական կազմակերպություն: Երկու դեպքում էլ այս տերմինն</p>

Տերմին	Սահմանում
	անհրաժեշտ է մեկնաբանել ահաբեկիչների, ահաբեկչական կազմակերպությունների, ահաբեկչությունը ֆինանսավորողների և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման հետ կապված միջոցների կամ այլ ակտիվների արտահոսքը կամ անհետացումը կանխելու, ինչպես նաև դրանց անարգել հոսքը խափանելու և կասեցնելու ուղղությամբ համաշխարհային մակարդակով ներդաշնակ գործունեություն ծավալելու անհրաժեշտության համատեքստում:
Անհրաժեշտ	Տե՛ս Հանձնարարական 16-ի Բացատրական մեկնաբանությունը:
Առանց մեղադրական դատավճռի բռնագրավում	Այս տերմինը նշանակում է դատական ընթացակարգերի միջոցով բռնագրավում այնպիսի քրեական հանցագործության կապակցությամբ, որի համար քրեական գործով մեղադրական դատավճիռ չի պահանջվում:
Արգելադրում	Այս տերմինը նշանակում է սառեցման մեխանիզմի շրջանակում իրավասու մարմնի կամ դատարանի նախաձեռնած գործողության հիման վրա գույքի փոխանցումը, փոխարկումը, օտարումը կամ շարժն արգելելը: Այնուհանդերձ, ի տարբերություն սառեցման գործողության, արգելադրումը կատարվում է այնպիսի մեխանիզմով, որը իրավասու մարմնին կամ դատարանին թույլ է տալիս իր հսկողության ներքո վերցնել համապատասխան գույքը: Արգելադրված գույքը մնում է արգելադրման պահին դրանց շահառու հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձի (անձանց) սեփականությունը, թեպետ հաճախ իրավասու մարմինը կամ դատարանը ստանձնում է արգելադրված գույքի տիրապետումը, տնօրինումը կամ կառավարումը:
Արժույթ	Այս տերմինը վերաբերում է դրամանիշերին և մետաղադրամներին, որոնք շրջանառում են որպես փոխհաշվարկային միջոց:
Ավտոմատացված պրոցեսինգ	Տե՛ս Հանձնարարական 16-ի Բացատրական մեկնաբանությունը:

Տերմին	Մահմանում
<p>Բռնագրավում</p>	<p>Այս տերմինը, որ համապատասխան դեպքերում ներառում է նաև բռնագանձումը, նշանակում է իրավասու մարմնի կամ դատարանի որոշմամբ միջոցներից կամ այլ ակտիվներից մշտապես զրկելը: Բռնագրավումը կամ բռնագանձումը տեղի է ունենում դատական կամ վարչական ընթացակարգով, որի արդյունքում որոշակի միջոցների կամ այլ ակտիվների նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է պետությանը: Այդ պարագայում բռնագրավման կամ բռնագանձման պահին նշված միջոցների կամ այլ գույքի շահառու հանդիսացող անձը (անձինք) կամ կազմակերպությունը (կազմակերպությունները) սկզբունքորեն զրկվում է (են) բռնագրավված կամ բռնագանձված միջոցների կամ այլ ակտիվների նկատմամբ բոլոր իրավունքներից: Բռնագրավման կամ բռնագանձման որոշումները, որպես կանոն, կապված են քրեական դատավճիռների կամ դատարանի որոշումների հետ, որոնցով ճանաչվել է, որ բռնագրավված կամ բռնագանձված գույքը ստացվել է օրենքի խախտմամբ կամ նախատեսվել է օրենքի խախտմամբ օգտագործվելու համար:</p>
<p>Գործակալ</p>	<p>Հանձնարարականներ 14-ի և 16-ի իմաստով «գործակալ» նշանակում է այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որ փողի կամ արժեքների փոխանցման ծառայություններ է մատուցում ՓԱՓԾ մատուցողի անունից՝ նրա հետ կնքված պայմանագրի շրջանակում կամ նրա ուղղորդմամբ:</p>
<p>Գույք</p>	<p>Այս տերմինը նշանակում է ցանկացած տեսակի՝ նյութական կամ ոչ նյութական, շարժական կամ անշարժ, շոշափելի կամ ոչ շոշափելի ակտիվները, ինչպես նաև դրանց նկատմամբ իրավունքները կամ շահառությունը հաստատող իրավական փաստաթղթերը կամ գործիքները:</p>
<p>Երկիր</p>	<p>ՖԱԹՖ-ի Հանձնարարականներում օգտագործված «երկիր» կամ «երկրներ» տերմինները հավասարապես կիրառելի են տարածքների կամ իրավագերակայությունների նկատմամբ:</p>

Տերմին	Սահմանում
Երրորդ անձինք	Հանձնարարականներ 6-ի և 7-ի իմաստով, այս տերմինը ներառում է ֆինանսական հաստատությունները և ՆՈՖԳՏՄ-ները, բայց չի սահմանափակվում դրանցով: Տե՛ս նաև՝ Հանձնարարական 17-ի Բացատրական մեկնաբանությունը:
Ըստ ներկայացնողի բաժնետոմսեր	Այս տերմինը վերաբերում է այն փոխանցելի գործիքներին, որոնք ըստ ներկայացնողի բաժնետոմսերի հավաստագիրը տիրապետող անձին վերապահում են համապատասխան իրավաբանական անձի նկատմամբ սեփականության իրավունք:
Ըստ ներկայացնողի փոխանցելի գործիքներ	Այս տերմինը վերաբերում է ըստ ներկայացնողի ձև ունեցող դրամական գործիքներին, ինչպիսիք են ճանապարհորդական չեկերը, փոխանցելի գործիքները (այդ թվում՝ չեկերը, հասարակ մուրհակները և դրամական հանձնարարագրերը), որոնք կամ ըստ ներկայացնողի ձև ունեն, կարող են առանց սահմանափակման հաստատվել և մտացածին անունով ստացողի տրամադրվել, կամ որևէ այլ կերպ այնպիսի ձև ունեն, որ դրանց նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է դրանց ֆիզիկական փոխանցման հետ, ինչպես նաև անավարտ գործիքները (այդ թվում՝ չեկերը, հասարակ մուրհակները և դրամական հանձնարարագրերը), որոնք ստորագրված են, սակայն ստացողի անունը բաց է թողնված:
Թիրախային ֆինանսական պատժամիջոցներ	Այս տերմինը վերաբերում է ինչպես ակտիվների սառեցմանը, այնպես էլ ցուցակված անձանց ու կազմակերպություններին ուղղակիորեն կամ անուղղակիորեն միջոցների կամ այլ ակտիվների հասանելիության արգելմանը:
Թղթակցային բանկային հարաբերություններ	Այս տերմինը նշանակում է մի բանկի կողմից («թղթակից բանկ») մեկ այլ բանկի («գործընկեր բանկ») բանկային ծառայությունների մատուցումը: Խոշոր միջազգային բանկերը սովորաբար հանդես են գալիս որպես թղթակից՝ աշխարհի հազարավոր այլ բանկերի համար: Գործընկեր, այսինքն՝ թղթակցային բանկային ծառայություն-

Տերմին	Սահմանում
	<p>ներից օգտվող բանկերը կարող են ստանալ բազմաբնույթ ծառայություններ, այդ թվում՝ կանխիկի կառավարում (օրինակ՝ տարբեր արժույթներով տոկոսաբեր հաշիվների սպասարկում), միջազգային դրամական փոխանցումներ, չեկերի քլիրինգ, միջանցիկ հաշիվների սպասարկում և արտարժույթի փոխարկման ծառայություններ:</p>
<p>Ինքնակարգավորվող մարմին («ԻԿՄ»)</p>	<p>«ԻԿՄ»-ն մարմին է, որը ներկայացնում է որոշակի մասնագիտության տեր անձանց (օրինակ՝ փաստաբանների, նոտարների, իրավաբանական ծառայություններ մատուցող այլ անկախ մասնագետների կամ հաշվապահների) և կազմված է մասնագետ անդամներից, որոշակի դեր է կատարում համապատասխան մասնագիտական որակավորում և մասնագիտական գործունեությամբ զբաղվելու իրավունք ունեցող անձանց վարքագծի կարգավորման մեջ, ինչպես նաև իրականացնում է վերահսկողական կամ մոնիտորինգի որոշակի գործառույթներ: Այսպիսի մարմինները պետք է կիրարկեն որոշակի կանոններ, որոնց նպատակը տվյալ մասնագիտության պրակտիկայով զբաղվող անձանց կողմից էթիկական և բարոյական բարձր ստանդարտների պահպանումն է:</p>
<p>Իրական շահառու</p>	<p>Այս տերմինը վերաբերում է այն ֆիզիկական անձին (անձանց), ով(քեր) հանդիսանում է (են) հաճախորդի⁵⁰ և/կամ այն ֆիզիկական անձի, ում անունից կատարվում է գործարքը, վերջնական սեփականատերը կամ նրա նկատմամբ վերջնական հսկողություն իրականացնողը⁵¹: Տերմինը վերաբերում է նաև այն անձանց, ովքեր վերջնական արդյունավետ հսկողություն են իրականացնում իրավաբանական անձի կամ կազմավորման նկատմամբ:</p>

⁵⁰ Այս սահմանումը պետք է կիրառվի նաև կյանքի ապահովագրության և ներդրումային բնույթի այլ ապահովագրական վկայագրերի շահառուների իրական շահառուների նկատմամբ:

⁵¹ «Վերջնական սեփականատեր», «վերջնական հսկողություն իրականացնող» և «վերջնական արդյունավետ հսկողություն» ձևակերպումները վերաբերում են այն իրավիճակներին, երբ սեփականությունը/հսկողությունը իրացվում է սեփականության կամ հսկողության շղթայական մեխանիզմների, այլ ոչ թե ուղղակի հսկողության եղանակով:

Տերմին	Սահմանում
Իրավաբանական անձինք	Այս տերմինը վերաբերում է ֆիզիկական անձանցից տարբեր բոլոր անձանց, որոնք կարող են որպես հաճախորդ մշտական հարաբերություններ հաստատել ֆինանսական հաստատության հետ կամ այլ կերպ լինել գույքի սեփականատեր: Սրանց թվին կարող են դասվել ընկերությունները, կորպորատիվ մարմինները, հիմնադրամները, հիմնարկները, ընկերակցությունները, կամ միությունները և համանման այլ անձինք:
Իրավաբանական կազմավորումներ	Այս տերմինը վերաբերում է ուղղակի տրաստներին կամ համանման այլ իրավաբանական կազմավորումներին, որոնց օրինակներ են (ՓԼ/ԱՖ դեմ պայքարի իմաստով) «fiducie», «treuhand» և «fideicomiso» տեսակի կազմավորումները:
Իրավասու մարմիններ	Այս տերմինը վերաբերում է բոլոր այն պետական մարմիններին ⁵² , որոնք պատասխանատվություն են կրում փողերի լվացման և/ կամ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում: Մասնավորապես, դրանց թվին են դասվում ՖՀՄ-ն, փողերի լվացման, դրան նախորդող հանցագործությունների և ահաբեկչության ֆինանսավորման գործերով նախաքննություն կատարելու և/կամ քրեական հետապնդում իրականացնելու, հանցավոր ճանապարհով ստացված ակտիվները արգելադրելու/ սառեցնելու և բռնագրավելու գործառույթ կատարող մարմինները, արժույթի և ԸՆՓԳ-ների անդրսահմանային տեղափոխումների վերաբերյալ հաշվետվություններ ստացող մարմինները, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջներին ֆինանսական հաստատությունների և ՆՈՖԳՏՄ-ների համապատասխանությունն ապահովելու նպատակով վերահսկողական կամ մոնիտորինգի գործառույթներ կատարող մարմինները: ԻԿՄ-ները իրավասու մարմին չեն համարվում:
Ծածկույթով վճարում	Տե՛ս Հանձնարարական 16-ի Բացատրական մեկնաբանությունը:

⁵² Սա ներառում է ֆինանսական վերահսկողներին, որոնք ստեղծվել են որպես անկախ ոչ պետական մարմին և ունեն օրենսդրորեն սահմանված լիազորություններ:

Տերմին	Սահմանում
Կեղծ բանկ	<p>Այս տերմինը նշանակում է բանկ, որը ֆիզիկական որևէ ներկայություն չունի իր գրանցման ու լիցենզավորման երկրում և փոխկապակցված չէ ֆինանսական ծառայություններ մատուցող այնպիսի կարգավորվող խմբի հետ, որը ենթարկվում է արդյունավետ համախմբված վերահսկողության:</p> <p>«Ֆիզիկական ներկայություն» նշանակում է երկրի տարածքում իմաստալից առկայություն և կառավարում: Զուտ տեղական գործակալի կամ ցածրաստիճան աշխատողների առկայությունը չի կարող համարվել ֆիզիկական ներկայություն:</p>
Կեղծ բացահայտում	Տե՛ս Հանձնարարական 32-ի Բացատրական մեկնաբանությունը:
Կեղծ հայտարարագիր	Տե՛ս Հանձնարարական 32-ի Բացատրական մեկնաբանությունը:
Համապատասխան մարմիններ	Տե՛ս Հանձնարարական 8-ի Բացատրական մեկնաբանությունը:
Հանցագործությունների նախատեսված տեսակներ	<p>Այս տերմինը նշանակում է.</p> <ul style="list-style-type: none"> ■ մասնակցություն կազմակերպված հանցավոր խմբի և հանցավոր համագործակցության մեջ, ■ ահաբեկչություն, այդ թվում՝ ահաբեկչության ֆինանսավորում, ■ մարդկանց թրաֆիքինգ և միգրանտների ապօրինի տեղափոխում, ■ սեռական շահագործում, այդ թվում՝ երեխաների սեռական շահագործում, ■ թմրադեղերի և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառություն, ■ զենքի ապօրինի շրջանառություն, ■ գողացված և այլ ապրանքների ապօրինի շրջանառություն, ■ կոռուպցիա և կաշառակերություն, ■ խարդախություն,

Տերմին	Մահմանում
	<ul style="list-style-type: none"> ■ արժույթի կեղծում, ■ ապրանքների կեղծում և ապրանքահեղուկություն, ■ բնապահպանական հանցագործություններ, ■ սպանություն, ծանր մարմնական վնասվածք, ■ առևանգում, ազատության ապօրինի սահմանափակում և պատանդներ վերցնել, ■ կողոպուտ կամ գողություն, ■ մաքսանենգություն (այդ թվում՝ մաքսային և ակցիզային վճարների ու տուրքերի հետ կապված), ■ հարկային հանցագործություններ (ուղղակի և անուղղակի հարկերի հետ կապված) ■ շոքում, ■ փաստաթղթերի կեղծում, ■ ծովահենություն, և ■ ինսայդերական գործունեություն և շուկայի չարաշահում: <p>Թվարկված խմբերից յուրաքանչյուրի շրջանակում որպես նախորդող հանցագործություն նախատեսվող հանցատեսակները որոշելիս յուրաքանչյուր երկիր կարող է իր ներպետական օրենսդրության համաձայն որոշել, թե ինչպես է սահմանում այդ հանցագործությունները և դրանց որոշակի տարրերի բնույթը, որպեսզի դրանք համարվեն ծանր հանցագործություններ:</p>
<p>Հանցավոր գործունեություն</p>	<p>Այս տերմինը վերաբերում է. (ա) բոլոր հանցավոր արարքներին, որոնք տվյալ երկրում համարվում են փողերի լվացմանը նախորդող հանցագործություններ, կամ (բ) առնվազն այն հանցագործություններին, որոնք Հանձնարարական 3-ի պահանջների համաձայն համարվում են նախորդող հանցագործություններ:</p>
<p>Հանցավոր ճանապարհով ստացված գույք</p>	<p>Այս տերմինը վերաբերում է ցանկացած գույքի, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացվել կամ ձեռք է բերվել հանցագործության կատարման արդյունքում:</p>

Տերմին	Սահմանում
Հաշիվներ	Այս տերմինը վերաբերում է նաև ֆինանսական հաստատությունների և նրանց հաճախորդների միջև համանման այլ գործարար հարաբերություններին:
Հիմնարար սկզբունքներ	Այս տերմինը վերաբերում է Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի հրապարակած <i>«Արդյունավետ բանկային վերահսկողության հիմնարար սկզբունքներին»</i> , Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպության հրապարակած <i>«Արժեթղթերի կարգավորման նպատակներին և սկզբունքներին»</i> , և Ապահովագրության վերահսկողների միջազգային ասոցիացիայի հրապարակած <i>«Ապահովագրության վերահսկողության սկզբունքներին»</i> :
Միակողմանի	Այս տերմինը նշանակում է գործողությունների ձեռնարկում առանց ներգրավված կողմի նախնական ծանուցման և մասնակցության:
Միջազգային կազմակերպություններ	Միջազգային կազմակերպություններն իրենց անդամ երկրների միջև միջազգային պայմանագրի կարգավիճակ ունեցող պաշտոնական քաղաքական համաձայնությունների հիման վրա ստեղծված կազմակերպություններ են. դրանց գոյությունն օրենքով ճանաչվում է անդամ երկրներում, և իրենց գտնվելու երկրներում դրանք ռեզիդենտ կառուցվածքային միավորներ չեն համարվում: Միջազգային կազմակերպություններ են, օրինակ, Միավորված ազգերի կազմակերպությունը և դրա հետ կապված` Ծովագնացության միջազգային կազմակերպությունը, տարածաշրջանային միջազգային կազմակերպությունները, ինչպիսիք են Եվրոպայի խորհուրդը, Եվրոմիության կառույցները, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը, Ամերիկյան երկրների կազմակերպությունը, միջազգային ռազմական կազմակերպությունները, ինչպիսիք է Հյուսիս-ատլանտյան պայմանագրի կազմակերպությունը, և տնտեսական կազմակերպությունները, ինչպիսիք են Առևտրի համաշխարհային կազմակերպությունը կամ Հարավ-արևելյան Ասիայի պետությունների ասոցիացիան:

Տերմին	Սահմանում
Միջանցիկ հաշիվներ	Տե՛ս Հանձնարարական 16-ի Բացատրական մեկնաբանությունը:
Միջնորդ ֆինանսական հաստատություն	Տե՛ս Հանձնարարական 16-ի Բացատրական մեկնաբանությունը:
Միջոցներ	Այս տերմինը վերաբերում է ցանկացած տեսակի՝ նյութական կամ ոչ նյութական, շոշափելի կամ ոչ շոշափելի, շարժական կամ անշարժ, ցանկացած եղանակով ձեռք բերված ակտիվներին, ինչպես նաև դրանց նկատմամբ իրավունքները կամ շահառությունը ցանկացած, այդ թվում՝ էլեկտրոնային կամ թվային եղանակով հաստատող իրավական փաստաթղթերին կամ գործիքներին:
Միջոցներ կամ այլ ակտիվներ	Այս տերմինը նշանակում է ցանկացած ակտիվներ, որոնց ոչ սպառիչ ցանկը ներառում է ֆինանսական ակտիվները, տնտեսական ռեսուրսները, ցանկացած տեսակի՝ շոշափելի կամ ոչ շոշափելի, շարժական կամ անշարժ, ցանկացած եղանակով ձեռք բերված գույքը, ինչպես նաև այդպիսի միջոցների կամ այլ ակտիվների նկատմամբ իրավունքները կամ շահառությունը ցանկացած, այդ թվում՝ էլեկտրոնային կամ թվային եղանակով հաստատող իրավական փաստաթղթերը կամ գործիքները, որոնց ոչ սպառիչ ցանկը ներառում է բանկային վարկերը, ճանապարհորդական չեկերը, բանկային չեկերը, դրամական հանձնարարագրերը, բաժնետոմսերը, արժեթղթերը, պարտատոմսերը, մուրհակները կամ ակրեդիտիվները, ինչպես նաև այդ միջոցներից կամ այլ ակտիվներից ստացվող կամ դրանց նկատմամբ հաշվեգրվող կամ դրանցից ձևավորվող տոկոսները, շահաբաժինները կամ այլ եկամուտը կամ արժեքը:
Նախատեսված շեմը գերազանցող գումարով դրամական փոխանցում	Տե՛ս Հանձնարարական 16-ի Բացատրական մեկնաբանությունը:

Տերմին	Սահմանում
<p>Նախատեսված ոչ ֆինանսական գործունեության տեսակներ և մասնագիտություններ</p>	<p>Այս տերմինը նշանակում է.</p> <p>ա) խաղատներ⁵³,</p> <p>բ) անշարժ գույքի գործակալներ,</p> <p>գ) թանկարժեք մետաղների դիլերներ,</p> <p>դ) թանկարժեք քարերի դիլերներ,</p> <p>ե) փաստաբաններ, նոտարներ, իրավաբանական ծառայություններ մատուցող այլ անկախ մասնագետներ և հաշվապահներ. սա վերաբերում է անհատական պրակտիկայով զբաղվող անձանց, գործընկերներին կամ մասնագիտացած ընկերություններում աշխատող մասնագետներին և չի վերաբերում այն «ներքին» աշխատողներին, ովքեր գործունեության այլ տեսակներով զբաղվող կազմակերպությունների աշխատակիցներ են, ինչպես նաև այն մասնագետներին, ովքեր աշխատում են պետական մարմիններում, և ում վրա արդեն իսկ տարածվում են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջները,</p> <p>զ) տրաստային և ընկերությունների ներկայացման ծառայություններ մատուցողներ՝ ներառյալ բոլոր այն անձինք և կազմակերպությունները, որոնք սույն Հանձնարարականների այլ դրույթներով նախատեսված չեն և, որպես ձեռնարկատիրական գործունեություն, երրորդ անձանց մատուցում են հետևյալ տեսակի ծառայությունները.</p> <ul style="list-style-type: none"> ■ իրավաբանական անձանց կազմավորման գործակալի դերում հանդես գալը, ■ ընկերության տնօրենի կամ քարտուղարի, ընկերակցության կազմի մեջ մտնող գործընկերոջ կամ, այլ իրավաբանական անձի պարագայում, համանման որևէ այլ դերում հանդես գալը (կամ այդ դերում մեկ այլ անձի հանդես գալը կազմակերպելը),

⁵³ ՖԱԹՖ-ի Հանձնարարականներում խաղատներին հղումները վերաբերում են նաև ինտերնետային և նավերի վրա գործող խաղատներին:

Տերմին	Սահմանում
	<ul style="list-style-type: none"> ■ ընկերությանը, ընկերակցությանը կամ որևէ այլ իրավաբանական անձի կամ կազմավորման գրանցված գրասենյակ, բիզնես հասցե կամ գործունեության վայր, նամակագրության կամ վարչական հասցե տրամադրելը, ■ ուղղակի տրաստի կազմում որպես տրաստային կառավարիչ հանդես գալը (կամ այդ դերում մեկ այլ անձի հանդես գալը կազմակերպելը) կամ մեկ այլ տեսակի իրավաբանական կազմավորման համար դրան համարժեք գործառույթ կատարելը, ■ մեկ այլ անձի համար որպես անվանական բաժնետեր հանդես գալը (կամ այդ դերում մեկ այլ անձի հանդես գալը կազմակերպելը):
<p>Ներպետական դրամական փոխանցում</p>	<p>Տե՛ս Հանձնարարական 16-ի Բացատրական մեկնաբանությունը:</p>
<p>Ներպետական օրենսդրության հիմնարար սկզբունքներ</p>	<p>Այս տերմինը վերաբերում է այն հիմնարար իրավական սկզբունքներին, որոնց վրա հենվում է ազգային իրավական համակարգը, և որոնք սահմանում են այն շրջանակը, որում ընդունվում են ազգային օրենքները և կիրարկվում են լիազորությունները: Այդ հիմնարար սկզբունքները սովորաբար արտացոլված են ազգային Սահմանադրության կամ համանման այլ փաստաթղթի մեջ, կամ ազգային օրենքների կապակցությամբ պարտադիր մեկնաբանություններ տալու կամ վճիռներ կայացնելու իրավասությամբ օժտված բարձրագույն աստիճանի դատարանի որոշումներում: Թեև երկրների միջև այս առումով կան տարբերություններ, հիմնարար սկզբունքների օրինակներ են արդար դատաքննության իրավունքը, անմեղության կանխավարկածը և անձի՝ դատարաններից արդյունավետ պաշտպանություն ստանալու իրավունքը:</p>
<p>Նույնականացման տվյալներ</p>	<p>Այս տերմինը վերաբերում է հավաստի, անկախ աղբյուրից ձեռք բերված փաստաթղթերին, տվյալներին կամ տեղեկություններին:</p>

Տերմին	Սահմանում
Շահառու	<p>ՖԱԹՖ-ի Հանձնարարականներում «շահառու» տերմինի նշանակությունը կախված է օգտագործման համատեքստից.</p> <ul style="list-style-type: none"> ■ Տրաստներին առնչվող օրենքների իմաստով, շահառուն այն անձը կամ անձինք են, ովքեր իրավունք ունեն օգտվել տրաստային համաձայնագրի օգուտներից: Շահառուն կարող է լինել ֆիզիկական կամ իրավաբանական անձ կամ կազմավորում: Բոլոր տրաստները (բացառությամբ բարեգործական տրաստների և օրենքով թույլատրված ոչ բարեգործական տրաստների) պետք է ունենան բնորոշվող շահառուներ: Թեև տրաստները միշտ պետք է ունենան ի վերջո բնորոշվող շահառուներ, հնարավոր են դեպքեր, երբ տրաստը տվյալ պահին ունի ոչ թե հստակ բնորոշվող շահառուներ, այլ միայն իրավունքի օբյեկտներ՝ այնքան ժամանակ, մինչև համապատասխան անձը սահմանված ժամկետի (այսպես կոչված «կուտակային ժամկետի») ավարտին ձեռք կրերի եկամուտների կամ կապիտալի նկատմամբ շահառուի իրավունքներ: Որպես կանոն, այդ ժամկետը սահմանվում է տրաստի գոյության ժամանակահատվածին հավասար և սովորաբար տրաստային կառավարման պայմանագրում նշվում է որպես տրաստի ժամանակահատված: ■ Կյանքի ապահովագրության և ներդրումային բնույթի այլ ապահովագրական վկայագրերի իմաստով, շահառուն այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը կամ կազմավորումը կամ անձանց դասն է, ում պետք է ապահովագրական պատահարը տեղի ունենալու ժամանակ/ դեպքում վճարվի վկայագրից բխող ապահովագրական հատուցումը: <p>Տե՛ս նաև Հանձնարարականներ 8-ի և 16-ի Բացատրական մեկնաբանությունները:</p>

Տերմին	Սահմանում
Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություններ	Տե՛ս Հանձնարարական 8-ի Բացատրական մեկնաբանությունը:
Ողջամիտ միջոցառումներ	Այս տերմինը նշանակում է պատշաճ միջոցառումներ, որոնք համահունչ են փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերին:
Պետք է	ՖԱԹՖ-ի Հանձնարարականների պահանջներին համապատասխանությունը գնահատելու իմաստով «պետք է (են)» բառերն ունեն նույն իմաստը, ինչ «պարտավոր է (են)» բառերը:
Ռիսկ	Այս տերմինին բոլոր հղումները վերաբերում են փողերի լվացման և/կամ ահաբեկչության ֆինանսավորման ռիսկին: Տերմինը պետք է հասկանալ Հանձնարարական 1-ի Բացատրական մեկնաբանության համատեքստում:
Սառեցում	<p>Բռնագրավման և նախնական միջոցների կիրառության (օրինակ՝ Հանձնարարականներ 4-ի, 32-ի և 38-ի) համատեքստում, այս տերմինը նշանակում է սառեցման մեխանիզմի շրջանակում իրավասու մարմնի կամ դատարանի նախաձեռնած գործողության հիման վրա գույքի, սարքավորումների կամ այլ գործիքների փոխանցումը, փոխարկումը, օտարումը կամ շարժն արգելելը՝ դրա համար սահմանված ժամկետով կամ մինչև իրավասու մարմնի կողմից բռնագրավման կամ բռնագանձման մասին որոշում կայացնելը:</p> <p>Թիրախային ֆինանսական պատժամիջոցների իմպլեմենտացման վերաբերյալ Հանձնարարականներ 6-ի և 7-ի համատեքստում, այս տերմինը նշանակում է Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի կամ, այդ խորհրդի կիրառելի բանաձևերին համապատասխան կերպով, իրավասու մարմնի կամ դատարանի նախաձեռնած գործողության հիման վրա և դրա համար սահմանված ժամկետով ցուցակված անձանց կամ կազմակերպություններին պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող միջոցների կամ այլ</p>

Տերմին	Սահմանում
	<p>ակտիվների փոխանցումը, փոխարկումը, օտարումը կամ շարժն արգելելը:</p> <p>Ցանկացած դեպքում սառեցված գույքը, սարքավորումները, գործիքները, միջոցները կամ այլ ակտիվները մնում են սառեցման պահին դրանց շահառու հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձի (անձանց) սեփականությունը և կարող են կառավարվել երրորդ անձանց կողմից կամ նշված ֆիզիկական կամ իրավաբանական անձի (անձանց)՝ նախքան սառեցման մեխանիզմի շրջանակում համապատասխան գործընթացի կիրառումը սահմանած այլ կազմակերպական եղանակով, կամ ազգային օրենսդրության այլ դրույթներին համապատասխան կերպով: Սառեցման մեխանիզմի շրջանակում երկիրը կարող է ստանձնել սառեցված գույքի, սարքավորումների, գործիքների, միջոցների կամ այլ ակտիվների նկատմամբ հսկողությունը՝ դրանց արտահոսքը կանխելու համար:</p>
Մերիական վճարում	Տե՛ս Հանձնարարական 16-ի Բացատրական մեկնաբանությունը:
Ստացող ֆինանսական հաստատություն	Տե՛ս Հանձնարարական 16-ի Բացատրական մեկնաբանությունը:
Ստույգ	Տե՛ս Հանձնարարական 16-ի Բացատրական մեկնաբանությունը:
Վստահանալ	Այն դեպքերում, երբ խոսքը ֆինանսական հաստատության կողմից ինչ-որ հարցում վստահանալու մասին է, հաստատությունը պետք է կարողանա իրավասու մարմինների մոտ հիմնավորել տվյալ իրավիճակին իր գնահատականը:
Վերահսկողներ	Այս տերմինը վերաբերում է նշանակված իրավասու մարմիններին կամ ոչ պետական մարմիններին, որոնք պատասխանատու են ֆինանսական հաստատությունների (« <i>ֆինանսական վերահսկողներ</i> » ⁵⁴) կամ ՆՈՖԳՏՄ-

⁵⁴ Այդ թվում՝ Հիմնարար սկզբունքների կիրառության դաշտում գործող ֆինանսական հաստատությունների վերահսկողները, որոնք վերահսկողական գործառնությունները առնչվում են ՖԱԹՖ-ի Հանձնարարականների իմպլեմենտացմանը:

Տերմին	Սահմանում
	<p>ների կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի պահանջների կատարումն ապահովելու համար: Ոչ պետական մարմինները (որոնց թվում կարող են լինել ԻԿՄ-ների որոշ տեսակներ) պետք է օժտված լինեն ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջների կատարման տեսանկյունից ֆինանսական հաստատություններին կամ ՆՈՖԳՏՄ-ներին վերահսկելու և պատժամիջոցներ կիրառելու լիազորությամբ: Նշված ոչ պետական մարմինները պետք է նաև իրենց գործառույթները կատարելու համար օրենքով լիազորված լինեն և որևէ իրավասու մարմնի կողմից վերահսկվեն այդ գործառնությունների կատարման առնչությամբ:</p>
<p>Տրաստային կառավարիչ</p>	<p>«Տրաստ» և «տրաստային կառավարիչ» տերմինները սահմանվում են «Տրաստների և դրանց ճանաչման վերաբերյալ օրենքների մասին» Հաագայի կոնվենցիայի 2-րդ հոդվածում⁵⁵ նկարագրվածին համապատասխան:</p> <p>Տրաստային կառավարիչը կարող է լինել պրոֆեսիոնալ (օրինակ, կախված տվյալ երկրի օրենսդրությունից, փաստաբան կամ տրաստային ընկերություն), եթե նա վարձատրվում է տրաստային կառավարչի գործը կատարելու համար, կամ ոչ պրոֆեսիոնալ (օրինակ՝ ընտանիքի անունից հանդես եկող և վարձատրություն չստացող անձը):</p>

⁵⁵ Հաագայի կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանվում է հետևյալը.
 «Մույն կոնվենցիայի իմաստով, «տրաստ» տերմինը վերաբերում է որոշակի անձի, այն է՝ տրաստի հիմնադրի կողմից կյանքի օրոք կամ հետմահու ստեղծված իրավահարաբերություններին, երբ ակտիվները հանձնվում են տրաստային կառավարչի հայեցողությանը հօգուտ որևէ շահառուի կամ որևէ սահմանված նպատակի:

Տրաստն ունի հետևյալ բնութագրերը.

- ա) ակտիվները պահպանվում են առանձին հիմնադրամում և տրաստային կառավարչի սեփականության մասը չեն կազմում,
- բ) տրաստային ակտիվների սեփականության իրավունքը գրանցված է տրաստային կառավարչի կամ նրա անունից հանդես եկող այլ անձի անվամբ,
- գ) տրաստային կառավարչին վերապահված է տրաստի պայմաններին կամ օրենքով նրա վրա դրված հատուկ պարտականություններին համապատասխան տրաստի ակտիվները կառավարելու, տնօրինելու կամ օտարելու լիազորությունն ու պարտականությունը, որոնց համար նա պատասխանատվություն է կրում:

Տրաստի հիմնադրի կողմից որոշակի իրավունքների կամ լիազորությունների սահմանափակումը, ինչպես նաև այն փաստը, որ տրաստային կառավարիչն ինքը կարող է որպես շահառու իրավունքներ ունենալ, ոչ անպայման են հակասում տրաստի գոյության փաստին»:

Տերմին	Մահմանում
<p>Տրաստի հիմնադիր</p>	<p>Այս տերմինը վերաբերում է այն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, որոնք իրենց ակտիվների նկատմամբ սեփականության իրավունքը գույքի տրաստային կառավարման պայմանագրի կամ համանման համաձայնության միջոցով փոխանցում են տրաստային կառավարչին:</p>
<p>Ցուցակված անձ կամ կազմակերպություն</p>	<p>Այս տերմինը վերաբերում է.</p> <ul style="list-style-type: none"> (ա) անձանց, խմբերին, խմբավորումներին և կազմակերպություններին, որոնք ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1267 (1999) բանաձևի ներքո համապատասխան հանձնաժողովի (1267 Հանձնաժողովի) կողմից ցուցակվել են որպես Ալ Քաիդայի հետ փոխկապակցված անձինք, կամ Ալ Քաիդայի հետ փոխկապակցված կազմակերպություններին և այլ խմբերին ու խմբավորումներին, (բ) անձանց, խմբերին, խմբավորումներին և կազմակերպություններին, որոնք ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1988 (2011) բանաձևի ներքո համապատասխան հանձնաժողովի (1988 Հանձնաժողովի) կողմից ցուցակվել են որպես Թալիբանի հետ փոխկապակցված և Աֆղանստանի խաղաղության, կայունության ու անվտանգության համար սպառնալիք ներկայացնող անձինք, կամ Թալիբանի հետ փոխկապակցված կազմակերպություններին և այլ խմբերին ու խմբավորումներին, (գ) ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1373 (2001) բանաձևի ներքո երկրների կամ վերազգային իրավագերակայության կողմից ցուցակված բոլոր ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ կազմակերպություններին, (դ) ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1718 (2006) բանաձևի և դրա հաջորդող բանաձևերի ներքո Անվտանգության խորհրդի կողմից համապատասխան բանաձևերի հավելվածներով թիրախային ֆինանսական պատժամիջոցների կիրառության նպատակով ցուցակված անձանց, խմբերին, խմբավորումներին և կազմակերպություններին:

Տերմին	Սահմանում
	<p>ցակված, կամ ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1718 (2006) բանաձևի ներքո <i>«Անվտանգության խորհրդի 1718 (2006) բանաձևի ներքո ստեղծված հանձնաժողովի»</i> (1718 Հանձնաժողովի) կողմից ցուցակված բոլոր ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ կազմակերպություններին, և</p> <p>(ե) ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1737 (2006) բանաձևի և դրա հաջորդող բանաձևերի ներքո Անվտանգության խորհրդի կողմից համապատասխան բանաձևերի հավելվածներով թիրախային ֆինանսական պատժամիջոցների կիրառության նպատակով ցուցակված, կամ ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1737 (2006) բանաձևի և դրա հաջորդող բանաձևերի ներքո <i>«Անվտանգության խորհրդի 1737 (2006) բանաձևի ներքո ստեղծված հանձնաժողովի»</i> (1737 Հանձնաժողովի) կողմից ցուցակված բոլոր ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ կազմակերպություններին:</p>
<p>Ցուցակում</p>	<p>Այս տերմինը վերաբերում է այն անձանց⁵⁶ կամ կազմակերպությունների նույնականացմանը, որոնք ենթակա են թիրախային ֆինանսական պատժամիջոցների համաձայն.</p> <ul style="list-style-type: none"> ■ ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1267 (1999) բանաձևի և դրա հաջորդող բանաձևերի, ■ ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1373 (2001) բանաձևի, այդ թվում՝ համապատասխան պատժամիջոցները անձի կամ կազմակերպության նկատմամբ կիրառելու և դրա մասին հանրությանն իրազեկելու որոշումների մասով, ■ ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1718 (2006) բանաձևի և դրա հաջորդող բանաձևերի, ■ ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1737 (2006) բանաձևի և դրա հաջորդող բանաձևերի, և

⁵⁶ Ֆիզիկական կամ իրավաբանական:

Տերմին	Սահմանում
	<ul style="list-style-type: none"> ՄԱԿ Անվտանգության խորհրդի կողմից ապագայում ընդունվելիք ցանկացած բանաձևի, որով կսահմանվեն թիրախային ֆինանսական պատժամիջոցներ զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման համար:
Ուղղակի տրաստ	<p>Այս տերմինը վերաբերում է տրաստին, որն անմիջականորեն ստեղծվել է դրա հիմնադրի կողմից, որպես կանոն՝ որոշակի փաստաթղթի տեսքով, օրինակ՝ տրաստային կառավարման պայմանագրով: Ուղղակի տրաստը տարբերվում է այն տրաստից, որն ստեղծվում է օրենքի ուժով (օրինակ՝ պարտադրված տրաստ), այլ ոչ թե տրաստ կամ համանման այլ իրավաբանական կազմավորում ստեղծելու վերաբերյալ հիմնադրի անմիջական մտադրության կամ որոշման արդյունքում:</p>
Ուղարկող ֆինանսական հաստատություն	Տե՛ս Հանձնարարական 16-ի Բացատրական մեկնաբանությունը:
Փաթեթային փոխանցում	Տե՛ս Հանձնարարական 16-ի Բացատրական մեկնաբանությունը:
Փոխանցման եզակի հղման համար	Տե՛ս Հանձնարարական 16-ի Բացատրական մեկնաբանությունը:
Փոխանցում կատարող	Տե՛ս Հանձնարարական 16-ի Բացատրական մեկնաբանությունը:
Փոխկապակցված ՇՄՆԶԿ-ներ	Տե՛ս Հանձնարարական 8-ի Բացատրական մեկնաբանությունը:
Փողի կամ արժեքների փոխանցման ծառայություն	<p>Այս տերմինը նշանակում է ֆինանսական ծառայություն, որը մի վայրում ընդունում է կանխիկ, չեկեր, այլ դրամական գործիքներ կամ այլ արժեքի կրիչներ և համարժեք գումարը կանխիկով կամ այլ տեսքով վճարում է ստացողին մեկ այլ վայրում՝ կապի, հաղորդագրության, փոխանցման կամ քլիրինգային ցանցի միջոցով, որին միացած է ՓԱՓԾ մատուցողը: Նման ծառայությունների շրջանակում իրականացվող գործարքներով վերջնական վճարումը երրորդ անձին կարող է հասնել մեկ կամ մի</p>

Տերմին	Սահմանում
	<p>քանի միջնորդների միջոցով: Այսպիսի ծառայություններ մատուցող համակարգերը հաճախ կապված են լինում որոշակի աշխարհագրական տարածքների հետ, ինչի պատճառով էլ դրանք նկարագրվում են տարբեր հատուկ անվանումներով, ինչպիսիք են «hawala», «hundi» և «fei-chien»:</p>
<p>Փողերի լվացման հանցագործություն</p>	<p>Այս տերմինին հղումները (բացառությամբ Հանձնարարական 3-ի) վերաբերում են ոչ միայն հիմնական հանցագործությանը կամ հանցագործություններին, այլև հանցակցության տեսակներին:</p>
<p>Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք (ՔԱՈՒԱ)</p>	<p><i>Օտարերկրյա ՔԱՈՒԱ-ներն</i> այն անհատներն են, ում ներկայում կամ անցյալում վստահվել են առանցքային հանրային գործառույթներ այլ երկրում, օրինակ՝ երկրի կամ կառավարության ղեկավարները, բարձրաստիճան քաղաքական գործիչները, կառավարության, դատական իշխանության կամ բանակի բարձրաստիճան պաշտոնյաները, պետական կորպորացիաների բարձրաստիճան գործադիր ղեկավարները, քաղաքական կուսակցությունների կարևոր պաշտոնատար անձինք:</p> <p><i>Տեղական ՔԱՈՒԱ-ներն</i> այն անհատներն են, ում ներկայում կամ անցյալում վստահվել են առանցքային հանրային գործառույթներ տվյալ երկրում, օրինակ՝ երկրի կամ կառավարության ղեկավարները, բարձրաստիճան քաղաքական գործիչները, կառավարության, դատական իշխանության կամ բանակի բարձրաստիճան պաշտոնյաները, պետական կորպորացիաների բարձրաստիճան գործադիր ղեկավարները, քաղաքական կուսակցությունների կարևոր պաշտոնատար անձինք:</p> <p><i>Անձինք, ում ներկայում կամ անցյալում վստահվել են առանցքային գործառույթներ միջազգային կազմակերպություններում</i>, այդ կազմակերպությունների ավագ ղեկավարության անդամներն են, այսինքն՝ տնօրենները, տնօրենի տեղակալները և խորհրդի անդամները կամ համարժեք գործառույթ իրականացնողները:</p> <p>ՔԱՈՒԱ-ների սահմանումը չի ներառում վերոհիշյալ խմբերի միջին կամ կրտսեր պաշտոններ զբաղեցնող անհատներին:</p>

Տերմին	Սահմանում
Օտարերկրյա գործընկերներ	Այս տերմինը վերաբերում է մեկ այլ երկրի իրավասու մարմիններին, որոնք կատարում են համագործակցության տվյալ ոլորտի գծով համանման պարտականություններ կամ գործառույթներ, անգամ եթե այդ օտարերկրյա իրավասու մարմինները տարբեր բնույթ կամ կարգավիճակ ունեն (օրինակ՝ որևէ երկրում ֆինանսական հատվածի ՓԼ/ԱՖ դեմ պայքարին առնչվող վերահսկողությունը կարող է իրականացվել նաև պրուդենցիալ վերահսկողության պարտականություններ կատարող վերահսկողական մարմնի կամ վերահսկողական գործառույթներ իրականացնող ՖՀՄ-ի կողմից):
Օրենք	Տե՛ս «Ֆինանսական հաստատությունների և ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ պահանջների իրավական հիմքերը»
Ֆինանսական խումբ	Այս տերմինը վերաբերում է որևէ խմբի, որի կազմում ներառված է մայր կազմակերպություն կամ որևէ այլ տեսակի իրավաբանական անձ, որը Հիմնարար սկզբունքներով սահմանված խմբային վերահսկողության նպատակով հսկողական և համակարգման գործառույթ է իրականացնում խմբի մնացած անդամների, այդ թվում՝ մասնաճյուղերի և/ կամ դուստր ձեռնարկությունների նկատմամբ, որոնք խմբի մակարդակով ենթակա են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի քաղաքականությունների և ընթացակարգերի:
Ֆինանսական հաստատություններ	<p>Այս տերմինը նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը, որպես ձեռնարկատիրական գործունեություն, հաճախորդների համար կամ նրանց անունից իրականացնում է գործունեության կամ գործառնությունների հետևյալ տեսակներից մեկը կամ մի քանիսը.</p> <ol style="list-style-type: none"> 1. ավանդների և վերադարձման ենթակա այլ միջոցների ընդունում հանրությունից⁵⁷, 2. վարկավորում⁵⁸, 3. ֆինանսական լիզինգ⁵⁹,

⁵⁷ Ներառում է նաև անհատական բանկային ծառայությունների մատուցումը:

⁵⁸ Ներառում է, ի թիվս այլ տեսակների. սպառողական վարկերը, հիփոթեքային վարկերը, ֆակտորինգը՝ հետադարձ պահանջի իրավունքով կամ առանց դրա, ինչպես նաև առևտրային գործարքների ֆինանսավորումը (այդ թվում՝ բռնագանձումը):

⁵⁹ Չի ներառում սպառողական ապրանքների մատով իրականացվող ֆինանսական լիզինգը:

Տերմին	Սահմանում
	<p>4. փողի կամ արժեքների փոխանցում⁶⁰,</p> <p>5. վճարային միջոցների (օրինակ՝ կրեդիտային և դեբետային քարտեր, չեկեր, ճանապարհորդական չեկեր, դրամական հանձնարարագրեր և բանկային չեկեր, էլեկտրոնային փող) թողարկում և կառավարում,</p> <p>6. ֆինանսական երաշխիքներ և հանձնառություններ,</p> <p>7. առևտուր, որի առարկան են.</p> <p>(ա) փողի շուկայի գործիքները (չեկեր, մուրհակներ, ավանդային սերտիֆիկատներ, ածանցյալներ և այլն),</p> <p>(բ) արտարժույթը,</p> <p>(գ) արտարժույթային, տոկոսային և ինդեքսային գործիքները,</p> <p>(դ) փոխանցելի արժեթղթերը,</p> <p>(ե) ապրանքային ֆյուչերսները,</p> <p>8. մասնակցություն արժեթղթերի թողարկմանը և դրան առնչվող ֆինանսական ծառայությունների մատուցմանը,</p> <p>9. անհատական և կոլեկտիվ պորտֆելների կառավարում,</p> <p>10. այլ անձանց անունից կանխիկի կամ իրացվելի արժեթղթերի անվտանգ պահպանում և կառավարում,</p> <p>11. այլ անձանց անունից միջոցների կամ փողի որևէ այլ կերպ ներդրում, տնօրինում կամ կառավարում,</p> <p>12. կյանքի ապահովագրության և ներդրումային բնույթի այլ ապահովագրության վկայագրերի թողարկում և տեղաբաշխում,⁶¹</p> <p>13. փողի և արժույթի փոխարկում:</p>

⁶⁰ Չի տարածվում այն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վրա, որոնք ֆինանսական հաստատություններին տրամադրում են բացառապես միջոցների փոխանցման համար անհրաժեշտ՝ հաղորդագրությունների փոխանակման կամ օժանդակ այլ համակարգեր: Տե՛ս Հանձնարարական 16-ի Բացատրական մեկնաբանությունները:

⁶¹ Վերաբերում է ինչպես ապահովագրական գործ կազմակերպողներին, այնպես էլ ապահովագրական միջնորդներին (գործակալներ և բրոքերներ):

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՓԼ	Փողերի լվացում
ԱՖ	Ահաբեկչության ֆինանսավորում
ԸՆՓԳ	Ըստ ներկայացնողի փոխանցելի գործիք
ՀՊՈՒ	Հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն
ՆՈՖԳՏՍ	Նախատեսված ոչ ֆինանսական գործունեության տեսակներ և մասնագիտություններ
ՖԱԹՖ	Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբ
ՖՀՄ	Ֆինանսական հետախուզության մարմին
ԱԱ	Անմիջական արդյունք
ԲՄ	Բացատրական մեկնաբանություն
ՓՀ	Փոխըմբռնման հուշագիր
ՓԱՓԾ	Փողի կամ արժեքների փոխանցման ծառայություն(ներ)
ՇՍՆՉԿ	Շահույթի ստացման նպատակ չհետապնդող կազմակերպություն
Պալերմոյի կոնվենցիա	Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին Միավորված ազգերի կազմակերպության 2000թ. կոնվենցիա
ՔԱՈՒԱ	Քաղաքական ազդեցություն ունեցող անձ
Հ.	Հանձնարարական
ՌՀՄ	Ռիսկահեռ մոտեցում
ԻԿՄ	Ինքնակարգավորվող մարմին
ԿԳՀ	Կասկածելի գործարքի մասին հաշվետվություն
ՏԸՆԾՄ	Տրաստային և ընկերությունների ներկայացման ծառայություններ մատուցող
Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիա	Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին Միավորված ազգերի կազմակերպության 1999թ. միջազգային կոնվենցիա
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԿ ԱԽ Բանաձև	Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի Բանաձև
Վիեննայի կոնվենցիա	Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին Միավորված ազգերի կազմակերպության 1988թ. Կոնվենցիա

ՀԱՎԵԼՎԱԾ I. ՖԱԹՖ-Ի ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԸ

- Հաշվետու ֆինանսական հաստատություններին և այլ անձանց հետադարձ արձագանքի տրամադրման լավագույն փորձի ուղեցույց (1998թ. հունիս)
- Ահաբեկչության ֆինանսավորումը հայտնաբերելու ուղեցույց ֆինանսական հաստատությունների համար (2002թ. ապրիլ)
- Միջազգային լավագույն փորձ. շահույթի ստացման նպատակ չհետապնդող կազմակերպությունների չարաշահման դեմ պայքարը (2002թ. հոկտեմբեր)
- Միջազգային լավագույն փորձ. փոխանցումների այլընտրանքային համակարգերի չարաշահման դեմ պայքարը (2003թ. հունիս)
- Զանգվածային ոչնչացման զենքի տարածման դեմ պայքարի վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի բանաձևերի ֆինանսական դրույթների կատարումը (2007թ. հունիս)
- Ռիսկահենք մոտեցման վերաբերյալ ուղեցույց (2007թ. հունիս – 2009թ. հոկտեմբեր), թվով ինը փաստաթուղթ, այդ թվում՝ ՌՀՄ ուղեցույցներ հետևյալ տեսակի հաշվետու անձանց համար.
 - Ֆինանսական հատված
 - Անշարժ գույքի գործակալներ
 - Հաշվապահներ
 - Տրաստային և ընկերությունների ներկայացման ծառայություններ մատուցողներ
 - Թանկարժեք մետաղների և քարերի դիլերներ
 - Խաղատներ
 - Իրավաբանական ծառայություններ մատուցող մասնագետներ
 - Փողի փոխանցման ծառայություններ մատուցողներ, և
 - Կյանքի ապահովագրության հատված:
- Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի 1737 բանաձևով սահմանված՝ գործառնությունների որոշակի տեսակներին առնչվող ֆինանսական արգելքների իմպլեմենտացումը (2007թ. հոկտեմբեր)
- Սահմանափակ հնարավորություններով երկրներում փոխադարձ գնահատումների համար կարողությունների զարգացումը և ՖԱԹՖ-ի Ստանդարտների իմպլեմենտացումը (2008թ. փետրվար)

- Առևտրային գործարքների միջոցով փողերի լվացման դեմ պայքարի լավագույն փորձը (2008թ. հունիս)
- Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի 1803 քանաձևի ֆինանսական դրույթների իմպլեմենտացումը (2008թ. հոկտեմբեր)
- Միջազգային լավագույն փորձ. ահաբեկիչների ակտիվների սառեցումը (2009թ. հունիս)
- Միջազգային լավագույն փորձ. կանխիկի և ըստ ներկայացնողի փոխանցելի գործիքների անդրսահմանային ապօրինի տեղափոխման հայտնաբերումն ու կանխարգելումը (2010թ. փետրվար)
- Հանձնարարական 2-ի իմպլեմենտացման լավագույն փորձ. զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվության շրջանառումը ներպետական իրավասու մարմինների միջև (2012թ. մարտ)
- Ֆինանսական քննության ուղեցույց (2012թ. հուլիս)
- Լավագույն փորձ. հարկային դաշտ մտնելու կամավոր ծրագրերին առնչվող ՓԼ/ԱՖ դեմ պայքարի քաղաքականությունների իրականացումը (2012թ. հոկտեմբեր)
- Բռնագրավման պրակտիկայի լավագույն փորձը (Հանձնարարականներ 4 և 38) և ակտիվների վերականգնման շարունակական աշխատանքների շրջանակը (2012թ. հոկտեմբեր)
- ՓԼ/ԱՍՖ դեմ պայքարի միջոցառումների և ֆինանսական ներառման վերաբերյալ ուղեցույց (2013թ. փետրվար)
- Ազգային ռիսկի գնահատման ուղեցույց (2013թ. փետրվար)

**ՀԱՎԵԼՎԱԾ II. ՖԱԹՖ-Ի ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

2012 թ. փետրվարին ՖԱԹՖ-ի Հանձնարարականների ընդունումից հետո դրան-
ցում կատարվել են հետևյալ լրացումները.

Ամսաթիվ	Լրացման տեսակը	Լրացված բաժինները
2013 թ. փետրվար	Հ.37-ի և Հ.40-ի միօրինակեցում	<p>■ Հ.37(դ)</p> <p>Ավելացվել է ծանոթագրություն առ այն, որ փոխադարձ իրավական օգնության հարցումը չպետք է մերժվի այն հիմքով, որ ՆՈՖԳՏՄ-ների համար օրենքով նախատեսված են գաղտնիության կամ կոնֆիդենցիալության պահանջներ, բացառությամբ այն դեպքերի, երբ խնդրարկվող տեղեկությունները պահվում են այնպիսի հանգամանքներում, որոնց վրա տարածվում են փաստաբանի մասնագիտական տեղեկատվության կամ մասնագիտական գաղտնիքի պաշտպանության նորմերը:</p>

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

0010, Երևան, Վ. Սարգսյան 6